ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8

Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան, Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8

8-րդ դասարանի դասագիրք

Երևան
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2014

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373.167.1 : 91 (075.3)
ԳՄԴ 26.8 ց72
Ա 653

Ա 653 Աշխարհագրություն (Հասարակական աշխարհագրություն: Տարածաշրջաններ և պետություններ): Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք /Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան, Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան/ – Եր., «ՄԱՆՄԱՐ», 2014. -224 էջ:

Քարտեզները կազմեց Վ. Մխիթարյանը:

Դասագրքում օգտագործվել են նաև «Աշխարհը և Հայաստանը» աշխարհագրական ատլասի նյութերը:

ISBN 978-9939-62-113-5

ՀՏԴ 373.167.1 : 91 (075.3)
ԳՄԴ 26.8 ց72

© Մանասյան Մ., Մարգարյան Ռ., Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ., 2014
© «ՄԱՆՄԱՐ», 2014
© Դասագրքերի շրջանառու հիմնադրամ, 2014

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԴԱՍ 1. ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԸ

7-րդ դասարանում ամբողջ աշխարհի բնական ռեսուրսների, բնակչության և տնտեսության տարբեր ճյուղերի տեղաբաշխման ընդհանրական գծերի՝ օրինաչափությունների վերաբերյալ ձեր ձեռք բերած գիտելիքները կազմում են հասարակական աշխարհագրության սոսկ ճյուղային կամ բաղադրիչային մասը: Բայց հասարակական աշխարհագրությունն ուսումնասիրում է նաև բնական ռեսուրսների, բնակչության, տնտեսության և մշակույթի **տեղաբաշխումը կոնկրետ տարածաշրջաններում ու երկրներում**: Աշխարհագրության այս հարցերն ուսումնասիրող բաժինը կոչվում է **տարածաշրջանային (ռեգիոնալ[1]) աշխարհագրություն** կամ **երկրագրություն**:

Տարածաշրջանային աշխարհագրության դասընթացի գլխավոր նպատակը կոնկրետ տարածաշրջանի կամ երկրի հստակ ու իրական «դիմանկարի»՝ հասարակական-աշխարհագրական համալիր բնութագրի ձևավորումն է:

Պատմական իրադարձություններն ու աշխարհագրական գործընթացները յուրաքանչյուր երկրում կամ շրջանում տեղի են ունենում տեղական առանձնահատկություններով: Հետևաբար՝ սույն դասընթացում մենք գործ ունենք ինքնատիպ աշխարհագրական օբյեկտների՝ **տարածաշրջանների** ու **երկրների** հետ:

Տարածաշրջանն աշխարհի՝ տարբեր մեծության տարածքային մասն է, որը միջազգային տերմինաբանությամբ անվանվում է ռեգիոն: Տարածաշրջանները թեպետ հատկանիշներով իրարից տարբերվում են, բայց կազմում են միասնական համակարգ: Այնպիսի համակարգը, որի միավորները տարբերվում են իրենց մեծությամբ, և մեկը ներառվում է մյուսի կազմում, կոչվում է **ենթակարգություն** (հիերարխիա):

Տարածաշրջանային աշխարհագրության մեջ՝ **ուղղաձիգ** ենթակարգության օրինակ են խոշոր տարածաշրջանը, ենթատարածաշրջանը, երկիրը, մարզը:

Մեծության տեսանկյունից տարածաշրջանային ամենախոշոր միավորները **մայրցամաքներն** ու **օվկիանոսներն** են: Մայրցամաքներում առանձնացվում են բնակեցված և տնտեսապես այս կամ այն աստիճանով յուրացված տարածքներ՝ **տարածաշրջաններ**:

Միայն բնական հատկանիշների հիման վրա առանձնացված տարածքները **բնաաշխարհագրական տարածաշրջաններն** են: Օրինակ՝ Հարավային Ասիան Եվրասիայի այլ տարածաշրջաններից բարձր լեռներով, անապատներով և խիտ անտառներով սահմանազատված **բնաաշխարհագրական շրջան** է, իսկ նրա հասարակական տարբերակիչ առանձնահատկությունները հաշվի առնելիս՝ **հասարակական աշխարհագրական տարածաշրջան**:

Տարածաշրջանները պետք է բնութագրել պատմության, բնական պայմանների և ռեսուրսների, քաղաքական քարտեզի ձևավորման, բնակչության, տնտեսության և մշակույթի ընդհանուր գծերով: Աշխարհի տարածաշրջաններն առանձնացնելիս նկատի են ունենում նաև դրանց ներքին միասնությունը՝ երկրների միջև քաղաքական, մշակութային և տնտեսական կապերի զարգացման աստիճանը:

---

1. Ռեգիոն – լատիներեն regio (երկիր, մարզ) բառից առաջացած տերմին է, որից էլ ածանցվել է ռեգիոնալ տերմինը: Այդ տերմիններն առավել լայնորեն սկսել են օգտագործվել վերջին տասնամյակներում:

Քարտեզում գծերով սահմանազատված 18 խոշոր տարածաշրջանները դիտելիս կարող է առաջանալ այսպիսի հարց. արդյոք *իրականում էլ այդպես հստակորեն են սահմանազատված տարածաշրջանները*:

Խոշոր տարածաշրջանների միջև սահմանները հստակ են այն դեպքում, երբ դրանք միաժամանակ երկու պետության սահմանագծեր են: Օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայի և Լատինական Ամերիկայի տարածաշրջանների սահմանն ԱՄՆ-ի ու Մեքսիկայի միջպետական *սահմանն* է: Սակայն նույնիսկ տարածաշրջանների միջև պետական սահմանի հստակ գծերը դեռևս չեն նշանակում, որ այդ տարածաշրջաններն իրականում տարանջատված են իրարից: Օրինակ՝ ԱՄՆ-ի ազդեցությունը բավականին մեծ է Մեքսիկայի, իսկ իսպանախոսների ազդեցությունը՝ ԱՄՆ-ի հարավային նահանգների կյանքում, որոնք նախկին մեքսիկական տարածքներ էին:



Աշխարհի բաժանումը խոշոր տարածաշրջանների

Աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխությունների հետևանքով տարածաշրջանների սահմանները ևս փոփոխվում են:

Աշխարհի բաժանումը տարածաշրջանների կատարվում է տարբեր հատկորոշիչների հիման վրա և հաճախ սուբյեկտիվ ու պայմանական բնույթ է կրում: Նշված պատճառով էլ երբեմն միևնույն երկիրն ընդգրկվում է տարբեր տարածաշրջանների կազմում: Այսպես օրինակ՝ ՀՀ-ն ընդգրկում են Հարավարևմտյան Ասիա և Հարավային Կովկաս տարբեր կարգի տարածաշրջաններում:

Ինչպե՞ս են անվանվում տարածաշրջանները: Աշխարհագրական տարածաշրջանների անվանումները բազմաբնույթ են: Ամենից հաճախ այդ անվանումները բխում են տվյալ մայրցամաքում կամ աշխարհամասում տարածաշրջանի գրաված դիրքից (հորիզոնի կողմից), օրինակ՝ Հարավային Ամերիկա, Արևելյան Ասիա: Սակայն որոշ տարածաշրջանների անվանումները չեն համապատասխանում տարածաշրջանի դիրքին: Օրինակ՝ Պիրենեյան թերակղզին, որտեղ գտնվում է Եվրոպայի արևմտյան ծայրակետը, համարվում է ոչ թե Արևմտյան, այլ՝ Հարավային Եվրոպա:

Մեկ այլ օրինակ. ամերիկացի աշխարհագրագետները **Հարավային Եվրոպան** անվանում են **Միջերկրածովյան տարածաշրջան**, մինչդեռ տվյալ անվանումը գիտականորեն չի համապատասխանում այդ տարածաշրջանի մեջ մտնող Պորտուգալիային, որը, ինչպես հայտնի է, Միջերկրական ծովի առափնյա երկիր չէ:

Աշխարհագրական տարածաշրջանների մի մասի անվանումներն էլ արտահայտում են՝ ա) տվյալ տարածաշրջանների բնական միջավայրի **միատեսակության հատկանիշը**, օրինակ՝ Սիբիրի, Ամազոնիայի, Անդյան, Սահարայի տարածաշրջաններ, բ) տվյալ տարածաշրջաններում բնակվող մարդկանց **լեզվական, կրոնական, մշակութային, ռասայական** և **այլ հատկանիշները**, օրինակ՝ Լատինական Ամերիկա, ֆրանսախոս Կանադա, «Սև Աֆրիկա», մահմեդական աշխարհ:

Այսպիսով՝ քանի որ տարածաշրջանների առանձնացման մոտեցումներն ու անվանումները դեռևս խիստ գիտականորեն ու հստակորեն չեն ձևակերպված, ապա առաջանում է հետևյալ հարցը. *ինչպե՞ս վարվել տարածաշրջանների առանձնացման մոտեցումների նշված բազմազանության պայմաններում*: Տարածաշրջանների առանձնացման վերաբերյալ գոյություն ունեցող բազմակարծության պայմաններում միասնականություն հաստատելու նկատառումով սույն դասագրքի հեղինակները գերադասել են առաջնորդվել հիմնականում ՄԱԿ-ի կողմից ընդունված տարածաշրջանների ենթակարգությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է ուսումնասիրում տարածաշրջանային աշխարհագրությունը: Ո՞րն է այդ դասընթացի գլխավոր նպատակը:
2. Ինչ է տարածաշրջանը, որո՞նք են տարածաշրջանների առանձնացման հատկանիշները և սկզբունքները:
3. Որքանո՞վ են ստույգ տարածաշրջանների առանձնացման ընդունված սահմանագծերը:
4. Բնութագրական ո՞ր հատկանիշներն են հիմք ծառայում տարածաշրջանի անվանման համար:
5. Աշխարհագրական ո՞ր տարածաշրջանում պետք է ընդգրկվի Հայաստանի Հանրապետությունը:

ԴԱՍ 2. ԵՎՐԱՍԻԱ

Եվրասիա մայրցամաքը, որպես աշխարհագրական մեկ միասնական ամբողջություն, աչքի է ընկնում բնության, բնակչության, տնտեսության և մշակույթի տարածքային մեծ տարբերություններով:

Ուրիշ ոչ մի մայրցամաքում կամ աշխարհամասում չկան մարդկային ռասաների, լեզուների, քաղաքակրթությունների, կրոնական հավատալիքների, ազգային սովորույթների ու ավանդույթների, տնտեսական ու քաղաքական համակարգերի այնպիսի խայտաբղետություն և բազմազանություն, ինչպիսին Եվրասիայում են:

Եվրասիան պայմանականորեն բաժանված է Եվրոպա և Ասիա աշխարհամասերի: Բնության մեջ այդպիսի բաժանարար սահման գոյություն չունի, ուստի այն տես-

նել հնարավոր չէ: Սահմանը գծագրվել է մարդկանց պատկերացումներում հազարամյակների ընթացքում:

Ներկայումս Եվրոպայի և Ասիայի բաժանարար բնական, քաղաքական, տնտեսական, մշակութային սահմանները միմյանց չեն համընկնում:

Չնայած դրան՝ աշխարհագրորեն հիմնավորված է Եվրասիան և նրա տարածաշրջաններն ու պետություններն ուսումնասիրել՝ խմբավորելով դրանք ըստ Եվրոպա և Ասիա աշխարհամասերի, հաշվի առնելով նախ և առաջ դրանց քաղաքակրթական առանձնահատկությունները:

ԵՎՐՈՊԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Եվրոպան տարածքով փոքր աշխարհամաս է (մոտ 10 մլն կմ²): Թեպետ նրան բաժին է ընկնում երկրագնդի բնակելի տարածքի մոտ 8%-ը, բայց մարդկության պատմության գրեթե ողջ ժամանակաշրջանում եղել է համաշխարհային տնտեսության, գիտության, տեխնիկայի, մշակույթի զարգացումն ուղղորդող հիմնական ուժը: Եվրոպայում է ձևավորվել ու զարգացել արևմտյան-քրիստոնեական քաղաքակրթությունը իր համամարդկային բազմաթիվ արժեքներով և գաղափարներով: Դրանցից են մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, ազատ շուկայական տնտեսությունը և այլն: Շուկայական արտադրական հարաբերությունների՝ կապիտալիզմի զարգացումը և, դրա հետ կապված, արդյունաբերական հեղաշրջումը նույնպես սկիզբ են առել Եվրոպայում: Այս աշխարհամասի երկրների ճանապարհորդներն են կատարել աշխարհագրական մեծ հայտնագործությունները՝ տարածելով Եվրոպայի ազդեցությունը աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Այդ բոլորի արդյունքում դարեր շարունակ մարդկային հասարակության զարգացումն ունեցել է **«եվրակենտրոն»** ուղղվածություն:

Աշխարհագրական հայտնագործություններից հետո սկսվեց աշխարհի շատ տարածաշրջանների գաղութացումը Անգլիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Նիդեռլանդների և եվրոպական այլ երկրների կողմից: Գաղութացումն ուղեկցվում էր լեզուների, կրոնի, եվրոպական (արևմտյան) հոգևոր և նյութական մշակույթի տարածումով աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջաններում: Դրա հետևանքներից մեկն այն էր, որ մեր օրերում աշխարհի ամենատարածված լեզուներն են անգլերենը և իսպաներենը, որոնցով խոսում են Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի և Ավստրալիայի տասնյակ ժողովուրդներ: Եվրոպայից այլ տարածաշրջաններ և երկրներ տարածվեց նաև քրիստոնեությունը, մասնավորապես՝ կաթոլիկությունը և բողոքականությունը:

Եվրոպայի հասարակական կյանքի բուռն և, երբեմն, երկրների միջև շահերի հակասությունների գոյության պայմաններում զարգացման պատճառով նրա քաղաքական քարտեզը փոփոխվել է անհամեմատ ավելի հաճախ, քան որևէ այլ աշխարհամասում: Այն քանակական և որակական առումներով մեծ փոփոխությունների է ենթարկվել հատկապես Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո: Եվրոպայում XX դարի կեսերին ստեղծվեց սոցիալիստական համակարգը, որը փլուզվեց դարավերջին: Այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի, Չեխոսլովակիայի ու Հա-

ռավսլավիայի կազմալուծման հետևանքով Եվրոպայի քաղաքական քարտեզում ձևավորվեցին մեծ թվով ինքնիշխան նոր պետություններ:

Եվրոպայում, առանց Ռուսաստանի Դաշնության, կա 44 պետություն՝ 7,6 մլն կմ² ընդհանուր տարածքով և շուրջ 590 մլն բնակչությամբ: Պետությունների մեծ մասը (32), ըստ կառավարման ձևի, հանրապետություններ են, իսկ մնացյալը՝ սահմանադրական միապետություններ: Եվրոպայի երկրները բնութագրվում են բազմաթիվ ընդհանուր գծերով, ինչպիսիք են բնակչության ժողովրդագրական վիճակը, ուրբանիզացման մակարդակը[1], տնտեսության կառուցվածքը և զարգացման բնույթը, իրավական և քաղաքական համակարգերը: Միաժամանակ, Եվրոպայի երկրները միմյանցից տարբերվում են աշխարհագրական դիրքով, բնական պայմաններով և ռեսուրսապահովվածությամբ, տնտեսության մասնագիտացման բնույթով և զարգացման առանձնահատկություններով, մշակութային ինքնատիպությամբ: Համաձայն ՄԱԿ-ի արած բաժանման՝ Եվրոպայի սահմաններում առանձնացնում են **Արևմտյան Եվրոպա, Հյուսիսային Եվրոպա, Հարավային Եվրոպա** և **Արևելյան Եվրոպա** տարածաշրջանները:

Եվրոպայում մեծ թվով պետությունների միջև նախկինում անընդհատ կրկնվող պատերազմներից և հակամարտություններից հետո՝ արդի ժամանակաշրջանում Եվրոպայի երկրների միջև ակտիվանում են նաև քաղաքական, տնտեսական և մշակութային համագործակցության ու մերձեցման միտումները: Եվրոպան առաջին աշխարհամասն է, որ թևակոխել է **պետությունների քաղաքական և տնտեսական միասնացման փուլ**:

Եվրոպական երկրների ակտիվ մասնակցությամբ ստեղծվել են համաեվրոպական և միջազգային տարբեր կազմակերպություններ, այդ թվում՝ **Միավորված ազգերի կազմակերպությունը՝ ՄԱԿ**-ը:

Դեռևս 1957թ. Իտալիայի մայրաքաղաք Հռոմում կնքված պայմանագրով Եվրոպայի արևմտյան մասի կապիտալիստական երկրների տնտեսական տարբեր կառույցները միավորվեցին և ստեղծեցին **Եվրոպական միություն**[2] (Եվրամիություն, ԵՄ) կոչվող **կազմակերպությունը**: Սկզբում նա միավորում էր եվրոպական 6 պետություն, որոնց միջև ստեղծվեցին ապրանքների և աշխատուժի ազատ տեղաշարժի հնարավորություններ, վերացվեցին մաքսային և վիզային խոչընդոտները: Սակայն մինչև 1990-ական թվականների սկիզբը Եվրոպայի երկրները մասնատված էին երկու խմբի՝ 1) **կապիտալիստական** կամ **ազատ շուկայական տնտեսություն** ունեցող երկրների խումբ, որն ընդ-

Եվրամիության կենտրոնական շենքը Բրյուսելում

1. Ցուցանիշ է, որը ցույց է տալիս քաղաքային բնակչության մասնաբաժինը ընդհանուր բնակչության մեջ:

Ուրբանիզացիան հասարակական կյանքում քաղաքների դերի բարձրացման, դրանցում բնակչության կենտրոնացման և քաղաքային ապրելակերպի տարածման գործընթացն է:

2. Մինչև 1992թ. կազմակերպությունը կոչվել է «Ընդհանուր շուկա»:

գրկում էր Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրները, Հյուսիսային Եվրոպայի երկրները՝ առանց մերձբալթյան երկրների, Հարավային Եվրոպայի երկրները՝ առանց Հարավսլավիայի կազմում եղած երկրների, 2) **սոցիալիստական** կամ **պլանային տնտեսություն** ունեցող երկրների խումբ, որն ընդգրկում էր Արևելյան Եվրոպայի երկրները, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի կազմում եղած մերձբալթյան երկրները և նախկին Հարավսլավիան:

Սոցիալիստական համակարգի վերացումից, հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքական և սոցիալ-տնտեսական նպաստավոր նախադրյալներ ստեղծվեցին պետությունների միջև համաեվրոպական մակարդակով համագործակցության զարգացման և միասնացման գործընթացների ակտիվացման համար:

1990-ական թվականներից Եվրամիության մեջ ընդգրկվեցին Եվրոպայի այլ երկրներ, ինչպես նաև աշխարհագրական առումով Ասիայում գտնվող մեկ երկիր (Կիպրոսը), և անդամների թիվը հասավ 28-ի (տե՛ս քարտեզը):



Եվրամիության ընդարձակումը

Ներկայումս Եվրամիությունն աշխարհի **տնտեսական ու քաղաքական ամենահզոր տարածաշրջանային կազմակերպությունն է**: Նրան բաժին է ընկնում համաշխարհային համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 25%-ը: Մինչդեռ այստեղ բնակվում է աշխարհի բնակչության ընդամենը 7%-ը:

Եվրամիությունն ունի տարբեր հարցերով զբաղվող մի քանի կառույցներ, որոնցից առավել կարևոր են Եվրոպական խորհրդարանը (Եվրախորհրդարան), Եվրոպական միության խորհուրդը (Եվրախորհուրդ), Եվրոպական հանձնաժողովը:

Եվրոպական խորհրդարանը ձևավորվում է Միության անդամ պետությունների քաղաքացիներից, համամասնական ընտրակարգով՝ 5 տարին մեկ անցկացվող համաժողովրդական քվեարկությամբ: Եվրոպական խորհրդարանի նստավայրը Ֆրանսիայի **Ստրասբուրգ** քաղաքն է:

Եվրախորհրդարանի նիստերի դահլիճը

Եվրոպական միության խորհուրդը որոշումներ ընդունող հիմնական մարմինն է: Կազմված է անդամ երկրների մեկական նախարարներից: Յուրաքանչյուր նախարար, ներկայացնելով իր կառավարությունը, քվեարկության ժամանակ ունենում է ոչ թե մեկ ձայն, այլ՝ երկրի բնակչության թվին համապատասխան նախօրոք որոշված ձայների քանակ (օրինակ՝ Ֆրանսիան ունի 29 ձայն, Շվեդիան՝ 12 ձայն, Էստոնիան՝ 3 ձայն): Խորհրդի նախագահումն իրականացվում է անդամ երկրներից որևէ մեկի կողմից՝ հերթականությամբ, 6 ամիս ժամանակով:

Եվրամիության խորհրդի գործունեությունն ընդգրկող բնագավառները խմբավորված են 9 ոլորտներում: Այդ ոլորտների թվում են արդյունաբերությունը, գիտական հետազոտությունները, տրանսպորտը, ձկնորսությունը, կրթությունը, երիտասարդության ու մշակույթի հարցերը, արտաքին քաղաքականությունն ու արդարադատությունը:

Երրորդ հիմնական կառույցը՝ **Եվրոպական հանձնաժողովը,** Եվրախորհրդից անկախ մարմին է, որը պաշտպանում է Եվրամիության՝ որպես միջազգային անկախ կազմակերպության շահերը արտաքին աշխարհում, հանդես է գալիս նրա անունից և պատասխանատու է Եվրոպական խորհրդարանի և Եվրամիության խորհրդի որոշումների իրականացման համար: Հանձնաժողովը նիստեր է հրավիրում շաբաթը մեկ անգամ Բելգիայի մայրաքաղաք **Բրյուսելում**:

Եվրամիության այս «միջազգային եռանկյունին» է համատեղ մշակում քաղաքականություն, ընդունում օրենքներ և որոշումներ, որոնք **պարտադիր են** Եվրամիության անդամ բոլոր պետությունների համար:

Եվրամիության անդամ երկրները անցյալ տասնամյակների ընթացքում մեծ հաջողության են հասել հասարակական կյանքի տարբեր՝ *սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության բարեկեցության բարձրացման, ժողովրդավարության, մարդու ազատության ու իրավունքների ընդլայնման և ժողովուրդների անվտանգության ապահովման բնագավառներում*:

Այսօր արդեն միացյալ Եվրոպայի անդամ երկրներում գործում են միասնական օրենքներ, ըստ որոնց՝ յուրաքանչյուր երկրի պետական սահմանն անդամ երկրների քաղաքացիների համար «թափանցիկ» է, այսինքն՝ **կարելի է երթևեկել առանց վիզայի,** ազգային դրամների փոխարեն գործում է **միասնական արժույթ՝ եվրոն**, ստեղծված են **միասնական ճանապարհատրանսպորտային համակարգ և միասնական ներքին շուկա**:

Եվրոպայի քաղաքական քարտեզը

Նպատակ է դրված՝ առաջիկայում այդ նվաճումներն ու ձեռքբերումներն ավելի ամրապնդել ու խորացնել: Մշակվել և իրականացվում են նոր քաղաքականություն ու նոր ծրագրեր: Դրան է ուղղված նաև **«Ընդլայնված Եվրոպա – նոր հարևաններ»** 2004թ. հաստատված ծրագիրը: Նախատեսվում է պետությունների միասնացման դրական փորձը մատչելի դարձնել ոչ միայն եվրոպական մնացյալ երկրներին, այլև Եվրոպա աշխարհամասի հարևաններին[1]: Խոսքը **Եվրոպայի ընդլայնման, նոր սահմանների** ձևավորման մասին է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Եվրոպայի տեղն ու դերն աշխարհում, նրա ավանդը մարդկային հասարակության զարգացման գործում:
2. Եվրոպան այլ աշխարհամասերի համեմատությամբ ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի:
3. Որո՞նք են Եվրոպայի տարածաշրջանները: Ե՞րբ և ինչպե՞ս է սկսվել միասնական Եվրոպայի ստեղծման գաղափարի իրագործումը:

1. Այդ երկրներն են Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Իսրայելը, Հորդանանը, Լիբանանը, Սիրիան, Պաղեստինի Ինքնավարությունը, Եգիպտոսը, Լիբիան, Ալժիրը, Թունիսը, Մարոկկոն:

4. Ինչ գիտեք Եվրամիության նպատակի ու կառուցվածքի մասին:
5. Եվրոպայի միասնականության ուժեղացումը և «Ընդլայնված Եվրոպա – նոր հարևաններ» ծրագիրը ինչպե՞ս կարող են ազդել Եվրոպայի սահմանների, աշխարհում նրա տեղի ու դերի փոփոխության վրա:

ԴԱՍ 3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ԿԱՋՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արևելյան Եվրոպան Հյուսիսային, Հարավային և Արևմտյան Եվրոպայի միջև տարածված ընդարձակ տարածաշրջան է: Տարածաշրջանը ձգվում է հյուսիսային Բալթիկ ծովի ափերից մինչև հարավային Սև ծովի հարուստ լողափերը, իսկ արևելքում՝ մինչև Ուրալյան լեռնաշղթան:

Արևելյան Եվրոպա տարածաշրջանից պայմանականորեն դուրս ենք թողնում նրա այն մասը, որը պատկանում է Ռուսաստանի Դաշնությանը (ՌԴ): Առանց ՌԴ-ի՝ Արևելյան Եվրոպա տարածաշրջանը ներկայումս միավորում է 9 պետություն (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Մոլդովա, Ուկրաինա և Բելառուս): Մինչև վերջերս նրա մաս համարվող մերձբալթյան հանրապետությունները (Էստոնիա, Լատվիա, Լիտվա) այժմ ներառվում են Հյուսիսային Եվրոպա, իսկ նախկին հարավսլավական երկրները՝ Հարավային Եվրոպա տարածաշրջանների մեջ:

Տարածաշրջանի քաղաքական քարտեզի այդպիսի կազմը ձևավորվել է համեմատաբար վերջերս՝ անցյալ դարի 90-ական թվականներից:

Արևելյան Եվրոպայի **աշխարհագրական դիրքն** ընդհանուր առմամբ բարենպաստ է: Երկրների մի մասը (բացառությամբ Չեխիայի, Սլովակիայի, Հունգարիայի, Բելառուսի և Մոլդովայի) անմիջական ելք ունի Ատլանտյան օվկիանոսի ծովեր:

Արևելյան Եվրոպայի **տնտեսաաշխարհագրական դիրքը** որակական փոփոխության է ենթարկվել Եվրամիությանը տարածաշրջանի երկրների մեծ մասի (բացառությամբ Բելառուսի, Ուկրաինայի և Մոլդովայի) անդամակցության հետևանքով: Այժմ այդ երկրներում ընթանում է դրանց տնտեսության վերագինման, միասնական տնտեսական համակարգի մեջ ներգրավման բարդ գործընթաց:

Տարածաշրջանով են անցնում միջազգային նշանակության օդային և ցամաքային տարանցիկ ուղիներ, որոնք Արևմտյան Եվրոպան կապում են Կենտրոնական, Արևելյան ու Հարավարևմտյան Ասիայի երկրներին, իսկ Հյուսիսային Եվրոպան՝ Հարավարևմտյան Ասիայի, ինչպես նաև Միջերկրածովյան ավազանի երկրներին:

Վերջին տասնամյակում շրջադարձային փոփոխություն է կրել տարածաշրջանի **քաղաքաաշխարհագրական դիրքը**: Շուրջ կես դար (1940–1990-ական թվականներ) ԽՍՀՄ-ի փաստացի վերահսկողության տակ ու նրա հետ ռազմաքաղաքական դաշինքի մեջ գտնվող արևելաեվրոպական երկրները (բացառությամբ Ուկրաինայի, Բելառուսի և Մոլդովայի) այժմ դարձել են Հյուսիսատլանտյան դաշինքի անդամներ և հայտնվել են Ռուսաստանին հակադիր ռազմական ճամբարում: Այդպիսով՝ Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմական բազաները մոտեցել են Ռուսաստանի արևմտյան սահմանին, ինչը նա դիտում է որպես իր համար ուղղակի սպառնալիք:

Արևելյան Եվրոպա

Հարուստ ու բազմազան են Արևելյան Եվրոպայի բնական **պայմաններն ու ռեսուրսները**: Օգտակար հանածոներով լավ են ապահովված համեմատաբար մեծ տարածք ունեցող երկրները՝ Ուկրաինան, Ռումինիան, Լեհաստանը, ինչպես նաև Բուլղարիան: Վառելիքային հանածոներից քարածխի, գորշ ածխի պաշարներով հարուստ են Ուկրաինան (Դոնեցկի ավազան) և Լեհաստանը (Վերին և Ստորին Սիլեզիաներ), իսկ նավթի և գազի պաշարներով՝ Ռումինիան: Տարածաշրջանը մետաղային հանածոներից համեմատաբար ապահովված է երկաթի, մանգանի, ալյումինի, պղնձի ու բազմամետաղների հանքանյութերի պաշարներով: Երկաթի և մանգանի խոշոր հանքավայրեր կան Ուկրաինայում: Արևելյան Եվրոպայում կան նաև սնդիկի, քրոմի, ծծմբի, կալիումական և կերակրի աղի համաեվրոպական նշանակության հանքավայրեր:

Արևելյան Եվրոպան առանձնանում է նաև ռեկրեացիոն հարուստ ռեսուրսներով, որոնք նպաստում են զբոսաշրջության զարգացմանը: Առանձնահատուկ են Տրուսկավեցի (Ուկրաինա) և Կառլովի Վարիի (Չեխիա) հանքային բուժիչ ջրի աղբյուրները, Սև ծովի լողափերը, ինչպես նաև Բալատոն լիճը (Հունգարիա), որոնց շուրջը ձևավորվել են առողջարանային, հանգստի և զբոսաշրջության միջազգային նշանակության գոտիներ:

Արևելյան Եվրոպայի հյուսիսային շրջաններում տիրապետում են ընդարձակ հարթավայրերը, իսկ կենտրոնական և հարավային մասերում ձգվում են Կարպատների և Բալկանների լեռնային համակարգերը:

Արևելյան Եվրոպայի ջրաէներգետիկ ռեսուրսների մեծ մասը Դանուբի ավազանում է, հատկապես Կարպատյան և Բալկանյան լեռներում, որտեղ էլ կառուցված են տարածաշրջանի համեմատաբար խոշոր ջրային էլեկտրակայանները: Անտառները տարածված են գլխավորապես տարածաշրջանի հյուսիսային մասում, ինչպես նաև լեռնային շրջաններում:

Նավարկություն Դանուբով

Արևելյան Եվրոպայում շատ են լճերը: Տարածաշրջանի ամենամեծ լիճը Բալատոնն է: Լեհաստանի հյուսիսային մասում տարածվում են փոքր, բայց հազարավոր սառցադաշտային ծագման լճեր:

Համեմատաբար հարթ ռելիեֆը (բացառությամբ Կարպատների և Բալկանների), բարեխառն, իսկ հարավում՝ նաև մերձարևադարձային կլիման, հնարավորություն են տալիս աճեցնելու այդ գոտիներին բնորոշ գյուղատնտեսական մշակաբույսեր: Տարածաշրջանի հյուսիսային մասում (Լեհաստան, Բելառուս, Ուկրաինայի հյուսիս) շատ են ճահիճները: Միջինդանուբյան և Ստորինդանուբյան դաշտավայրերում, Ուկրաինայի հարավում նկատվում է խոնավության պակաս, ուստի պահանջվում է արհեստական ոռոգում: Այստեղ հաճախ է երաշտ լինում:

Տարածքի ընդհանուր առմամբ հարթ ռելիեֆը նպաստավոր է նաև տրանսպորտային ուղիների կառուցման համար: Վոլգան, Դանուբը, Դնեպրը, Օդերը, Վիսլան և մի քանի այլ գետեր նավարկելի են:

Տարածաշրջանի շատ վայրերում, հատկապես մետալուրգիական, քիմիական, հանքարդյունահանման խոշոր կենտրոններում առաջացել են բնապահպանական սուր հիմնախնդիրներ:

Արևելյան Եվրոպայի երկրների համար ընդհանուր են անցումային տնտեսության դժվարությունները (արտադրության անկում, գործազրկություն և այլն): Բոլոր այդ երկրները, ավելի կամ պակաս հաջողությամբ, հաղթահարում են անցումային շրջանի դժվարությունները և փորձում են հասարակական կյանքը կազմակերպել արևմտյան ժողովրդավարության ու ազատ շուկայական տնտեսության օրենքներին համապատասխան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն է Արևելյան Եվրոպա տարածաշրջանի կազմը, և ի՞նչ գործընթացներով է այն ձևավորվել:
2. Բնութագրե՛ք տարածաշրջանի աշխարհագրական դիրքը: Խմբով վերլուծե՛ք դիրքի գլխավոր առանձնահատկությունները, կատարե՛ք դրանց վերաբերյալ եզրահանգումներ:

3. Ինչ որակական փոփոխություններ է կրել Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքաաշխարհագրական դիրքը:
4. Արևելյան Եվրոպայի բնական պայմաններն ու ռեսուրսները տնտեսության ո՞ր ճյուղերի զարգացման համար կարող են նախադրյալներ ստեղծել:

ԴԱՍ 4. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Բնակչությունը: Թեև Արևելյան Եվրոպայի բնակչության ազգային կազմը խայտաբղետ է, բայց դրանում բացարձակ գերակշռում են սլավոնական ժողովուրդները:

Տարածաշրջանի բոլոր ժողովուրդների լեզուները (բացառությամբ ռումիներենի, մոլդավերենի, հունգարերենի) պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի սլավոնական լեզվախմբին: Ռումիներենն ու մոլդավերենը պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական լեզվախմբին, իսկ հունգարերենը՝ ուրալյան լեզվաընտանիքի ուգրո-ֆիննական լեզվախմբին:

ԽՍՀՄ-ի, Չեխոսլովակիայի և Հարավսլավիայի տրոհումից հետո տարածաշրջանի 9 պետություններից յուրաքանչյուրի բնակչության ազգային կազմը համեմատաբար միատարր է դարձել: Լեհաստանում և Հունգարիայում բնակչության 90%-ից ավելին կազմում են համապատասխանաբար լեհերն ու հունգարները: Սլավոնական ժողովուրդներից շատերը (ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ, բուլղարներ) լեզվով իրար մոտ են և օգտվում են սլավոնական տառագրությունից: Մյուսներն էլ (լեհեր, չեխեր, սլովակներ) օգտագործում են լատինական տառագրությունը:

Արևելյան Եվրոպայում ապրող ժողովուրդների մեծ մասը (ուկրաինացիների մեծ մասը, բելառուսներ, բուլղարներ, մոլդովացիներ, ռումինացիներ) ուղղափառ է: Կաթոլիկներ են լեհերը, հունգարները:

Տարածաշրջանի բոլոր երկրների բնակչության աճի վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ Երկրորդ աշխարհամարտը: Զոհվեցին միլիոնավոր մարդիկ, դանդաղեց բնական աճը: Այժմ բնակչության թիվը նույնիսկ նվազում է:

Ներկայումս տարածաշրջանի բոլոր երկրների բնակչության ծնելիության մակարդակը շատ ցածր է, իսկ մի քանի երկրներում նույնիսկ ցածր է մահացության մակարդակից (բնական աճի գործակիցը՝ –0,2%–0,7%): Եվրամիությանը անդամակցելը, իր դրական հետևանքներով հանդերձ, բացասաբար է անդրադարձել Արևելյան Եվրոպայի բնակչության մեխանիկական շարժի վրա: Ուժեղացել է աշխատուժի արտահոսքը դեպի արևմտաեվրոպական երկրներ (հատկապես դեպի Գերմանիա), ինչը, առանց այդ էլ բնական աճի բացասական ցուցանիշների պայմաններում, խիստ բացասաբար է ազդում այս տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի վրա: Արդյունքում՝ Արևելյան Եվրոպայի երկրներում վերջին 20 տարում մեծացել է ոչ աշխատանքային, թոշակային տարիքի բնակ-

Արևելյան Եվրոպայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



չության բաժինը՝ տարածաշրջանի երկրների համար առաջ բերելով սոցիալական լրացուցիչ խնդիրներ:

Տարածաշրջանում բնակչությունը համեմատաբար հավասարաչափ է տեղաբաշխված (բացառությամբ լեռնային շրջանների և ճահճապատ Պոլեսիեի): Աճում է քաղաքային բնակչությունը: Ներկայումս քաղաքներում է բնակվում երկրների բնակչության շուրջ 68%-ը: Խոշոր քաղաքները գտնվում են գետափերին և ծովափերին: Միլիոնանոց քաղաքները շատ են (Բուդապեշտ, Կիև, Բուխարեստ, Վարշավա, Պրահա, Մինսկ, Սոֆիա, Խարկով և այլն):

Չեխիայի մայրաքաղաք **Պրահան** (բնակչությունը՝ 1,2 մլն) միջնադարյան եվրոպական ճարտարապետական մշակույթը պահպանած քաղաքներից է: Հին Պրահայի պատմամշակութային կոթողներից է Ստարո Մեստի հրապարակը իր պատմական շինություններով: Այստեղ զբոսաշրջիկներին գրավում է քաղաքապետարանի շենքն իր նշանավոր աստղաբաշխական ժամացույցով: XV դարում ստեղծված այդ ժամացույցը, սովորական ժամանակից բացի, ցույց է տալիս Արեգակի, Լուսնի, Բևեռային աստղի և մի քանի համաստեղությունների դիրքերը:

Պրահայի տեսարժան վայրերից է XIV դարում Վլտավա գետի վրա կառուցված Կառլի կամուրջը: Պրահայի հինգ թաղամասեր մտցվել են համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանների ցուցակի մեջ:



Եվրասիայի բնակչության տեղաբաշխումը և տարաբնակեցումը

Բուդապեշտը Հունգարիայի միակ միլիոնանոց քաղաքն է: Քաղաքն առաջացել է Դանուբ գետով բաժանված միջնադարյան Բուդա և Պեշտ քաղաքների միացումից: Այն ավելի քան 2000-ամյա պատմություն ունեցող բնակավայր է՝ հարուստ պատմաճարտարապետական կոթողներով: Հաճախ Բուդապեշտն անվանում են «Դանուբի մարգարիտ»:

Կառլի կամուրջը

Ուկրաինայի մայրաքաղաք **Կիևը** Արևելյան Եվրոպայի ամենախոշոր քաղաքն է (բնակչությունը՝ 2,7 մլն մարդ): Այն Դնեպրի ափին սփռված խոշոր, տնտեսական, գիտակրթական, մշակութային կենտրոն է:

Կիևը սլավոնական քաղաքակրթության ձևավորման պատմական օրրաններից է: Հիմնվել է VI-VII դարերում: IX-XI դարերում այստեղ է ձևավորվել այդ ժամանակների Եվրոպայի հզոր երկրներից Կիևյան Ռուսիայի ռազմական, քաղաքական և տնտեսական միջուկը: Այդ և հետագա ժամանակներում կառուցված ճարտարապետական մի շարք գլուխգործոցներ ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկի մեջ: Դրանցից են Կիևապեչորյան մայրավանքը, Սոֆիայի և Միխայլովյան ոսկեզօծ գմբեթներով տաճարները, Մարինյան պալատը և այլն:

Հայերը Արևելյան Եվրոպայում հայտնվել են դեռևս միջնադարում: Գրեթե բոլոր երկրներում գործել են հայկական համայնքներ, հիմնվել եկեղեցիներ, տպարաններ, դպրոցներ, հրատարակվել են գրքեր, թերթեր և ամսագրեր:

XIV-XVIII դարերում հայկական բարգավաճ համայնքներ են գործել Մոլդովայի, Ռումինիայի, Ուկրաինայի, Հունգարիայի, Բուլղարիայի և Լեհաստանի տարածքներում: Մինչև Հայոց մեծ եղեռնը աշխարհում ամենաստվար հայկական համայնքները ձևավորվել են այս տարածաշրջանում, հատկապես Լեհաստանում, Ուկրաինայում և Բուլղարիայում: Հայերը հիմնականում զբաղվել են առևտրով և արհեստագործությամբ: Նրանք ակտիվ մասնակցություն են ունեցել իրենց հյուրընկալած երկրների քաղաքական ու մշակութային կյանքին, շատերը դարձել են հայտնի գիտնականներ, մշակութային, պետական ու ռազմական գործիչներ և խոր հետք են թողել գիտության, գրականության ու արվեստի տարբեր ճյուղերում: Լեհաստանում հայերը նույնիսկ ստացել են հարկային և դավանանքի արտոնություններ: Պահպանվել է լեհական թագավոր Կազեմիժ Մեծի՝ 1367թ. հայ եկեղեցուն շնորհած արտոնագիրը:

Այժմ էլ Արևելյան Եվրոպայի շատ երկրներում հայերն ապրում են ակտիվ համայնքային կյանքով՝ իրենց կապերը չխզելով պատմական հայրենիքի՝ Հայաստանի հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ գործոններ են ազդել տարածաշրջանի բնակչության թվի աճի վրա:
2. Բնութագրեք տարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակը:
3. Ինչպիսի՞ ազգային և լեզվական կազմ ունի տարածաշրջանի բնակչությունը:
4. Խմբով ուսումնասիրեք Արևելյան Եվրոպայի որևէ երկրի քաղաքականության, գիտության և մշակույթի բնագավառներում հայազգի առնվազն երեք գործչի թողած ավանդը և պատրաստեք ռեֆերատ:
5. Բնութագրեք և համեմատեք տարածաշրջանի խոշոր քաղաքները:

ԴԱՍ 5. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Արևելյան Եվրոպայի երկրները, 1945-ից մինչև 1990-ական թվականները զարգանալով սոցիալիստական տնտեսվարման պայմաններում, էականորեն տարբերվեցին Արևմտյան Եվրոպայի երկրներից իրենց զարգացման մակարդակով և տնտեսությունների կառուցվածքով:



Եվրասիայի օգտակար հանածոները

Աշխարհում Արևելյան Եվրոպայի ՀՆԱ-ի բաժինը համեմատելի է նրա տարածքի և բնակչության բաժիններին (տես գծանկարը):

Արևելյան Եվրոպայի երկրների տնտեսությունները բնութագրվում են նաև կառուցվածքային նմանությամբ: Գրեթե բոլոր երկրների ՀՆԱ-ում մեծ է արտադրական ոլորտի ճյուղերի և զբոսաշրջության բաժինը:

Արևելյան Եվրոպայի արդյունաբերության ձևավորման գործոնների մեջ նշանակալից է **օգտակար հանածոների** դերը:

Արևելյան Եվրոպան քարածխի և հատկապես գորշ ածխի պաշարներով ամենահարուստ տարածաշրջաններից է: Տարածաշրջանի հյուսիսային հատվածով անցնում է Եվրոպայի գլխավոր «քարածխային առանցքը», որ ձգվում է Անգլիայից մինչև Դոն-

բաս (Ուկրաինա): Այդ առանցքի վրա են գտնվում Չեխիայի, Լեհաստանի և Ուկրաինայի ածխավազանները: Ամենախոշորը Լեհաստանում գտնվող Վերին Սիլեզիայի քարածխային ավազանն է, որ շարունակվում է նաև Չեխիայում՝ Օստրավայի ավազան անունով: Տարածաշրջանին բաժին է ընկնում գորշ ածխի համաշխարհային հանույթի 1/3-ը:



Տարածաշրջանը հայտնի է նաև նավթի, բնական գազի, ծծմբի, կերակրի ու կալիումական աղերի, ինչպես նաև քրոմի, պղնձի և ալյումինի հումքի հանքաքարի հանույթով:

Նավթի ու բնական գազի սեփական պաշարների վրա հիմնված արդյունաբերությունն առավել զարգացած է Ռումինիայում: Տարածաշրջանի մյուս երկրներում նավթամշակման արդյունաբերությունը զարգացել է ներկրվող նավթի հիման վրա, որի պատճառով այդ ճյուղի ձեռնարկությունները տեղաբաշխված են միջազգային նավթամուղների մերձակայքում և ծովային նավահանգիստներում: Օրինակ՝ Սլովակիայի, Լեհաստանի և Հունգարիայի գլխավոր նավթավերամշակող գործարանները կառուցվել են Ռուսաստանից ձգվող «Բարեկամություն» միջազգային նավթամուղի ուղեգծի հարևանությամբ:

Դանուբի խոշորագույն էլեկտրակայանը (Սերբիա)

Չնայած տարածաշրջանի երկրների էլեկտրաէներգիայի արտադրության մեծ բաժինը պատկանում է ջերմային էլեկտրակայաններին, բայց դեռևս մեծ է նաև ջրային և ատոմային էլեկտրակայանների դերը: Ամենախոշորը Ռումինիայի և Հարավսլավիայի (Սերբիայի) սահմանին՝ Դանուբի վրա համատեղ ուժերով կառուցված «Երկաթե դարպասներ» ջրաէլեկտրահանգույցն է:

Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում **սև մետաղաձուլությունը** չունի բավարար վառելիքահումքային բազա, ուստի XX դարի 50-60 թթ. կառուցված մետալուրգիական գործարաններն աշխատում էին Կոիվոյ Ռոգի (Ուկրաինա) և ԿՄԱ[1]-ի (Ռուսաստան) հանքավայրերից բերվող երկաթի հանքաքարի հիման վրա: Անհրաժեշտ կոքսացող ածուխն առկա է Ուկրաինայում, Լեհաստանում և Չեխիայում, որտեղ և ձևավորվել են ամենահզոր՝ Դոնբասի, Վերին Սիլեզիայի և Օստրավայի մետալուրգիական շրջանները:

Գունավոր մետաղների (պղինձ, ցինկ, կապար, ալյումին, սնդիկ, տարբեր հազվագյուտ մետաղներ) արտադրությամբ աչքի են ընկնում Լեհաստանը, Բուլղարիան, Հունգարիան և Ռումինիան:

1. Կուրսկի մագնիսական անոմալիա:

Մեքենաշինությունը արտադրանքի ծավալով և զբաղվածների թվով առաջատար տեղ է գրավում: Համեմատաբար զարգացած են տրանսպորտային մեքենաշինությունը (ավտոմոբիլաշինություն, էլեկտրաքարշների, մարդատար վագոնների արտադրություն), հաստոցաշինությունը, էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը: Հատկապես առանձնանում է Չեխիայի «Շկոդա» ավտոմոբիլաշինական գործարանների համալիրը:

Արևելյան Եվրոպայի երկրների արդյունաբերության համար հատկանշական է եղել դրա կախվածությունը հումքի և վաճառահանման արտաքին՝ գլխավորապես սոցիալիստական երկրների շուկայից: Սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո Եվրամիության կազմում ընդգրկված երկրներում ձևավորվում են համաշխարհային շուկայի հետ ավելի սերտ տնտեսական կապեր:

Գյուղատնտեսությունը: Տարածաշրջանի երկրները, ընդհանուր առմամբ, գյուղատնտեսության զարգացման համար ունեն նպաստավոր բնառեսուրսային նախադրյալներ: Տարածքի կեսը զբաղեցնում են ցածրադիր հարթավայրերը, որոնց 70%-80%-ը վարելահողեր են: Տարածաշրջանի մեղմ կլիման նույնպես շատ նպաստավոր է թե՛ բուսաբուծության, թե՛ անասնապահության զարգացման համար:

Գյուղատնտեսության զարգացումը տարբեր երկրներում իրականացվում է տարբեր տեմպերով և արդի պայմաններում միանգամայն տարբեր մակարդակների վրա է: Երկրների մի մասում բարձր է ազարակային տնտեսությունների (Լեհաստան, Ռումինիա), մյուսներում՝ կոոպերատիվ և պետական տնտեսությունների (Ուկրաինա, Հունգարիա) տեսակարար կշիռը:

Վարդի թերթիկների բերքահավաք (Բուլղարիա)

Տարածաշրջանի հյուսիսային և միջին մասի երկրների գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է, մասնավորապես տավարաբուծությունը և խոզաբուծությունը: Այս երկրներին բաժին է ընկնում մսի, հացահատիկի, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի արտադրության գերակշիռ մասը: Տարածաշրջանի հարավային մասի երկրների (Բուլղարիա, Ռումինիա) գյուղատնտեսական արտադրանքում բարձր է բուսաբուծության բաժինը: Գլխավոր մշակաբույսերն են ցորենը, եգիպտացորենը, ձիթապտուղը, խաղողը, ծխախոտը, բանջարեղենը, եթերայուղատուները: Վարդի յուղի արտադրությամբ Բուլղարիան աշխարհում առաջինն է: Նա, միաժամանակ, աշխարհում ծխախոտի խոշորագույն արտադրողներից է:

Կառլովի Վարի առողջարանային քաղաքը

Արևելյան Եվրոպայի տարածքը հայտնի է որպես **հանգստի և զբոսաշրջության զարգացած շրջան**:

Հռչակավոր են Կառլովի Վարի առողջարանային կենտրոնը Չեխիայում և Բուլգարիայի, Ուկրաինայի ու Ռումինիայի սևծովափնյա գոտին:

Շատ են պատմամշակութային տեսարժան վայրերը: Որպես միջազգային զբոսաշրջության կենտրոններ առավել հայտնի են Պրահան և Բուդապեշտը:

Տրանսպորտը: Տարածաշրջանի բնական պայմաններն ընդհանուր առմամբ նպաստավոր են հաղորդակցության ուղիների զարգացման համար: Արևելյան Եվրոպայի երկրների հնագույն տրանսպորտային ուղիները եղել են գետերը, հատկապես Դանուբը և մերձափնյա Սև ծովը, իսկ ներկայումս առաջատարը երկաթուղային տրանսպորտն է: Ստեղծվել է երկաթուղիների բավականին խիտ ցանց, որը կապում է երկրները միմյանց և հարևան երկրներին: Մեծանում է ավտոմոբիլային տրանսպորտի նշանակությունը:

Ջրային տրանսպորտի զարգացման համար մեծ նշանակություն ունեն ծովային նավահանգիստները, որոնք նախ և առաջ միջազգային առևտրի գլխավոր դարպասներն են: Հատկապես առանձնանում են. Բուլղարիայում՝ Բուրգասը, Ռումինիայում՝ Կոնստանցան, Ուկրաինայում՝ Օդեսան: Գետերից առավել մեծ նշանակություն ունեն Դանուբը, Օդրան (Լեհաստանում այդպես է կոչվում Օդերը), Վիսլան և Դնեպրը: «Երկաթե դարպասներ» ջրահանգույցի կառուցումը և դրան կից նավանցման հարմարությունների շինարարությունը բարելավեցին Դանուբի նավարկելիությունը:

Արևելյան Եվրոպայի տարածքում հատվում են միջազգային կարևոր նշանակություն ունեցող օդային, երկաթուղային և ավտոմոբիլային տարանցիկ գծեր: Դրանք Ռուսաստանն ու ասիական երկրները կապում են Արևմտյան Եվրոպային, իսկ Հյուսիսային Եվրոպան՝ Հարավային Եվրոպային:

Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը, անդամակցելով Եվրամիությանը, պահպանում է նաև ավանդական տնտեսական կապերը Ռուսաստանի հետ:

Հայաստանի հետ շարունակաբար զարգացող տնտեսական կապերով արևելաեվրոպական երկրներից առաջատար դիրքերում են Ուկրաինան և Բելառուսը:

Տարածաշրջանն արտահանում է սև և գունավոր մետաղներ, քարածուխ, ծծումբ, տրանսպորտային միջոցներ, մեքենաներ, սննդի և թեթև արդյունաբերության արտադրանք, այդ թվում՝ գինի, գարեջուր, հանքային ջրեր, պահածոներ, դեղորայք, կոշկեղեն, տեքստիլ արտադրանք: Ներմուծում է հեղուկ վառելիք, բնական գազ, երկաթի հանքաքար և հումքի այլ տեսակներ, ինչպես նաև պատրաստի արդյունաբերական արտադրանք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Արևելյան Եվրոպայի տնտեսական զարգացման առանձնահատկությունները և ժամանակակից միտումները:
2. Բնութագրե՛ք օգտակար հանածոների դերը արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման գործում: Նշե՛ք տարածաշրջանի խոշոր արդյունաբերական կենտրոններն ու գլխավոր նավահանգիստները:
3. Գնահատե՛ք Դանուբ գետի դերը Արևելյան Եվրոպայի երկրների տնտեսության մեջ:
4. Փորձե՛ք կանխատեսել տարածաշրջանի տնտեսական զարգացման հեռանկարները:

ԴԱՍ 6. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՌՈՒՍԱՍՏԱՆ). ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Տարածքը՝ 17,1 մլն կմ^2
Բնակչությունը՝ 143 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Մոսկվա
Պետական կարգը՝ նախագահական հանրապետություն

Տարածքի մեծությամբ, բնական ռեսուրսների հարստությամբ, բնակչության ազգային ու կրոնական կազմի բազմազանությամբ, տնտեսական ու ռազմական հզորությամբ Ռուսաստանն աշխարհում իր առանձնահատուկ տեղն ու դերն ունեցող ինքնատիպ պետություն է: Սլավոնական (ուղղափառ) քաղաքակրթության խոշորագույն երկիրն է:

Ռուսաստանի Դաշնության **վարչատարածքային կառուցվածքը** բարդ է: Դա պատմական տևական գործընթացների արդյունք է: Ռուսաստանի կազմում կան թե՛ քաղաքական-տարածքային, թե՛ վարչատարածքային միավորներ:

Ռուսաստանի՝ որպես դաշնային հանրապետության քաղաքական-տարածքային միավորներն առանձնացված են ազգային (էթնիկ) սկզբունքով: Դրանք, երկրի սահմանադրությամբ, ինքնավարություն ունեցող պետական տարածքային միավորներ են: Այդպիսի քաղաքական ինքնուրույնություն ունեցող տարածքները Ռուսաստանում կոչվում են **հանրապետություններ** (Թաթարստանի, Դաղստանի, Սախա (Յակուտիայի), Չեչնիայի և այլն): Որպես քաղաքական-տարածքային միավոր՝ հանրապետությունն ունի սեփական կառավարություն, խորհրդարան, սահմանադրություն, պետական-ազգային խորհրդանիշներ (դրոշ, զինանշան, օրհներգ):

Երկրամասը, որպես վարչատարածքային միավոր, նախկինում ներառում էր քաղաքական որոշակի ինքնուրույնություն ունեցող ինքնավար մարզեր: Ներկայումս դրանցից պահպանվել է միայն մեկը[1]՝ Խաբարովսկի երկրամասի Հրեական ինքնավար մարզը: Իսկ 2007 թվականից հետո ձևավորված Պերմի, Կրասնոյարսկի, Կամչատկայի, Անդրբայկալի երկրամասերը իրենց կազմում ներառում են ինքնավար ազգային օկրուգներ:

Ներկայումս Ռուսաստանի կազմում կան 22 հանրապետություն[2], մեկ ինքնավար մարզ, 4 ինքնավար օկրուգ, 9 երկրամաս և 46 մարզ (տես «Ռուսաստանի Դաշնություն. հանրապետություններ և երկրամասեր» քարտեզը):

Ռուսաստանում վարչատարածքային նոր բարեփոխումների շրջանակներում առանձնացված **դաշնային նշանակության քաղաքներ** են Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը և Սևաստոպոլը (Ղրիմի Հանրապետության տարածքում):

Ռուսաստանի դաշնային ներկա վարչաքաղաքական կառուցվածքը ձևավորվել է 1917թ. երկրում խորհրդային իշխանության հաստատումից հետո: Ռուսաստանի կազմում այն ազգային փոքրամասնությունները (թաթարներ, բաշկիրներ և այլն), որոնք համեմատաբար բազմամարդ էին և կենտրոնացած էին հավաք տարածքում, ձեռք

1. Չնայած դրան՝ մյուս երկրամասերը (օրինակ՝ Կրասնոդարի, Ստավրոպոլի և այլն) շարունակել են պահպանել իրենց վարչատարածքային այդպիսի միավորի անվանումները:

2. 2014-ին դաշնային հանրապետության կարգավիճակով Ռուսաստանի կազմի մեջ է ներառվել Ուկրաինային պատկանող Ղրիմը:

բերեցին որոշ ինքնուրույնություն, և այդ տարածքները դարձան Խորհրդային Ռուսաստանի դաշնային պետության քաղաքական-տարածքային միավորներ, իսկ մյուս՝ գերազանցապես ռուսաբնակ տարածքները բաժանվեցին վարչատարածքային միավորների՝ մարզերի:

Դաշնային տարածքային կառուցվածքը պահպանվում է նաև 1991թ. Ռուսաստանի Դաշնության անկախության հռչակումից ի վեր:

Ռուսաստանի աշխարհագրական դիրքը չունի միանշանակ ու ընդհանրական գնահատական: Վիթխարի տարածքի և սահմանների շատ մեծ ձգվածության պատճառով նրա տարբեր մասերի աշխարհագրական դիրքը խիստ տարբեր է: Նա ունի ինչպես բարենպաստ, այնպես էլ անբարենպաստ և նույնիսկ ծայրահեղ անբարենպաստ դիրք ունեցող շրջաններ:

Աշխարհում չկա որևէ այլ պետություն, որը ցամաքում սահմանակից լինի այնքան շատ երկրների, ինչքան Ռուսաստանը: Դրանք 15-ն են:

Անշուշտ, շատ պետությունների հետ ընդհանուր սահման ունենալը դրական գործոն է տնտեսական կապերի հաստատման և տնտեսության զարգացման համար: Սակայն, ինչպես երևում է Ռուսաստանի քարտեզից, այդ գործոնի բարերար ազդեցությունը զգալի է Ռուսաստանի միայն արևմտյան և մասամբ հարավային շրջաններում, որոնք ունեն մերձավոր հարևաններ և նրանց հետ կապված են երկաթուղիներով ու ավտոճանապարհներով: Դրան հակառակ՝ երկրի տարածքի կեսից ավելին կազմող հյուսիսային և արևելյան շրջանները զուրկ են անմիջական ցամաքային հարևաններից, որոնց հետ կարող էին համագործակցել և զարգացնել տնտեսությունը: Դրանց ափերը ողողող Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի և Խաղաղ օվկիանոսի ծովերը սառցապատման պատճառով տարվա մի զգալի մասը նավարկելի չեն: Բացի դրանից՝ խիստ աննպաստ է այդ շրջանների նաև ֆիզիկաաշխարհագրական դիրքը. դրանք գտնվում են աշխարհագրական բարձր լայնություններում, որտեղ խիստ ցամաքային կլիման, գետնահողի մշտական սառածությունը խոչընդոտում են այդ տարածքների յուրացմանն ու տնտեսական զարգացմանը:

Կարելի է դրական գնահատել, որ իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Ռուսաստանը շատ կարևոր տարանցիկ դեր ունի (հատկապես երկաթուղիների միջոցով) Եվրոպայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի տնտեսապես զարգացած երկրների, ինչպես նաև Հյուսիսային ու Արևելյան Եվրոպայի և Հարավարևմտյան Ասիայի միջև:

Յուրօրինակ է Ռուսաստանի **քաղաքաաշխարհագրական** դիրքը: Ռուսաստանի սահմանների մեծ մասը ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող նախկին միութենական հանրապետությունների հետ է, որոնցից մեծ մասի հետ (բացառությամբ մերձբալթյան հանրապետությունների, Ուկրաինայի և Վրաստանի) միավորված է Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ) կազմակերպության մեջ: Այդ ամենի հետևանքով էապես փոխվել է Ռուսաստանի Դաշնության տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքերի գնահատականը: Ռուսաստանն արևմուտքում սահմանակցում է Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ երկրներից Լատվիային և Էստոնիային ու չեզոք երկիր Ֆինլանդիային: Այդ դաշինքի կազմում Արևելյան Եվրոպայի երկրների (Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Չեխիա, Սլովակիա) ներառվելուց հետո Ռուսաստանի քաղաքաաշխարհագրական դիրքը վատթարացել է, իսկ Ռուսաստանի և Հյուսիսատլանտյան դաշինքի միջև ռազմաքաղաքական մրցակցությունն ավելի է սրվել:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ. հանրապետություններ և երկրամասեր

Մոսկվա
ՌՈՒՍԱՍՏԱՆ
ՍԱԽԱՅԻ (ՅԱԿՈՒՏԻԱ)
ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿԻ ԵՐԿՐԱՄԱՍ
ՊԵՐՄԻ ԵՐԿՐԱՄԱՍ
ԿԱՄՉԱՏԿԱՅԻ ԵՐԿՐԱՄԱՍ
ԽԱԲԱՐՈՎՍԿԻ ԵՐԿՐԱՄԱՍ
ԱԼԹԱՅԻ ԵՐԿՐԱՄԱՍ
ԱՆԴՐԵՅԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՊՐԻՄՈՐՍԿԻ ԵՐԿՐԱՄԱՍ
ՍԱՄԱՐԱՅԻ ՄԱՐԶ
ՍՊԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դրան հակառակ՝ Ռուսաստանը ԱՊՀ անդամ մի քանի պետությունների (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան) հետ ստեղծել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ), որը նախատեսում է ռազմական փոխհամագործակցություն, իսկ կազմակերպության անդամ որևէ երկրին ռազմական սպառնալիքի դեպքում՝ անհետաձգելի փոխօգնության պարտավորություն:

Ռուսաստանի Դաշնությունը հանդես է գալիս որպես ԽՍՀՄ-ի իրավահաջորդ: Դրա շնորհիվ, օրինակ, ԽՍՀՄ-ի փոխարեն այժմ Ռուսաստանի Դաշնությունն է համարվում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հիմնադիրներից և նրա Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամներից մեկը:

Ռուսաստանի Դաշնությունը միջազգային հարաբերություններում առանցքային դեր ունեցող պետություն է և ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացների վրա անմիջականորեն ազդող եզակի երկրներից: ՌԴ-ն կարևոր դերակատարություն ունի նաև ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության մեջ՝ լինելով Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հովանու ներքո գործող «Մինսկի խմբի»[1] կազմում կողմերից մեկը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Ռուսաստանի քաղաքական տարածքային և վարչատարածքային միավորները: Ի՞նչ գործոնների ազդեցության շնորհիվ է ձևավորվել ներկայիս վարչատարածքային կառուցվածքը:
2. Խմբային աշխատանքի միջոցով առանձնացրե՛ք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք հանրապետությունները, երկրամասերը, ինքնավար օկրուգները և մարզերը:
3. Բացատրե՛ք Ռուսաստանի ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական, քաղաքաաշխարհագրական դիրքերի գլխավոր առանձնահատկությունները:
4. Ինչո՞ւ են Ռուսաստանի տնտեսաաշխարհագրական, քաղաքաաշխարհագրական դիրքերը ժամանակի ընթացքում փոփոխություններ կրել:
5. Որո՞նք են Ռուսաստանի տրանսպորտաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները:
6. Վերլուծե՛ք, թե ինչու է Ռուսաստանը միջազգային հարաբերությունների ասպարեզում ձգտում առաջատար դիրքերում մնալ:

ԴԱՍ 7. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Զարգացման բնական նախադրյալները: Ռուսաստանն աշխարհում առաջինն է ոչ միայն իր տարածքի մեծությամբ, այլև բնակլիմայական պայմանների ու ռեսուրսների բազմազանությամբ:

Բազմազան են նախ և առաջ մակերևույթի ձևերը: Իրենց մեծությամբ առանձնանում են Արևելաեվրոպական կամ Ռուսական հարթավայրը, Արևմտասիբիրական դաշտավայրը, Մերձկասպյան ցածրավայրը և Միջինսիբիրական սարահարթը, տարբեր բարձրության խոշոր լեռնաշղթաները, ընդարձակ բարձրավանդակները և այլն:

1. «Մինսկի խմբի» անդամ պետություններն են Ռուսաստանը, Ֆրանսիան և ԱՄՆ-ը:

Մակերեսով տիրապետողը հարթավայրերն են: Լեռները տարածվում են արևելյան և հարավային շրջաններում:

Մակերևույթի ձևերի բազմազանությունն իր հերթին պայմանավորում է նաև մարդկանց կյանքի ու արտադրական գործունեության համար կարևոր դեր կատարող բնական պայմանների բացառիկ բազմազանությունը:

Բազմազան են նաև Ռուսաստանի կլիմայական պայմանները: Բազմազանությունը պայմանավորված է տարածքի մեծությամբ, աշխարհագրական դիրքով և մակերևույթի առանձնահատկություններով:

Ռուսաստանի եվրոպական տարածքի հյուսիսային մասում և Սիբիրում գետնի վերին շերտը մշտապես սառած է: Դրանք **բազմամյա սառածության** շրջաններ են և գրավում են Ռուսաստանի տարածքի կեսից ավելին: Գետնի բազմամյա սառածությունը դժվարություններ է հարուցում տարածքի տնտեսական յուրացման և հատկապես գյուղատնտեսական ու շինարարական աշխատանքների համար:

Օգտակար հանածոների հարստությամբ ու բազմազանությամբ նույնպես Ռուսաստանը բացառիկ տեղ է գրավում աշխարհում: Չկա օգտակար հանածոյի որևէ տեսակ, որի արդյունաբերական նշանակություն ունեցող պաշարներ այստեղ հայտնաբերված չլինեն: Հատկապես մեծ են **սև** և **գունավոր մետաղների, հանքաքարի,** ինչպես նաև **ածխի, նավթի, բնական գազի** և **ալմաստի պաշարները**: Ռուսաստանն աշխարհում առաջինից երրորդ տեղերն է զբաղեցնում երկաթաքարի, կալիումական աղերի, բնական գազի, ածխի, անտառափայտի և ջրաէներգետիկական ռեսուրսներով: Բնական ռեսուրսների մեծ մասը տեղաբաշխված է երկրի արևելյան մասում՝ Սիբիրում և Հեռավոր Արևելքում: Դա էլ հանգեցնում է ռեսուրսները արևելքից արևմուտք փոխադրելու խնդրին:

Երկաթաքարի հանույթը Կուրսկի մագնիսական անոմալիայի հանքավայրում

Երկաթի հանքաքարի հիմնական պաշարները կուտակված են **Կուրսկի մագնիսական անոմալիա** (ԿՄԱ) կոչվող հանքավայրերի խմբում: Այստեղ կենտրոնացված է երկրի երկաթաքարի պաշարների 55%-ը: Շահագործվում են մի քանի հանքավայրեր:

Երկաթաքարի խոշոր կուտակումներ կան նաև **Ուրալյան լեռներում** (Բլագոդատ, Կաչկանար և Մագնիտնայա հանքավայրեր): Դրանց օգտագործումը սկսվել է հարյուրավոր տարիներ առաջ: Իր նշանակությամբ երրորդ տեղում է **Արևելյան Սիբիրը**:

Ռուսաստանը շատ հարուստ է նաև **գունավոր մետաղներով**: Տնտեսական մեծ արժեք են ներկայացնում պալադիումի[1], պղնձի, նիկելի, ցինկի, անագի, ոսկու, ալյումինի հումքի հանքաքարերի պաշարները:

Ռուսաստանում է պալադիումի համաշխարհային պաշարների շուրջ 90%-ը:

Ոսկու պաշարներով Ռուսաստանն աշխարհում գրավում է 2-րդ տեղը՝ զիջելով միայն Հարավաֆրիկյան Հանրապետությանը: Ոսկու հանքաքարի պաշարների խոշո-

1. Պալադիում մետաղն օգտագործվում է սուզանավերում և ավտոմեքենաներում՝ ածխաթթու գազը չեզոքացնելու համար:

բագույն շրջանը Հեռավոր Արևելքն է. հատկապես առանձնանում են Մագադանի մարզը և Սախա-Յակուտիայի Հանրապետությունը:

Բոքսիտների (ալյումինի հանքային հումքի) խոշոր հանքավայրեր կան Ուրալում, Կոլա թերակղզում, Կարելական Հանրապետությունում:

Պղնձի և **նիկելի** հարուստ պաշարներով աչքի են ընկնում Ուրալը և Արևելյան Սիբիրը (Նորիլսկի հանքավայրերի խումբը):

Համաշխարհային հռչակ ունեն **ալմաստների** և **գունագեղ թանկարժեք քարերի** հանքավայրերը, որոնց պաշարներով բացառիկ են Սախա-Յակուտիան և Արխանգելսկի մարզը: Ալմաստի պաշարներով Ռուսաստանը զիջում է միայն Հարավաֆրիկյան Հանրապետությանը:

Ածխի պաշարներով Ռուսաստանն աշխարհում առաջատար տեղ է գրավում: Կարևորագույններն են Կուզնեցկի, Պեչորայի և Կանսկ-Աչինսկի ավազանները: Հեռանկարում կարելի է շահագործել նաև Լենայի և Տունգուսկայի ավազանները: Ածխի պաշարների 90%-ը գտնվում է Սիբիրում և Հեռավոր Արևելքում:

Ռուսաստանն աչքի է ընկնում նաև **նավթի հարուստ պաշարներով**: Դրանց 70%-ը Արևմտյան Սիբիրում է: Նշանավոր են Սուրգուտի, Նիժնեվարտովսկի, Սամոտլորի հանքավայրերը: Կարևոր նավթագազաբեր շրջան է Վոլգայի և Ուրալյան լեռների միջև ընկած ընդարձակ տարածքը: Հայտնի են նաև Հյուսիսային Կովկասի, Պեչորայի ավազանի և Սախալին կղզու հանքավայրերը:

Վերը նշված նավթաբեր շրջանները միաժամանակ նաև հզոր **գազաբեր շրջաններ** են: Բնական գազի պաշարներով Ռուսաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Այդ պաշարների 85%-ը բաժին է ընկնում Արևմտասիբիրական հարթավայրին: Նավթի և գազի խոշոր պաշարներ են հայտնաբերվել Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծանծաղուտում:

Ռուսաստանը առանձնանում է նաև **քիմիական հումքի**, հատկապես կալիումական աղերի, ֆոսֆորի հումքի՝ ապատիտների ու ֆոսֆորիտների խոշոր պաշարներով: Հայտնի են կալիումական աղերի Վերին Կամայի հանքավայրերը (Սոլիկամսկ, Բերեզնիկի): Կոլա թերակղզում է գտնվում Խիբինի՝ ապատիտների ու ֆոսֆորիտների խոշորագույն հանքավայրը:

Ռուսաստանը հարուստ է **ջրային ռեսուրսներով**, այդ թվում և խոշոր ջրառատ գետերով: Սակայն դրանք նույնպես տեղաբաշխված են անհավասարաչափ: Գետերը պատկանում են երեք օվկիանոսների, ինչպես նաև ներքին հոսքի ավազաններին:

Գետերը մեծ մասամբ հարթավայրային են և նավարկելի, օգտագործվում են նաև լաստերի[1] միջոցով անտառանյութի առաքման համար:

Մեծ են Ռուսաստանի գետերի **էներգետիկական ռեսուրսները**: Հատկապես առանձնանում են արագահոս և ջրառատ Ենիսեյն իր Անգարա վտակով և Վոլգան: Դրանց վրա կառուցվել են խոշոր ջրէկների կասկադներ:

Ռուսաստանում կլիմայական գոտիներին համապատասխան զոնայական տարածում ունեն **հողաբուսական ծածկույթը** և **կենդանական աշխարհը**:

Հյուսիսից հարավ ուղղությամբ օրինաչափորեն իրար են հաջորդում հողային տիպերը: Հատկապես մեծ արժեք են ներկայացնում երկրի հարավի **սևահողերը**: Բարձր է դրանց բնական բերրիությունը: Աշխարհի սևահողերի զգալի մասը Ռուսաս-

1. Իրար միացված գերանախմբեր, որոնք լողում են գետի հոսանքի ուղղությամբ:

տանում է: Այս առումով առանձնանում է կենտրոնական սևահողային գոտին: Սևահողի շերտի հաստությունը 3-4 մ է, իսկ տեղ-տեղ՝ մի քանի անգամ ավելի:

Կենսաբանական ռեսուրսներից կարևոր նշանակություն ունեն անտառային ռեսուրսները: Անտառածածկ է երկրի տարածքի մոտ 45%-ը: Տնտեսական օգտագործման տեսակետից առավել արժեքավոր են ասեղնատերև ծառատեսակները: Աշխարհի ասեղնատերև անտառների համարյա կեսը գտնվում է Ռուսաստանում: Անտառափայտի պաշարներով Ռուսաստանը զիջում է միայն Լատինական Ամերիկային:

Ռուսաստանի արժեքավոր բուսատեսակներից է ժենշենը (կյանքի արմատ), որը հանդիպում է Պրիմորիեի և Խաբարովսկի երկրամասերում:

Բազմազան ու հարուստ է **կենդանական աշխարհը**: Շատ են հատկապես թանկարժեք մորթի ունեցող գազանները, որոնց մորթիների մշակումը դարձել է Ռուսաստանի արևելյան անտառաշատ շրջանների տնտեսության ինքնուրույն և եկամտաբեր ճյուղ:

Ռուսաստանի տարածքում մեծ հնարավորություններ կան հանգստի և զբոսաշրջության համար: Դրան նպաստում են բազմաբնույթ **ռեկրեացիոն ռեսուրսները**, նպաստավոր բնակլիմայական պայմանները, ծովափնյա և լեռնային շրջանները, հատկապես Հյուսիսային Կովկասի (Կիսլովոդսկ, Մինևրալնիե Վոդի, Ժելեզնովոդսկ և այլն) հանքային բուժիչ ջրերն ու ցեխերը: Այդ ամենը հիմք է ծառայում առողջարանների ու հանգստի վայրերի ստեղծման համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բացատրեք, թե Ռուսաստանի տարածքի վիթխարի չափերը և բնական պայմանների բազմազանությունը ինչ առավելություններ ու խոչընդոտներ են ստեղծում տնտեսության զարգացման համար:
2. Բնութագրեք Ռուսաստանի ընդերքի հարստությունները: Թվարկեք այն օգտակար հանածոները, որոնց պաշարներով այդ երկիրն աշխարհում առաջատար տեղ է գրավում:
3. Ռուսաստանն արդյոք հարուստ է վառելիքային օգտակար հանածոներով: Թվարկեք հիմնական տեսակները և քարտեզի վրա ցույց տվեք խոշոր հանքավայրերը:
4. Ինչ մետաղային ռեսուրսներով է հարուստ Ռուսաստանը, ինչպես են տեղաբաշխված դրանց գլխավոր հանքավայրերը:
5. Բնութագրեք Ռուսաստանի ջրային ռեսուրսները:
6. Տվեք Ռուսաստանի հողաբուսական, կենդանական և ռեկրեացիոն ռեսուրսների համառոտ բնութագիրը:

ԴԱՍ 8. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի Դաշնությունը բնակչության թվով Եվրասիայի վեցերորդ պետությունն է: Ռուսաստանը նաև աշխարհի այն երկրներից է, որտեղ **«ժողովրդագրական ճգնաժամ է»**, այսինքն՝ Ռուսաստանի բնակչության բնական աճի ցուցանիշը բացասական է, և բնակչության բացարձակ թիվը նվազում է: Այդ պատճառով էլ Ռուսաստանը վերջին տարիներին վարում է ծնելիության խրախուսման պետական քաղաքականություն (յուրաքանչյուր երեխայի համար ընտանիքին տրվող միանվագ դրա-

մական նպաստները, բազմազավակ ընտանիքներին անհատույց բնակարանների հատկացումը և այլն), ինչը որոշակիորեն մեղմում է բնական աճի բացասական ցուցանիշները:

Մեծ քանակությամբ ռուսներ Ռուսաստան են վերադառնում հետխորհրդային անկախացած երկրներից, հատկապես Ղազախստանից, Ուզբեկստանից, Ուկրաինայից: Ռուսաստան են գալիս ԱՊՀ երկրների այլ ազգերի ներկայացուցիչներ ևս՝ ուզբեկներ, տաջիկներ, ադրբեջանցիներ, հայեր: Մեծ թիվ են կազմում այլ երկրներից ներգաղթող այլազգիները (Չինաստանից, Եթովպիայից, Սոմալիից, Իրաքից):

Ռուսաստանում նկատելի է նաև արտագաղթի երևույթը: Երկրից հեռանում են գերմանացիները, հրեաները, նաև մեծ թվով ռուսներ:

Ծնելիությունը Ռուսաստանում, 2012թ. (1000 մարդու հաշվով)

Էական փոփոխություններ է կրում բնակչության **սեռատարիքային** կազմը: Նոր ծնվածների թվի նվազումը հանգեցնում է բարձր տարիք ունեցողների բաժնի ավելացման՝ «բնակչության ծերացման»:

Ռուսաստանն աչքի է ընկնում նաև բնակիչների, հատկապես տղամարդկանց, կյանքի ոչ բարձր միջին տևողությամբ (66 տարի): Դրա գլխավոր պատճառներն են բնակչության ոչ բարձր կենսամակարդակը և ալկոհոլի չափազանց շատ օգտագործումը:

Շատ խայտաբղետ է բնակչության **ազգային կազմը**:

Բազմազգությունը մշտապես եղել է Ռուսաստանի բնակչության բնորոշ հատկանիշը: Ներկայումս Ռուսաստանում բնակվում են ավելի քան 100 ժողովուրդների ներկայացուցիչներ:

Ռուսաստանի Դաշնության արմատական ժողովուրդների լեզուները պատկանում են չորս տարբեր **լեզվաընտանիքների**՝ հնդեվրոպական, ալթայան, կովկասյան, ուրալյան: Բնակչության ճնշող մեծամասնությունը խոսում է հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներով:

2010թ. մարդահամարի տվյալներով՝ ռուսները կազմում են երկրի բնակչության ընդհանուր թվի մոտ 80,9%-ը: Համեմատաբար մեծաքանակ բնիկ ազգություններով բնակեցված հավաք տարածքներից (հանրապետություններ, որոշ ինքնավար օկրուգներ) դուրս՝ Ռուսաստանի մյուս տարածքներում ռուսները բացարձակ գերակշռություն ունեն:

ՌԴ բնակչության ազգային կազմը (%, 2010թ.)



Ռուսները հատկապես մեծ գերակշռություն ունեն Ռուսաստանի Դաշնության եվրոպական մասում (բացառությամբ Վոլգա գետի միջին և ստորին հոսանքների ավազանների), Ուրալում և Սիբիրի հարավում: Թվաքանակով սլավոնական երկրորդ ժողովուրդը ուկրաինացիներն են (2 մլն մարդ):

Տեղաբնիկ ազգային փոքրամասնությունների մեջ քիչ չեն այնպիսիք, որոնց թիվը հաշվվում է մի քանի հազարով ու նույնիսկ հարյուրներով: Օրինակ՝ Սիբիրի հյուսիսում բնակվում են ալեութներ՝ ընդամենը 500 մարդ:

Բավական մեծաթիվ են ալթայան լեզվաընտանիքի թյուրքական լեզուներով խոսող ժողովուրդները՝ թաթարները (5,3 մլն մարդ), բաշկիրները (1,6 մլն մարդ), չուվաշները (1,4 մլն մարդ), յակուտները (0,35 մլն մարդ) և այլք:

Բնակչության ամենախայտաբղետ ազգային կազմ ունեն Մերձվոլգյան և Հյուսիսկովկասյան տարածաշրջանները: Ինչպես հստակ երևում է Ռուսաստանի վարչա-քաղաքական բաժանման քարտեզից, հենց այդ տարածաշրջաններում էլ գտնվում է ազգային հանրապետությունների մեծ մասը:

Ռուսաստանը **բազմակրոն** պետություն է. բնակչության գերակշիռ մասը ուղղափառ քրիստոնյաներ են՝ ռուսներ, ուկրաինացիներ և այլք: Մեծ թիվ են կազմում **մահմեդականները**՝ թաթարներ, չեչեններ, Դաղստանի ժողովուրդներ և այլք: **Բուդդայական (լամայական)** ուղղություն են դավանում կալմիկները, տուվացիները և բուրյաթները:

Ռուսաստանի բնակչության կարևոր առանձնահատկությունը նրա **խիստ անհավասարաչափ տեղաբաշխումն** է: Բնակչության ավելի քան 80%-ը բնակվում է երկրի ավելի փոքր՝ եվրոպական, և միայն 20%-ը՝ ընդարձակ՝ ասիական մասում: Միջին խտությունը մոտ 9 մարդ/կմ² է: Մինչդեռ ասիական տարածքներում 1 կմ²-ին միջինը ընկնում է 1 մարդ, Սիբիրի կենտրոնական շրջանում մի քանի հարյուր կմ²-ին՝ 1 մարդ: Միևնույն ժամանակ, Մոսկվայի շրջակայքում այդ ցուցանիշը գերազանցում է 330 մարդ/կմ²:

Քաղաքներ Ռուսաստանում հիմնվել են վաղ ժամանակներից: Միջնադարում առավել խոշոր քաղաքները ստեղծվել են գետերի ափերին ու առևտրական ուղիների երկայնքով: Դրանցից են Նովգորոդը, Սմոլենսկը, Մուրոմը: Հետագայում քաղաքներ ստեղծվել են Ռուսաստանին միացված նոր տարածքներում ու ծովափերին (Պետերբուրգը՝ Բալթիկ ծովի, Վլադիվոստոկը՝ Ճապոնական ծովի ափին):

Այդուհանդերձ՝ անցյալ դարի սկզբին Ռուսաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը բնակվել է գյուղերում:

Խորհրդային տարիներին, արդյունաբերության առաջանցիկ զարգացմանը և երկրի ինդուստրացմանը զուգընթաց, կառուցվել են բազմաթիվ նոր քաղաքներ, կտրուկ աճել է հին քաղաքների բնակչության թիվը: Ներկայումս քաղաքներում բնակվում է Ռուսաստանի բնակչության ավելի քան 73%-ը, իսկ խոշոր՝ 1 մլն-ից ավելի բնակիչ ունեցող քաղաքների թիվը հասել է 12-ի: Խոշոր քաղաքների շուրջը ձևավորվել են համեմատաբար փոքր **քաղաքների կուտակումներ**[1]: Այդպիսիք են Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Սամարայի, Նիժնի Նովգորոդի, Եկատերինբուրգի և այլ ագլոմերացիաները:

Գերխոշոր (1 մլն-ից ավելի բնակչությամբ) քաղաքներից են Մոսկվան (10 մլն մարդ), Սանկտ Պետերբուրգը (4,2 մլն), Նովոսիբիրսկը, Նիժնի Նովգորոդը, Եկատերինբուրգը, Սամարան, Օմսկը:

Իր առանձնահատկություններն ունի նաև **գյուղական տարաբնակեցումը**: Հյուսիսում գյուղերը ոչ միայն շատ փոքր են, այլև ցրված են հարյուրավոր կիլոմետրեր իրարից հեռու: Գյուղական տարաբնակեցման այդպիսի ձևը կոչում են **ագարակային** (խուտորային): Անտառատափաստաններին ու տափաստաններին բնորոշ են խոշոր գյուղերը: Ամենամարդաշատ գյուղերը տարածված են Հյուսիսային Կովկասում: Դրանք այստեղ կոչվում են **ստանիցաներ**:

Մոսկվայի համայնապատկեր

Ռուսաստանի բնակչության տեղաբաշխման մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրա վիթխարի տարածքում ձևավորվել են տարաբնակեցման երկու հստակ արտահայտված գոտիներ՝ **հիմնական** և **հյուսիսային**:

Հիմնականը երկրի **գլխավոր բնակեցման շերտն է**, որն ընդգրկում է երկրի ամբողջ եվրոպական մասը, բացառությամբ հյուսիսի, ապա, ձգվելով դեպի արևելք, Հարավային Ուրալից սկսած աստիճանաբար նեղանում է և Սիբիրի հարավով հասնում է Հեռավոր Արևելք: Դա Ռուսաստանի վաղ յուրացված տարածքն է և ունի բնակչության բարձր խտություն (միջինը՝ 50 մարդ/կմ^2): Այստեղ է գտնվում խոշոր քաղաքների մեծ մասը:

Տարաբնակեցման հիմնական գոտուց հյուսիս տարածվում է հյուսիսային գոտին: Տարաբնակեցումն այստեղ **օջախային** բնույթ ունի, այսինքն՝ բնակավայրեր կան իրարից հեռու ընկած տարածքներում՝ օգտակար հանածոների խոշոր շահագործվող հանքավայրերի մոտակայքում, գետերի հովիտներում, տրանսպորտային ուղիների

1. Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը կոչվում է քաղաքային ագլոմերացիա:

երկայնքով և նավահանգիստների մոտ: Բնակչության միջին խտությունը շատ ցածր է: Հարյուրավոր կիլոմետրերի վրա բացակայում են մշտական բնակավայրեր:

Բնակչության տեղաբաշխման ներկա պատկերի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել **միգրացիան**: Ռուսաստանի հիմնական տարածքից մշտապես տեղի է ունեցել բնակչության գաղթ դեպի նոր նվաճված և նոսր բնակեցված արևելյան տարածքներ: Դրա հետևանքով, Ռուսական կայսրության սահմանների ընդլայնման հետ մեկտեղ, մեծանում էր ռուս բնակչության միգրացիան կենտրոնական խտաբնակ շրջաններից դեպի պետության նոսր բնակեցված ծայրամասերը: Նույնը տեղի էր ունենում նաև ԽՍՀՄ-ի օրոք: ԽՍՀՄ-ի փլուզման պահին Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս, նորանկախացած երկրներում, բնակվում էր ավելի քան 25 մլն ռուս բնակչություն: Դրա զգալի մասը հետագա տարիներին ներգաղթեց Ռուսաստան:

Ռուսաստանի ներսում ներկայումս բնակչության նկատելի արտահոսք է տեղի ունենում հյուսիսի և Սիբիրի շրջաններից դեպի Հյուսիսային Կովկաս և Պովոլժիե:

Վերջին տարիների միգրացիոն շարժումների հետևանքով նոսրաբնակ շրջանները դարձան ավելի նոսրաբնակ, իսկ խտաբնակներն՝ ավելի խտաբնակ:

Հայերը Ռուսաստանում: Խորհրդային տարիներին հայերի թիվը Ռուսաստանում անցնում էր 0,5 միլիոնից: Այժմ մշտական և ժամանակավոր բնակություն են հաստատել շուրջ 2,5 մլն հայեր, որոնց մեծ մասը գաղթել է Հայաստանի Հանրապետությունից, Ադրբեջանից և նորանկախ մյուս պետություններից: Ռուսահայությունը խոշորագույն հայկական համայնքն է սփյուռքում:

Ռուսաստանում հայկական գաղթավայրեր ստեղծվել են դեռևս միջին դարերում: Դրանք բազմամարդ են դարձել XVIII դարից: Հետագա տարիներին, հատկապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, ակտիվացել է հայերի մասնակցությունը Ռուսաստանի տնտեսական ու հասարակական կյանքին: Բազմաթիվ ականավոր հայազգի գործիչներ խոր հետք են թողել Ռուսաստանի գիտության ու կրթության, գեղանկարչության ու երաժշտության, գրականության ու թատերական արվեստի, ռազմական գործի ու պետական կառավարման ոլորտներում: Վերջին տարիներին այդ ամենին ավելացել է նաև գործարարության ոլորտը:

Ներկայումս առավել մեծաթիվ հայություն կենտրոնացած է Մոսկվա քաղաքում ու Մոսկվայի մարզում, Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում, Սանկտ Պետերբուրգ ու Սամարա քաղաքներում: Վերջին տարիներին ստվարացել են նաև Սիբիրի ու Հեռավոր Արևելքի հայկական համայնքները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք Ռուսաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը:
2. Ինչպիսին է Ռուսաստանի բնակչության ազգային կազմը: Ինչպե՞ս է այն ձևավորվել:
3. Բացատրեք՝ ինչ կապ գոյություն ունի Ռուսաստանի բնակչության ազգային կազմի և վարչաքաղաքական բաժանման միջև:
4. Ինչպիսին է Ռուսաստանի բնակչության տեղաբաշխումը: Որո՞նք են խոշորագույն քաղաքները և քաղաքային ագլոմերացիաները:
5. Որո՞նք են Ռուսաստանի բնակչության միգրացիայի առանձնահատկությունները:
6. Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք և բնութագրեք Ռուսաստանի տարաբնակեցման հիմնական գոտիները:

ԴԱՍ 9. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի Դաշնությունն աշխարհի հզոր տնտեսություն ունեցող խոշորագույն պետություններից է:

Ռուսաստանի տնտեսությունը պատմականորեն զարգացել է նրա պետական տարածքի ընդարձակման ու դրանցում առկա բնական, առաջին հերթին՝ հողային ռեսուրսների յուրացմանը զուգընթաց:

XX դարի վերջին, ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո, նրա կազմում գտնվող հանրապետությունները, այդ թվում նաև Ռուսաստանը, հայտնվեցին տնտեսական ծանր վիճակում:

Ռուսաստանի բազմաճյուղ տնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից են՝

- բազմապիսի ու հարուստ բնական ռեսուրսների առկայությունը,
- համեմատաբար որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությունը, մանավանդ որ վերջին տարիներին ազատ աշխատատեղերի 1/5-ը զբաղեցրել են հիմնականում ԱՊՀ երկրներից և Չինաստանից ներգաղթածները,
- մեծածավալ կապիտալ շինարարությունն ու արդյունաբերության նոր ճյուղերի զարգացումը, որոնք ստեղծում են բազմապիսի արտադրանքի մեծ պահանջարկ:

Ռուսաստանի արտադրական ոլորտի առաջատար ճյուղն **արդյունաբերությունն** է՝ բաղկացած բազմաթիվ ճյուղերից ու ենթաճյուղերից: Դրանց թվում գլխավորներն են վառելիքաէներգետիկական, մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական, անտառարդյունաբերական համալիրները, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Ռուսաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքը (ՀՆԱ %) (2012թ.)



Ռուսաստանի տնտեսությունն ամբողջապես հենվում է **սեփական վառելիքաէներգետիկ բազայի վրա**:

Ինչպես գիտեք, Ռուսաստանն էներգետիկ ռեսուրսներով ամենահարուստ երկրներից է: Սակայն այդ ռեսուրսների հիմնական պաշարները (էներգետիկ ներուժի 90%-ից ավելին) տեղաբաշխված են երկրի դեռևս թույլ յուրացված շրջաններում՝ Սիբիրում և Հեռավոր Արևելքում: Դրան հակառակ՝ վառելիքի և էներգիայի գլխավոր սպառողները գտնվում են արևմուտքում՝ Եվրոպական Ռուսաստանում:

Երկրի վառելիքաէներգետիկ համալիրում առանձնահատուկ նշանակություն ունի **նավթարդյունաբերությունը**: Ռուսաստանն աշխարհի նավթ արդյունահանող խոշորագույն պետություններից է:

Նավթաբեր գլխավոր շրջանից՝ Արևմտյան Սիբիրի տարածքից արդյունահանվում է նավթի մոտ 70%-ը: Երկրորդը Վոլգա-Ուրալյան շրջանն է, որտեղ արդյունահանվում է նավթի 25%-ը: Նավթ արդյունահանվում է նաև Կոմի Հանրապետությունում, Հյուսիսային Կովկասում և Սախալին կղզում:

Նավթի հանույթի շրջաններից դեպի սպառման վայրեր ձգվում են ավելի քան 50 հազ. կմ նավթամուղները: Դրանք նավթը հասցնում են ոչ միայն Ռուսաստանի տարբեր շրջաններ, այլև Արևելյան Եվրոպայի ու մերձբալթյան երկրներ, Չինաստան:

Գազի արդյունաբերությունը Ռուսաստանի էներգետիկայի ամենաերիտասարդ ճյուղն է: Բնական գազի հանույթով Ռուսաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Գլխավոր բազան Արևմտյան Սիբիրն է, որտեղից գազը հզոր խողովակաշարերով տեղափոխվում է Ռուսաստանի տարբեր շրջաններ (Ուրալ, Կենտրոն) և արտահանվում է Արևմտյան Եվրոպայի երկրներ ու Հարավային Կովկաս՝ Հայաստանի Հանրապետություն:

Ածխի հանույթը նույնպես Ռուսաստանի վառելիքային արդյունաբերության կարևոր ճյուղերից է: Արդյունահանվող քարածխի հիմնական մասը տալիս է Կուզբասը, որը, Սիբիրից բացի, բավարարում է նաև Ուրալյան և Մերձվոլգյան տարածաշրջանների պահանջները:

Ռուսաստանի էլեկտրաէներգետիկայում ամենամեծ բաժինը պատկանում է ջերմաէլեկտրակայաններին (ՋԷԿ), որոնք տեղաբաշխված են ածխավազաններում կամ էլեկտրաէներգիայի խոշոր սպառողներին մոտ՝ խոշոր քաղաքներում, ուր նավթն ու բնական գազը հասցվում են խողովակաշարերով:

Ռուսաստանում խոշորագույն ջրէկները կառուցված են Ենիսեյի, դրա վտակ Անգարայի և Վոլգայի վրա: Նշանավոր են Սայանա-Շուշենյան, Կրասնոյարսկի, Բրատսկի, Ուստ-Իլիմի ջրէկները:

Ռուսաստանն աշխարհում առաջին ատոմային էլեկտրակայանի հայրենիքն է, որը կառուցվել է 1954թ. Կալուգայի մարզի Օբնինսկ քաղաքում: Այժմ գործում է 9 ատէկ:

Ռուսաստանն ունի հզոր **մետալուրգիական արդյունաբերություն**՝ բաղկացած սև մետալուրգիայի և գունավոր մետալուրգիայի ճյուղերից:

Առանձնանում են **սև մետալուրգիայի երեք բազաներ**: Դրանցից գլխավորը **Ուրալյանն** է, որը Ռուսաստանի հնագույն մետալուրգիական շրջանն է: Այստեղ են գտնվում երկրի խոշորագույն մետալուրգիական կոմբինատները (Մագնիտոգորսկի, Չելյաբինսկի, Նիժնի Տագիլի և այլն): Տեղական երկաթաքարից բացի՝ օգտագործվում է ԿՄԱ-ից և Ղազախստանից բերվող հանքաքարը: Անհրաժեշտ կոքսացվող քարածուխը ստացվում է Կուզբասից և Ղազախստանից:

Նիկելի ձուլման արտադրամաս Նորիլսկում

Իր նշանակությամբ երկրորդ մետալուրգիական բազան **Կենտրոնականն** է: Այն օգտագործում է հիմնականում տեղական՝ ԿՄԱ-ի երկաթի հանքաքարը: Գործում են Նովոլիպեցկի և Չերեպովեցի սև մետաղաձուլական կոմբինատները, որոնք արտադրում են ինչպես թուջ (չուգուն) ու պողպատ, այնպես էլ գլանվածք:

Երրորդ բազան **Սիբիրյանն** է, որի ձեռնարկությունները կենտրոնացված են հիմնականում Կեմերովոյի մարզում: Գլխավոր կենտրոնը Նովոկուզնեցկ քաղաքն է:

Ռուսաստանի գունավոր մետալուրգիայի գլխավոր շրջանը ավանդաբար Ուրալն է, որտեղ, բացի պղնձից, ձուլում են նիկել, կապար, ցինկ, պլատին և այլ գունավոր ու հազվագյուտ մետաղներ:

Պղնձի և նիկելի արտադրության հզոր կենտրոն է Նորիլսկը՝ աշխարհի ամենահյուսիսային խոշոր քաղաքներից մեկը:

Ալյումինի արտադրության հզոր շրջաններ են Արևելյան Սիբիրը, Հյուսիս-արևմուտքը, որտեղ կան հումքի հարուստ պաշարներ (բոքսիտներ) և էժան էլեկտրաէներգիա:

Ռուսաստանի գունավոր մետալուրգիայի կարևոր ճյուղերից է ոսկու արդյունաբերությունը: Այն կենտրոնացված է գլխավորապես Հեռավոր Արևելքում (Մագադանի մարզ, Սախա-Յակուտիա):

Բազմաճյուղ է **մեքենաշինական համալիրը**: Դրա առաջատար ճյուղերն են հաստոցաշինությունը, տրանսպորտային ու գյուղատնտեսական մեքենաշինությունը, ռադիոէլեկտրոնային ու էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը:

Մեքենաշինությունը, բացառությամբ ծանր մեքենաների արտադրության, աշխատատար է, այդ պատճառով էլ կենտրոնացված է գլխավորապես Ռուսաստանի եվրոպական մասի խոշոր քաղաքներում՝ Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նիժնի Նովգորոդ, Սարատով, Վոլգոգրադ, Սամարա, Կազան, Իժևսկ և այլն:

Մեքենաշինության առանձին ճյուղեր տեղաբաշխված են արտադրանքի սպառման վայրերում: Օրինակ՝ տեքստիլ մեքենաշինությունը կենտրոնացված է Ռուսաստանի Կենտրոնական՝ զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող շրջանում, իսկ հացահատիկահավաք կոմբայնների արտադրությունը՝ հացահատիկային շրջաններում (Դոնի Ռոստով, Կրասնոյարսկ):

Ռուսաստանի մեքենաշինական համալիրում շատ են ռազմական նշանակության ձեռնարկությունները: Դրանք միասին կազմում են **ռազմարդյունաբերական համալիրը**: Ներկա պայմաններում դրանց արդիականացումը և, ռազմական արտադրանքին զուգահեռ, սպառման ապրանքների արտադրությանն անցնելը Ռուսաստանի մեքենաշինության զարգացման կարևոր ուղղություններից են:

Ռուսաստանն ունի սեփական հումքի վրա զարգացող հզոր **քիմիական արդյունաբերություն**: Որպես հումք ծառայում են հանքային վառելիքը, առաջին հերթին՝ նավթը և բնական գազը, տարբեր տեսակի հանքային աղերը, ծծումբը, ֆոսֆոր պարունակող օգտակար հանածոները, ձեռնարկությունների արտադրական թափոնները: Այս ճյուղի գլխավոր շրջաններն են Ուրալը, Պովոլժիեն, Արևմտյան Սիբիրը, Կոլա թերակղզին: Թողարկվում է բազմապիսի արտադրանք, այդ թվում՝ սինթետիկ կաուչուկ, քիմիական մանրաթելեր, անվադողեր, քիմիական պարարտանյութեր, լաքեր ու ներկեր, կենցաղային քիմիայի ապրանքներ և այլն:

Ռուսաստանի **անտառային արդյունաբերությունը** նույնպես բազմաճյուղ է: Այն հենվում է տեղական վիթխարի ռեսուրսների վրա: Անտառարդյունաբերությունը զարգացած է անտառային ռեսուրսներով հարուստ շրջաններում (Հյուսիս-արևմուտք, Ուրալ, Արևելյան Սիբիր, Հեռավոր Արևելք):

Թեթև արդյունաբերությունը արդյունաբերության կարևոր ճյուղերից է: Դրա հնագույն և գլխավոր ենթաճյուղը տեքստիլ արդյունաբերությունն է, որը թողարկում է վուշե, բամբակյա, բրդյա և մետաքսյա գործվածքեղեն:

Խոշորագույն ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված են Ռուսաստանի Կենտրոնական շրջանում՝ Մոսկվային հարող մարզերում: Տեքստիլ արդյունաբերությունը որպես հումք օգտագործում է տեղական արտադրության վուշաթելը և քիմիական մանրաթելը, ինչպես նաև ներկրվող բամբակը և բնական մետաքսաթելը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ գործոններով է պայմանավորված Ռուսաստանի բազմաճյուղ տնտեսության զարգացումը:
2. Ինչպիսի՞ն է Ռուսաստանի վերամշակող արդյունաբերության ապահովվածությունը սեփական հումքով և էներգիայի աղբյուրներով:
3. Որո՞նք են Ռուսաստանի նավթի ու բնական գազի արդյունահանման գլխավոր շրջանները: Ցո՛ւյց տվեք քարտեզի վրա:
4. Բնութագրեք Ռուսաստանի սև մետալուրգիայի հիմնական բազաները:
5. Բնութագրեք Ռուսաստանի մեքենաշինական համալիրը: Համեմատեք նրա աշխատատար և մետաղատար ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները:
6. Ինչպիսի՞ն են Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության հումքային բազան և տեղաբաշխումը:

ԴԱՍ 10. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Գյուղատնտեսությունը: Ռուսաստանի տարածքի բնական պայմանների բազմազանությամբ պայմանավորված է Ռուսաստանի գյուղատնտեսության բազմաճյուղայնությունը:

Ռուսաստանը լիովին ապահովված է գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցով՝ **հողային ռեսուրսներով**: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են հողային ֆոնդի ընդամենը 24%-ը (403 մլն հա):

Առաջատար ճյուղը **բուսաբուծությունն** է, որը տալիս է գյուղատնտեսական արտադրանքի կեսից ավելին: Գլխավոր հացահատիկային մշակաբույսը ցորենն է, որը մշակվում է հիմնականում անտառատափաստանային և տափաստանային գոտիներում: Ցորենի բերքատվության բարձրացման ծրագրերի իրականացման շնորհիվ Ռուսաստանն աստիճանաբար վերականգնում է ցորեն արտահանող երկրի երբեմնի համբավը:

Մեծ տարածությունների վրա մշակվում է **տարեկան**, որը, ցորենի հետ համեմատած, ավելի ցրտադիմացկուն ու խոնավասեր է, ուստի մշակվում է ոչ թե սևահողային գոտում, այլ դրանից հյուսիս:

Ռուսաստանում տարածված է նաև գարու, վարսակի, բազմազան բանջարեղենի, կարտոֆիլի, ինչպես նաև **տեխնիկական** մշակաբույսերի (վուշ, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ) մշակությունը:

Անասնապահությունը զարգանում է հիմնականում արոտավայրերի ու բնական խոտհարքների և ցանովի կերախոտերի բազայի վրա: Անասնապահությունը արագ տեմպերով վերականգնվում է և ապահովում է Ռուսաստանի ներքին շուկայի պահանջարկի մոտ 2/3-ը:

Առաջատարը՝ **խոշոր եղջերավոր անասնաբուծությունը**, առանձնապես զարգացած է Մերձվոլգյան, Հյուսիսկովկասյան, Ուրալյան և Արևմտասիբիրական շրջաններում:

Հյուսիսային Կովկասի, մերձվոլգյան լայնարձակ տափաստաններում զարգացած է **ոչխարաբուծությունը**:

Խոզաբուծությունը տարածված է Ռուսաստանի գրեթե բոլոր մարզերում, սակայն առավել զարգացած է Հյուսիսային Կովկասում և Կենտրոնական ու Կենտրոնական-Սևահողային շրջաններում, որտեղ խիտ է բնակչությունը:

Տունդրայի գոնայի անասնապահության հիմնական ճյուղը **եղջերվաբուծությունն** է: Եղջերուները տունդրայի բնակիչներին տալիս են միս, մորթի, կաշի և միաժամանակ ծառայում են որպես փոխադրամիջոց:

Ձկան և ծովային կենդանիների որսով նույնպես Ռուսաստանն աշխարհում գրավում է առաջատար տեղերից մեկը: Ռուսաստանի նավերը որս են կատարում Հեռավոր Արևելքի, Անտարկտիդայի ափամերձ, Ատլանտյան ու Խաղաղ օվկիանոսների միջազգային ջրերում:

Ռուսաստանի՝ գյուղատնտեսական մթերք մշակող արդյունաբերության ձեռնարկությունների մի մասը կառուցված է հումքին մոտիկ, մյուս մասը՝ արտադրանքի սպառման վայրերում: Ռուսաստանում առանձնանում են օղու, ալրաղացային, շաքարի, մսի, կաթնեղենի, բուսական յուղի ու ձկան պահածոների արտադրության ճյուղերը:

Ռուսաստանի՝ որպես խոշորագույն ցամաքային ու ծովային պետության տնտեսության մեջ առանձնահատուկ դեր է խաղում տրանսպորտը: Երկրի հզոր տրանսպորտային համակարգն ընդգրկում է ժամանակակից տրանսպորտի բոլոր տեսակները՝ երկաթուղային, ավտոմոբիլային, ծովային, գետային, խողովակաշարային, օդային, էլեկտրական: Ռուսաստանն աշխարհի պետությունների շարքում առաջնակարգ տեղ է գրավում **ճանապարհային ցանցի երկարությամբ, ինչպես նաև բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության ցուցանիշներով**:

ԲԱՄ-ի Տինդա կայարանը

Ռուսաստանի ընդարձակ տարածքի տարբեր մասերի տրանսպորտային ապահովվածությունը խիստ տարբեր է: Շատ են նույնիսկ այնպիսի շրջանները, որոնք ընդհանրապես զուրկ են ցամաքային տրանսպորտի ժամանակակից տեսակներից:

Ռուսաստանի տրանսպորտի տեսակների շարքում բեռների և ուղևորների փոխադրման ծավալով առաջին տեղը գրավում է **երկաթուղային տրանսպորտը**: Գլխավոր մայրուղիները երկրի եվրոպական մասի տարածքը հյուսիսից հարավ հատող Մուրմանսկ-Սանկտ Պետերբուրգ-Մոսկվա-Դոնի Ռոստով-Սոչի, իսկ արևմուտքից արևելք՝ Մոսկվա-Չելյաբինսկ-Խաբարովսկ-Վլադիվոստոկ ուղիներն են: Դրանք աշխարհի ամենաերկար երկաթուղագծերից են: Արևելյան շրջանների յուրացման գործում մեծ նշանակություն ունի Բայկալ-Ամուրյան մայրուղին (ԲԱՄ):

Ռուսաստանի տրանսպորտային համակարգում բեռնաշրջանառությամբ երկրորդը **ջրային տրանսպորտն** է: Ռուսաստանը հզոր ծովային պետություն է: Նրա սահմանների 2/3-ը ծովային են: Ծովային արտաքին բեռնափոխադրումների մեծ մասը բաժին է ընկնում Բարենցի, Սպիտակ և Բալթիկ ծովերի նավահանգիստներին:

Ռուսաստանը ոչ միայն ծովային, այլև գետային խոշոր նավատորմ ունեցող երկիր է:

Կառուցվել են մի շարք ջրանցքներ: Դա հնարավորություն է տվել ստեղծելու եվրոպական մասի նավարկելի **ջրային ուղիների միասնական ցանց**: Խոշոր ջրանցքներից են Մոսկվայի անվան (միացնում է Մոսկվա գետը Վոլգային), Սպիտակ-Բալթյան, Վոլգա-Դոն ջրանցքները:

Ռուսաստանի ընդարձակ տարածքում ուղևորների ու բեռների փոխադրման գործում հատուկ դեր է պատկանում **ավտոմոբիլային տրանսպորտին**: Ավտոմոբիլային տրանսպորտի նշանակությունը շատ ավելի մեծ է Ռուսաստանի հյուսիսային, արևելյան և լեռնային նոսրաբնակ ու երկաթուղիներից զուրկ շրջանների համար:

Վոլգա-Դոն ջրանցքը

Ավտոճանապարհների համեմատաբար զարգացած ցանց ունի Եվրոպական Ռուսաստանը: Այստեղ կառուցված ժամանակակից ավտոմայրուղիները Մոսկվան կապում են Սանկտ Պետերբուրգին, Հյուսիսային Կովկասին, Հարավային Ուրալին, ինչպես նաև արևմուտքում գտնվող հարևան պետություններին:

Ռուսաստանի տարածքի մեծ ձգվածության պատճառով առանձնահատուկ նշանակություն ունի **օդային տրանսպորտը**: Չնայած երկրի բեռնափոխադրումների ամբողջ ծավալում նրա բաժինը մեծ չէ, բայց անփոխարինելի է նրա դերը Ռուսաստանի պես լայնարձակ երկրի տարածքում մեծ հեռավորությունների վրա, ինչպես նաև Սիբիրի ցամաքային և ջրային հաղորդակցությունից զուրկ բնակավայրերի միջև արագ ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների գործում:

Տնտեսաաշխարհագրական ներքին տարբերությունները: Ռուսաստանում ժամանակի ընթացքում ձևավորվել են 11 **տնտեսական շրջաններ**, որոնք միմյանցից տարբերվում են աշխարհագրական դիրքով, մասնագիտացման ճյուղերով, բնական և աշխատանքային ռեսուրսներով, զարգացման առանձնահատկություններով և մակարդակով: Այս շրջանները առավել ընդհանրական առանձնահատկություններով միավորվում են **Արևմտյան** և **Արևելյան տնտեսական խոշոր գոտիների** մեջ:

Արևմտյան տնտեսական գոտին ներառում է տնտեսական 8 շրջան (Հյուսիսային, Հյուսիսարևմտյան, Կենտրոնական, Կենտրոնական-Սևահողային, Վոլգա-Վյատկայի, Հյուսիսկովկասյան, Պովոլժիեի և Ուրալի): Դրանց մեծ մասի տնտեսաաշխարհագրական դիրքը արևելյան շրջանների համեմատ բարենպաստ է: Այս տարածքում ձևավորվել է ցամաքային տրանսպորտային ուղիների համեմատաբար խիտ ցանց: Կլիմայական պայմանները արևելյան շրջանների համեմատ ավելի մեղմ են, ինչն էլ այս գոտուում բազմաճյուղ գյուղատնտեսության զարգացման գլխավոր գործոնն է: Այժմ Արևմտյան տնտեսական գոտին տալիս է Ռուսաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքի 80%-ը, և այստեղ է կենտրոնացած Ռուսաստանի գիտական և ֆինանսական ներուժի 90%-ը: Այս գոտուում հիմնականում զարգացած են մշակող արդյունաբերության ճյուղերը: Բացառություն են կազմում Ուրալի և Պովոլժիեի շրջանները, որտեղ հիմնականում պահպանվում է հումքի

(նավթ, գազ, մետաղներ) արդյունահանման ուղղությամբ մասնագիտացումը: Հյուսիսկովկասյան շրջանի մասնագիտացման գլխավոր ուղղությունը գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և մշակումն են:

Արևելյան տնտեսական զոնան ներառում է Արևմտյան Սիբիրի, Արևելյան Սիբիրի և Հեռավորարևելյան տնտեսական շրջանները: Այս շրջանների համար ընդհանուրն այն է, որ շատ հարուստ են նավթի, բնական գազի, քարածխի, սև, գունավոր և թանկարժեք մետաղների, անտառային ու ջրաէներգետիկ պաշարներով: Ձարգանում են դրանց վրա հենվող ճյուղերը: Արևելյան տնտեսական զոնայում արդյունահանվող հանքային մետաղային հումքի զգալի մասը, փայտանյութը, էլեկտրաէներգիան մատակարարում են երկրի եվրոպական մասի տնտեսական շրջաններ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Քարտեզի վրա ցույց տվեք, թե Ռուսաստանը կլիմայական ո՞ր գոտիներում է ընկած, և փորձե՛ք բնութագրել դրանք գյուղատնտեսության զարգացման տեսակետից:
2. Որո՞նք են Ռուսաստանի գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը և դրանց տեղաբաշխման գլխավոր շրջանները:
3. Գնահատե՛ք ցամաքային, ջրային և օդային տրանսպորտի տեսակների նշանակությունը Ռուսաստանի տնտեսության համար:
4. Ի՞նչ գործոնների ազդեցությամբ են ձևավորվել Ռուսաստանի տնտեսական զարգացման ներքին տարբերությունները:
5. Բնութագրե՛ք Ռուսաստանի տնտեսական զոնաների արտադրական մասնագիտացումը և տեղը աշխատանքի աշխարհագրական բաժանման համակարգում:

ԴԱՍ 11. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի տարածաշրջանների շարքում Հարավային Եվրոպան յուրահատուկ է իր ծովափնյա աշխարհագրական դիրքով, բնության գեղեցկությամբ, բնական պայմանների ինքնատիպությամբ, պատմական և մշակութային հարուստ անցյալով, զբոսաշրջային նշանակությամբ, տնտեսական մասնագիտացմամբ:

Տարածաշրջանի երկրներից են սկսվել Կոլումբոսի, Մագելանի, Վասկո դա Գամայի ճանապարհորդությունները, որոնք հանգեցրին աշխարհագրական մեծ հայտնագործություններին: Վերջիններս էլ սկիզբ դրեցին մարդկանց զանգվածային տեղաշարժերին աշխարհամասից աշխարհամաս:

Հարավային Եվրոպայի ժողովուրդները հսկայական ներդրում ունեն քաղաքակրթության զարգացման մեջ, բայց առանձնահատուկ է հույների և հռոմեացիների դերը: Հունաստանում է առաջին անգամ բոցավառվել և աշխարհի սեփականությունը դարձել օլիմպիական խաղերի ջահը: *(Համաշխարհային պատմության դասընթացից հիշե՛ք Հին Հունաստանի և Հռոմեական կայսրության ներդրումը մարդկային քաղաքակրթության գործընթացներում:)*

Աշխարհագրական դիրքը: Հարավային Եվրոպան ընդգրկում է Պիրենեյան, Ապենինյան, Բալկանյան թերակղզիների և Միջերկրական ծովի բազմաթիվ կղզիների վրա գտնվող երկրները:

Այժմ Հարավային Եվրոպայի մաս են կազմում նախկին Հարավսլավիայի կազմալուծման հետևանքով առաջացած երկրները՝ Սերբիան, Խորվաթիան, Սլովենիան, Մակեդոնիան, Բոսնիան և Հերցեգովինան, Չեռնոգորիան (Մոնտենեգրոն): Դա Եվրոպայի ամենամեծ թվով (16) պետություններ ունեցող տարածաշրջանն է՝ 1,3 մլն կմ² տարածքով և 152 մլն բնակչությամբ: Քանի որ երկրների մեծ մասը գտնվում է Միջերկրական ծովի ավազանում, որոշ աշխարհագրագետներ այս տարածաշրջանն անվանում են նաև **Միջերկրածովյան Եվրոպա**:

Միջերկրական ծովի իսպանական ափը

Միջերկրական ծովը թեև աշխարհի ամենախոշոր ներցամաքային ծովն է, բայց արդի ժամանակներում ոչ թե բաժանում, այլ **միավորում է** Եվրոպա, Ասիա և Աֆրիկա աշխարհամասերը: Այն ձեզ հայտնի նեղուցներով և ջրանցքներով կապված է Սև ծովին, Ատլանտյան և Հնդկական օվկիանոսներին:

Թեև ժամանակի ընթացքում Հարավային Եվրոպայի տնտեսաաշխարհագրական դիրքը (ՏԱԴ) փոփոխվել է, բայց այն միշտ էլ բարենպաստ է եղել տարածաշրջանի երկրների զարգացման համար, հատկապես հին ժամանակներում: Հարավային Եվրոպան մոտ էր Եգիպտոսին, Փյունիկիային և Հին աշխարհի այլ հզոր երկրներին, որոնց հետ տնտեսական և մշակութային կապեր հաստատելը նպաստեց տարածաշրջանի այդ ժամանակաշրջանի երկրների զարգացմանն ու հզորացմանը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակաշրջանում Հարավային Եվրոպայի երկրներից Իսպանիան, Պորտուգալիան եղել են աշխարհակալ ծովային տերություններ, սակայն հետագայում, զրկվելով գաղութներից, կորցրել են նախկին նշանակությունը:

Ներկայումս ևս Հարավային Եվրոպայի ծովային աշխարհագրական դիրքն ունի մեծ կարևորություն: Այստեղով են անցնում Եվրոպայից դեպի աշխարհի այլ տարածաշրջաններ տանող ծովային ուղիները: Հարավային Եվրոպան միջին դիրք է զբաղեցնում Հյուսիսային Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի, Արևմտյան ու Արևելյան Եվրոպայի միջև:

Զարգացման բնական նախադրյալները: Հարավային Եվրոպայի տարածքի զգալի մասը զբաղեցնում են Պիրենեյան, Ալպյան, Ապենինյան, Բալկանյան և այլ լեռները, որտեղ կան գործող հրաբուխներ (Վեզուվ, Էտնա) և հաճախակի են երկրաշարժերը: Ափամերձ շրջաններում և գետահովիտներում կան ոչ ընդարձակ դաշտավայրեր (Անդալուզյան, Պադանի և այլն), որտեղ կենտրոնացած է բնակչության և տնտեսության մեծ մասը:

Հարավային Եվրոպայի ընդերքը հարուստ չէ օգտակար հանածոներով: Տարածաշրջանը առանձնապես աղքատ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով: Գլխավոր հարստություններն են սնդիկի, անագի, վոլֆրամի, ուրանի հանքաքարի պաշարները (Իսպանիա), պղնձի, ցինկի և կապարի հանքաքարի պաշարները (նախկին Հարավսլավիայի երկրներ), ծծմբի, մարմարի, այլ շինանյութերի պաշարները (Իտալիա): Տարածաշրջանի երկրներն ունեն ջրաէներգետիկ զգալի պաշարներ, որոնց մեծ մասն արդեն յուրացված է:

Հարավային Եվրոպան գտնվում է **մերձարևադարձային կլիմայական գոտու** սահմաններում: Տարածաշրջանի մեծ մասում կլիման միջերկրածովյան տիպի է: Ամառը շոգ է (միջին հուլիսյանը՝ $+24^0$+25^0), չորային, արևային եղանակներով: Ձմեռները մեղմ են ու խոնավ (միջին հունվարյան ջերմաստիճանը չի իջնում $+10^0$+12^0-ից): Այսպիսի կլիմայական պայմանները նպաստավոր են ջերմասեր մերձարևադարձային բույսերի մշակության համար (ձիթապտուղ, խաղող, թուզ, ցիտրուսներ և այլն), որոնց զգալի մասի հայրենիքը հենց այս տարածաշրջանն է:

Ծովերի տաք ջրերը, ավազոտ լողափերը, գեղատեսիլ լեռնային լանդշաֆտները, հանքային ջրերը և բարենպաստ կլիման նպաստել են **Հարավային Եվրոպան աշխարհի զբոսաշրջության և հանգստի խոշորագույն շրջան** դառնալուն:

Հարավային Եվրոպան, լինելով քաղաքակրթության հնագույն օջախներից մեկը, վաղ ժամանակներից բավական խիտ է բնակեցված, ինչի հետևանքով բնությունը մեծապես ենթարկվել է մարդու ակտիվ ներգործությանը և փոփոխվել է: Ամենուրեք գերակշռում են մարդածին լանդշաֆտները: Մարդու տնտեսական գործունեությունը, հաճախակի անտառային հրդեհները զգալիորեն կրճատել են անտառների տարածքները: Անտառային հոծ զանգվածներ պահպանվել են Ալպերի, Պիրենեյների և այլ լեռների միջին բարձրություններում, հատկապես Իսպանիայի հյուսիսում:

Բնակչությունը: Հարավային Եվրոպայի երկրների մեծ մասն ունի միատարր ազգային կազմ: Այս տեսակետից բացառություն է Իսպանիան, որտեղ, իսպանացիներից բացի, բնակվում են նաև կատալոնացիներ, գալիցիացիներ, բասկեր: Տարածաշրջանի ժողովուրդների լեզուները հիմնականում պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական և սլավոնական լեզվախմբերին: Առանձին լեզվախմբեր են կազմում հունարենը և ալբաներենը: Հետաքրքիր է այն փաստը, որ բասկերենի և հայերենի միջև կան շատ նմանություններ, որոնք բավարար հիմք են տալիս մտածելու բասկերի հայկական ծագման մասին:

Հարավային Եվրոպա

Իտալացիները, իսպանացիները և պորտուգալացիները կաթոլիկներ են, հույները՝ ուղղափառներ, իսկ ալբանացիները՝ մահմեդականներ: Սլավոնական ժողովուրդների մեծ մասը ուղղափառ է (օրինակ՝ սերբերը), մնացյալները կաթոլիկներ են (օրինակ՝ խորվաթները) և մահմեդականներ (բոսնիացիները):

Հայերը Հարավային Եվրոպայի երկրներում բնակվել են պատմական վաղ ժամանակներից: Ավանդաբար հայկական ամենամեծ գաղութը եղել է Հունաստանում: Վերջին տարիներին ստվարանում է հայերի թիվն Իսպանիայում:

Բնակչության բնական աճը աշխարհի միջինից շատ ցածր է: Երկրների մեծ մասում հաստատվել է բնակչության պարզ վերարտադրություն, իսկ որոշ երկրներում՝ նույնիսկ դեպոպուլյացիա:

Հարավային Եվրոպայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



Բնակչությունը խիստ անհավասարաչափ է տեղաբաշխված: Բնակչության խտությունը մեծ է ծովափնյա և զարգացած արդյունաբերական շրջաններում, ինչպես նաև ինտենսիվ գյուղատնտեսություն ունեցող հարթ տարածքներում: Նոսր են բնակեցված լեռնային շրջանները, Սարդինիա կղզին, հունական փոքր կղզիները և այլն:

Ուրբանիզացման մակարդակը, բացառությամբ Ալբանիայի ու Բոսնիա և Հերցեգովինայի, բարձր է, թեև զիջում է արևմտաեվրոպական և հյուսիսեվրոպական տարածաշրջաններին: Խոշորագույն քաղաքներն են Հռոմը, Միլանը, Մադրիդը, Բարսելոնը, Աթենքը: Դրանք արդյունաբերական, կրթամշակութային, գլոբսաշրջային կարևոր կենտրոններ են: Բազմաթիվ են այն քաղաքները, որոնք ստեղծվել են հին և միջին դարերում (Վենետիկ, Ջենովա, Ֆլորենցիա, Վալենսիա, Սալոնիկ և այլն) և հայտնի են իրենց ճարտարապետական ու պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններով և դեպի իրենց են ձգում միլիոնավոր զբոսաշրջիկների:

Հարավային Եվրոպայի 16 պետություններից տարածքով համեմատաբար խոշոր են **Իսպանիան** և **Իտալիան: Իսպանիան** և **Պորտուգալիան** գտնվում են Եվրոպա աշխարհամասի ծայր հարավ-արևմուտքում՝ Պիրենեյան թերակղզու վրա: Միջին դարերում դրանք եղել են աշխարհագրական մեծ հայտնագործությունների ակտիվ կազմակերպիչներ, դարձել են աշխարհակալ ծովային տերություններ, ունեցել են ընդարձակ գաղութներ աշխարհի տարբեր մասերում, հատկապես Ամերիկա աշխարհամասում: Սակայն հետագայում, աստիճանաբար զրկվելով գաղութներից, վերածվել են միջին հզորության պետությունների:

Գիշերային Մոնակոն

Հարավային Եվրոպայի քաղաքական քարտեզն առանձնահատուկ է նրանով, որ այստեղ են գտնվում Անդորրա, Մոնակո, Սան Մարինո, Վատիկան «գաճաճ» պետություն-

ները: Յուրաքանչյուրի բնակչության թիվը կազմում է 2–3 տասնյակ հազար, իսկ Վատիկանինը՝ մոտ հազար մարդ:

Վատիկանը կաթոլիկ եկեղեցու գերագույն ղեկավարի՝ Հռոմի պապի գահանիստն է, զբաղեցնում է ընդամենը 0,44 կմ² տարածք և գտնվում է Հռոմի տարածքում:

Հարավային Եվրոպայի պետությունների մեծ մասը հանրապետություններ են: Իսպանիան և Մոնակոն՝ սահմանադրական, իսկ Վատիկանը կրոնապետական բացարձակ միապետություններ են: Իսպանիայի հարավում է գտնվում Ջիբրալթարը: Դա Մեծ Բրիտանիայի ռազմավարական խոշոր նշանակության ռազմածովային հենակետ է, որի անձնակազմը հսկում է համանուն նեղուցով այլ երկրների ռազմական նավերի շարժը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ դեր են խաղացել Հարավային Եվրոպայի երկրները քաղաքակրթության զարգացման գործում:
2. Թվարկեք և քարտեզի վրա ցույց տվեք Հարավային Եվրոպայի երկրները: Առանձնացրեք «գաճաճ» պետությունները:
3. Որո՞նք են Հարավային Եվրոպայի աշխարհագրական դիրքի բնորոշ գծերը:
4. Տվեք Հարավային Եվրոպայի բնակլիմայական պայմանների գնահատականը գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման առումով:
5. Քարտեզի վրա ցույց տվեք Հարավային Եվրոպայի խիտ և նոսր բնակեցված շրջանները, խոշորագույն քաղաքներն ու քաղաքային ագլոմերացիաները:

ԴԱՍ 12. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության զարգացման մակարդակով և մասնագիտացման ուղղություններով Հարավային Եվրոպայի երկրներն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերիչ գծեր: Արտադրանքի ծավալով և զարգացման մակարդակով առանձնանում է Իտալիան: Մի փոքր ավելի ցածր մակարդակ ունեն Իսպանիան, Հունաստանը, Պորտուգալիան, Սլովենիան: Մեկ բնակչին ընկնող ՀՆԱ-ի բարձր ցուցանիշներ ունեն «գաճաճ» պետությունները: Մյուս երկրները դեռևս շարունակում են հետ մնալ իրենց զարգացման մակարդակով:

Իսպանիան ու Պորտուգալիան եղել են աշխարհի խոշոր գաղութատեր երկրներ, ինչի շնորհիվ կուտակել են ազգային մեծ հարստություն: Բայց, ի տարբերություն եվրոպական այլ երկրների, դա չեն ծառայեցրել տնտեսական զարգացման նպատակին և շարունակել են մնալ Եվրոպայի համեմատաբար թույլ զարգացած երկրներ: Միայն վերջին տասնամյակներին Իսպանիայի և Պորտուգալիայի տնտեսությունները, հատկապես արդյունաբերությունը, զարգանում են բարձր տեմպերով, և այդ երկրների տնտեսությունները զգալիորեն մոտեցել են Եվրոպայի զարգացած երկրների մակարդակին: Հունաստանի տնտեսությունը ևս որոշ չափով վերելք է ապրել շնորհիվ բազմաճյուղ արդյունաբերության և զբոսաշրջության զարգացման:

Արդյունաբերությունը: Հարավային Եվրոպայի բաժինն աշխարհի համախառն արդյունքի մեջ մոտ 6,5% է, ինչը գերազանցում է նրա տարածքի և բնակչության բաժիններին (տես գծանկարը): Դրա հիմնական մասը բաժին է ընկնում Իտալիային

և Իսպանիային: Որոշ ճյուղերի գծով կարևոր դեր ունեն նաև Հունաստանը, Պորտուգալիան, Սերբիան և Խորվաթիան:

Հարավային Եվրոպայի երկրների արդյունաբերությանը բնորոշ են մի շարք ընդհանուր գծեր:

Առաջին՝ տարածաշրջանի երկրների **արդյունաբերության** կառուցվածքում գերակշռում են մշակող ճյուղերը: Միայն Իսպանիան է աչքի ընկնում նաև արդյունաբերության արդյունահանող ճյուղերով: Երկրորդ՝ մշակող արդյունաբերությունն օգտագործում է ինչպես ներկրվող հումքը (օրինակ՝ երկաթի հանքաքարը և նավթը), այնպես էլ սեփական գյուղատնտեսական արտադրանքը (օրինակ՝ խաղողը, ձիթապտուղը, ցիտրուսային պտուղները):



Հարավային Եվրոպայի **էներգետիկան** կողմնորոշված է դեպի ներմուծվող վառելիքային ռեսուրսները, հատկապես դեպի նավթը և գազը: Իտալիայի, Հունաստանի, Իսպանիայի և Պորտուգալիայի նավահանգստային քաղաքներում ստեղծվել են նավթավերամշակման խոշոր ձեռնարկություններ:

Մեծ է նաև ջրաէներգետիկայի դերը: Օրինակ՝ Իսպանիայում ջրէկները տալիս են երկրում արտադրվող էներգիայի կեսը, Պորտուգալիայում՝ 3/5-ը: Իտալիայում և Իսպանիայում աշխատում են նաև ատոմակայաններ:

Տեղական և ներմուծվող հումքի ու վառելանյութի բազայի վրա զարգացել է **մետաղաձուլությունը**: Պողպատաձուլական խոշոր ձեռնարկությունները գտնվում են Իտալիայի և Իսպանիայի նավահանգստային քաղաքներում:

Արդյունաբերության առաջատար և արագ զարգացող ճյուղն է **մեքենաշինությունը**, որում առանձնահատուկ դեր է կատարում տրանսպորտային մեքենաշինությունը: Իտալիան և Իսպանիան մարդատար ավտոմեքենաների արտադրությամբ Եվրոպայում առաջատար երկրներից են:

Տեղական հումքի բազայի վրա տարածաշրջանի երկրներում, հատկապես Իտալիայում և Իսպանիայում, զարգացած է տարբեր տեսակի շինանյութերի արտադրությունը: Տեղական հումքի բազայի վրա է տարածաշրջանի բոլոր երկրներում զարգանում նաև սննդի արդյունաբերությունը: Հարավային Եվրոպան աշխարհում առաջատար տեղ է գրավում գինու, ձիթապտղի յուղի, մրգահյութերի արտադրությամբ:

Բնակլիմայական պայմանների բազմազանությունը նպաստում է **բազմաճյուղ գյուղատնտեսության զարգացմանը**: Հարավային Եվրոպան աշխարհի բացառիկ զարգացած տարածաշրջանն է, որի բոլոր երկրների գյուղատնտեսության առաջատար ճյուղը **բուսաբուծությունն** է: Սակայն իր զարգացման ընդհանուր մակարդակով և հատկապես ինտենսիվության ցուցանիշներով զիջում է Արևմտյան Եվրոպային:

Հարավային Եվրոպային է բաժին ընկնում Եվրոպայում աճեցվող ձիթապտղի, ցիտրուսների, բամբակենու, բրնձի բերքի մեծագույն մասը, իսկ խաղողի բերքի՝ 2/3-ը: Դրանց տարածման հիմնական շրջանը առափնյա ոռոգելի հողերն են: Հարա-

վային Եվրոպան խաղողի մշակության և խաղողի գինիների արտադրության խոշորագույն շրջանն է աշխարհում: Հունաստանն աշխատանքի միջազգային բաժանման մեջ մասնագիտացած է նաև ծխախոտագործության գծով: Ցորենի և եգիպտացորենի ցանքատարածությունները, որպես կանոն, զբաղեցնում են թերակղզիների ներքին ընդարձակ տարածքները:

Մնասնապահության դերն ընդհանուր առմամբ մեծ չէ, իսկ որոշ երկրներում նույնիսկ չի բավարարում հիմնական անասնամթերքների ներքին պահանջարկը:

Տրանսպորտը: Զարգացած են տրանսպորտի բոլոր տեսակները: Տարածաշրջանն ունի տրանսպորտային խիտ ցանց: Առաջատարը ծովային տրանսպորտն է: Նավատորմիղի մեծությամբ Հունաստանն ու Մալթան աշխարհում առաջին տասնյակում են: Միջերկրական ծովն առանձնահատուկ տեղ է գրավում **միջազգային առևտրատնտեսական կապերի համակարգում**: Նրան բաժին է ընկնում Եվրոպայի, Հյուսիսային Աֆրիկայի ու Ասիայի միջև կատարվող ծովային բեռնափոխադրումների մեծագույն մասը:

Եթե ծովային ճանապարհներով Հարավային Եվրոպայի երկրները կապված են այլ աշխարհամասերի հետ, ապա ցամաքային (երկաթուղային, ավտոմոբիլային) ճանապարհներով՝ Եվրոպայի մյուս երկրների հետ:

Տարածաշրջանի սպասարկման ոլորտի ճյուղերը առավել զարգացած են Իտալիայում, Իսպանիայում և Հունաստանում, որոնք արտասահմանյան զբոսաշրջիկների թվով աշխարհում առաջատարներից են: Տարածաշրջան տարեկան այցելող ավելի քան 180 մլն զբոսաշրջիկների մեծ մասը բաժին է ընկնում այդ երկրներին:

Տեսարան Միջերկրականի Երկնագույն (Լազուրյան) ափից

Հարավային Եվրոպայի տնտեսական և մշակութային զարգացումն անցյալում (ներկայումս՝ նաև զբոսաշրջության զարգացումը) սերտորեն կապված է Միջերկրական ծովի հետ: Ներկայումս Միջերկրական ծովի՝ հարյուրավոր կիլոմետրերով ձգվող հյուսիսային ափերը վերածվել են հանգստյան տների, առողջարանների, տուրիստական հանգրվանների ու զվարճավայրերի համատարած գոտու: Տարվա բոլոր եղանակներին, հատկապես ամռանն ու աշնանը, Միջերկրական ծովում հարյուրավոր տուրիստական նավեր երկրից երկիր են փոխադրում միլիոնավոր զբոսաշրջիկների:

Զբոսաշրջության զարգացմանը նպաստում են ոչ միայն ծովն ու բնությունը, այլև տարբեր երկրների բազմաթիվ տեսարժան վայրերը՝ հնադարյան ամրոցները, տաճարները, վանքերը, թանգարաններն ու պատկերասրահները:

Հարավային Եվրոպայի երկրները մեծ դեր են խաղում համաշխարհային առևտրում: Տարածաշրջանի երկրների արտահանության գլխավոր ապրանքատեսակներից են սննդարդյունաբերության արտադրանքները՝ գինին, մրգահյութը, ձիթապտղի յուղը, գյուղատնտեսական տարբեր մթերքները (հատկապես խաղողը և ցիտրուսային պտուղները), ինչպես նաև ավտոմեքենաները, ծովային նավերը, կենցաղային էլեկտրասարքերը, գունավոր մետաղների խտանյութերը: Ներկրման մեջ

գերակշռում են վառելիքը, հատկապես նավթը և նավթամթերքները, երկաթի հանքաքարը, տարբեր տեսակի մեքենաներն ու սարքավորումները, ինչպես նաև պարենը, հատկապես ցորենը:

Հարավային Եվրոպայի երկրների արտաքին առևտրի գլխավոր գործընկերներն են Եվրամիության անդամ երկրները, ԱՄՆ-ը, Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հարավային Եվրոպայի երկրների տնտեսության ընդհանուր և տարբերիչ գծերը:
2. Որո՞նք են Հարավային Եվրոպայի երկրների տնտեսության զարգացմանը նպաստող բնական և տնտեսական նախադրյալները:
3. Նշե՛ք տարածաշրջանի արդյունաբերության գլխավոր ճյուղերը, առաջատար երկրները:
4. Որո՞նք են Հարավային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը: Ինչ գործոններ են ազդում դրանց զարգացման վրա:
5. Բնութագրե՛ք և գնահատե՛ք Միջերկրական ծովի դերը Հարավային Եվրոպայի երկրների տնտեսության մեջ:

ԴԱՍ 13. ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԻՏԱԼԻԱ). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տարածքը՝ 301 հազ. կմ^2
Բնակչությունը՝ 60,9 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Հռոմ
Պետական կարգը՝ խորհրդարանական հանրապետություն

«Մեծ յոթնյակի» առաջատար պետություններից մեկը՝ Իտալիան, եվրոպական քաղաքակրթության հնագույն օջախներից է, աշխարհակալ Հռոմեական կայսրության ժառանգորդը: Օրինաչափ է, որ Իտալիան հաճախ դիտում են որպես անցյալի նյութական և հոգևոր մշակույթի վիթխարի ազգային թանգարան: Հավերժ ծխացող Վեզուվ ու Էտնա հրաբուխները, վեհանիստ Ալպերի գեղատեսիլ լճերն ու գետահովիտները, Միջերկրական ծովի տաք ջրերն ու հարմար լողափերը, խնամքով մշակված դաշտերը, խաղողի ու ցիտրուսների այգիները, դարերի խորքից եկած ճարտարապետական մեծարժեք հուշարձաններն անկրկնելի հմայք ու գեղեցկություն են հաղորդում Իտալիային:

Կոլիզեումի բացօթյա ամֆիթատրոնը Հռոմում

Իտալիայի ներկա մայրաքաղաքը հին դարերում եղել է աշխարհակալ Հռոմեական կայսրության կենտրոնը: Իտալիայի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն այս երկրի հարուստ պատմությամբ և գեղեցիկ բնությամբ, այլև համաշխարհային մշակույթի գանձարանում իտալական ժողովրդի ունեցած մեծ ներդրումով:

Իտալիան որպես ազգային պետություն ձևավորվել է 1870թ.: Խորհրդարանական հանրապետություն է: Վարչական առումով բաժանվում է 20 մարզի: Իտալիայի տարածքում են գտնվում երկու այլ պետություններ՝ Վատիկանը և Սան Մարինոն:

Բնական պայմանները և ռեսուրսները: Իտալիան Եվրոպայի հզորագույն երկրներից մեկն է, Հարավային Եվրոպայի ամենազարգացած երկիրը: Դա պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից մեկը բարենպաստ **աշխարհագրական դիրքն** է: Իտալիայի դիրքը՝ Միջերկրական ծովի կենտրոնական մասում, պատմական վաղ ժամանակներից դրական ազդեցություն է ունեցել նրա զարգացման համար:

Երկրի տարածքը կազմված է մայրցամաքային, թերակղզային ու կղզային մասերից: Այն ընդգրկում է Ալպերի հարավային լանջերը, Պադանի դաշտավայրը, ամբողջ Ապենինյան թերակղզին, ինչպես նաև Սիցիլիա, Սարդինիա և ափամերձ մի շարք մանր կղզիներ: Հյուսիսային Իտալիան ավելի շահեկան դիրքերում է, քանի որ հնարավորություն ունի արտաքին տնտեսական կապեր իրականացնելու թե՛ ցամաքային և թե՛ ծովային ճանապարհներով: ՆԱՏՕ-ի անդամ Իտալիան իր աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ նշանակալի տեղ է գրավում այդ դաշինքի ռազմավարական ծրագրերում:

Իտալիայի տարածքի մեծ մասը (4/5-ը) լեռնային է: Հյուսիսում Ալպյան լեռների իտալական հատվածն է, որի սահմանամերձ մասում է գտնվում Եվրոպայում ամենաբարձր՝ Մոնբլան գագաթը: Թերակղզային մասում միջին բարձրության Ապենինյան լեռներն են: Դաշտավայրերն ընդարձակ չեն և նեղ շերտով ձգվում են ափամերձ շրջաններով: Ամենաընդարձակը Պադանի դաշտավայրն է՝ Իտալիայի հողագործական գլխավոր շրջանը:

Իտալիան ընդհանուր առմամբ աղքատ է օգտակար հանածոներից, բայց համեմատաբար հարուստ է քիմիական հումքով և բազմատեսակ շինանյութերով: Առավել նշանավոր են Սիցիլիա կղզու ծծմբի և Ապենինյան թերակղզու մարմարի պաշարները (հայտնի է Կարարայի սպիտակ մարմարի հանքավայրը), ինչպես նաև սնդիկի պաշարները, որոնցով երկիրն աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը: Երկրում կան նաև ալյումինի հումքի, բազմամետաղների, ինչպես նաև նավթի ու բնական գազի ոչ մեծ պաշարներ:

Կլիման տիպիկ միջերկրածովային է: Հողագործության կազմակերպման համար ջերմությունը բավարար է, սակայն խոնավությունը՝ ոչ այնքան, քանի որ տեղումների մեծ մասը լինում է ձմռանը: Հետևաբար՝ ամռան շոգ ժամանակահատվածում ոռոգման անհրաժեշտություն է առաջանում: Իտալիայի գետերը մեծ չեն, սակայն ունեն ջրաէներգետիկ և ոռոգիչ մեծ նշանակություն: Նավարկելի է միայն Պո գետը: Հյուսիսում՝ Ալպյան լեռներում, կան մի շարք գեղատեսիլ լճեր, որոնք ունեն ռեկրեացիոն մեծ նշանակություն: Ալպյան ձյունապատ գագաթներն ու լանջերը, ինչպես նաև այլ գրավիչ տեսարանները նախադրյալ են զբոսաշրջության, լեռնադահուկային մարզաձևի ու լեռնագնացության համար: Ռեկրեացիոն նշանակություն ունեն Իտալիայի լեռնային անտառները, որոնք զբաղեցնում են երկրի տարածքի 20%-ից ավելին: Ալ-

պերից բացի՝ հանգստի և զբոսաշրջության մյուս կարևոր շրջաններից են Իտալական Ռիվիերան և Սիցիլիան:

Իտալիայի շատ շրջաններում բնությանը մեծ վնաս են հասցնում տնտեսության տարբեր ճյուղերը, հատկապես քիմիական արդյունաբերությունը և մետաղաձուլությունը: Դրա պատճառով սրվել են բնապահպանական հիմնախնդիրները: Բնական լանդշաֆտների, բուսական ու կենդանական աշխարհի պահպանության համար Ալպերում, ծովափնյա գոտիներում և այլ շրջաններում ստեղծվել են մի շարք ազգային պարկեր:

Բնակչությունը: Բնակչության թվով Իտալիան Եվրոպայի չորրորդ երկիրն է: Երկրի բնակչության 98%-ն իտալացիներ են, որոնք դավանանքով քրիստոնյա կաթոլիկներ են: Իտալիայի բնակչության ձևավորման գործընթացը շատ բարդ և երկարատև է եղել: Տեղաբնիկ իտալիկ ցեղերը միաձուլվել են կելտերի, հույների և այլ ժողովուրդների հետ: Իտալացիների բնորոշ գծերից են տաքարյուն խառնվածքը, բարձրախոսությունը, սերն ու հարգանքը արվեստի գործերի նկատմամբ, ճանապարհորդելու մեծ ցանկությունը:

Ինչպես և Եվրոպայի շատ երկրներում, բնակչության բնական աճը ցածր է (0,2%), ինչի հետևանքով բնակչության տարիքային կազմում նվազում է երեխաների բաժինը, և ընդհակառակը՝ մեծանում է տարեցներինը:

Իտալիան խիտ, բայց նաև անհամաչափ բնակեցված երկիր է: Երկրի հյուսիսում բնակչության խտությունը մեկուկես անգամ ավելի բարձր է, քան հարավում:

Երկրի ամբողջ բնակչության 68%-ն ապրում է քաղաքներում: Իտալական հին ու միջնադարյան մի շարք քաղաքներ՝ Հռոմը, Միլանը, Վենետիկը, Ֆլորենցիան, Ջենովան, Բոլոնիան, Նեապոլը, Պիզան, թեև Փարիզի և Լոնդոնի չափ խոշոր չեն, բայց արվեստի, մասնավորապես քանդակագործության և ճարտարապետության համաշխարհային նշանակության կենտրոններ են: Եվրոպայի առաջին համալսարանը ստեղծվել է Բոլոնիա քաղաքում:

Երկրի մայրաքաղաքը և խոշորագույն քաղաքը **Հռոմն** է, որը Հին աշխարհի ամենանշանավոր և ամենախոշոր քաղաքն է: Հռոմի համար ժամանակի ընթացքում գործածական են դարձել և թևավոր խոսքի ուժ ստացել «Հավերժական քաղաք» և «Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ» պատկերավոր արտահայտություններ: Հռոմը կառուցված է ծովափից ոչ հեռու՝ Տիբր գետի ափին, յոթ բլուրների վրա: Այժմ էլ քաղաքաշինական հանգուցային և զբոսաշրջային նշանակություն ունեն անտիկ ժամանակներից պահպանված Կոլիզեումը՝ հսկայածավալ բացօթյա ամֆիթատրոնը, Միքելանջելոյի նախագծած Կապիտոլիումի հրապարակը, քաղաքի համայնապատկերում տիրապետող դիրք ունեցող Պողոս-Պետրոս տաճարը, հին ու նեղլիկ փողոցները:

Յուրահատուկ քաղաք է **Վենետիկը**՝ կառուցված 118 կղզու վրա, որոնք իրար են միացած բազմաթիվ կամուրջներով և իրարից բաժանվում են փողոց-ջրանցքներով: Աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից է և զբոսաշրջության խոշոր կենտրոն: Այստեղ բազմաթիվ են աշխարհահռչակ ճարտարապետական հուշարձանները: 1512թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտը տպագրեց հայերեն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: 1717թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հաստատվեց Մխիթարյան միաբանությունը, որն առ այսօր շարունակում է իր գիտական, գրական ու կրթական լայն գործունեությունը:

Տնտեսությունը: Իտալիան համախառն ներքին արդյունքի ծավալով մտնում է աշխարհի առաջին տասնյակի մեջ և մյուսների հետ մեկտեղ վճռական ազդեցություն ունի համաշխարհային տնտեսության ու քաղաքականության վրա: Այս երկրի հետարդյունաբերական փուլում գտնվող տնտեսության առաջատար ճյուղը սպասարկ-

ման ոլորտն է, իսկ արտադրական ոլորտում ընդգծված առաջատարը արդյունաբերությունն է:

Իտալիայի տնտեսության մեջ մեծ է հատկապես «ՖԻԱՏ» (ավտոմեքենաշինական), «Ֆերրարի» (սպորտային ավտոմեքենաներ), «Մոնտէդիսոն» (նավթաքիմիական), «Պիրելլի» (ռետինե և էլեկտրատեխնիկական), «Օլիվետի» (էլեկտրոնային) և այլ վերազգային խոշոր ընկերությունների դերը: Մեծ է նաև պետության դերը:

Իտալիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Արդյունաբերությունը մեծապես կախված է ներմուծվող հումքից և վառելիքից: Էներգետիկան մեծ մասամբ հենվում է ներմուծվող նավթի, բնական գազի և ածխի, մասամբ էլ սեփական ջրաէներգետիկ ռեսուրսների վրա: Ալպերից սկիզբ առնող գետերի վրա կառուցված են մի շարք ջրէկներ: Իտալիան աշխարհի փոքրաթիվ երկրներից է, որտեղ օգտագործվում է երկրաջերմային էներգիան:

Չնայած նավթի սեփական հանույթի փոքր ծավալին՝ Իտալիան դարձել է Եվրոպայի **նավթավերամշակող խոշորագույն երկիրը**: Դա բացատրվում է Մերձավոր Արևելքից Եվրոպա նավթի փոխադրման ուղիների նկատմամբ նրա բարենպաստ աշխարհագրական դիրքով: Նավթավերամշակման գործարանները տեղաբաշխված են Նեապոլ, Վենետիկ, Ջենովա և Տրիեստ նավահանգիստներում: Նավթամթերքների մեծ մասն արտահանվում է հարևան երկրներ:

Սև մետաղաձուլությունը հիմնականում հենվում է ներմուծվող երկաթի հանքաքարի և մետաղի ջարդոնի վրա: Պողպատաձուլական նոր կոմբինատները տեղաբաշխված են նավահանգստային քաղաքներում (Տարանտո, Կոռնելիանո և այլն):

Ներմուծվող հումքի բազայի վրա զարգացած է պղնձի և ալյումինի արտադրությունը:

Մեքենաշինությունը բազմաճյուղ է և տեղաբաշխված է մեծ քաղաքներում: Զարգացած են ավտոմեքենաշինությունը (Թուրին), նավաշինությունը, հաստոցաշինությունը, էլեկտրոնային և կենցաղային սարքերի արտադրությունը:

Իտալիայում բարձր զարգացման է հասել **քիմիական արդյունաբերությունը**: Առավել արագ է զարգանում պլաստմասսաների և մանրաթելերի արտադրությունը:

Թեթև արդյունաբերությունն Իտալիայի ավանդական զարգացած ճյուղն է: Իտալիան աշխարհում կոշկի, կաշվե իրերի և նորաձև հագուստի արտադրության առաջատար երկրներից է: Այստեղ են գտնվում նորաձև հագուստի «Վերսաչի», «Բենետտոն» և այլ հանրահայտ ընկերություններ:

Տեղական գյուղատնտեսական հումքի բազայի վրա զարգացած է սննդի արդյունաբերությունը: Հռչակված են հատկապես իտալական գինիները, մակարոնը՝ տարատեսակ սպագետին: Իտալացիներն իրենց սննդում առավելապես օգտագործում են բուսական յուղ (հատկապես ձիթապտղի), և պատահական չէ, որ դրա արտադրանքը բազմիցս գերազանցում է կենդանական յուղի արտադրությանը:

Իտալիայի **գյուղատնտեսությունը** բազմաճյուղ է: Ի տարբերություն շատ այլ զարգացած երկրների՝ առաջատար ճյուղը բուսաբուծությունն է: Իտալիան խաղողի բերքով աշխարհում առաջինն է, իսկ ցիտրուսների ու ձիթապտղի արտադրությամբ՝

երկրորդը: Զգալի են նաև հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները (ցորեն, եգիպտացորեն, բրինձ):

Անասնապահությունը համեմատաբար թույլ է զարգացած: Հյուսիսային Իտալիայում գերակշռող ճյուղ են կաթնամսատու տավարաբուծությունը և խոզաբուծությունը, իսկ Հարավային Իտալիայում՝ ոչխարաբուծությունը:

Տրանսպորտի բոլոր տեսակները Իտալիայում գտնվում են զարգացման բարձր մակարդակի վրա: Ներքին փոխադրումների մեջ առաջին տեղը պատկանում է ավտոմոբիլային, երկրորդը՝ երկաթուղային տրանսպորտին: Ալպյան լեռներում կառուցված մի շարք երկար ու լայն թունելները հնարավորություն են տալիս ամբողջ տարին հաղորդակցություն հաստատելու հարևան երկրների հետ:

Արտաքին կապերի մեջ գլխավորը ծովային տրանսպորտն է: Երկրի գլխավոր նավահանգիստներն են Ջենովան, Տրիեստը, Տարանտոն:

Իտալիան **ներքին հակադրությունների** երկիր է: Աշխարհում դժվար է գտնել մեկ այլ զարգացած պետություն, որն ունենա տնտեսական զարգացման մակարդակների այնպիսի մեծ տարբերություններ, ինչպիսիք գոյություն ունեն Իտալիայի հյուսիսի ու հարավի միջև:

Ջենովայի նավահանգիստը

Հյուսիսը, հատկապես Միլան – Թուրին – Ջենովա եռանկյունին, առավել զարգացած արդյունաբերական շրջանն է: Այստեղ են Իտալիայի խոշորագույն արդյունաբերական կենտրոնները և ինտենսիվ գյուղատնտեսական շրջանները: Իտալիայի **հարավը** նկատելիորեն զիջում է հյուսիսին թե՛ տնտեսական (հատկապես արդյունաբերական զարգացման) մակարդակով, թե՛ բնակչության կենսամակարդակով: Հարավի հետ մնալու պատճառներից մեկն այն է, որ այդ շրջանում դեռևս պահպանվում են առաջընթացին խոչընդոտող տնտեսական հարաբերությունները: Այդ պայմաններն էլ ծնունդ են տվել հանրահայտ մաֆիային, հատկապես՝ սիցիլիական: Հարավի հետամնացության հաղթահարման համար մշակվել է տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման պետական ծրագիր:

Իտալիայի տնտեսությունը խիստ կախման մեջ է **արտաքին առևտրից**:

Իտալիան հիմնականում **ներկրում է** քարածուխ, նավթ, բնական գազ, երկաթի հանքաքար, բուրդ, բամբակ, կաուչուկ, պարենամթերք (ցորեն, միս, ձուկ):

Արտահանում է տարբեր տեսակի մեքենաներ՝ ավտոմեքենաներ, նավեր, սարքավորումներ, քիմիական ապրանքներ, պատրաստի հագուստեղեն, մարմար, ծծումբ, սնդիկ, ձիթապտղի յուղ, գինի, մրգեր և այլն:

Տնտեսական կապերի մեջ մեծ նշանակություն և հատուկ տեղ ունի միջազգային զբոսաշրջությունը: Իտալիա են այցելում տարեկան տասնյակմիլիոնավոր զբոսաշրջիկներ:

Իտալիայի առևտրային գլխավոր գործընկերներն են Եվրամիության անդամ երկրները, հատկապես Ֆրանսիան և Գերմանիան: Բազմաբնույթ տնտեսական կապեր է պահպանում նաև աշխարհի տարբեր տարածաշրջանների պետությունների հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Իտալիայի դերը համաշխարհային տնտեսության և քաղաքակրթության զարգացման գործում:
2. Թվարկեք Իտալիայի տնտեսական զարգացմանը նպաստող և խոչընդոտող գործոններն ու պայմանները:
3. Որո՞նք են Իտալիայի բնակչության վերարտադրության, տեղաբաշխման և ուրբանիզացման բնորոշ գծերը: Նշեք խոշորագույն քաղաքները:
4. Թվարկեք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Իտալիայի գլխավոր արդյունաբերական կենտրոնները՝ նշելով դրանց առաջատար ճյուղերը:
5. Որո՞նք են գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները: Նշեք առաջատար ճյուղերը:
6. Նշեք Իտալիայի տնտեսության տեղաբաշխման գլխավոր առանձնահատկությունները:

ԴԱՍ 14. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արևմտյան Եվրոպան, Հյուսիսային և Հարավային Եվրոպայի հետ մեկտեղ, արևմտյան (քրիստոնեական) քաղաքակրթության հայրենիքն է: Տարածաշրջանի երկրները գտնվում են զարգացման հետինդուստրիալ փուլում, ունեն տնտեսության, գիտության, կրթության և մշակույթի զարգացման բարձր մակարդակ ու բնակչության բարձր բարեկեցություն: Համաշխարհային տնտեսության և քաղաքականության մեջ գլխավոր դերակատարում ունեցող տարածաշրջաններից է, Եվրոպայի երկրների միասնացման նախաձեռնողն ու հիմնական առանցքը: Արևմտյան Եվրոպան նաև աշխարհի խոշորագույն զբոսաշրջային տարածաշրջաններից է:

Կազմը: Արևմտյան Եվրոպան Եվրոպայի քաղաքական և տնտեսական միջուկն է: Ձբաղեցնում է Եվրոպա աշխարհամասի արևմտյան հատվածը և ընկած է Հյուսիսային ու Միջերկրական ծովերի միջև:

Արևմտյան Եվրոպայի պետությունները կարելի է միավորել հետևյալ երեք խմբերում.

ա) «Յոթնյակի» անդամ գերխոշոր պետություններ՝ Գերմանիա և Ֆրանսիա,

բ) Բենիլյուքսի պետություններ՝ Բելգիա, Նիդեռլանդներ և Լյուքսեմբուրգ,

գ) ալպյան պետություններ՝ Շվեյցարիա, Ավստրիա և Լիխթենշթայն:

Տեսարան Հյուսիսգերմանական դաշտավայրից

Բացառությամբ ալպյան պետությունների՝ մնացածներն անդամակցում են ՆԱՏՕ-ին:

Ըստ պետական կառավարման ձևի՝ Գերմանիան, Ավստրիան, Շվեյցարիան դաշնային հանրապետություններ են, Ֆրանսիան՝ միասնական (ունիտար) հանրապետություն, իսկ Բենիլյուքսի երկրները և Լիխթենշթայնը՝ սահմանադրական միապետություններ:

Արևմտյան Եվրոպան զբաղեցնում է 1,1 մլն կմ² տարածք: Բնակչությունը 190 մլն է:

Աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է: Տարածաշրջանը կենտրոնական դիրք է գրավում Եվրոպայի մյուս տարածաշրջանների միջև: Նրա տարածքով են անցնում Հարավային, Արևելյան և Հյուսիսային Եվրոպա գնացող կարևոր ճանապարհները: Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներ՝ Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան և Նիդեռլանդները, լայն ճակատով ելք ունեն դեպի համաշխարհային օվկիանոս: Հռենոսը և նավարկելի այլ գետեր, իրենց հոսանքի ուղղություններով, տարածաշրջանի ներքին տարածքները ուղղակիորեն կապում են համաշխարհային օվկիանոսին:

Բնական պայմանները և ռեսուրսները: Արևմտյան Եվրոպայում հյուսիսի հարթավայրերի և հարավի լեռների տարածական զուգորդումը ստեղծել է բնական պայմանների ներքին բազմազանություն:

Ծովափնյա շրջանների ցածրադիր դաշտավայրերը (Հյուսիսգերմանական, Հյուսիսֆրանսիական և այլն) և բլրապատ հարթավայրերն իրենց մեղմ ու խոնավ կլիմայով նպաստավոր են հացահատիկային ու տեխնիկական մշակաբույսերի աճեցման, ինչպես նաև անասնապահության զարգացման համար:

Դեպի հարավ և արևելք մակերևույթն աստիճանաբար բարձրանում է ու դառնում լեռնային: Ալպերի լեռներում կան լավագույն պայմանները հանգստի և զբոսաշրջության կազմակերպման համար: Այստեղ են լեռնադահուկային մարզաձևի համաշխարհային նշանակության կենտրոնները:

Արևմտյան Եվրոպա

Արևմտյան Եվրոպայի հարթավայրերի խիտ բնակեցվածության և տարածքային ռեսուրսների սահմանափակության պատճառով մարդիկ դարերի ընթացքում իրականացրել են եղած տարածքների պաշտպանության և ծովի հաշվին նոր տարածքների յուրացման միջոցառումներ: Այսպես՝ Նիդեռլանդների ներկա ցամաքային տարածքի մի մասը ցածր է ծովի մակարդակից, իսկ տարածքի կեսը ծովի մակարդակից բարձր է ընդամենը մեկ մետրով: Արևմտյան ուժեղ քամիների ազդեցությամբ այդ տարածքները նախկինում ծածկվում էին ծովի ջրով: XIII–XIV դարերից հոլանդացիները ձեռնամուխ են եղել այդ տարածքները ծովից պաշտպանելու գործին՝ ստեղծելով արհեստական պատնեշներ: Ըստ հոլանդական ասացվածքի՝ «Աստված հոլանդացիներին տվել է միայն երկինք ու ջուր, իսկ հողն ստեղծել են իրենք՝ հոլանդացիները»:

Արևմտյան Եվրոպան աչքի չի ընկնում **օգտակար հանածոների** բազմազանությամբ և պաշարներով: Համեմատաբար զգալի են քարածխի պաշարները: Առանձնապես նշանավոր է Ռուրի (Գերմանիա) ածխային ավազանը: Համեմատաբար քիչ են նավթի պաշարները: Գազի զգալի պաշարներ կան Նիդեռլանդներում:

Ալյումինի հումքի և ուրանի հանքաքարի պաշարներով հարուստ է Ֆրանսիան, իսկ Լոթարինգիայի երկաթի հանքաքարի երբեմնի խոշոր պաշարները գրեթե սպառվել են: Ավստրիայում են գտնվում գրաֆիտի[1] պաշարներ:

Արևմտյան Եվրոպան իր վրա է կրում Ատլանտյան օվկիանոսի, հատկապես Հյուսիսատլանտյան տաք հոսանքի բարերար ազդեցությունը: Կլիման մեղմ է. ձմեռը ցուրտ չէ, ամառն էլ զով է:

Տարածաշրջանում կան ջրառատ նավարկելի **գետեր** (Հռենոս, Օդեր, Էլբա, Սեն, Լուար, Ռոն), որոնք իրար կապված են նավարկելի ջրանցքներով: Դա ավելի է մեծացնում գետերի տրանսպորտային նշանակությունը: Գետաբերանների ափերին ձևավորվել են խոշոր նավահանգիստներ: Ալպերից սկիզբ առնող գետերն ունեն ջրաէներգետիկ մեծ պաշարներ:

Լեռնային շրջաններում, հատկապես Ալպերում, կան հանգստի կազմակերպման նպատակին ծառայող գեղատեսիլ լճեր, որոնցից են Ժնևի և Բոդենի լճերը:

Պատմական ոչ վաղ անցյալում Արևմտյան Եվրոպայի տարածքի մեծ մասը ծածկված է եղել կաղնու և հաճարենու անտառներով: Սակայն, բնակչության աճի պայմաններում, նոր բնակավայրերի և ճանապարհների կառուցումը, վարելահողերի ընդարձակումը հանգեցրել են անտառների զանգվածային հատմանը և դրանց մակերեսի խիստ կրճատմանը: Ներկայումս անտառային տարածքների բաժինն առավել մեծ է Ավստրիայում (47%):

Բնական լանդշաֆտներն իրենց տեղը զիջել են մարդածին լանդշաֆտներին՝ վարելահողերին, այգիներին, քաղաքների ու գյուղերի կառուցապատված տարածություններին, որոնք տեղ-տեղ խախտվում են անտառապուրակներով ու գետերով:

Ներկայումս Արևմտյան Եվրոպայի երկրներում խստացվել է հսկողությունը անտառների և ընդհանրապես շրջակա միջավայրի պահպանման ուղղությամբ: Բոլոր երկրներում ստեղծվում են նորանոր արգելոցներ, ազգային պարկեր:

Բնակչությունը: Արևմտյան Եվրոպայի բնակչության ազգային կազմը խայտաբղետ է: Եվրոպայի հնագույն ժողովուրդների միաձուլումից ձևավորվել են ժամանակակից ազգերը, որոնցից առավել մեծաթիվ են գերմանացիները և ֆրանսիացիները: Երկրների մեծ մասը՝ Գերմանիան, Նիդեռլանդները, Ավստրիան, Լյուքսեմբուրգը,

1. Գրաֆիտը մատիտի սև միջուկի փափուկ նյութն է:

Լիխթենշթայնը միազգ պետություններ են: Ֆրանսիայում կան նաև տեղաբնիկ ազգային փոքրամասնություններ (բրետոնացիներ, էլզասցիներ, կորսիկացիներ): Բելգիան երկազգ երկիր է. ապրում են ֆլամանդացիներ և վալոններ: Շվեյցարիայում տարբեր լեզուներով խոսող (ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն) ժողովուրդների համախմբման շնորհիվ ավարտվել է միասնական ազգի ձևավորման գործընթացը:

Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների լեզուների մեծ մասը պատկանում է **հնդեվրոպական լեզվաընտանիքի** գերմանական, իսկ փոքր մասը՝ ռոմանական լեզվախմբին: Բնակչության հիմնական մասը դավանում է քրիստոնեություն, գլխավորապես՝ բողոքականություն և կաթոլիկություն: Վերջին տասնամյակներին ներգաղթի հաշվին տարածաշրջանում զգալիորեն ավելացել է մահմեդականների թիվը, և դրա հետևանքով սրվել են միջկրոնական հարաբերությունները:

Արևմտյան Եվրոպայի բնակչության թիվն աճում է դանդաղորեն՝ հիմնականում ներգաղթի հաշվին: Երկրների բնակչության բնական աճի ցուցանիշը շատ ցածր է, իսկ առանձին երկրներում (Գերմանիա, Ավստրիա)՝ նույնիսկ բացասական: Արևմտյան Եվրոպայում ստեղծված «ժողովրդագրական ճգնաժամին» նպաստել են քաղաքաբնակների մեծ թիվը, աշխատանքում կանանց ակտիվ ներգրավվածությունը, ուշ ամուսնությունները, ամուսնալուծությունների մեծ թիվը: Բնակչության ընդհանուր թվում աճում են տարեցների թիվն ու բաժինը, այսինքն՝ տեղի է ունենում բնակչության «ծերացում»:

Արևմտյան Եվրոպայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



Տնտեսության առանձին ոլորտներում (շինարարություն, ծառայություններ և այլն) զգացվում է աշխատուժի պակաս, որը հիմնականում լրացվում է Արևելյան Եվրոպայից, Թուրքիայից, Հյուսիսային Աֆրիկայից եկած ներգաղթյալների հաշվին: **Ներկայումս Արևմտյան Եվրոպան վերածվել է աշխատուժի ներգաղթի համաշխարհային գլխավոր օջախի**: Այժմ այստեղ կան 9–10 մլն օտարերկրյա աշխատողներ:

Արևմտյան Եվրոպան աշխարհի առավել խտաբնակ և ուրբանիզացված տարածաշրջաններից է: Բնակչության բարձր խտության հիմնական պատճառը քաղաքների մեծ թիվն է: Տարածաշրջանն ունի քաղաքների ամենախիտ ցանցն աշխարհում: Շատ երկրներում բնակչության միջին խտությունն ավելին է, քան 200 մարդ/կմ², իսկ Նիդեռլանդները և Բելգիան աշխարհի ամենախտաբնակ երկրներից են:

Բնակչության մոտ 4/5-ն ապրում է քաղաքներում: Բավական շատ են 1 մլն-ից ավելի բնակչություն ունեցող քաղաքները: Բնորոշ են քաղաքային մեծ կուտակումները, ինչը պայմանավորված է արդյունաբերության տարածքային բարձր համակենտրոնացմամբ: Խոշորագույն քաղաքները՝ Փարիզը, Բեռլինը, Վիեննան, Մյունխենը, Համբուրգը, Քյոլնը, Ամստերդամը, Բրյուսելը և այլն, արդյունաբերական, ֆինանսաառևտրական և գիտամշակութային խոշոր կենտրոններ են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Արևմտյան Եվրոպայի տեղն ու դերն աշխարհում:
2. Նշեք Արևմտյան Եվրոպայի աշխարհագրական դիրքի բնորոշ գծերը:

3. Գնահատեք Արևմտյան Եվրոպայի բնական պայմաններն ու ռեսուրսները տնտեսության զարգացման տեսանկյունից:
4. Ինչպիսի՞ն է Արևմտյան Եվրոպայի բնակչության վերարտադրությունը: Ինչպիսի՞ հետևանքներ է ունենում դա երկրների զարգացման վրա:
5. Ինչպիսի՞ն է Արևմտյան Եվրոպայի երկրների բնակչության ազգային և կրոնական կազմը:
6. Ձեր կարծիքով՝ որո՞նք են դեպի Արևմտյան Եվրոպա կատարվող զանգվածային ներգաղթի պատճառները, և ի՞նչ հետևանքներ կարող է դա ունենալ:

ԴԱՍ 15. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Արևմտյան Եվրոպան տնտեսական ընդհանուր հզորությամբ աշխարհում երկրորդն է ԱՄՆ-ից հետո: Արևմտյան Եվրոպայի երկրները պատկանում են ամենազարգացած պետությունների թվին, իսկ Գերմանիան և Ֆրանսիան աշխարհում տնտեսական ու քաղաքական առումներով մեծամասշտաբ դերակատարում ունեցող երկրներ են:



Արևմտյան Եվրոպայում բնակվում է երկրագնդի բնակչության ընդամենը 2,7%-ը, բայց նրան բաժին է ընկնում ամբողջ աշխարհի համախառն ներքին արդյունքի 13%-ը: Արևմտյան Եվրոպայի բնակչության մեկ շնչին հասնող ՀՆԱ-ն ավելի քան 40 հազ. դոլար է, իսկ փոքրիկ Լյուքսեմբուրգն այդ ցուցանիշով առաջինն է աշխարհում: Արևմտյան Եվրոպայի բանկերում է կենտրոնացված աշխարհի դրամական զանգվածի և ոսկու պահուստների մոտ 1/4-ը: Արևմտյան Եվրոպայի երկրները գտնվում են զարգացման հետինդուստրիալ փուլում, այսինքն՝ զարգացման շատ բարձր մակարդակի է հասել ծառայությունների ոլորտը (բանկային, զբոսաշրջային, գովազդային և այլն):

Արդյունաբերությունը: Արևմտյան Եվրոպայում առավել զարգացում են ստացել մշակող արդյունաբերության գիտատար և աշխատատար ճյուղերը: Արդյունաբերության մեծ մասը կենտրոնացված է երկու խոշոր երկրներում՝ Գերմանիայում և Ֆրանսիայում (արտադրանքի 4/5-ը): Այս երկրներն ունեն բազմաճյուղ արդյունաբերություն: Տարածաշրջանի մնացյալ երկրները մասնագիտանում են առանձին արտադրությունների գծով: Օրինակ՝ Բելգիայի համար առավել բնորոշ է մետաղների և մետաղատար մեքենաների, Լյուքսեմբուրգի համար՝ բարձրորակ պողպատի, Նիդեռլանդների համար՝ էլեկտրոնային և բժշկական սարքերի, Շվեյցարիայի համար՝ բարձր ճշգրտության հաստոցների, չափիչ սարքերի, ժամացույցների արտադրությունը:

Էներգետիկան զարգանում է ինչպես սեփական ռեսուրսների, այնպես էլ ներմուծվող վառելիքի հիման վրա: Սեփական ռեսուրսներով ավելի լավ են ապահովված Գերմանիան (քարածուխ), Ավստրիան (ջրաէներգետիկ ռեսուրսներ), Նիդեռլանդները (բնական գազ): Արևմտյան Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում, մեծ է ատոմային էներգետիկայի բաժինը:

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում արդյունաբերության առաջատար ճյուղը **մեքենաշինությունն** է, որի արտադրանքի զգալի մասն արտահանվում է: Արևմտյան Եվրոպայի մեքենաշինական ընկերությունները մեծ թվով ձեռնարկություններ ունեն նաև աշխարհի այլ երկրներում:

Արևմտյան Եվրոպայի քիմիական արդյունաբերությունը, հենվելով սեփական ու ներմուծվող բազմազան հումքի և այլ ճյուղերի թափոնների օգտագործման վրա, արտադրում է պլաստմասսաներ, սինթետիկ կաուչուկ, քիմիական մանրաթելեր, հանքային պարարտանյութեր և այլն:

Տարածաշրջանում զարգացած են թեթև և սննդի արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը: Թեթև արդյունաբերության շատ արտադրատեսակների գծով առանձին երկրներ (Ֆրանսիա, Գերմանիա և այլն) վերածվել են «նորաձևության օրենսդիրների»:

Հետաքրքիր է, որ Արևմտյան Եվրոպայի երկրներում ավելի շատ օգտագործում են գարեջուր, մինչդեռ Հարավային Եվրոպայի երկրներում շատ են օգտագործում գինի, իսկ Հյուսիսային Եվրոպայի երկրներում՝ սպիրտային թունդ խմիչքներ:

Գյուղատնտեսությունը: Թեև գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ում ավելի քան տասն անգամ փոքր է արդյունաբերության բաժնից, բայց ճյուղը գտնվում է զարգացման բարձր մակարդակի վրա: Դրան հատուկ են աշխատանքների մեքենայացման բարձր մակարդակը, մշակաբույսերի բարձր բերքատվությունը և կենդանիների բարձր մթերատվությունը:

Բուսաբուծության մեջ առաջատարը ցորենի մշակությունն է՝ շատ բարձր բերքատվությամբ: Մեծ տարածք են զբաղեցնում նաև գարու, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, վուշի, կերային խոտերի ցանքերը: Զարգացած են խաղողագործությունը և բանջարեղենի մշակությունը:

Արևմտյան Եվրոպայի գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է, որին բաժին է ընկնում գյուղատնտեսության արտադրանքի 3/4-ը: Երկրներից շատերը մեծաքանակ **անասնապահական մթերքներ** արտահանողներ են: Արևմտյան Եվրոպային բաժին է ընկնում կենդանական յուղի համաշխարհային արտադրանքի 1/5-ը, կաթի 1/7-ը, մսի և ձվի 1/8-ը:

Նիդեռլանդներում առանձնահատուկ բարձր զարգացում է ստացել **ծաղկաբուծությունը**: Այս երկիրը ծաղկի ամենախոշոր արտահանողն է աշխարհում:

Տրանսպորտը: Արևմտյան Եվրոպան տրանսպորտի բոլոր տեսակներով ամենահագեցած տարածաշրջանն է: Ներքին փոխադրումներում առաջատարը ավտոտրանսպորտն է, իսկ արտաքինում՝ ծովայինը:

Արևմտյան Եվրոպայի միասնական տարածաշրջանային տրանսպորտային համակարգում առաջնակարգ տեղ է գրավում **ծովային տրանսպորտը**: Խոշոր ծովային տերություններ են Նիդեռլանդները և Ֆրանսիան: Բազմաթիվ են միջազգային նշանակության ծովային նավահանգիստները, այդ թվում՝ Ռոտերդամը (Նիդեռլանդներ), Համբուրգը (Գերմանիա), Մարսելը և Հավրը (Ֆրանսիա):

Բեռնաշրջանառությամբ երկրորդը **ավտոտրանսպորտն** է, որն առաջնակարգ նշանակություն ունի հատկապես տարածքով ոչ մեծ, ինչպես նաև լեռնային երկրներում՝ Բելգիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում: Տարածաշրջանի տարածքով առավել մեծ երկրների բեռնափոխադրումներում կարևոր դեր ունի նաև **երկաթուղային**

տրանսպորտը: Շատ բարձր է տարածաշրջանի բնակչության ապահովվածությունը ավտոմեքենաներով: Դրա հետ մեկտեղ, օդային ավազանի մաքրության և մարդկանց առողջության պահպանման նպատակով, որպես տրանսպորտի միջոց լայնորեն օգտագործում են հեծանիվները:

Գերմանիայում, Ֆրանսիայում և Նիդեռլանդներում, շնորհիվ Հռենոս և այլ գետերի ու ջրանցքների, զարգացած է **ներքին ջրային տրանսպորտը**: Արևմտյան Եվրոպայի երկրների համար չափազանց կարևոր նշանակություն ունի **խողովակաշարային տրանսպորտը**, որն ապահովում է Հարավարևմտյան Ասիայից, Հյուսիսային Աֆրիկայից և Ռուսաստանից ներմուծվող նավթով ու գազով:

Միջազգային օդանավակայան Փարիզում

Զարգացման բարձր աստիճանի է հասել **օդային տրանսպորտը**: Միջազգային նշանակության տրանսպորտային հանգույցներ են Փարիզի, Մայնի Ֆրանկֆուրտի, Ամստերդամի՝ տեխնիկայի վերջին խոսքով հագեցած խոշորագույն օդանավակայանները:

Արտաքին տնտեսական կապերը: Համաշխարհային առևտրի մեջ Արևմտյան Եվրոպայի բաժինը շատ մեծ է (շուրջ 1/4-ը): Արտահանման և ներկրման ծավալներով Գերմանիան և Ֆրանսիան աշխարհում առաջատար երկրներից են: Միայն Նիդեռլանդների արտաքին առևտրի ծավալն ավելի մեծ է, քան ամբողջ Աֆրիկա մայրցամաքինը (առանց Հարավաֆրիկյան Հանրապետության):

Արևմտյան Եվրոպայի երկրների արտահանության մեջ գերակշռում է մշակող արդյունաբերության արտադրանքը: Հիմնականում արտահանում են ժամանակակից բարդ մեքենաներ ու սարքավորումներ, ավտոմեքենաներ, ծովային նավեր, քիմիկատներ, արհեստական մանրաթելեր, թեթև արդյունաբերության արտադրանք, պարենամթերք (միս, կաթնամթերք, գինի, գարեջուր և այլն):

Ներկրման մեջ գերակշռում են արդյունաբերական հումքը և վառելիքը (մետաղներ, նավթ և բնական գազ): Ներկրում են նաև պարենամթերք, արդյունաբերական բազմատեսակ ապրանքներ և այլն:

Տարածաշրջանի երկրները, հատկապես Գերմանիան և Ֆրանսիան, ակտիվորեն մասնակցում են տնտեսությունների համաեվրոպական մակարդակով միասնացման գործընթացներին: Պետական սահմանները բաց են մարդկանց և ապրանքների փոխանակման համար: Եվրամիության անդամ երկրներից բացի՝ առևտրական գլխավոր գործընկերներն են ԱՄՆ-ը, Ճապոնիան և Ռուսաստանը:

Արևմտյան Եվրոպայի արտաքին կապերի մեջ ուրույն տեղ ունի միջազգային զբոսաշրջությունը: Ֆրանսիան զբոսաշրջիկների թվով աշխարհում առաջինն է: Առաջատար երկրների թվին են պատկանում նաև ալպյան երկրները՝ Շվեյցարիան և Ավստրիան: Զբոսաշրջիկներին հրապուրում են ոչ միայն բնական և պատմաճարտարապետական հուշարձաններն ու տեսարժան վայրերը, այլև զարգացած զբոսաշրջային ծառայությունները և սպասարկման բարձր որակը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Արևմտյան Եվրոպայի դերն ու տեղը համաշխարհային տնտեսության մեջ:
2. Որո՞նք են Արևմտյան Եվրոպայի տնտեսության բնորոշ գծերը:
3. Բնութագրեք Արևմտյան Եվրոպայի արդյունաբերության առաջատար ճյուղերը:
4. Որո՞նք են գյուղատնտեսության առաջատար ճյուղերը, ինչպիսի՞ն են դրանց զարգացման նախադրյալները:
5. Ի՞նչ գործոններ են նպաստում տրանսպորտի տարբեր տեսակների զարգացմանը:
6. Ինչպիսի՞ն է արտաքին առևտրի կառուցվածքը:

ԴԱՍ 16. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԳԵՐՄԱՆԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքը՝ 357 հազ. կմ²
Բնակչությունը՝ 81,9 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Բեռլին
Պետական կարգը՝ դաշնային խորհրդարանական հանրապետություն

Գերմանիան (պաշտոնական անվանումը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, ԳԴՀ) Արևմտյան Եվրոպայի տնտեսապես ամենահզոր և բնակչության թվով ամենամեծ պետությունն է: Մեծ է նրա ազդեցությունը ոչ միայն Եվրոպայի, այլև համաշխարհային տնտեսության և աշխարհաքաղաքական իրադրության վրա:

Գերմանիան կազմված է 16 դաշնային երկրամասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սահմանադրությունը, խորհրդարանն ու կառավարությունը: Երկրի քաղաքական և տնտեսական զարգացման ռազմավարությունը որոշում է վարչապետը՝ կանցլերը:

Գերմանիայի **աշխարհագրական դիրքի** գլխավոր առանձնահատկությունն այն է, որ գտնվում է Եվրոպայի կենտրոնում, ինչպես ասում են՝ «սրտում»: Դրա հետևանքով էլ այստեղ են հատվում, մի կողմից, Եվրոպայի արևմտյան ու արևելյան, մյուս կողմից՝ Միջերկրածովյան և Սկանդինավյան տարածաշրջանները միմյանց կապող ցամաքային, ջրային, օդային և խողովակաշարային կարևոր ուղիները:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի պարտությունից հետո երկու անկախ պետությունների՝ Արևմտյան և Արևելյան Գերմանիայի բաժանված երկիրը 1990թ. վերամիավորվեց, քանդվեց Բեռլինը երկու մասի բաժանող պարիսպը: Միավորված Գերմանիայի մայրաքաղաք կրկին դարձավ Բեռլինը:

Գերմանիայի համար կարևոր դեր են խաղում հյուսիսային ափերին գտնվող Հյուսիսային ու Բալթիկ ծովերը և դրանք միմյանց կապող Քիլի ջրանցքը: Գերմանիայի համար ոչ պակաս նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ նրա հարևանները տնտեսապես զարգացած են: Գերմանիան տնտեսական, քաղաքական և մշակութային սերտ կապեր ունի բոլոր անմիջական հարևանների հետ:

Բնական պայմանները և ռեսուրսները: Գերմանիայի բնական ռեսուրսների պաշարները մեծ չեն, թեև աչքի են ընկնում բազմազանությամբ:

Երկրի հյուսիսային շրջանում Հյուսիսգերմանական դաշտավայրն է, որի ծովափնյա մասը զբաղեցնում են **մարշերը**: Մարշերի տղմային բերրի հողերը, հյութալի մարգագետինները նպաստավոր են ինտենսիվ բուսաբուծության և բարձր մթերատու անասնապահության զարգացման համար:

Հարավային շրջանները զբաղեցնում են ցածր ու հին լեռները, ինչպես նաև երիտասարդ Բավարական Ալպերը: Դրանք տնտեսական յուրացման, հատկապես տրանսպորտային ուղիների անցկացման տեսանկյունից լուրջ հիմնախնդիրներ չեն առաջացնում, քանի որ մասնատված են բազմաթիվ լեռնահովիտներով:

Գերմանիայի հիմնական հանքային հարստությունը քարածուխն է (Ռուր, Սաար) և գորշ ածուխը (Քյոլն): Զգալի են նաև կալիումական և կերակրի աղերի պաշարները:

Կլիմայական պայմանները բարենպաստ են բարեխառն գոտուն բնորոշ մշակաբույսերի աճեցման համար:

Գետերը շատ են և ջրառատ: Համեմատաբար խոշոր գետերը՝ Հռենոսը, Էլբան, Մայնը, նավարկելի են, ջրանցքներով միացած ինչպես միմյանց, այնպես էլ Հյուսիսային և Բալթիկ ծովերին:

Տեսարան Բավարական անտառ ցածր լեռներից

Անտառածածկ է երկրի տարածքի 30%-ը: Անտառային զանգվածները գլխավորապես գտնվում են երկրի միջին և հարավային լեռնային տարածքներում, որոնք անվանվում են «անտառներ» (Բավարական անտառ, Չեխական անտառ և այլն): Բնության պահպանության նպատակով Գերմանիայում խստացվել են բնապահպանական օրենքները, ստեղծվել են բազմաթիվ արգելոցներ, արգելավայրեր և ազգային պարկեր:

Բնակչությունը: Գերմանիայի բնակչությունը Երկրորդ համաշխարհային պատերազմում կրեց մարդկային զգալի կորուստներ, սակայն բնակչության թվաքանակը մինչպատերազմական ժամանակաշրջանի համեմատ չպակասեց, որովհետև Եվրոպայի մի շարք երկրներից **Գերմանիայում վերաբնակեցվեցին մոտ 13 միլիոն գերմանացիներ**:

Գերմանական ժողովուրդը կազմավորվել է հիմնականում գերմանական զանազան ցեղերից՝ ֆրանկներից, սաքսոնացիներից, բավարացիներից, շվաբներից, որոնք էապես փոփոխվել են, բայց նրանց ավանդույթներն ու բարքառները պահպանվել են ամենուրեք:

Գերմանիայի բնակչության **ազգային կազմը միատարր է**: Ընդունված է գերմանացիների **ազգային բնավորության գիծ** համարել կարգապահությունը, ճշտապահությունը, հաշվենկատությունը, օրինապահությունը և աշխատասիրությունը:

Անցյալ դարի 70-ական թվականներից Գերմանիան հայտնվեց ժողովրդագրական բարդ իրավիճակում՝ ծնելիությունը սկսեց զիջել մահացությանը: Գերմանիան դարձավ աշխարհում առաջին երկրներից մեկը, որի բնակչության աճը մտել է թվի կրճատման փուլ: Այժմ էլ, չնայած պետության վարած ժողովրդագրական ակտիվ

քաղաքականությանը, բնակչության ծնելիությունը շարունակում է մնալ ցածր, իսկ բնական աճի ցուցանիշը՝ բացասական (–0,2%):

Երկարատև ժամանակահատվածում ստեղծված ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը հանգեցրել է բնակչության (ազգի) ծերացմանը: Տարեցները (65 տարեկանից բարձր) կազմում են երկրի բնակչության 20%-ից ավելին: Իսկ երեխաների թվի կրճատումը հետագայում ևս բացասական ազդեցություն կունենա բնակչության թվի աճի վրա:

Գերմանիան ապահովված է որակյալ և կրթված մասնագետներով: Սակայն երկրի տնտեսության աճի տեմպերը հաճախ ավելի բարձր են լինում, քան աշխատունակ տարիքի բնակչության թվի աճը: Այդ անհամապատասխանությունը վերացվում է միայն ներգաղթի հաշվին: «Հյուր-աշխատողները» (գերմաներեն՝ գաստարբայտերներ) հիմնականում ներգրավված են ցածր կարգի աշխատանքներում: Ներկայումս երկրում ապրում են մոտ 6–7 միլիոն օտարերկրացիներ: Ներգաղթածների մեջ գերակշռում են թուրքերը, սերբերը, իտալացիները: 1990-ական թվականներից մեծացավ նաև հայերի հոսքը դեպի Գերմանիա: Այժմ այնտեղ ստեղծվել է ոչ մեծ հայկական համայնք:

Բնակչությունը Գերմանիայում **անհավասարաչափ է տեղաբաշխված**: Ճիշտ է, միջին խտությունը շատ բարձր է՝ 230 մարդ/կմ², բայց կան շրջաններ, օրինակ՝ Հռենոս-Ռուրի քաղաքային կուտակման շրջանում, որտեղ 1 կմ²-ի վրա ապրում է ավելի քան 1000 մարդ: Բնակչությունը նոսր է Հյուսիսգերմանական դաշտավայրում, Բավարական սարահարթում: Ընդհանուր առմամբ՝ երկրի արևմտյան մասն ավելի խիտ է բնակեցված, քան արևելյանը: Միաժամանակ տեղի է ունենում բնակչության ներքին գաղթ՝ տնտեսապես համեմատաբար թույլ զարգացած երկրամասերից դեպի արևմտյան հողեր: Գերմանիան աշխարհի առավել ուրբանիզացված երկրներից է: Ընդհանուր բնակչության մեջ քաղաքային բնակչության բաժինը 90%-ից ավելի է: Երկրում ավելի քան 80 քաղաք ունի 100 հազարից ավելի բնակչություն: Խոշոր քաղաքներից են Բեռլինը (3,5 մլն), Համբուրգը (1,6 մլն), Մյունխենը (1,3 մլն), Քյոլնը (1 մլն), Էսսենը, Մայնի Ֆրանկֆուրտը, Դորտմունդը, Շտուտգարտը, Դրեզդենը, Հաննովերը: Տասնյակ քաղաքային ագլոմերացիաների միաձուլմամբ գոյացել է Հռենոս-Ռուրի (կամ Գերմանական) մեգալոպոլիսը[1]:

Տեսարան Հռենոս-Ռուրի մեգալոպոլիսից

Բեռլինը ոչ միայն գերմանական, այլև համաշխարհային նշանակության տնտեսական, մշակութային, կրթական ու գիտական խոշոր կենտրոն է:

Մեծ է գերմանացիների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործում: Գրականության, արվեստի, գիտության և տեխնիկայի գրեթե բոլոր բնագավառներում նշանավոր ներկայացուցիչների առաջին շարքերում անպայման ներկայացված են գերմանացիներ:

1. Քաղաքային ագլոմերացիաների ընդարձակմամբ և միաձուլմամբ ձևավորված ավելի հզոր ու ընդարձակ ուրբանիզացված գոտի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Գերմանիայի աշխարհագրական դիրքը:
2. Ինչպիսին է բնական պայմանների և ռեսուրսների ազդեցությունը տնտեսության զարգացման և տեղաբաշխման վրա:
3. Վերլուծեք և գնահատեք ժողովրդագրական իրավիճակը և դրա հետևանքները:
4. Գերմանացիների ազգային բնավորության ո՞ր գծերն են ձեզ համար գնահատելի:
5. Ինչպիսին է Գերմանիայի բնակչության տեղաբաշխումը:
6. Թվարկեք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Գերմանիայի խոշոր քաղաքները:

ԴԱՍ 17. ԳԵՐՄԱՆԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր բնութագիրը: Գերմանիան իր տնտեսական հզորությամբ աշխարհի չորրորդ երկիրն է՝ ԱՄՆ-ից, Չինաստանից և Ճապոնիայից հետո: Թեև Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ երկիրը հսկայական ավերածությունների ենթարկվեց, սակայն կարճ ժամանակում ոչ միայն վերականգնեց իր տնտեսությունը, այլև զգալիորեն գերազանցեց նախապատերազմյան մակարդակը: Գերմանիան նույնիսկ առաջ անցավ իրեն հաղթած բոլոր երկրներից, բացառությամբ ԱՄՆ-ի:

Գերմանիայի տնտեսության արագ զարգացման կամ այսպես կոչված գերմանական «տնտեսական հրաշքի» գլխավոր պատճառներն են.

– օտարերկրյա կապիտալ ներդրումների վրա հենվելով՝ կարողացավ ստեղծել ազատական շուկայական տնտեսություն գիտատեխնիկական առաջընթացի նորագույն նվաճումների շնորհիվ և կատարել արտադրության խոր տեխնիկական վերազինում, մեքենաների և սարքավորումների նորացում,

– տնտեսական հզորացման նպատակին ծառայեցրեց գերմանացիներին բնորոշ օրինապահությունը, կարգապահությունը, աշխատասիրությունը, արհեստավարժությունը, արտադրական բարձր մշակույթը և կրթական բարձր մակարդակը:

Գերմանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)

Ներկայումս Գերմանիան Եվրամիության անդամ ամենամեծ ու տնտեսապես ամենահզոր երկիրն է և ամենաակտիվ մասնակցությունն է բերում եվրոպական երկրների տնտեսական համագործակցությանը:

Երկրի զարգացման մակարդակը բնութագրող տնտեսական ցուցանիշները ցույց են տալիս, որ Գերմանիան թևակոխել է *զարգացման հետարդյունաբերական փուլ* (տե՛ս գծանկարը):

Արդյունաբերության կառուցվածքում երկար ժամանակ գերիշխող դիրք ունեին ավանդական ճյուղերը՝ ածխային, մետալուրգիականը: Գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում ավելի արագ աճեցին **«ավանգարդային եռյակի»** ճյուղերը՝ էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունը և քիմիական արդյունաբերությունը: Վերջին տասնամյակներում ավելի ու ավելի է մեծանում նորագույն ճյուղերի դերը, որոնք գլխավորապես տեղաբաշխվում են Գերմանիայի արևելյան մասում:

Գերմանիայի արդյունաբերության առաջատար ճյուղը **մեքենաշինությունն** է: Տարեկան արտադրվող ավտոմեքենաների քանակով Գերմանիան զիջում է միայն Չինաստանին, ԱՄՆ-ին և Ճապոնիային, սակայն դրանց որակով, կարելի է ասել, առաջինն է աշխարհում: Ավտոմոբիլային խոշորագույն ընկերություններն են «Ֆոլկսվագենը», որի կենտրոնը Վոլֆսբուրգ քաղաքն է, «Դայմլեր-Բրայսլերը», որն արտադրում է հանրահայտ «Մերսեդես-Բենց» ավտոմեքենաները, և որի կենտրոնը Շտուտգարտն է, և «ԲՄՎ»-ն, որի կենտրոնը Մյունխենն է:

Ավտոմոբիլաշինությունից բացի՝ զարգացած են հաստոցաշինական, էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային և այլ ճյուղեր ու արտադրություններ: Դրանք զարգանում են երկրի մեծ քաղաքներում, որտեղ առկա են դրանց զարգացմանը նպաստող բարձրորակ կադրերը, գիտական կենտրոնները, սև և գունավոր մետաղները: Համաշխարհային ճանաչում ունեն «Սիմենս» (կենտրոնը՝ Մյունխեն) և «Բոշ» (կենտրոնը՝ Շտուտգարտ) վերազգային ընկերությունները:

«Բայեր» ընկերության քիմիական գործարան

Համախառն արտադրանքի արժեքով, մեքենաշինությունից հետո, երկրորդը քիմիական արդյունաբերությունն է: Տեղական հումքի, մետաղաձուլության թափոնների և ներկրվող նավթի ու գազի հիմքի վրա արտադրվում են գրեթե բոլոր տեսակի քիմիական ու դեղագործական ապրանքները: Ճյուղում առաջնակարգ դիրքեր է գրավում «Բայեր» ընկերությունը (կենտրոնը՝ Լևերկուզեն): Քիմիական արդյունաբերության արտադրանքով Գերմանիան աշխարհում երրորդ տեղում է, իսկ արտահանությամբ՝ առաջին:

Գերմանիայի **վառելիքաէներգետիկական արդյունաբերությունը** հենվում է **սեփական** քարածխի, գորշ ածխի, երկրի հարավի լեռնային գետերի ջրաէներգետիկ պաշարների և **ներկրվող** նավթի ու գազի վրա: **Ռուրը** աշխարհի խոշորագույն քարածխային ավազաններից է և առանձնահատուկ դեր է կատարում երկրի տնտեսության մեջ: Այստեղ է երկրի ջեկերի և մետաղաձուլական ձեռնարկությունների մեծ մասը: Էլեկտրաէներգետիկայում գլխավոր դերը պատկանում է ջեկերին: Ատոմային էներգետիկայի երբեմնի կարևոր դերն այժմ խիստ նվազել է:

Գերմանիան Եվրոպայում առաջինն է ածխի հանույթով, էլեկտրաէներգիայի, պողպատի ու թուջի արտադրությամբ (Ռուրի ավազան): Գունավոր մետաղաձուլության ճյուղերից առավել զարգացած են ալյումինաձուլությունը և պղնձաձուլությունը:

«Ադիդաս» ընկերության շենքը Հեցոգենաուրախում

Զարգացման բարձր մակարդակի են հասել նաև թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը, որոնց մեծ ու փոքր ձեռնարկությունները ցրված են երկրով մեկ: Համաշխարհային ճանաչում ունի գերմանական

«Ադիդաս» և «Պումա» ընկերությունների մարզական արտադրանքը, ինչպես նաև կոշիկ թողարկող «Սալամանդր» ընկերությունը:

Գերմանիան գարեջրի արտադրության հնագույն երկրներից է: Գարեջրի օգտագործմամբ գերմանացիներն առաջինն են աշխարհում. մեկ շնչի հաշվով տարեկան արտադրվում է 160 լիտր գարեջուր: Հանրահայտ է հատկապես բավարական գարեջուրը:

Գերմանիայի զարգացած ինտենսիվ **գյուղատնտեսությունն** աչքի է ընկնում մեքենայացման և քիմիացման բարձր մակարդակով, մշակաբույսերի բերքատվությամբ և անասունների մթերատվությամբ: Եթե 50 տարի առաջ գյուղատնտեսական մեկ աշխատողն արտադրում էր այնքան արտադրանք, որը բավարար էր 10 մարդու կերակրելու համար, ապա ներկայումս՝ 75 մարդու: Առաջատար ճյուղը **անասնապահությունն** է, որը տալիս է գյուղատնտեսության համախառն արտադրանքի մոտ 70%-ը: Երկրի բոլոր շրջաններում զարգացած են կաթնատու և մսակաթնատու տավարաբուծությունը, բեկոնային խոզաբուծությունը և բրոյլերային թռչնաբուծությունը:

Գյուղատնտեսական մշակաբույսերից երկրի գրեթե բոլոր շրջաններում մշակում են ցորեն, գարի, կարտոֆիլ և շաքարի ճակնդեղ: Երկրի հարավային շրջաններում աճեցնում են նաև խաղող:

Տրանսպորտը: Գերմանիայում է ձևավորվել Եվրոպայի ամենահզոր տրանսպորտային համակարգը: Երկրի տարածքը հագեցած է արագընթաց երկաթուղիների, բարձրակարգ ավտոճանապարհների, գետային ուղիների, խողովակաշարերի խիտ ցանցով: Ներքին փոխադրումներում առաջատարը ավտոմոբիլային տրանսպորտն է: Գերմանիայում է գտնվում աշխարհի ամենամեծ գետային նավահանգիստը՝ Դույսբուրգը Հռենոսի ափին՝ Ռուր վտակի գետաբերանում:

Արտաքին բեռնափոխադրումներում կարևոր դեր է խաղում ծովային տրանսպորտը: Խոշոր նավահանգիստներն են Համբուրգը, Բրեմենը և Ռոստոկը: Երկրի արտաքին առևտրի զգալի մասն իրականացվում է Նիդեռլանդների Ռոտերդամ նավահանգստով:

ԳԴՀ-ի **տնտեսության սպասարկման ոլորտն** աչքի է ընկնում բազմապիսի ծառայությունների և սպասարկման, կրթական, գիտական, առողջապահական հիմնարկների լայն ցանցով: Գերմանիան ունի կատարելության հասած կրթական համակարգ: Շատ մեծ է բանկային ծառայությունների դերը: Մայնի Ֆրանկֆուրտն ու Դյուսելդորֆն աշխարհի ֆինանսական խոշոր կենտրոններից են:

Գերմանիայի քաղաքներն իրենց թանգարաններով, պատմաճարտարապետական և մշակութային բազմաթիվ հուշարձաններով, հարավի լեռնային շրջանների գեղատեսիլ վայրերը և ծառայությունների բարձր որակն ու զարգացման մակարդակը այն գործոններն են, որոնք նպաստում են **զբոսաշրջության** և **հանգստի** զարգացմանը:

Արտաքին տնտեսական կապերը երկրի տնտեսական զարգացման կարևորագույն նախադրյալներն են: Արտաքին առևտրի շրջանառության ծավալով առաջատարներից մեկն է աշխարհում: Արտաքին առևտրի մոտ կեսը բաժին է ընկնում Եվրամիության երկրներին, այնուհետև՝ ԱՄՆ-ին և Ճապոնիային: Գերմանիայի արտահանության գրեթե 9/10-ը լայն սպառման արդյունաբերական ապրանքներ են, մեքենաներ և սարքավորումներ, քիմիական ապրանքներ:

Ներմուծում է գլխավորապես հումք, վառելիք և պարենամթերքի որոշ տեսակներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞վ բացատրել Գերմանիայի ավերված տնտեսության արագ վերականգնումն ու զարգացումը հետպատերազմյան տարիներին:
2. Գնահատե՛ք Գերմանիայի տեղը և դերը համաշխարհային տնտեսության մեջ:
3. Նշե՛ք Գերմանիայի արդյունաբերության առաջատար ճյուղերը, նրանցում գերիշխող վերազգային ընկերությունները:
4. Ինչպիսի՞ տեղաբաշխում ունեն Գերմանիայի նորագույն և ավանդական ճյուղերը: Նշե՛ք հիմնական կենտրոնները:
5. Որո՞նք են գյուղատնտեսության զարգացման նախադրյալները: Նշե՛ք առաջատար ճյուղերը:
6. Ինչպիսի՞ն են Գերմանիայի արտաքին տնտեսական կապերի կառուցվածքը և հիմնական ուղղությունները:

ԴԱՍ 18. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՖՐԱՆՍԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքը՝ 552 հազ. կմ^2
Բնակչությունը՝ 63,6 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Փարիզ
Պետական կարգը՝ նախագահական հանրապետություն

Ֆրանսիան Եվրոպայի և աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում մեծ դերակատարում ունեցող երկրներից է: Զբաղեցրած տարածքով (Ուկրաինայից հետո) և բնակչության թվով (Գերմանիայից հետո) Եվրոպայի երկրորդ երկիրն է (չհաշված Ռուսաստանը):

Ֆրանսիան Եվրոպայի միասնացման (ինտեգրման) հիմնադիրն ու ջատագովն է: Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում են գտնվում Եվրամիության ղեկավար մարմիններից երկուսը՝ Եվրախորհրդարանը և Եվրախորհուրդը:

Ֆրանսիան նախագահական հանրապետություն է: Ֆրանսիան ունիտար պետություն է, որը վարչական տեսակետից բաժանված է 96 դեպարտամենտների: Դրանք մեծ մասամբ կրում են իրենց տարածքում գտնվող գետերի և լեռների անունները:

Ֆրանսիան ներկա տարածքով ձևավորվել է XV դարում, բազմաթիվ ավատատիրական տիրապետությունների միավորման շնորհիվ: Բացի մայրցամաքային հատվածից՝ Ֆրանսիային են պատկանում հարևան Կորսիկա կղզին և աշխարհի տարբեր մասերում գտնվող տարածքներ՝ այսպես կոչված անդրծովյան դեպարտամենտները՝ Գվիանան, Գվադելուպան, Մարտինիկան, Ռեյունիոնը, և անդրծովյան տարածքներ՝ Խաղաղ օվկիանոսում գտնվող Նոր Կալեդոնիան, Ֆրանսիական Պոլինեզիան և այլ կղզիներ:

Աշխարհագրական դիրքը: Ֆրանսիան գտնվում է Եվրոպայի արևմուտքում և ունի շատ հարմար տնտեսաաշխարհագրական դիրք: ՏԱԴ-ի բնորոշ գծերն են. ա) հարմար **հարևանային դիրքը**: Նրա գրեթե բոլոր հարևանները Եվրամիության անդամ

զարգացած երկրներ են: բ) Երկու անգամ ավելի երկար են **ծովային**, քան ցամաքային սահմանները: Ատլանտյան օվկիանոսի և նրա մասը կազմող Միջերկրական ծովի հետ սահմանակցումը հնարավորություն է տալիս ակտիվ մասնակցություն ունենալու համաշխարհային ծովային առևտրին: գ) **Տարանցիկ** դիրքը, քանի որ այստեղով են անցնում Միջերկրական ծովից դեպի Հյուսիսային ծով և Իսպանիայից դեպի Իտալիա ու Եվրոպայի այլ երկրներ անցնող կարևոր ճանապարհները:

Բնական պայմանները և ռեսուրսները: Հարմար ՏԱԻ-ը, մակերևույթի համեմատաբար հարթ բնույթը, բարենպաստ կլիմայական պայմանները և տարբեր բնական ռեսուրսների (հողային, ջրային, մետաղային) առկայությունը լավ նախադրյալներ են տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար:

Ֆրանսիայի գերակշռող հարթ և բլրավետ մակերևույթը բարենպաստ է բուսաբուծության, իսկ հարավի սահմանամերձ գոտիներով անցնող Ալպյան և Պիրենեյան լեռները՝ անասնապահության և զբոսաշրջության զարգացման համար:

Ֆրանսիայի վառելիքային ռեսուրսները աննշան են, սակայն հայտնի են Էլզասի կալիումական աղերի, Ռոն գետի ստորին ավազանի բոքսիտների հանքավայրերը, Կենտրոնական զանգվածի ուրանի պաշարները: Լոթարինգիայի երկաթաքարի պաշարները օգտագործման հետևանքով գրեթե սպառվել են: Կան հանքային աղբյուրներ Օվերնի շրջանում, որտեղ ստեղծված են հանգստյան տներ ու առողջարաններ:

Աշխարհի ամենահարուստ մարդկանց հանգստավայր Նիցցան

Ֆրանսիայի համեմատաբար խոնավ և մեղմ կլիման բարենպաստ նախադրյալներ է ստեղծում բարեխառն գոտու բոլոր մշակաբույսերի, իսկ հարավային մասում՝ նաև մերձարևադարձային գոտու մշակաբույսերի (ձիթապտուղ, ցիտրուսներ և այլն) աճեցման համար:

Ֆրանսիայի ջրագրական ցանցը խիտ է: Տրանսպորտային նշանակություն ունեն համեմատաբար մեծ գետերը՝ Սենը, Ռոնը, Լուարը, Գարոնը: Հարավ-արևելքի լեռնային գետերի վրա կառուցված են մեծ թվով ջրէկներ: Անցյալում երկրի տարածքը ծածկված էր լայնատերև անտառներով: Մարդու երկարատև գործունեության հետևանքով դրանց մեծ մասը հատվել է՝ վերածվելով վարելահողերի, մարգագետինների, այգիների, բնակավայրերի: Անտառը պահպանվել է միայն ոչ մեծ պուրակների տեսքով:

Ֆրանսիայում մեծ աշխատանքներ են տարվում բնության պահպանության և վերականգնման ուղղությամբ: Երկրի արևմուտքի ավազոտ հողերում և Փարիզի մերձակայքում ստեղծվում են սոճուտներ: Ընդարձակվում է անտառածածկ մակերեսը, որն այսօր կազմում է երկրի ընդհանուր տարածքի մոտ 25%-ը:

Միջերկրականի ափերի (Ֆրանսիական Ռիվիերայի) և ձյունառատ Ալպերի մաքուր օդն ու լեռնային գեղատեսիլ բնությունը, հարյուրավոր կիլոմետրերով ձգվող ավազային լողափերը և այլ տեսարժան վայրեր Ֆրանսիան դարձրել են միջազգային

զբոսաշրջության խոշորագույն երկիրն աշխարհում: Ֆրանսիա է այցելում տարեկան 70-75 մլն զբոսաշրջիկ՝ շատ ավելի, քան նրա բնակչության թիվն է: Տնտեսության այս ճյուղի տարեկան եկամուտը կազմում է ավելի քան 30 մլրդ եվրո:

Երկրի հարավային ափը՝ Երկնագույն ափ կոչվող գեղատեսիլ լողափով, տաք ու չոր ամառներով, դարձել է զբոսաշրջության և հանգստի համաշխարհային կենտրոններից մեկը: Հարավային ափի քաղաքներից Կաննում ամեն տարի անցկացվում են միջազգային կինոփառատոներ, իսկ Նիցցան աշխարհի մեծահարուստ մարդկանց հանգստավայրն է:

Բնակչությունը: Ֆրանսիական ազգը ձևավորվել է տեղաբնիկների՝ գալլերի հետ ֆրանկ[1] կոչվող եկվոր գերմանական ցեղերի երկարատև շփման և ձուլման արդյունքում: Ֆրանսիացիների ազգային համախմբման գործընթացում ավելի ակտիվ դեր են կատարել ֆրանկները, ինչի համար էլ նրանց անունը տարածվել է Ֆրանսիայի ողջ բնակչության վրա:

Ներկայումս երկրի բնակչության ավելի քան 90%-ը ֆրանսիացիներ են, ապրում են նաև կորսիկացիներ, էլզասցիներ, բրետոնացիներ, ֆլամանդացիներ, կատալոնացիներ, բասկեր, որոնք **բոլորն էլ տեղաբնիկներ են**: Ֆրանսերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի ռոմանական լեզվախմբին: Հավատացյալների մեջ գերակշռում են կաթոլիկները:

XX դարի 20–30-ական թթ. Ֆրանսիան դարձավ **զանգվածային ներգաղթի** երկիր: Ներգաղթողները հիմնականում իտալացիներ, լեհեր, իսպանացիներ ու հայեր էին: Վերջին տասնամյակներին օտարերկրյա ներգաղթյալների մեջ գերակշռում են Հյուսիսային Աֆրիկայից եկող արաբները:

Ֆրանսիայի բնակչությունը վերջին տասնամյակներին շատ **դանդաղ է աճում**: Պատճառը բնակչության ցածր ծնելիությունն ու ցածր բնական աճն են: Այդ բացասական երևույթի կանխման և բնակչության ծննդի ավելացման նպատակով Ֆրանսիան առաջիններից մեկն աշխարհում սկսեց վարել ծնելիության բարձրացմանը նպատակաուղղված պետական ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն: Այն իրականացվում է տարբեր միջոցներով. տրվում են նպաստներ և այլ արտոնություններ: Տևական ցածր բնական աճի պայմաններում մեծացել է տարեց բնակչության բաժինը, այսինքն՝ ինչպես և Արևմտյան Եվրոպայի այլ երկրներում, այստեղ ևս նկատվում է բնակչության ծերացում:

Բարձր են բնակչության կրթական մակարդակը, աշխատանքային ռեսուրսների որակը, բնակչության զբաղվածության աստիճանը: Բնակչության բարձր կենսամակարդակի շնորհիվ ֆրանսիացիների կյանքի սպասվող միջին տևողությունը աշխարհում ամենաբարձրերից մեկն է (81 տարի):

Ֆրանսիան, Արևմտյան Եվրոպայի մյուս երկրների համեմատությամբ, նոսր և անհամաչափ է բնակեցված: Միջին խտությունը 110 մարդ/կմ^2 է: Սակայն դա իրական պատկերը չէ: Արդյունաբերական շրջաններում այն շուրջ երեք անգամ բարձր է միջինից, իսկ լեռնային, նախալեռնային շրջաններում՝ ընդհակառակը, մոտ հինգ անգամ ցածր է:

Ուրբանիզացման մակարդակը (78%) բարձր է: Գերակշռում են միջին և փոքր մեծության քաղաքները:

Առանձնահատուկ է **Փարիզի** քաղաքական, տնտեսական և մշակութային դերը Ֆրանսիայում և ընդհանրապես ողջ աշխարհում: Փարիզը Ֆրանսիայի արդյունաբե-

1. Ֆրանկ – իտալերեն franco՝ ազատ բառից:

բական, ֆինանսական, գիտակրթական, մշակութային խոշորագույն կենտրոնն է: Այն աշխարհի գեղեցիկ, պատմաճարտարապետական հուշարձաններով հարուստ քաղաքներից է: Հռչակված են, օրինակ, Էյֆելյան աշտարակը, Աստվածամոր տաճարը, Լուվրի թանգարանը, Սորբոնի համալսարանը, Փարիզի արվարձանում գտնվող Վերսալն իր արքայական պալատով, որն այսօր թանգարանի է վերածվել: Փարիզը ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ ՄԱԿ-ի գիտության, կրթության ու մշակույթի կազմակերպության նստավայրն է:

Փարիզը ճառագայթաձև ձգվող ճանապարհներով կապված է Ֆրանսիայի բոլոր մարզերին: Այն իր շուրջը ստեղծել է Եվրոպայի խոշորագույն ագլոմերացիաներից մեկը՝ 10 մլն բնակչությամբ: Երկրի մյուս խոշոր քաղաքներն են Մարսելը, Լիոնը, Թուլուզը, Բորդոն,Նանտը, Նիցցան:

Մեծ է ֆրանսիական ժողովրդի ներդրումը համամարդկային արժեքների ստեղծման, համաշխարհային գիտության ու մշակույթի զարգացման գործում:

Նիցցայի Սբ Աստվածածին հայկական եկեղեցին

Հայերը Ֆրանսիայում: Ֆրանսիան և Հայաստանը բարեկամ երկրներ են: Դրա վառ ապացույցն է Օսմանյան Թուրքիայում կատարված հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչումը Ֆրանսիայի կողմից: Անմոռանալի է ֆրանսահայության և ողջ ֆրանսիական ժողովրդի մարդասիրական օգնությունը Սպիտակի երկրաշարժից աղետված Հայաստանին:

Հայ-ֆրանսիական սերտ կապերն սկսել են զարգանալ Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակաշրջանից: XV–XVI դարերում հայկական փոքրիկ գաղութներ են հիմնվել Մարսելում, Փարիզում, Բուրժեում: Հայերի հոսքը դեպի Ֆրանսիա մեծացել է XIX դարի վերջին և XX դարի սկզբին:

Ֆրանսիայի հայկական համայնքը մեծությամբ (մոտ 500 հազ. մարդ) առաջինն է Եվրոպայում, երրորդը՝ աշխարհում (Ռուսաստանից և ԱՄՆ-ից հետո): Հայաբնակ խոշոր քաղաքներն են Մարսելը, Փարիզը, Լիոնը, Վալանսը: Ֆրանսահայերը գործուն մասնակցություն են ցուցաբերում երկրի տնտեսական ու մշակութային կյանքին: Նրանց շարքերում կան և՛ Ֆրանսիայի Ազգային հերոս (Միսաք Մանուշյան), և՛ աշխարհահռչակ երգիչ (Շառլ Ազնավուր), և՛ ռեժիսոր (Անրի Վերնոյ), և՛ գեղանկարիչ (Գառզու):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերլուծե՛ք և գնահատե՛ք Ֆրանսիայի ՏԱԴ-ի բնորոշ գծերը:
2. Գնահատե՛ք Ֆրանսիայի բնական պայմաններն ու ռեսուրսները: Տնտեսության ո՞ր ճյուղերի զարգացմանն են դրանք նպաստում:
3. Որո՞նք են Ֆրանսիայում զբոսաշրջության և հանգստի կազմակերպմանը նպաստող գործոններն ու պայմանները:
4. Ինչպե՞ս է ձևավորվել ֆրանսիական ազգը: Ինչպիսի՞ն է բնակչության ազգային կազմը:
5. Ինչպիսի՞ն է բնակչության ժողովրդագրական իրավիճակը: Բնակչության բնական աճը կարգավորելու նպատակով ինչպիսի՞ ժողովրդագրական քաղաքականություն է վարում Ֆրանսիան:
6. Նշե՛ք Ֆրանսիայի ուրբանիզացման գործընթացի բնորոշ գծերը:

7. Համաշխարհային քաղաքակրթության մեջ ինչպիսի՞ ներդրում ունեն ֆրանսիացիները և ֆրանսահայերը:

ԴԱՍ 19. ՖՐԱՆՍԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիան բարձր զարգացած և տնտեսական մեծ ներուժ ունեցող երկիր է: Համախառն ներքին արդյունքի ծավալով Ֆրանսիան Եվրոպայում զիջում է միայն Գերմանիային:

Ֆրանսիայի տնտեսության մեջ գլխավոր դերը պատկանում է պետությանը և վերազգային խոշոր ընկերություններին: Ի տարբերություն Արևմուտքի շատ երկրների՝ Ֆրանսիայում պետությունը նույնպես խոշորագույն սեփականատեր է: Պետական ձեռնարկությունները թողարկում են երկրի արդյունաբերական արտադրանքի 1/4-ը: Պետությանն են պատկանում կարևոր ածխահորերը, էլեկտրակայանները, երկաթուղիները, ռազմավարական նշանակության բոլոր օբյեկտները, «Ռենոյի» ավտոգործարանները: Աշխարհում հայտնի են «Ռենո» և «Պեժո-Սիտրոեն» (ավտոմոբիլաշինություն), «Փեշինե» (ալյումինի), «Թոմսոն» (էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային) ֆրանսիական ընկերությունները:

Ֆրանսիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Ֆրանսիան առաջիններից մեկն է թևակոխել տնտեսության զարգացման հետինդուստրիալ փուլ (տե՛ս գծանկարը):

Ֆրանսիայի **արդյունաբերության առաջատար ճյուղերն են** էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը: Երկրի տնտեսության մեջ մեծ է նաև թեթև ու սննդի արդյունաբերության դերը:

Էներգետիկան հենվում է ներկրվող նավթի և բնական գազի, սեփական ուրանի և լեռնային գետերի ջրաէներգետիկ պաշարների օգտագործման վրա: Ֆրանսիայի էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 3/4-ը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայանների ընդհանուր հզորությամբ Ֆրանսիան զիջում է միայն ԱՄՆ-ին: Երկրում գործում է աշխարհի առաջին մակընթացային էլեկտրակայաններից մեկը (Բրետան թերակղզու հյուսիսում՝ Սեն Մալո ծոցում):

Սև մետաղաձուլությունը զարգացել է հիմնականում երկրի հյուսիս-արևելքում, նախ՝ սեփական հումքի (Լոթարինգիայի երկաթի հանքաքար), իսկ ավելի ուշ՝ ներկրվող երկաթի խտանյութի և երկրում առաջացող մետաղի ջարդոնի բազայի վրա: Սակայն Ֆրանսիայի զարգացած մեքենաշինությունն օգտագործում է նաև այլ երկրներից ներկրած պողպատն ու գլանվածքը:

Գունավոր մետաղաձուլության մեջ արտադրանքի ծավալով առաջինը ալյումինի արտադրությունն է: Որպես էներգատար արտադրություն՝ այն կենտրոնացած է էժան ջրաէներգիայի աղբյուրների մոտ՝ Ալպերում և Պիրենեյներում:

Ալյումինը և մյուս մետաղները լայնորեն օգտագործվում են Ֆրանսիայի արդյունաբերության առաջատար ճյուղի՝ **մեքենաշինության** մեջ: Համաշխարհային ճանաչում ունեն տրանսպորտային մեքենաշինությունը, որը թողարկում է ավտոմեքենա-

ներ, ինքնաթիռներ, արագընթաց երկաթուղային շարժակազմ, ծովային նավեր, էլեկտրատեխնիկական ու էլեկտրոնային մեքենաշինությունը: Մարդատար ավտոմեքենաների արտադրությամբ Ֆրանսիան աշխարհում հինգերորդն է՝ Չինաստանից, Ճապոնիայից, ԱՄՆ-ից և Գերմանիայից հետո: Խոշորագույն կենտրոնը Փարիզն է:

Ինքնաթիռաշինության համաշխարհային նշանակության խոշոր կենտրոնը Թուլուզ քաղաքն է, որտեղ տարբեր երկրներից բերված հանգույցներից հավաքվում են «Էյրբաս» խոշոր և ժամանակակից ինքնաթիռները: Համաշխարհային մակարդակի է հասել աերոտիեզերական տեխնիկայի արտադրությունը: Ֆրանսիան երկրի արհեստական արբանյակների արձակմամբ երրորդ տեղում է աշխարհում: Բազմաճյուղ մեքենաշինության գլխավոր կենտրոնը Փարիզն է: Մեքենաշինական արտադրության կարևոր կենտրոններ են նաև Լիոնը, Մարսելը, Թուլուզը և այլ խոշոր քաղաքներ:

Ֆրանսիական օծանելիքի ձեռնարկության արտադրամաս

Քիմիական արդյունաբերության խոշոր ձեռնարկություններ են կառուցված հումքի աղբյուրների մոտ (օրինակ՝ կալիումական աղերի) և նավթ ներկրող նավահանգիստներում (նավթամշակման ու նավթաքիմիայի): Արագ է զարգանում պլաստմասսաների, սինթետիկ մանրաթելերի և սինթետիկ կաուչուկի արտադրությունը: Համաշխարհային ճանաչում ունեն դեղագործությունը և օծանելիքի արտադրությունը: Խոշոր կենտրոններն են Փարիզը, Հավրը, Ռուանը, Մարսելը:

Ֆրանսիայի **թեթև արդյունաբերությունը** նույնպես համաշխարհային ճանաչում ունի: Ամբողջ աշխարհում մեծ պահանջարկ են վայելում ֆրանսիական որակյալ գործվածքեղենը, նորաձև հագուստը և կոշկեղենը: Ֆրանսիան համարվում է աշխարհի նորաձևության օրենսդիրը:

Թեթև արդյունաբերությունը երկրի տարածքում տեղաբաշխված է գրեթե ամենուրեք, սակայն առանձնանում են Փարիզը, Լիոնը և Լիլը: Երկրի հյուսիսային շրջանում է արտադրվում բրդյա, բամբակյա և վուշյա գործվածքների մեծ մասը: Մետաքսյա գործվածքեղենի արտադրությունը կենտրոնացված է գլխավորապես Լիոնում: Կարի արտադրության խոշորագույն կենտրոնը Փարիզն է:

Բազմատեսակ և մեծածավալ արտադրանքով աչքի է ընկնում **սննդի արդյունաբերությունը**: Այն հիմնականում հենվում է տեղական գյուղատնտեսական հումքի վրա: Ֆրանսիան աշխարհում առաջին տեղում է շամպայն գինիների, կոնյակի, պանրի արտադրությամբ: Աշխարհում տարածված և բարձր որակով հայտնի ալկոհոլային խմիչքների որոշ տեսակներ ունեն ֆրանսիական ծագում: Դրանք անվանվել են իրենց արտադրության շրջանի կամ քաղաքի պատվին (օրինակ՝ բուրգունդական, բորդո, շամպայն գինիներ, կոնյակ և այլն): Ֆրանսիան առաջատար երկրներից է նաև մսեղենի, պահածոների և շաքարի արտադրությամբ:

Գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսությունը Ֆրանսիայի տնտեսության համար ունի ավելի մեծ նշանակություն, քան Արևմտյան Եվրոպայի այլ երկրների համար: Ֆրանսիան ոչ միայն լիովին բավարարում է բնակչության պահանջարկը հիմ-

նական գյուղատնտեսական մթերքներով, այլև դրանց մի մասն արտահանում է այլ երկրներ: Եվրոպայում առաջինն է կարևորագույն գյուղատնտեսական մթերքների՝ մսի, կաթի, ցորենի, եգիպտացորենի և շաքարի ճակնդեղի արտադրության ծավալով:

Գյուղատնտեսության ընդհանուր կառուցվածքում գերակշռում է **անասնապահությունը**: Այն տալիս է գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի 2/3-ից ավելին: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով Ֆրանսիան Եվրոպայում առաջինն է, խոզերի գլխաքանակով՝ երկրորդը (Գերմանիայից հետո): Խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը հիմնականում տեղաբաշխված են բնակչության խոշոր կուտակումների շրջանում: Ոչխարաբուծությունը զարգացած է Կենտրոնական զանգվածում, իսկ ձկնաբուծությունը՝ ափամերձ ծովերում:

Բուսաբուծությունը բազմաճյուղ է, բայց գլխավոր տեղը պատկանում է հացահատիկային մշակաբույսերին (ցորեն, գարի, եգիպտացորեն, բրինձ): Դրանք թեև տարածված են ամենուրեք, սակայն ձևավորվել են ցորենի մասնագիտացված գոտի երկրի հյուսիսում, եգիպտացորենի գոտի՝ հարավ-արևմուտքում, բրնձի գոտի՝ Ռոն գետի ստորին հոսանքի շրջանում:

Համաշխարհային նշանակություն ունի խաղողագործությունը: Այն տարածված է ամենուրեք, բացառությամբ հյուսիսի և հյուսիս-արևմուտքի: Միջերկրածովյան ափը հայտնի է ցիտրուսների, ձիթապտղի մշակությամբ: Հարավում զարգացած է եթերայուղատու բույսերի մշակությունը, որը հումք է մատակարարում օծանելիքի արտադրությանը:

Տրանսպորտը: Ֆրանսիայի տրանսպորտային ցանցի առանձնահատկությունն այն է, որ ցամաքային տրանսպորտի հիմնական ուղիները՝ ավտոճանապարհներն ու երկաթուղիները, երկրի ծայրամասերը ճառագայթաձև մայրուղիներով կապում են մայրաքաղաքին՝ երկրի տրանսպորտային խոշորագույն հանգույցին:

Տրանսպորտի գերակշռող տեսակը ավտոմոբիլայինն է: Ֆրանսիան Եվրոպայում առաջինն է ավտոճանապարհների երկարությամբ (մոտ 900 հազ. կմ):

Եվրաթունելի ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության հատվածը

Ֆրանսիայի տրանսպորտի ընդհանուր կառուցվածքում թեև նվազել է երկաթուղային տրանսպորտի բաժինը, սակայն, Արևմտյան Եվրոպայի այլ երկրների համեմատությամբ, փոխադրումների մեծ հեռավորությունների պատճառով, այն շարունակում է մնալ բավականին բարձր և իր արագությամբ հավասարը չունի Եվրոպայում: Պա դը Կալե նեղուցի տակով կառուցված է ավելի քան 30 կմ երկարությամբ ստորջրյա երկաթուղային թունել (Եվրաթունել), որով Ֆրանսիան կապված է կղզային Մեծ Բրիտանիայի հետ:

Ներքին ջրային ուղիների (9000 կմ ընդհանուր երկարությամբ) կարևոր զարկերակը Սեն գետն է: Արտաքին փոխադրումներում խիստ կարևոր է ծովային տրանսպորտը: Բեռնաշրջանառությամբ խոշորագույն նավահանգիստն է Մարսելը (Եվրոպայում երրորդը), որին հաջորդում են Հավրը, Դյունկերկը և Նանտը: Միջազգային նշանակության խոշորագույն օդային հանգույցը Փարիզն է:

Հետինդուստրիալ փուլում գտնվող Ֆրանսիայի տնտեսության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում **սպասարկման ոլորտը**: Այստեղ ստեղծվել են բարձրորակ մշակութային, կրթական և առողջապահական համակարգեր: Զարգացած են բարձրորակ զբոսաշրջային ծառայությունները (հյուրանոցներ, ռեստորաններ և այլն):

Արտաքին տնտեսական կապերի մասշտաբով Ֆրանսիան Եվրոպայում զիջում է միայն Գերմանիային: Տնտեսական ակտիվ կապեր է հաստատել աշխարհի շատ տարածաշրջանների և երկրների հետ: Երկրի առևտրական գլխավոր գործընկերներն են Եվրամիության անդամ խոշոր երկրները, ԱՄՆ-ը, Ճապոնիան:

Ֆրանսիան արտահանում է մեծ մասամբ պատրաստի արտադրանք՝ ավտոմեքենաներ, ինքնաթիռներ, զենք, էլեկտրատեխնիկական մեքենաներ, քիմիական ապրանքներ, հագուստ, օծանելիք, դեղորայք, գինի, կոնյակ, հացահատիկ և այլն: Հիմնականում ներկրում է նավթ, նավթամթերք, բնական գազ, մետաղներ, սննդամթերք, մեքենաների և սարքավորումների առանձին տեսակներ:

Ֆրանսիան ֆինանսական ներդրումներ է կատարում բազմաթիվ երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում: Ակտիվորեն զարգանում են հայ-ֆրանսիական տնտեսական կապերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տնտեսական զարգացման ո՞ր փուլում է Ֆրանսիան: Գնահատե՛ք նրա տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ:
2. Գնահատե՛ք պետության և վերազգային ընկերությունների դերը Ֆրանսիայի տնտեսության տարբեր ճյուղերի մեջ:
3. Որո՞նք են Ֆրանսիայի արդյունաբերության գլխավոր ճյուղերը և դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները:
4. Որո՞նք են գյուղատնտեսության առաջատար ճյուղերը և դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները:
5. Գնահատե՛ք տրանսպորտի և արտաքին տնտեսական կապերի դերը երկրի տնտեսության մեջ:

ԴԱՍ 20. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանը զբաղեցնում է 1,75 մլն կմ² տարածք, որտեղ ապրում է մոտ 100 մլն մարդ: Տարածաշրջանի մեջ մտնում են հիմնականում Բրիտանական կղզիների, սկանդինավյան և բալթյան երկրները (թվով 10), որոնք ունեն տարբեր մեծություն և տնտեսական հզորություն:

Տնտեսաաշխարհագրական դիրքը բարենպաստ ազդեցություն է թողել տարածաշրջանի զարգացման վրա: Այն առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ այս տարածաշրջանը գտնվում է Եվրոպայի այլ տարածաշրջանների և Հյուսիսային Ամերիկայի միջև եղած ծովային ու օդային ամենակարճ ուղիների վրա: Բոլոր երկրներն էլ ելք ունեն համաշխարհային օվկիանոս:

Հյուսիսային Եվրոպայի **պետությունների ձևավորումն ու պատմական զարգացումը** հարթ չեն ընթացել: Հարևան ժողովուրդները հաճախակի պատերազմել են միմյանց դեմ: Նախկինում առավել հզոր պետություններ են եղել Անգլիան, Շվեդիան և

Դանիան: Հյուսիսային Եվրոպայի մաս կազմող նախկին խորհրդային բալթյան հանրապետությունները (Լիտվա, Լատվիա, Էստոնիա) անդամագրվել են Եվրամիությանը և հաղթահարել են անցումային տնտեսության դժվարությունները:

Հյուսիսային Եվրոպայի երկրներից **Մեծ Բրիտանիան, Շվեդիան, Նորվեգիան** և **Դանիան** սահմանադրական միապետություններ (թագավորություններ) են, իսկ **Ֆինլանդիան, Իռլանդիան, Իսլանդիան, Էստոնիան, Լատվիան** և **Լիտվան**՝ նախագահական հանրապետություններ: Դանիային են պատկանում Գրենլանդիան և Ֆարերյան կղզիները, իսկ Նորվեգիային՝ Շպիցբերգեն կղզեխումբը:

Հյուսիսային Եվրոպայի երկրները Եվրոպայի համեմատաբար նոսր բնակեցված, սակայն, տնտեսական տեսանկյունից, առավել բարձր զարգացած երկրներն են: Բալթյան երկրներից բացի՝ մեկ բնակչին ընկնող ՀՆԱ ցուցանիշով տարածաշրջանի երկրները աշխարհի ամենազարգացած երկրների թվին են պատկանում:

Տնտեսության զարգացման համար Հյուսիսային Եվրոպայի **բնական պայմանները** պակաս նպաստավոր են, քան Եվրոպայի այլ տարածաշրջաններինը: Սկանդինավյան թերակղզու հյուսիսային մասը՝ Լապլանդիան[1], Շպիցբերգեն, Ֆարերյան և մի շարք այլ կղզիներ ունեն նույնիսկ ծայրահեղ անբարենպաստ բնակլիմայական պայմաններ: Լեռնային ռելիեֆը, ցուրտ կլիման, սառցադաշտերը, բազմամյա սառածությունը, ճահիճները դժվարացնում կամ անհնարին են դարձնում բնակչության տնտեսական գործունեությունը: Բնակլիմայական պայմանները համեմատաբար բարենպաստ են տարածաշրջանի արևմտյան և հարավային հարթավայրային մասերում, որտեղ նկատելի է ծովի, Հյուսիսատլանտյան տաք հոսանքի և արևմտյան քամիների ազդեցությունը:

Հյուսիսային ծովի հատակից նավթի արդյունահանման հարթակ

Հյուսիսային Եվրոպայի ամենածայրամասային պետությունը Իսլանդիան է, որը թարգմանաբար նշանակում է սառցե երկիր: Բայց իրականում այն ոչ միայն սառցի, այլև հրաբուխների, տաք աղբյուրների ու գեյզերների երկիր է, վիթխարի հրաբխային սարահարթ: Իսլանդիայի երկրաջերմային էներգիայի հսկայական պաշարները լայնորեն օգտագործվում են էլեկտրաէներգիայի արտադրության, ջեռուցման և այլ նպատակներով: Իսլանդիայի բնակչության մոտ 1/4-ը բնակվում է գեյզերների և տաք աղբյուրների ջրերով ջեռուցվող բնակարաններում: Այդ ջրերն օգտագործվում են նաև ջերմատներում, որտեղ մարդիկ աճեցնում են ծաղիկներ, բանջարեղեն, մրգեր:

Հյուսիսային Եվրոպայի **հիմնական հանքային հարստությունը** Հյուսիսային ծովի հատակի նավթի և բնական գազի պաշարներն են (Մեծ Բրիտանիա, Նորվեգիա): Հյուսիսային Եվրոպայում կան ածխի (Մեծ Բրիտանիա), երկաթի (Շվեդիա), գունավոր մետաղների (Շվեդիա, Ֆինլանդիա, Նորվեգիա), տորֆի (Շվեդիա, Ֆինլանդիա, բալթյան երկրներ) պաշարներ:

1. Ներառում է Նորվեգիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի տունդրայի զոնաները:

Թեև տարածաշրջանը գտնվում է աշխարհագրական բարձր լայնություններում, սակայն, շնորհիվ Հյուսիսատլանտյան տաք հոսանքի ազդեցության, դրա մեծ մասում կլիմայական պայմանները մեղմ են և բարենպաստ բուսաբուծության զարգացման համար: Կլիմայական պայմանները միայն Նորվեգիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի հյուսիսային շրջաններում և Իսլանդիայում են անբարենպաստ բուսաբուծության համար:

Մեծ են սկանդինավյան երկրների (Նորվեգիա, Շվեդիա) ջրաէներգետիկ պաշարները: Տարածաշրջանում շատ են լճերը (միայն Ֆինլանդիայում կա 60 հազ. լիճ), որոնց մեծ մասն ունի սառցադաշտային ծագում: Համեմատաբար մեծ լճերն ունեն տրանսպորտային, իսկ գեղատեսիլները՝ նաև ռեկրեացիոն նշանակություն: Հյուսիսային Եվրոպայի երկրներն ունեն քաղցրահամ ջրի զգալի պաշարներ:

Հյուսիսային Եվրոպա

Հյուսիսային Եվրոպայի երկրների մեծ մասը հարուստ է անտառային ռեսուրսներով, որոնք հիմնականում ներկայացված են փշատերև ծառատեսակներով: Առավել անտառաշատ երկրներում, օրինակ՝ Շվեդիայում և Նորվեգիայում, անտառները զբաղեցնում են ամբողջ տարածքի 50%-ը, իսկ Ֆինլանդիայում՝ նույնիսկ 72%-ը: Այս երկրներում փշատերև անտառները համարվում են ազգային հարստություն: Այդ պատճառով էլ անտառներն այստեղ պահպանվում են մեծ հոգատարությամբ, անտառահատումները կատարվում են գիտականորեն մշակված չափերով (նորմաներով), իսկ անտառահատված տեղամասերում տնկվում են նոր ծառեր:

Հողային ռեսուրսներով համեմատաբար լավ են ապահովված Դանիան և Բալթյան երկրները, որտեղ հողերի կեսից ավելին օգտագործվում է գյուղատնտեսական նպատակների համար: Բալթյան երկրներում, Շվեդիայում և Ֆինլանդիայում մեծ աշխատանքներ են տարվում ճահիճների չորացման ուղղությամբ:

Հյուսիսային Եվրոպայի երկրներում միաժամանակ մեծ ուշադրություն են դարձնում բնության պահպանությանը և զբոսաշրջության զարգացմանը: Ստեղծվել են ընդարձակ արգելոցներ, ազգային պարկեր, հանգստի և զբոսաշրջության գոտիներ:

Բնակչությունը: Հյուսիսային Եվրոպայում բնակվում են տարբեր լեզվախմբերի պատկանող բազմաթիվ ազգերի ներկայացուցիչներ: Իսլանդիան, Նորվեգիան և Դանիան ունեն միատարր ազգային կազմ: Մեծ Բրիտանիայում ազգային փոքրամասնություններից գերակշռող են շոտլանդացիները և իռլանդացիները, Շվեդիայում՝ ֆիններ, իսկ Ֆինլանդիայում՝ շվեդները, Լատվիայում և Էստոնիայում՝ ռուսները:

Տարածաշրջանի ժողովուրդների լեզուների մեծ մասը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի գերմանական լեզվախմբին (անգլերեն, դանիերեն, շվեդերեն, նորվեգերեն, իսլանդերեն): Շվեդները, նորվեգացիները և դանիացիները վիկինգների սերունդներն են: Հնդեվրոպական լեզվաընտանիքի կելտական լեզվախմբին են պատկանում իռլանդերենը և շոտլանդերենը, բալթյան լեզվախմբին՝ լատիշերենը և լիտվերենը: Ֆիններենը և էստոներենը պատկանում են ուրալյան լեզվաընտանիքի ուգրո-ֆիննական լեզվախմբին:

Հյուսիսային Եվրոպայի հավատացյալ բնակչության մեծ մասը դավանում է բողոքականություն: Առանձին երկրներում (Իռլանդիա, Լիտվա) հավատացյալների մեծ մասը կաթոլիկ է:

Հյուսիսային Եվրոպայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հյուսիսային Եվրոպայի երկրների բնակչության բնական աճը խիստ նվազել է և այժմ ցածր է աշխարհի միջին ցուցանիշից (տե՛ս գծանկարը): Ներկայումս տարածաշրջանի բնակչության բնական աճի միջին ցուցանիշը ընդամենը 0,2% է, իսկ Էստոնիայում, Լատվիայում, Լիտվայում նույնիսկ բացասական է: Տարածաշրջանի բնակչության բարձր կենսամակարդակի շնորհիվ մարդկանց **կյանքի միջին տևողության ցուցանիշն** աշխարհում ամենաբարձրերից է (79 տարի): Այդ ցուցանիշը հատկապես բարձր է Իսլանդիայում, Շվեդիայում և Նորվեգիայում (80-82 տարի): Բոլոր երկրներում նկատելի է բնակչության ծերացում:

Հյուսիսային Եվրոպայի՝ բնակչության թվով միակ խոշոր երկրում՝ Մեծ Բրիտանիայում ապրում է տարածաշրջանի բնակչության շուրջ 62%-ը: Մնացած երկրներից համեմատաբար շատ բնակչություն ունեն Շվեդիան (9,4 մլն), Դանիան (5,6 մլն) և Ֆինլանդիան (5,4 մլն): Բնակչության թվով ամենափոքրը Իսլանդիան է՝ ընդամենը 300 հազ. բնակիչ: Հյուսիսային Եվրոպայի մի շարք երկրների բնակչության թիվն աճում է ոչ միայն բնական աճի, այլև օտարերկրյա ներգաղթյալների հաշվին:

Հյուսիսային Եվրոպայի բնակչության միջին խտությունը ցածր է, իսկ տեղաբաշխումը՝ անհամաչափ: Տարածաշրջանի համեմատաբար բարենպաստ բնակլիմայա-

կան պայմաններ ունեցող հարավային և արևմտյան շրջաններում բնակչության խտությունը զգալիորեն ավելի բարձր է, քան հյուսիսային մասում գտնվող տունդրայի զոնայում: Համեմատաբար խիտ բնակեցված երկրներն են Մեծ Բրիտանիան, Իռլանդիան և Դանիան: Սյուս երկրներում բնակչության խտությունը ցածր է, իսկ Իսլանդիայում նվազագույնն է՝ 3 մարդ/կմ²:

Հյուսիսային Եվրոպան աշխարհի ամենաբարձր ուրբանիզացված տարածաշրջաններից է: Քաղաքներում ապրում է տարածաշրջանի բնակչության շուրջ 84%-ը: Այդ ցուցանիշն առավել բարձր է Իսլանդիայում (93%), Մեծ Բրիտանիայում (90%), Դանիայում (87%) և Շվեդիայում (85%): Տարածաշրջանում տիրապետում են ոչ մեծ քաղաքները: Բազմամիլիոնանոց միակ քաղաքը Լոնդոնն է: Գրեթե բոլոր երկրներում բնակչության մեծ կենտրոնացում կա մայրաքաղաքներում: Ստոկհոլմի և Կոպենհագենի քաղաքային ագլոմերացիաների բնակչության թիվն անցնում է մեկ միլիոնից: Գյուղական բնակավայրերը նույնպես համեմատաբար փոքր են: Առանձին երկրներին բնորոշ է ցրված՝ ագարակային տարաբնակեցումը:

Հյուսիսային Եվրոպայի, հատկապես սկանդինավյան երկրների (Նորվեգիա, Շվեդիա, Դանիա), բնակչության կենսամակարդակը ամենաբարձրն է աշխարհում: Տարածաշրջանի ժողովուրդները, հատկապես անգլիացիները, մեծ ներդրում ունեն համաշխարհային քաղաքակրթության մեջ: Նորվեգացիների ավանդը մեծ է աշխարհագրության բնագավառում. աշխարհին հայտնի են ճանապարհորդներ Ռ. Ամունդսենի, Թուր Հեյերդալի և հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆ. Նանսենի անունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Հյուսիսային Եվրոպայի աշխարհագրական դիրքը:
2. Որո՞նք են Հյուսիսային Եվրոպայի բնական պայմանների բարենպաստ և ոչ նպաստավոր կողմերը: Ինչպե՞ս են դրանք փոխվում տարածաշրջանի տարբեր մասերում:
3. Որո՞նք են Հյուսիսային Եվրոպայի գլխավոր բնական հարստությունները: Ինչպիսի՞ն է դրանցով ապահովվածությունը տարբեր երկրներում:
4. Ո՞ր ազգերն են բնակվում Հյուսիսային Եվրոպայում, ի՞նչ լեզվաընտանիքների են պատկանում նրանց լեզուները, և ի՞նչ կրոն են դավանում նրանք:
5. Ինչպիսի՞ն է բնակչության տեղաբաշխումը: Ի՞նչ կապ եք տեսնում բնակչության տեղաբաշխման և բնական պայմանների միջև:
6. Բնակչության ո՞ր ցուցանիշներով է տարածաշրջանն առանձնահատուկ տեղ գրավում աշխարհում:

ԴԱՍ 21. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Հյուսիսային Եվրոպայի ժողովուրդները, հաղթահարելով բնական պայմանների ստեղծած որոշակի դժվարությունները, կարողացել են ստեղծել բարձր զարգացած տնտեսություն: Դրանք տնտեսապես զարգացած երկրներ են, որոնք թևակոխել են զարգացման **հետինդուստրիալ փուլ**: Այդ երկրների տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 70%-ը զբաղված է սպասարկման ոլորտում: Զարգացման միջին մակարդակի վրա են գտնվում նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ եղած բալթյան երկրները՝ Լիտվան, Լատվիան և Էստոնիան:

Տարածաշրջանի համախառն ներքին արդյունքի բաժինն աշխարհում մի քանի անգամ գերազանցում է նրա տարածքի և բնակչության բաժնին (տես գծանկարը):

Աշխատանքի միջազգային բաժանման մեջ **տարածաշրջանը մասնագիտացել է** մեքենաշինության, անտառային (հատկապես ցելյուլոզի, թղթի), քիմիադեղագործական, ձկնարդյունաբերության, անասնապահության արտադրանքի գծով: Տարածաշրջանի երկրները տալիս են համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 10%-ը:



Արդյունաբերությունը: Տարածաշրջանի արդյունաբերության կառուցվածքում առաջատարն է մեքենաշինությունը: Արդյունահանող ճյուղերի բաժինը, շնորհիվ նավթի հանույթի, համեմատաբար մեծ է Մեծ Բրիտանիայում և Նորվեգիայում: Շվեդիայում, Նորվեգիայում և Ֆինլանդիայում արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է ծովափնյա նեղ գոտում: Ներքին շրջաններում, որտեղ բնակավայրերը քիչ են, ընդարձակ տարածությունների վրա հանդիպում են միայն լեռնահանքային և փայտամշակման ձեռնարկություններ և ջրէկներ: Դանիայում, Իռլանդիայում և բալթյան երկրներում արդյունաբերությունը տեղաբաշխված է համեմատաբար համաչափ: Էներգետիկ և հումքային անբավարար բազայի պատճառով նշված երկրներում զարգացել են արդյունաբերության ոչ նյութատար, քիչ էներգատար, բայց աշխատատար ճյուղերը (ճշգրիտ մեքենաշինություն, դեղագործություն և այլն):

Էներգետիկայի զարգացման լավ նախադրյալներ ունեն Նորվեգիան և Մեծ Բրիտանիան, քանի որ ունեն նավթի հարուստ պաշարներ (Հյուսիսային ծովի հատակում): Նորվեգիայում արտադրվող էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են լեռնային գետերի վրա կառուցված բազմաթիվ, բայց ոչ խոշոր ջրէկները, իսկ Իսլանդիայում՝ երկրաջերմային էլեկտրակայանները: Բնակչության մեկ շնչի հաշվով արտադրած էլեկտրաէներգիայով Նորվեգիան և Իսլանդիան աշխարհի առաջատարներն են: Բալթյան երկրների և Դանիայի էներգետիկան գլխավորապես հենվում է ներկրվող վառելիքի վրա: Ատոմային էներգետիկան զարգացած է Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում, Լիտվայում:


Ջրաէլեկտրակայան Նորվեգիայում

Զարգացած **մետաղաձուլությամբ** աչքի են ընկնում Շվեդիան, Մեծ Բրիտանիան, Ֆինլանդիան և Նորվեգիան: Դրան նպաստել է էժան էլեկտրաէներգիայի (ջրէկների), իսկ Շվեդիայում՝ նաև սեփական երկաթաքարի առկայությունը: Որակյալ պողպատի արտադրությամբ ավանդական երկրներ են Շվեդիան և Մեծ Բրիտանիան:

Նորվեգիան Եվրոպայում առաջինն է ալյումինի, երկրորդը՝ նիկելի արտադրությամբ, իսկ Շվեդիան և Ֆինլանդիան հայտնի են պղնձի արտադրությամբ:

Հյուսիսային Եվրոպայի բոլոր երկրներում, բացի Իսլանդիայից, արդյունաբերության կառուցվածքում առաջատարը **մեքենաշինությունն** է: Բազմաճյուղ մեքենաշինությունն առավել զարգացած է Մեծ Բրիտանիայում և Շվեդիայում: Ամբողջ աշխարհում հայտնի են շվեդական բարձրորակ շինարարական մեքենաները, ծովային նավերը, ավտոմեքենաները, էլեկտրաքարշերը, երկաթուղային վագոնները, բարդ և ճշգրիտ սարքերը: Խոշոր նավերի արտադրությամբ Շվեդիան զիջում է միայն Ճապոնիային: Աշխարհում հայտնի է նաև ավտոմեքենաների արտադրությամբ («Վոլվո», «Սաաբ-Սկանիա» ընկերություններ) և էլեկտրոնային արդյունաբերությամբ: Ֆինլանդիան աշխարհում բջջային հեռախոսների խոշորագույն արտադրողներից է («Նոկիա» հայտնի ընկերությունը): Դանիան մասնագիտացել է մսի և կաթի մշակման սարքավորումների արտադրությամբ: Մեքենաշինությունը հիմնականում տեղաբաշխված է մայրաքաղաքներում և մի քանի այլ խոշոր քաղաքներում:

Քիմիական արդյունաբերությունը հիմնականում ներկայացված է ավանդական ճյուղերով, իսկ վերջին ժամանակներս՝ նավթաքիմիայով (Մեծ Բրիտանիա, Նորվեգիա): Դանիական հայտնի «Լեգո» ընկերությունը պլաստմասսայից պատրաստած խաղալիքների խոշոր արտադրողն է աշխարհում:

Հյուսիսային Եվրոպայի արդյունաբերության հնագույն և առաջատար ճյուղերից մեկն է եղել **անտառային արդյունաբերությունը՝ փայտամշակումը, թղթի և ցելյուլոզի արտադրությունը**: Այս արտադրությունն այժմ էլ բացառիկ մեծ դեր է խաղում Ֆինլանդիայի և Շվեդիայի տնտեսության մեջ: Այդ արտադրանքի զգալի մասն արտահանվում է: Բնակչության մեկ շնչին ընկնող թղթի արտադրությամբ Ֆինլանդիան աշխարհում գրավում է առաջին, իսկ Շվեդիան՝ երկրորդ տեղը:

Մինդի արդյունաբերությունը տնտեսության առաջատար ճյուղերից է: Ճյուղը հենվում է սեփական անասնապահական ու ձկնորսական հումքի և ներմուծվող գյուղատնտեսական մթերքների մշակման վրա: Տարածաշրջանի երկրներում արտադրվում են կաթի, մսի և ձկան պահածոներ, ինչպես նաև շաքար ու գարեջուր, որոնց մեծ մասն արտահանվում է: Այս ճյուղն առավել զարգացած է Դանիայում (զիջում է միայն մեքենաշինությանը): Ֆինլանդական «Վալիո» ընկերությունը կարագի խոշոր արտադրողներից է աշխարհում:

Կաթնատու տավարաբուծական տնտեսություն Դանիայում

Հյուսիսային Եվրոպայի **գյուղատնտեսությունն** աչքի է ընկնում ինտենսիվության բարձր մակարդակով և անասունների բարձր մթերատվությամբ: Արտադրանքի մեծ մասը տալիս են խոշոր և միջին ագրարային տնտեսությունները, որոնք զբաղվում են ոչ միայն բուն անասնապահությամբ ու բուսաբուծությամբ, այլև գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ:

Գյուղատնտեսական արտադրության ընդհանուր ծավալում խիստ գերակշռում է **անասնապահության բաժինը** (ավելի քան 4/5-ը): Տարածաշրջանի գրեթե բոլոր

երկրները արտահանում են անասնապահական տարբեր մթերքներ՝ միս, կաթ, ձու, կաշի: Այս առումով հատկապես հայտնի է Դանիան, որը մեկ շնչի հաշվով կաթի, յուղի, պանրի, խոզի և թռչնամսի, ձվի առաջատար արտադրողներից է աշխարհում:

Անասնապահության առաջատար ճյուղը կաթնատու անասնապահությունն է, որը զարգացած է ամենուրեք, բայց առավելապես՝ մերձքաղաքային գոտիներում: Խոզաբուծությունը նույնպես զարգանում է առաջին հերթին մերձքաղաքային գոտիներում և որոշակիորեն հենվում է արտադրված կաթի ավելցուկի ու կաթնամշակման թափոնների վրա: Կաթնային անասնապահության և խոզաբուծության միջև նշված կապը նկատի ունենալով՝ առաջացել է «Խոզը կախված է կովի պոչից» ասացվածքը: Մերձքաղաքային գոտիներում զարգանում է նաև թռչնաբուծությունը: Ձկնորսությունը զարգացած է հատկապես Նորվեգիայում և Իսլանդիայում (մեկ շնչի հաշվով տարեկան 7 տ ձուկ):

Բուսաբուծությունն ավանդաբար հարմարվել է անասնապահության պահանջներին, դրա նկատմամբ ենթակա դեր է կատարում: Դա է վկայում այն հանգամանքը, որ ցանքատարածությունների կառուցվածքում մեծ է կերային մշակաբույսերի և ցանովի խոտերի բաժինը՝ 75%: Ակտիվորեն օգտագործվում են լեռնային արոտավայրերը: Բուսաբուծությունը հիմնականում մասնագիտացած է հացահատիկային մշակաբույսերի՝ ցորենի և գարու, ինչպես նաև շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի և բանջարեղենի մշակությամբ: Նշված մշակաբույսերի բերքատվությունն այնքան բարձր է, որ համախառն բերքի մի մասը նույնիսկ օգտագործվում է որպես անասնակեր:

Տրանսպորտը: Աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ ամբողջ Հյուսիսային Եվրոպայի և առանձին երկրների տրանսպորտային համակարգում առանձնահատուկ դեր է խաղում ծովային տրանսպորտը: Տարածաշրջանի բոլոր երկրների միջև, բացառությամբ Իսլանդիայի, հաղորդակցությունը կազմակերպված է տրանսպորտի բոլոր տեսակներով, այդ թվում՝ երկաթուղային և ավտոմոբիլային (լաստանավերի միջոցով): Լաստանավերի միջոցով տրանսպորտային փոխադրումներն այստեղ մյուս տարածաշրջանների համեմատությամբ ավելի լայն տարածում ունեն:

Արտաքին առևտուրը հիմնականում իրականացվում է ծովային տրանսպորտով: Ծովային մեծ նավատորմիղներ ունեն Նորվեգիան և Մեծ Բրիտանիան:

Երկաթուղային տրանսպորտի դերը համեմատաբար մեծ է ընդարձակ տարածք ունեցող երկրների՝ Շվեդիայի, Ֆինլանդիայի և Նորվեգիայի ներքին փոխադրումներում: Երկաթուղիների զգալի մասն էլեկտրիֆիկացված է: Մյուս երկրների ներքին փոխադրումներում գերակշռում է ավտոմոբիլային տրանսպորտը: Կոպենհագենի և շվեդական Մալմյո քաղաքի միջև կառուցված 16 կմ ընդհանուր երկարությամբ թունելակամրջային համալիրը նկատելիորեն մեծացրել է այդ երկրների միջև երկաթուղային և ավտոմոբիլային հաղորդակցության ծավալը:

Զարգացման բարձր մակարդակի է հասել **սոցիալ-մշակութային** ոլորտը, որը պայմանավորված է բնակչության բարձր կենսամակարդակով և աճող պահանջմունքներով: Առանձնապես զարգացած են գիտությունը, կրթությունը, առողջապահությունը, ֆինանսավարկային ոլորտը, առևտուրը, զբոսաշրջությունը:

Հյուսիսային Եվրոպայի երկրների տնտեսությունները մեծապես կախված են **արտաքին առևտրից**: Հիմնականում արտահանում են ծովային նավեր, տարբեր տեսակի մեքենաներ և սարքավորումներ, փայտանյութ, կահույք, թուղթ, սև և գունավոր մետաղներ, ձկնապահածոներ, կարագ, միս և պանիր:

Մեծ է այդ երկրների կախվածությունը նաև ներմուծումից: **Ներկրում են** հիմնականում նավթ ու նավթամթերքներ (բացառությամբ Նորվեգիայի), արդյունաբերական հումք, մեքենաներ, քիմիական ապրանքներ, մետաղներ, կիսաֆաբրիկատներ, ածուխ, հացահատիկ, պտուղներ և բանջարեղեն:

Տարածաշրջանի երկրներն ակտիվ առևտուր են անում միմյանց, ինչպես նաև Եվրամիության անդամ մյուս երկրների, ԱՄՆ-ի և աշխարհի տարբեր տարածաշրջանների բազմաթիվ երկրների հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համեմատեք տարածաշրջանի երկրները միմյանց հետ: Ինչ ընդհանուր և տարբերիչ գծեր եք տեսնում:
2. Գնահատեք տարածաշրջանի դերը համաշխարհային տնտեսության մեջ:
3. Ինչո՞վ եք բացատրում Հյուսիսային Եվրոպայի տնտեսության մեջ արդյունաբերության մեծ գերակշռությունը: Թվարկեք արդյունաբերության առաջատար ճյուղերը:
4. Ինչպե՞ս է ազդում ծովային դիրքը տարածաշրջանի տնտեսության մասնագիտացման և տեղաբաշխման վրա:
5. Որո՞նք են գյուղատնտեսության առաջատար ճյուղերը և դրանց տեղաբաշխման գլխավոր շրջանները:
6. Գնահատեք տրանսպորտի և արտաքին կապերի դերը տարածաշրջանի տնտեսության զարգացման գործում:

ԴԱՍ 22. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքը՝ 244 հազ. կմ²
Բնակչությունը՝ 63,2 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Լոնդոն
Պետական կարգը՝ սահմանադրական միապետություն

Մեծ Բրիտանիա պետության պաշտոնական անվանումն է՝ **Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն**: Քաղաքական, ռազմական և տնտեսական առումներով աշխարհում առավել մեծ դերակատարում ունեցող և հզոր երկրներից մեկն է: Երկար ժամանակահատվածում (XVIII–XIX դդ.), մինչև ԱՄՆ-ի հզորանալը, աշխարհի ամենահզոր և խոշորագույն գաղութատեր երկիրն էր: XX դարի սկզբին իշխում էր աշխարհի բնակչության և բնակելի ցամաքի 1/4-ին, ինչի շնորհիվ էլ կուտակել է իր ազգային շատ մեծ հարստությունը: Բրիտանական կայսրության ընդարձակ տարածքները նկատի ունենալով՝ ասում էին, թե դրա վրա «արևը մայր չի մտնում»:

Պետության անունն առաջացել է կելտական բրիտներ ցեղի անունից: Մեծ Բրիտանիան կղզեխմբային երկիր է, նրա տարածքը ներառում է Եվրոպայի ամենամեծ

կղզին՝ Մեծ Բրիտանիան, Իռլանդիա կղզու հյուսիսային հատվածը և հարակից մի շարք կղզիներ: Նշվածներից բացի՝ Մեծ Բրիտանիային են պատկանում նաև 17 կղզային տարածքներ աշխարհի տարբեր օվկիանոսներում: Ընդ որում, գործնականում իր տնօրինության տակ գտնվող Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիների շուրջը Մեծ Բրիտանիան վիճաբանության մեջ է Արգենտինայի հետ, Ջիբրալթարի շուրջը՝ Իսպանիայի հետ: Մեծ Բրիտանիան գլխավորում է Համագործակցությունը, որը միավորում է նախկինում Բրիտանական կայսրության մեջ մտած գաղութները և տիրույթները:

Վեստմինսթերյան թագավորական պալատը (Լոնդոն)

Մեծ Բրիտանիան կազմված է չորս պատմաաշխարհագրական մարզերից՝ Անգլիա, Շոտլանդիա, Ուելս և Հյուսիսային Իռլանդիա (Օլսթեր): Բնակչության թվով, տարածքով և տնտեսական ներուժով ամենախոշորն Անգլիան է, որի անունով էլ երբեմն սխալմամբ անվանում են Մեծ Բրիտանիան:

Պետության **գերագույն ղեկավարը** թագավորն է (մեր օրերում՝ թագուհին), որի իշխանությունը խորհրդանշական է: Իրականում երկրի բոլոր հարցերը վճռում են **խորհրդարանը** և **վարչապետը** (կառավարության ղեկավարը), իսկ թագավորը (թագուհին) իր ստորագրությամբ իրավական ուժ է տալիս նրանց որոշումներին: Ընդունված է ասել, որ *«Անգլիայի թագավորը թագավորում է, բայց չի կառավարում»*:

Մեծ Բրիտանիան ունի շատ հարմար տնտեսաաշխարհագրական դիրք: Մայրցամաքից բաժանված է Հյուսիսային ծովով, Լա Մանշ և Պա դը Կալե նեղուցներով: Այս հանգամանքը Մեծ Բրիտանիայի համար նախկինում ունեցել է դրական նշանակություն՝ երկիրը պաշտպանելով օտարերկրյա նվաճումներից: Ամենակարճ հեռավորությունը մայրցամաքից 32 կմ է, այստեղ նեղուցի տակով փորված է ստորերկրյա երկաթուղային և ավտոմոբիլային թունել, որը կղզին կապում է մայրցամաքին:

Եվրոպայի զարգացած երկրների հետ ավտոմոբիլային և երկաթուղային հաղորդակցության հաստատումն էլ ավելի բարենպաստ է դարձրել Մեծ Բրիտանիայի ՏԱՌ-ը: Նրա ափերով են անցնում դեպի աշխարհի տարբեր ծայրերը ձգվող ծովային ամենաբանուկ ուղիները: Այդ ուղիների շնորհիվ էր, որ աշխարհագրական մեծ հայտնագործություններից հետո Անգլիան դարձավ աշխարհի ամենահզոր ծովային ու գաղութատեր երկիրը՝ կրելով **«ծովերի թագուհի»** տիտղոսը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Մեծ Բրիտանիայի ռելիեֆը հիմնականում հարթ է, իսկ հյուսիսի՝ Շոտլանդիայի ոչ բարձր լեռները չեն խոչընդոտում տնտեսական զարգացմանը: Մեծ Բրիտանիան ողջ Եվրոպայի այն եզակի երկրներից է, որ **նավթով, գազով** և **քարածխով** կարող է բավարարել սեփական պահանջները: Նավթի և գազի մեծ պաշարներ կան Հյուսիսային ծովի ծանծաղուտի բրիտանական հատվածում: Քարածխի մեծ կուտակումներ կան Միջին Անգլիայում և Հարավային Ուելսում: Մեծ Բրիտանիա կղզու կենտրոնական մասի երկաթի և գունավոր մի շարք մետաղների հանքավայրերը երկարատև շահագործման հետևանքով գրեթե սպառվել են:

Կլիման բարեխառն ծովային է: Եղանակներն անկայուն են, տարվա մեծ մասը (շուրջ 300 օր) ամպամած մառախլապատ է: Հիշեք, «մառախլապատ Ալբիոն» արտահայտությունը վերաբերում է Մեծ Բրիտանիային: Մեծ է Հյուսիսատլանտյան ծովային տաք հոսանքի և արևմտյան քամիների ազդեցությունը: Ջով ամառն ու մեղմ ձմեռը բարենպաստ պայմաններ են խոտային բուսականության աճի համար: Մարգագետինները կանաչ են ամբողջ տարին և կերային կայուն բազա են ծառայում անասնապահության համար: Երկրի տարածքի 3/4-ից ավելին օգտագործվում է գյուղատնտեսության մեջ:

Երկրի տարածքը նախկինում անտառապատ էր, սակայն անտառները հատվել են՝ հողագործության և այլ նպատակներով օգտագործելու համար: Ներկայումս տարածքի մոտ 10%-ն է անտառապատ: Գետերը կարճ են, բայց՝ ջրառատ ու նավարկելի: Ափամերձ ջրերը հարուստ են ձկներով, որոնք բնակչության սննդի անբաժան մասն են կազմում:

Ծովային մեղմ կլիման, հարթ ռելիեֆը, ընդարձակ մարգագետինները **հնարավորություն են տալիս զարգացնելու անասնապահությունը և աճեցնելու բարեխառն գոտու որոշ մշակաբույսեր**: Անբավարար ջերմությունը խանգարում է համեմատաբար ջերմասեր մշակաբույսերի հասունացմանը: Մեծ Բրիտանիայում մեծ ուշադրություն է դարձվում բնության պահպանությանը: Երկրի տարածքի ավելի քան 10%-ում ստեղծվել են ազգային պարկեր, որոնք բնակչության հանգստի կազմակերպման սիրելի վայրերն են: Անգլիացիները պիկնիկի հեղինակն ու մեծ սիրահարն են:

Բնակչությունը: Երկրի ներկայիս բնակչությունը ձևավորվել է երկարատև ժամանակահատվածում (V–XV դարերում), մայրցամաքից այստեղ թափանցած գերմանական ցեղերի՝ **անգլերի, սաքսերի, ֆրիզների** և տեղական բնակչության՝ **կելտերի, բրիտների** միաձուլումից: Ուժեղ էին անգլերը, որոնք, իրենց ձուլելով այլ ցեղերին, դարձան տիրապետող:

Ներկայումս անգլիացիները կազմում են բնակչության 80%-ը, բնակվում են նաև շոտլանդացիներ (10%), ուելսցիներ, իռլանդացիներ: Վերջիններիս լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի կելտյան լեզվախմբին:

Մեծ Բրիտանիայում XVIII-XIX դդ. բնակչության թվի աճի տեմպերը եղել են շատ բարձր, որը, ըստ էության, «ժողովրդագրական պայթյուն» երևույթի առաջին դրսևորումն էր աշխարհում: Դրա պատճառը մահացության կտրուկ կրճատումն էր ծնելիության բարձր մակարդակի պահպանման պայմաններում: Սակայն, ավելի ուշ, դեպի ԱՄՆ, Կանադա, ՀԱՀ, Ավստրալիա, Նոր Զելանդիա ուղղված տասնյակմիլիոնավոր բրիտանացիների արտագաղթը դանդաղեցրեց բնակչության արագ աճի տեմպը:

Վերջին տասնամյակներին Մեծ Բրիտանիայի բնակչության բնական աճը կազմում է 0,6%: Այստեղ նույնպես տեղի է ունենում բնակչության «ծերացման» գործընթաց: Տնտեսության ցածր վարձատրվող ոլորտներում աշխատուժի կարիքը հիմնականում լրացվում է «համագործակցության» երկրների (նախկին գաղութների) ներգաղթյալների՝ հնդիկների, պակիստանցիների, բանգլադեշցիների, աֆրիկյան ժողովուրդների հաշվին: Նրանք մեծ մասամբ բնակվում են Լոնդոնում:

Տնտեսապես ակտիվ բնակչության 3/4-ը զբաղված է սպասարկման ոլորտում, իսկ գյուղատնտեսության մեջ զբաղված է ընդամենը 1%-ը, ինչն աշխարհի երկրների ամենացածր ցուցանիշներից է:

Մեծ Բրիտանիայի բնակչության մեծ մասը, այդ թվում՝ անգլիացիները, դավանում է բողոքականություն, իսկ իռլանդացիները՝ կաթոլիկություն:

Մեծ Բրիտանիան երկրագնդի ամենախտաբնակ երկրներից է (միջին խտությունը՝ 256 մարդ/կմ²): Համեմատաբար բարենպաստ բնակլիմայական պայմաններ և զարգացած արդյունաբերություն ունեցող Անգլիայում բնակչության միջին խտությունը զգալիորեն բարձր է երկրի միջին ցուցանիշից: Միևնույն ժամանակ, նոսր է բնակեցված Շոտլանդիան (70 մարդ/կմ²), որը շուրջ 3,5 անգամ ցածր է երկրի միջին ցուցանիշից:

Աշխարհի ամենահին արդյունաբերական խոշոր երկրում՝ Մեծ Բրիտանիայում, բնական է, որ ուրբանիզացման մակարդակը պետք է շատ բարձր լինի՝ ավելի քան 90%: Շատ են խոշոր քաղաքները: Էկոլոգիական իրադրության սրման պատճառով այժմ տեղի է ունենում երկրի խոշոր քաղաքներից դրանց բնակչության մասնակի գաղթ դեպի էկոլոգիապես բարենպաստ փոքր քաղաքներ և գյուղական վայրեր:

Երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքում խիստ մեծ է **Լոնդոնի** դերը, որը երկար ժամանակ եղել է աշխարհի խոշորագույն քաղաքը և ֆինանսական-տնտեսական կենտրոնը: Թեպետ քաղաքը ծովափից 60 կմ հեռավորության վրա է, բայց ծովային խոշոր նավահանգիստ է՝ շնորհիվ այն հանգամանքի, որ մակընթացության ժամանակ բարձրանում է Թեմզայի ջրի մակարդակը, և խոշոր նավերը հասնում են Լոնդոն: Աշխարհում մետրոյի առաջին գիծը կառուցվել է Լոնդոնում 1863թ.: Լոնդոնի շուրջը ձևավորվել է խոշոր ագլոմերացիա (10 մլն բնակիչ): Ագլոմերացիայի հանրաճանաչ քաղաքներից են Քեմբրիջը և Օքսֆորդը՝ աշխարհահռչակ համալսարաններով:

Քաղաքային մյուս խոշոր ագլոմերացիաներից են Մանչեսթրը, Լիվերպուլը, Լիդսը, Բիրմինհամը, որոնցից յուրաքանչյուրն ունի 1 մլն-ից ավելի բնակչություն: Դրանք Լոնդոնի հետ ձևավորել են Լոնդոն-Լիվերպուլյան կամ Անգլիական մեգալոպոլիսը:

Վիթխարի է բրիտանացիների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ: Երկար ժամանակ Մեծ Բրիտանիան համարվում էր «մեքենաների հայրենիք»: Այստեղ են ստեղծվել առաջին ջուլիակահաստոցը, շոգեքարշը, երկաթուղին, ջրաէլեկտրակայանը, ատոմային հեռախոսագիծը, մետրոպոլիտենը:

Լոնդոնի համայնապատկեր

Հայերը Մեծ Բրիտանիայում: Մեծ Բրիտանիայում առաջին հայ համայնքները ստեղծվել են XIX դարում: Ներկայումս հայերի թիվը ավելի քան 15 հազար է: Ամենախոշոր համայնքը Լոնդոնինն է, որտեղ գործում են **Հայ տունն** իր գրադարանով և **հայկական եկեղեցին:** Մեծ Բրիտանիայում է բնակվել մեծահարուստ **հայ բարերար Գալուստ Գյուլբենկյանը:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս է Մեծ Բրիտանիայի աշխարհագրական դիրքն ազդել երկրի զարգացման վրա նախկինում և մեր օրերում:
2. Բնական նախադրյալները Մեծ Բրիտանիայի տնտեսության ո՞ր ճյուղերի զարգացմանն են նպաստում:
3. Ե՞րբ և ինչպե՞ս է ձևավորվել Մեծ Բրիտանիայի բնակչությունը: Ինչպիսի՞ն էր բնակչության աճի տեմպը նախկինում և ինչպիսի՞ն է ներկա ժամանակում:
4. Ինչպիսի՞ն է ուրբանիզացման մակարդակը: Նշե՞ք խոշորագույն քաղաքներն ու քաղաքային ագլոմերացիաները:

ԴԱՍ 23. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Մեծ Բրիտանիան աշխարհի ամենազարգացած ու հզոր հետինդուստրիալ երկրներից է: Համախառն ներքին արդյունքով և արդյունաբերական արտադրանքի ծավալով աշխարհի վեց առաջատար երկրներից մեկն է, **«Մեծ յոթնյակի»** անդամ:

Տնտեսության առավել բնորոշ հատկանիշներից նշենք մի քանիսը: ա) Տնտեսության ընդհանուր կառուցվածքում գերակշռում է սպասարկման ոլորտը, իսկ արտադրական ոլորտի ճյուղերի մեջ գյուղատնտեսության նկատմամբ խիստ մեծ գերակշռություն ունի արդյունաբերությունը: բ) Երկրի տնտեսությունը մեծապես կախված է արտաքին տնտեսական կապերից: գ) Տնտեսությունն աչքի է ընկնում խոշոր ընկերությունների գերիշխող դերով: Ամբողջ աշխարհում առավել հայտնի են «Շելլ» և «Բրիթիշ փեթրոլիում» ընկերությունները:

Մեծ Բրիտանիան առաջինն է թևակոխել արդյունաբերական հեղաշրջման փուլը, ուստի և համարվում է «արդյունաբերական հեղաշրջման հայրենիք»:

Երբեմնի հզոր արդյունաբերություն ունեցող Մեծ Բրիտանիայի տնտեսական աճը Երկրորդ աշխարհամարտից հետո զգալի չափով դանդաղել է: Դա պայմանավորված է մի շարք գործոններով. ա) գաղութային երկրներից ներկրվող էժան հումքից զրկվելը, բ) երկարատև շահագործման հետևանքով երկրի ածխի և մետաղային շատ հանքավայրերի սպառվելը կամ էլ ոչ շահութաբեր դառնալը, գ) համաշխարհային տնտեսության մեջ Մեծ Բրիտանիային մրցակից երկրների հանդես գալը:

Արդյունաբերությունը տնտեսության ավանդական և առանցքային ճյուղն է, որը տալիս է երկրի ամբողջ արտահանության շուրջ 90%-ը: Արդյունաբերության կառուցվածքը ենթարկվել է զգալի փոփոխությունների: Այժմ նկատելիորեն նվազել է ավանդական ճյուղերի՝ ածխարդյունաբերության, տեքստիլ արդյունաբերության և երբեմնի հզոր սև մետաղաձուլության դերը: Դա պայմանավորված է հեղուկ և գազային վառելիքի պահանջարկի մեծացմամբ և մեքենաշինության նորագույն՝ աշխատատար և գիտատար ճյուղերի դերի բարձրացմամբ:

Մեծ Բրիտանիայում վերջին հարյուր տարիների ընթացքում ածխի հանույթը նվազել է ավելի քան տասն անգամ: Միաժամանակ աճել է նավթի հանույթը, որի ծավալով Մեծ Բրիտանիան Եվրոպայում զիջում է միայն Նորվեգիային (չհաշված Ռուսաստանը):

Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում գերակշռում է ջերմաէներգետիկան, որին հաջորդում է ատոմային էներգետիկան: Երկրի հյուսիսում՝ լեռնային գետերի վրա կառուցվել են ջրէկներ, իսկ մերձափնյա գոտիներում՝ հողմային էլեկտրակայաններ:

Սև մետաղաձուլությունը նախկինում զարգանում էր սեփական երկաթի և ածխի բազայի վրա (Բիրմինհամ, Գլազգո): Ներկայումս սև և գունավոր մետաղաձուլությունը հիմնականում օգտագործում է ներկրող հումքը, ինչպես նաև ածուխը, ուստի մետաղաձուլության ժամանակակից կենտրոնները տեղաբաշխված են նավահանգստային քաղաքներում (Քարդիֆ, Միդլսբորո):

Մեքենաշինությունը Մեծ Բրիտանիայի արդյունաբերության առաջատար ճյուղն է, և մեծ է դրա բաժինը երկրի արտահանման կառուցվածքում: Առանձնապես կարևոր են էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային, տրանսպորտային (ինքնաթիռաշինություն, ավտոմոբիլաշինություն, նավաշինություն) ճյուղերը: Դրանք կենտրոնացված են խոշոր քաղաքային ագլոմերացիաներում: Համակարգիչների արտադրությամբ Եվրոպայում առաջինն է:

Մեծ Բրիտանիայի արդյունաբերության մյուս առաջատար ճյուղը՝ հզոր և բազմաճյուղ **քիմիական արդյունաբերությունը**, ոչ միայն բավարարում է երկրի ներքին պահանջարկը, այլև արտահանում է կաուչուկ, ներկանյութեր, արհեստական մանրաթելեր, քիմիական պարարտանյութեր և այլ արտադրանք:

Արդյունաբերության ավանդական ճյուղերից է **տեքստիլ արդյունաբերությունը**, որը երկար ժամանակ առաջինն էր թե՛ աշխատողների թվով և թե՛ թողարկվող արտադրանքի ծավալով: Դրա գլխավոր կենտրոնը եղել և մնում է **Մանչեսթրը**: Խոշոր կենտրոններ են նաև Լիդսը, Լոնդոնը և այլ խոշոր քաղաքներ:

Գյուղատնտեսությունը: Ինտենսիվ գյուղատնտեսության, անասունների բարձր մթերատվության ու մշակաբույսերի բարձր բերքատվության շնորհիվ ներկայումս հնարավոր է դարձել բավարարել բնակչության գյուղատնտեսական մթերքի պահանջարկի գրեթե 9/10-ը: Մեծ Բրիտանիայի բնական պայմաններն ավելի շատ նպաստավոր են անասնապահության, քան բուսաբուծության համար: Այսպես օրինակ՝ ծովի մակարդակից 600 մ բարձրության վրա արդեն ցորենը չի հասունանում: Բայց դրա փոխարեն մշտապես կանաչ բնական մարգագետիններն ու արոտավայրերը լավագույն պայմաններ են ստեղծում անասնապահության համար:

Անասնապահությունը տալիս է գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի 3/4-ից ավելին: Կաթնամսատու տավարաբուծությունը զարգացած է ամենուրեք, բայց հատկապես՝ Հարավարևմտյան Անգլիայում, բնակչության խոշոր կուտակման շրջանում: Խոզաբուծությունը նույնպես զարգացած է երկրի խիտ բնակեցված շրջաններում, հատկապես մերձքաղաքային տնտեսություններում: Ոչխարների գլխաքանակով Մեծ Բրիտանիան Եվրոպայում առաջինն է: Այս ճյուղը նախկինում չափազանց զարգացած էր երկրի գրեթե ամբողջ տարածքում, իսկ այժմ՝ Շոտլանդիայի և Ուելսի լեռնային շրջաններում ու Հյուսիսային Անգլիայում:

Ձկան որս Հյուսիսային ծովում

Բուսաբուծությունը հարմարեցված է անասնապահության պահանջներին, ցանքատարածությունների 2/3-ը զբաղեցնում են կերային մշակաբույսերը: Բուսաբուծությունը զարգացած է հատկապես Հարավային Անգլիայում, որտեղ աճեցնում են հացահա-

տիկներ (ցորեն, գարի), շաքարի ճակնդեղ: Կարտոֆիլ մշակում են ամենուրեք, իսկ բանջարեղեն և մրգեր՝ մերձքաղաքային տնտեսություններում:

Երկրի բնակչության սննդի օրաբաժնում անբաժան է ձուկը, որը հատկապես շատ են որսում Հյուսիսային ծովում: Այստեղ է գտնվում ձկնային պաշարներով հարուստ **Դոգգեր-Բանկի** հայտնի ծանծաղուտը: Անգլիան շատ ձուկ է որսում նաև համաշխարհային օվկիանոսի հեռավոր մասերում:

Տրանսպորտը: Որպես ծովային երկիր՝ Մեծ Բրիտանիայի տնտեսական կյանքում բացառիկ դեր ունի ծովային տրանսպորտը, որով իրականացվում են արտաքին տնտեսական կապերը: Խոշորագույն նավահանգիստներն են Լոնդոնը, Լիվերպուլը, Գլազգոն: Լոնդոնը միաժամանակ օդային տրանսպորտի աշխարհի խոշորագույն հանգույցներից է:

Ներքին փոխադրումները կատարվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով: Մեծ Բրիտանիան ավտոճանապարհների խտությամբ աշխարհում առաջին տեղերից մեկն է գրավում: Երկաթուղային տրանսպորտի դերը մեծացավ, երբ Պա դը Կալե նեղուցի տակ կառուցված թունելով Լոնդոնը կապվեց Փարիզի և եվրոպական մյուս մայրաքաղաքների հետ:

Մեծ Բրիտանիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Որպես հետարդյունաբերական փուլ թևակոխած երկիր՝ Մեծ Բրիտանիայում շատ մեծ է սպասարկման ոլորտի դերը, որը տալիս է երկրի ՀՆԱ-ի ավելի քան 3/4-ը: Մեծ Բրիտանիան աշխարհում հայտնի է ավանդաբար զարգացած գիտակրթական համակարգով: Այստեղ են գտնվում աշխարհի առավել հանրահայտ մի քանի համալսարանները: Երկրի սպասարկման ոլորտում մեծ դեր ունեն նաև առողջապահությունը, լրատվությունը, տեղեկատվությունը, ֆինանսական գործունեությունը և զբոսաշրջությունը:

Պատմական զարգացման ընթացքում **ձևավորվել են տնտեսական տարբեր մասնագիտացում ունեցող պատմաաշխարհագրական շրջաններ**: Մեծ Բրիտանիայի շրջանները բաժանվում են երկու խմբի՝ Անգլիայի շրջաններ (Հարավային, Միդլենդ, Լանկաշիր-Յորքշիր), որոնք աչքի են ընկնում զարգացման բարձր մակարդակով, և ծայրամասային ազգային շրջաններ (Շոտլանդիա, Ուելս, Հյուսիսային Իռլանդիա), որոնք տնտեսական զարգացմամբ զիջում են առաջիններին: Բրիտանական չափանիշներով՝ համեմատաբար թույլ զարգացած շրջանը Հյուսիսային Իռլանդիան է:

Արտաքին տնտեսական կապերը: Մեծ Բրիտանիան պատկանում է այն երկրների թվին, որոնց զարգացումը մեծապես կախված է արտաքին տնտեսական կապերից: Պատահական չէ, որ ասում են. «Անգլիան առանց տնտեսական կապերի իրեն կզգա այնպես, ինչպես ձուկն առանց ջրի»: Մեծ Բրիտանիայի արդյունաբերական հումքի 90%-ը ներկրվում է (երկաթի հանքաքար, գունավոր մետաղներ, ածուխ, բամբակ, բուրդ, ջուտ, փայտանյութ, թուղթ, բնական կաուչուկ և այլն):

Արտահանության մեջ գերակշռում են բազմազան մեքենաները և սարքավորումները, բրդե և սինթետիկ գործվածքները, քիմիական ապրանքները, անասնապահա-

կան մթերքները: Արտաքին առևտրում մեծ տեղ է գրավում **վերաարտահանումը** (ռեէքսպորտը): Դա նշանակում է, որ ներմուծելով կիսապատրաստուկներ և պարենամթերք (թեյ, կակաո, սուրճ, մսամթերք), երկիրը դրանք վերավաճառում է արտասահմանում:

Մեծ Բրիտանիան նաև կապիտալի խոշոր արտահանող է: Անգլիական բանկերն իրենց մասնաճյուղերն ունեն աշխարհի բազմաթիվ երկրներում: Լոնդոնը համաշխարհային ֆինանսական կենտրոններից մեկն է:

Առևտրական հիմնական գործընկերներն են Եվրամիության երկրները, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Բրիտանական Համագործակցության երկրները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նշեք Մեծ Բրիտանիայի տնտեսության առավել բնորոշ գծերը:
2. Ինչպիսի փոփոխություններ է կրել երկրի տնտեսությունը հետպատերազմյան տարիներին:
3. Որո՞նք են արդյունաբերության առաջատար ճյուղերը, նշեք դրանց տեղաբաշխման շրջանները:
4. Որո՞նք են գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը, նշեք դրանց տեղաբաշխման շրջանները
5. Ինչ դեր է խաղում արտաքին առևտուրը Մեծ Բրիտանիայի տնտեսության մեջ: Որո՞նք են առևտրական կարևոր գործընկերները:

ԴԱՍ 24. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Օգտվելով տեքստից և հավելվածի աղյուսակներից՝ Եվրոպայի երկրները ըստ տնտեսական զարգացման մակարդակի բաժանեք երեք խմբի: Նշեք ինդուստրիալ փուլում գտնվող երկրները:
2. Օգտվելով տեքստից և հավելվածի աղյուսակներից՝ Եվրոպայի երկրները խմբավորեք ըստ բնակչության խտության: Նշեք, թե որ տարածաշրջանում են գտնվում բնակչության բարձր խտություն ունեցող երկրները:
3. Օգտվելով տեքստից և հավելվածի աղյուսակներից՝ Եվրոպայի երկրները խմբավորեք ըստ ուրբանիզացման մակարդակի: Փորձեք կապ հաստատել երկրների տնտեսական զարգացման և ուրբանիզացման մակարդակների միջև:
4. Օգտվելով հավելվածի աղյուսակներից՝ գծեք շրջանաձև դիագրամներ, որտեղ նշված լինեն Եվրոպայի տարածաշրջանների մասնաբաժինները Եվրոպայի ընդհանուր տարածքում, բնակչության մեջ և համախառն ներքին արդյունքում:
5. Օգտվելով Եվրոպայի քաղաքական քարտեզից՝ առանձնացրեք դեպի ծով ելք չունեցող երկրները: Օգտվելով տեքստից և քարտեզից՝ տվեք Շվեյցարիայի և Շվեդիայի տնտեսաաշխարհագրական դիրքի համեմատական բնութագիրը: Բացահայտեք նմանության և տարբերության գծերը:
6. Օգտվելով տեքստից և հավելվածի աղյուսակներից՝ համեմատեք Եվրոպայի տարածաշրջանների բնակչությունը և տնտեսությունը: Նշեք ընդհանուր և տարբերիչ գծերը:

ԴԱՍ 25. ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ. ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Կազմը: Աշխարհագրական դիրքը: Հարավարևմտյան Ասիան տարածաշրջան է Միջերկրական, Արաբական, Կարմիր, Սև և Կասպից ծովերի, Ադենի, Օմանի և Պարսից ծոցերի միջև: Տարածաշրջանն ընդգրկում է Փոքրասիական և Արաբական թերակղզիները, Հայկական լեռնաշխարհը, Իրանական բարձրավանդակը և Միջագետքի դաշտավայրը: Այդ սահմաններում այն զբաղեցնում է շուրջ 7 մլն կմ² տարածք, որտեղ ապրում է 340 մլն մարդ[1]:

Պատմաաշխարհագրական առումով՝ Հարավարևմտյան Ասիայի կազմում են նաև Հարավային Կովկասի պետությունները, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը և ամբողջությամբ հայերիս բնօրրանը՝ Հայաստանը:

Հարավարևմտյան Ասիայով են անցնում Եվրոպան և Աֆրիկան Ասիային կապող հաղորդակցության գլխավոր ուղիները: Դա նրա ՏԱԴ-ի կարևոր առանձնահատկությունն է, որը մեծ ազդեցություն է թողնում տարածաշրջանի երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման վրա:

Ասիա (քաղաքական քարտեզ)

1. Այս տարածաշրջանի համար, սահմանների որոշ տարբերությամբ, օգտագործում են նաև Մերձավոր Արևելք, Միջին Արևելք, Առաջավոր Ասիա անվանումները:

Տարածաշրջանի բարենպաստ աշխարհագրական դիրքի, հարուստ հանքային ռեսուրսների (հատկապես նավթի) պատճառով այստեղ առավել սուր ձևով են բախվում աշխարհի խոշորագույն պետությունների շահերը: Սուր հակասություններ կան նաև Հարավարևմտյան Ասիայի պետությունների միջև, ինչի պատճառով այն դարձել է աշխարհի ամենաանկայուն տարածաշրջաններից մեկը:

Տարածաշրջանի պետություններն իրարից տարբերվում են պետական կարգով և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով:

Կառավարման ձևով տարածաշրջանի երկրներից 7-ը միապետություններ են, որոնցից 3-ը՝ բացարձակ (Սաուդյան Արաբիա, Քաթար, Օման): Տարածաշրջանի երկրների մեծ մասը հանրապետություններ են:

Տարածաշրջանում **սոցիալ-տնտեսական զարգացման** բարձր մակարդակով առանձնանում է Իսրայելը: Մեկ բնակչին ընկնող ՀՆԱ-ի ծավալով առաջատար են նաև տարածաշրջանի՝ նավթ արտահանող երկրները:

Բնական պայմանները և ռեսուրսները: Բազմազան են Հարավարևմտյան Ասիայի **զարգացման բնառեսուրսային նախադրյալները**: Այստեղ տարածված են ավազային ընդարձակ անապատները, կիսաանապատներն ու օազիսները, իսկ դրանց հարևանությամբ՝ ձյունապատ լեռնագագաթները, կանաչապատ գետահովիտներն ու ծովափերը:

Տարածաշրջանի հյուսիսային մասում գերակշռողը լեռնային մակերևույթն է, իսկ հարավային հատվածում (Արաբական թերակղզի, Միջագետք)՝ հարթավայրային:

Զարգացման համար կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանի **օգտակար հանածոները,** հատկապես նավթն ու գազը: Հարավարևմտյան Ասիայի գլխավոր հարստությունը նավթն է: Այստեղ է կենտրոնացած նավթի համաշխարհային պաշարների 2/3-ը: Նավթը տարածաշրջանի երկրների մեծ մասի եկամտի գլխավոր աղբյուրն է: Նավթով հարուստ են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրաքը, Իրանը, ԱՄԷ-ն (Արաբական Միացյալ Էմիրություններ):

Այստեղ է կենտրոնացած նաև բնական գազի համաշխարհային պաշարների 1/4-ը: Գազի պաշարներով հարուստ են Իրանը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն:

Բորի և քրոմի հումքի համաշխարհային նշանակության պաշարներ կան Թուրքիայում, կալիումական աղերի՝ Իսրայելում, Հորդանանում և Իրանում: Երկաթի, պղնձի ու բազմամետաղների հանքաքարի զգալի պաշարներով առանձնանում են Իրանը, Թուրքիան և Հայաստանը:

Գտնվելով մերձարևադարձային և արևադարձային գոտիների սահմաններում՝ Հարավարևմտյան Ասիան ունի չոր և ցամաքային կլիմա: Ընդ որում, ցամաքայնությունն աճում է արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ ուղղություններով: Սև ծովին հարող հատվածը և Հարավկասպիական դաշտավայրը ստանում են մթնոլորտային առատ տեղումներ (1000-2500 մմ): Դրանք մերձարևադարձային մշակաբույսերի (ցիտրուսների, թեյի, ծխախոտի, արմավենու, դափնու) մշակության գլխավոր շրջաններ են: Դրա կողքին, սակայն, Արաբական թերակղզու, Միջագետքի, Թուրքիայի և Իրանի ներքին շրջանների կլիման չոր և ցամաքային է: Իսկ այդպիսի պայմաններում կայուն բերք ստանալու համար անհրաժեշտ է կատարել արհեստական ոռոգում: Դա է պատճառը, որ դեռ հազարամյակներ առաջ և այսօր էլ տարածաշրջանի նյութական մշակույթի կարևորագույն տարրերից են ջրամբարները, ջրհորները, ջրանցքները:

Հարավարևմտյան Ասիա

Տարածաշրջանում **ջրի հիմնախնդիրը** շատ սուր է: Ջուրն այստեղ ամենամեծ հարստությունն է համարվում: Դրա պակասը պետությունների միջև հաճախ քաղաքական լարվածության պատճառ է դառնում:

Մնապատներում ջրի հիմնական աղբյուրը ստորերկրյա ջրերն են, որոնց ելքի մոտ ձևավորվում են մշտադալար օազիսներ: Օազիսի գլխավոր բույսը փյունիկյան արմավենին է՝ օազիսի բնապատկերի անբաժանելի մասը, յուրահատուկ խորհրդանիշը:

Չորային կլիմայի պատճառով գետային ցանցը թույլ է զարգացած: Տնտեսական կարևոր նշանակություն ունեն Եփրատը, Տիգրիսը, Կուրը և Արաքսը, որոնք Հայկական լեռնաշխարհի ձյունապատ լեռների ծնունդ են: Միջին հոսանքում նրանք ունեն նաև էներգետիկական մեծ ներուժ:

Տարածաշրջանում լճերը սակավ են և գլխավորապես՝ աղի: Դրանցից աշխարհի ամենաաղի Մեռյալ ծով-լիճը հարուստ է քիմիական՝ կալիումական հումքով, Վանա

Օազիս Օմանում

լիճը՝ բորակով և յուրահատուկ տառեխ ձկնատեսակով, Ուրմիան՝ զանազան աղերով: Մեռյալ ծովի և Ուրմիայի ջրերն ունեն բուժիչ նշանակություն: Վանա լիճն օգտագործվում է նաև նավարկության համար:

Հարավարևմտյան Ասիայում բերրի հողեր կան միայն գետահովիտներում և լեռնային սարահարթերում (սևահողեր): Կիսաանապատային գորշ հողերը, շարունակ մշակվելով, դարձել են կուլտուր-ոռոգովի հողեր:

Չորային կլիմայի պատճառով տարածաշրջանում գերակշռում են անապատներն ու կիսաանապատները և չոր տափաստանները, որոնց աղքատիկ բուսականությունը հնարավորություն է տալիս զբաղվելու քոչվոր անասնապահությամբ (ոչխարաբուծությամբ, ուղտաբուծությամբ):

Մերձարևադարձային փարթամ անտառային բուսականությունը հիմնականում տարածված է ծովափնյա գոտում: Անտառները տարածված են նաև լեռներում:

Տարածաշրջանի ամենաանտառապատ երկիրը Վրաստանն է:

Լեռնային շրջաններում անտառներից վեր տարածվում են ալպյան մարգագետիններ: Դրանք ամառային հարմար արոտավայրեր են:

Որպես մարդկային քաղաքակրթության հնագույն օրրան՝ տարածաշրջանը բնութագրվում է պատմամշակութային և ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններով: Դրանք, ինչպես նաև միջերկրածովյան հրաշագեղ լողափերը և հանքային ջրերը, հանգստի ու զբոսաշրջության վիթխարի ռեսուրս են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Հարավարևմտյան Ասիայի աշխարհագրական դիրքը:
2. Բացատրեք ջրի և նավթի նշանակությունը տարածաշրջանի համար:
3. Գնահատեք տարածաշրջանի բնական պայմանները և ռեսուրսները՝ տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման հնարավորությունների տեսակետից:
4. Պատրաստեք նյութեր Հարավարևմտյան Ասիայի պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ:
5. Ինչ գիտեք տարածաշրջանի «թեժ» կետերի մասին:
6. Պատրաստեք սլայդ-ներկայացում «Անապատը և մարդը» թեմայով:

ԴԱՍ 26. ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Հարավարևմտյան Ասիայում ապրում է 340 մլն մարդ, որի 43%-ը՝ 2 խոշոր երկրում՝ Իրանում և Թուրքիայում: Բնակչության թվով տարածաշրջանի խոշոր երկրներից են նաև Աֆղանստանը, Սիրիան, Իրաքը, Սաուդյան Արաբիան և Եմենը:

Բնակչության բնական աճը աշխարհի միջին ցուցանիշից համեմատաբար բարձր է: Դրա վրա ազդում են ազգային, կրոնական սովորույթները, սոցիալ-տնտեսական պայմանները:

Բնակչության կենսամակարդակի, գրագիտության ու ուրբանիզացման մակարդակի բարձրացման շնորհիվ բնակչության բնական աճի տեմպերը վերջին տասնամյակներում նկատելիորեն նվազել են, թեև, որպես մահմեդական բնակչությամբ բնակեցված տարածաշրջան, այդ ցուցանիշը դեռևս ավելի բարձր է, քան աշխարհի բնակչության աճի միջին տեմպը: Բնակչության բնական աճի մակարդակը (շուրջ 3%) առավել բարձր է Աֆղանստանում, Իրաքում, Եմենում և Քաթարում:

Հարավարևմտյան Ասիայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



Տարածաշրջանի 2 խոշոր երկրի՝ Թուրքիայի և Իրանի, ինչպես նաև Ադրբեջանի բնակչության բնական աճը (1-1,1%) մոտավորապես աշխարհի բնակչության միջին բնական աճի մակարդակին է:

Հարավարևմտյան Ասիայում մեծ չափերի են հասնում բնակչության **գաղթերը**:

Ներգաղթածները մեծ թիվ են կազմում Պարսից ծոցի նավթարդյունահանող երկրներում: Դրա հետևանքով, օրինակ, Քաթարի և Քուվեյթի բնակչության միայն 40%-ն է բնիկ, իսկ մեծ մասը եկվորներ են, գլխավորապես արաբական այլ երկրներից և Հնդկական օվկիանոսի ավազանի երկրներից:

Տարածաշրջան ներգաղթողների մշտական և զգալի հոսք ուղղված է նաև դեպի Իսրայել: Դրանք աշխարհի տարբեր մասերից իրենց պատմական հայրենիք վերադարձող հրեաներն են: Վերջին 2–3 տասնամյակներին Իսրայելի բնակչությունն ավելացել է մի քանի անգամ:

Բնակչության **սեռային** կազմում գերակշռում են տղամարդիկ: Բացառություն են կազմում Հարավային Կովկասի երեք երկրները (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան): Ոչ միայն տարածաշրջանում, այլև աշխարհում տղամարդկանց ամենաբարձր գերակշռություն նկատվում է Քաթարում, Քուվեյթում և ԱՄԷ-ում (61-67%): *(Բացատրեք՝ ինչու:)*

Հարավարևմտյան Ասիայի բնակչությունը պատկանում է եվրոպեոիդ ռասայի հարավային ճյուղին: Այս տարածաշրջանն աչքի է ընկնում բնակչության **ազգային կազմի** խայտաբղետությամբ: Բնակչության ճնշող մեծամասնությունը (95%) խոսում է երեք խոշոր լեզվախմբերի լեզուներով՝ իրանական (պարսիկներ, քրդեր, աֆղաններ), սեմական (արաբներ, հրեաներ, ասորիներ) և թյուրքական (թուրքեր, ադրբեջանցիներ): Ամենից մեծ թիվ են կազմում արաբները: Նրանք բացարձակ մեծամասնություն են տարածաշրջանի 11 երկրում:

Տարածաշրջանում ընդարձակ և ցրված աշխարհագրություն ունեն քրդերը և հայերը: Միլիոնավոր քրդեր ապրում են Թուրքիայում, Իրանում, Իրաքում և Սիրիայում:

Ազգային բազմազանությունն այս տարածաշրջանը դարձրել է ազգամիջյան բախումների մշտական օջախ: Այդ հակամարտությունների պատճառ են նաև պետական ու վարչատարածքային սխալ սահմանները, որոնք ժամանակին գծել են գերտերությունները ոչ թե բնիկ ժողովուրդների, այլ իրենց շահերից ելնելով: Այդ պատճառով է, որ դեռևս անլուծելի են մնում հայ-ադրբեջանական, հայ-թուրքական, իսրայելա-արաբական և այլ խնդիրները:

Բավական բարդ է տարածաշրջանի բնակչության **կրոնական կազմը**: Եվ դա պատահական չէ: Այստեղ են ծնունդ առել համաշխարհային կրոնները՝ քրիստոնեությունը, մահմեդականությունը և հրեաների ազգային կրոնը՝ հուդայականությունը: Այս տարածաշրջանում են այդ կրոնների ուխտավայրերը:

Մահմեդականների ուխտագնացություն (հաջ) Մեքքա

Բացարձակ մեծամասնություն են մահմեդականության հետևորդները՝ արաբները, թուրքերը, պարսիկները, ադրբեջանցիները, աֆղանները: Հայերը, վրացիները, Կիպրոսի հույները, Սիրիայի և Լիբանանի արաբների մի մասը դավանում են քրիստոնեություն:

Կրոնի դերը, հատկապես՝ մահմեդական, շարունակում է բարձր մնալ շատ երկրների տնտեսական և քաղաքական կյանքում: Այն ազդել է նաև երկրների պետական կարգի վրա: Օրինակ՝ Սաուդյան Արաբիան աստվածապետական բացարձակ միապետություն է, իսկ Իրանը և Աֆղանստանը՝ իսլամական հանրապետություններ:

Հարավարևմտյան Ասիայում բնակչությունը անհավասարաչափ է տեղաբաշխված: Բնակչության միջին խտությունը 45 մարդ/կմ² է, սակայն բնակչության 90%-ն ապրում է տարածաշրջանի տարածքի 30%-ի վրա: Առավել խտաբնակ են տարածաշրջանի միջերկրածովյան և կասպյան ափերը, Միջագետքը, միջլեռնային գոգավորությունները: Հորդանան գետի հովտում խտությունը հասնում է 300–400 մարդ/կմ², մինչդեռ կիսաանապատային և անապատային ընդարձակ շրջանները գրեթե անմարդաբնակ են:

Տարածաշրջանում դեռևս պահպանված է քոչվորական և կիսաքոչվորական ապրելակերպը: Սաուդյան Արաբիայում, Իրանում, Եմենում և Աֆղանստանում առնվազն 10 մլն մարդ նման կյանք է վարում:

Հարավարևմտյան Ասիայում **ուրբանիզացման** մակարդակն ավելի բարձր է, քան, օրինակ, Հարավային ու Հարավարևելյան Ասիայում և, առավել ևս, Աֆրիկայում: Վերջին տասնամյակներում քաղաքային բնակչության բաժնի սրընթաց աճը պայմանավորված է արդյունաբերության, հատկապես նավթարդյունաբերության արագ զարգացմամբ: Ուրբանիզացման ամենից բարձր մակարդակ ունեն Իսրայելը և Պարսից ծոցի արաբական փոքր երկրները (80–95%), իսկ ամենացածրը՝ Աֆղանստանը (23%) և Եմենը (32%):

Տարածաշրջանին բնորոշ են հնագույն, երբեմն՝ հազարամյա պատմություն ունեցող քաղաքները: Այդպիսիք են Երուսաղեմը, Երևանը, Բեյրութը, Դամասկոսը: Դրանց կողքին կան երիտասարդ՝ անցյալ դարի կեսերին ծնունդ առած քաղաքներ (Մանամա, Դոհա), որոնք նավթարդյունաբերության զարգացման արդյունք են:

Տարածաշրջանի ամենից խոշոր քաղաքներից են Թեհրանը (12 մլն բնակիչ) և Ստամբուլը (11 մլն): Միլիոնանոց քաղաքների թիվն անցնում է երկու տասնյակից: Դրանցից մեկն էլ ՀՀ-ի մայրաքաղաք Երևանն է:

Գյուղական տարաբնակեցման ձևերը նույնպես կրում են հազարամյակների կնիքը: Գյուղերը խոշոր են՝ հարմարված տեղական բնական պայմաններին: Անապատներում տարաբնակեցումը օազիսային տիպի է:

Բացի ՀՀ-ից և ԼՂՀ-ից՝ Հարավարևմտյան Ասիայի շատ երկրներում ևս բազմահազար հայեր են ապրում: Բազմամարդ են հատկապես Վրաստանի (350 հազ.), Իրանի, Լիբանանի, Սիրիայի և Թուրքիայի հայկական համայնքները: Հայերն աչքի ընկնող դեր են խաղացել ու այժմ էլ խաղում են այդ երկրների տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում: Հայկական գաղթօջախներում գործում են եկեղեցիներ, դպրոցներ, մարզական, բարեգործական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, հրատարակվում են թերթեր, ամսագրեր: Բեյրութի արվարձան Անթիլիասում է գտնվում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, որը Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Կիպրոսի հավատացյալ հայերի հոգևոր կենտրոնն է:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի Նստավայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը (Անթիլիաս)

Տարածաշրջանը մարդկային քաղաքակրթության հնագույն բնօրրաններից է: Պաղեստինը համարվում է հուդայականության և քրիստոնեության, իսկ Սաուդյան Արաբիան՝ իսլամի հայրենիքը: Այստեղ են առաջացել ու կործանվել Հին աշխարհի պետություններից Բաբելոնը, Ասորեստանը, Արատտան: Այստեղ է բարգավաճել հելլենական, իսկ միջին դարերում՝ արաբական մշակույթը:

Հայկական լեռնաշխարհը եղել է մետաղաձուլության (բրոնզի, երկաթի) մշակույթի համաշխարհային կենտրոններից մեկը: Այստեղ և հարակից երկրներում առաջինն են անցել նստակյաց կյանքի, մշակել ցորեն, գարի, ընտելացրել շատ կենդանիներ (ոչխար, այծ, խոշոր եղջերավոր անասուններ):

Արաբների միջոցով Չինաստանից և Հնդկաստանից Եվրոպա մուտք գործեցին թուղթը, վառոդը, կողմնացույցը, թվերը: Վերջիններս հայտնի են «արաբական թվեր» անունով: Արաբների աշխարհագրական գիտությունը, բժշկությունը, մաթեմատիկան, ճարտարապետությունը, քաղաքաշինությունը ևս իրենց ազդեցությունն են թողել Եվրոպայում:

Տարածաշրջանի երկրներն ունեն հիմնականում մահմեդական (արաբական, իրանական, թուրքական), բայց և ինքնատիպ մշակույթ: Ձևավորվել են նաև քրիստոնեական (հայկական, վրացական, հունական, ասորական) և հրեական մշակույթները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հարավարևմտյան Ասիայի բնակչության բարձր աճի պատճառները:
2. Բնութագրե՛ք Հարավարևմտյան Ասիայի բնակչության ազգային և կրոնական կազմը:
3. Նկարագրե՛ք տարածաշրջանի բնակչության տեղաբաշխումը:
4. Որո՞նք են տարածաշրջանի հակամարտությունների պատճառները: Բացատրե՛ք:
5. Գնահատե՛ք հայերի և տարածաշրջանի մյուս ժողովուրդների ավանդը մարդկային քաղաքակրթության մեջ:
6. Պատրաստե՛ք փոքրիկ հաղորդում տարածաշրջանի հայության մասին:

ԴԱՍ 27. ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հարավարևմտյան Ասիայի երկրների մեծ մասի տնտեսական զարգացումը գլխավորապես հենվում է գյուղատնտեսության և սեփական հանքային ռեսուրսների վրա:

Հարավարևմտյան Ասիան աչքի է ընկնում որպես վառելիքի (նավթ, գազ), արդյունաբերական հումքի (քրոմիտ, կալիումական աղ, ֆոսֆորիտ) և գյուղատնտեսական մթերքի (արմավ, ցիտրուսներ, ձիթապտուղ, չոր մրգեր և այլն) մատակարար: Համաշխարհային ճանաչում ունեն հայկական, պարսկական և աֆղանական գորգերը, սիրիական և լիբանանյան տրիկոտաժե արտադրանքը:

Հարավարևմտյան Ասիայի պետություններն այժմ տնտեսական զարգացման տարբեր փուլերում են: Բավականին մեծ է երկրների տնտեսական զարգացման և տնտեսության կառուցվածքների տարբերությունը:



Պարսից ծոցի երկրներում տնտեսությունը մեծապես կախված է նավթի ու գազի հանույթից և վաճառքից ստացվող եկամտից: Ստացվող միլիարդավոր «նավթադոլարներն» օգտագործվում են մշակող և սպասարկող ճյուղերի զարգացման համար: Դրա շնորհիվ այդ պետությունները դարձել են բնակչության բարձր կենսամակարդակի հասած ծաղկուն երկրներ: Այդուհանդերձ՝ տարածաշրջանի բաժինը համաշխարհային ՀՆԱ-ում համեմատելի է տարածքի և բնակչության բաժիններին:

Զարգացման միանգամայն ուրույն ուղիներ ունեն Իսրայելը և Թուրքիան: Իսրայելում զարգանում են տնտեսության կարևոր բոլոր ճյուղերը՝ շնորհիվ արտասահմանյան երկրներից ստացվող մեծաքանակ գումարների և արտադրական բարձր մշակույթի: Իսրայելը դարձել է բարձր տեխնոլոգիաների կիրառման, գիտական մեծ ներդրումներով ժամանակակից ապրանքներ արտադրող զարգացած երկիր: Իսրայելը թևակոխել է զարգացման հետարդյունաբերական փուլ:

Թուրքիայի տնտեսության զարգացումը հենվում է եվրոպական զարգացած երկրների տնտեսության կազմակերպման առաջատար ձևերի և բարձր տեխնոլոգիաների ներդրման վրա: Թուրքիան «երկրորդ սերնդի» նոր արդյունաբերական երկիր է:

Վերջին տասնամյակներում Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում հանրային տնտեսական համակարգը քայքայվել է: Ներկայումս որոշ առաջընթաց նկատվում է գլխավորապես արդյունահանող ճյուղերում, որտեղ իրենց մասնակցությունն ունեն արտասահմանյան ընկերությունները: Այդ երկրներում զգալի առաջընթաց են ապրում սննդի արդյունաբերության ճյուղերը:

Հարավարևմտյան Ասիայի բոլոր երկրներում էլ տնտեսության զարգացման գլխավոր ուղին **արդյունաբերության** առաջընթացի ապահովումն է: Այդ առումով առավել մեծ հաջողություններ ունեն Իսրայելը, Թուրքիան, նավթ արդյունահանող երկրները: Ծավալով և արժեքով առաջատար դերը պատկանում է արդյունահանող

(հատկապես նավթ և գաի) արդյունաբերությանը: Տարածաշրջանը նավթի հանույթի (աշխարհի 1/3-ը) և արտահանման ծավալներով աշխարհում խոշորագույնն է: Նավթ արդյունահանվում է տարածաշրջանի բազմաթիվ երկրներում, բայց հիմնականում՝ Սաուդյան Արաբիայում, Իրանում, Իրաքում, Քուվեյթում, ԱՄԷ-ում, որոնց բաժին է ընկնում տարածաշրջանի նավթի ողջ հանույթի 90%-ը:

Նավթամշակման գործարան Իրաքում

Տարածաշրջանն աշխարհում առաջնակարգ տեղ է գրավում նաև բնական գազի հանույթով և արտահանմամբ:

Հարավարևմտյան Ասիայի էլեկտրաէներգիայի հիմնական մասը տալիս են ջեկերը: Մինչև վերջերս տարածաշրջանում գործող միակ ատոմակայանն էր: 2011 թվականից սկսել է գործել Բուշերի (Իրան) ատոմակայանը: Թուրքիայում նախատեսվում է կառուցել մի քանի ատոմակայան:

Մետաղաձուլությամբ, մեքենաշինությամբ և քիմիական արդյունաբերությամբ առանձնանում են Թուրքիան, Իրանը և Իսրայելը:

Տարածաշրջանի ավանդական, ամենալայն տարածում ունեցող ճյուղը թեթև արդյունաբերությունն է, որի ձեռնարկությունները տալիս են բամբակյա ու բրդյա գործվածքներ, գորգեր և կաշվե արտադրանք:

Տարածաշրջանի **գյուղատնտեսությունը** բազմաճյուղ է: Նրա զարգացմանը նպաստել են կլիմայական պայմանները, արոտավայրերը և սպառման ընդարձակ շուկան: Գյուղատնտեսության հիմքը ոռոգովի հողերն են:

Տարածաշրջանում դեռևս մեծ են գյուղատնտեսության վարման ձևերի տարբերությունները: Այստեղ գոյություն ունեն և՛ ապրանքային խոշոր տնտեսություններ (միջերկրածովյան և կասպյան ափերին), և՛ դեռևս էքստենսիվ փոքր տնտեսություններ (Արաբական թերակղզի, Իրանի ներքին շրջաններ):

Տարածաշրջանի գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է: Հացահատիկային հիմնական մշակաբույսերն են ցորենը, եգիպտացորենը, բրինձը, գարին, որոնց տարածման գլխավոր շրջաններն են Թուրքիան, Իրանը, Սիրիան, Իրաքը:

Անապատի տիրակալ բեդվինները իրենց «նավերով»

Տարածված ճյուղ է պտղաբուծությունը: Մշակում են նուռ, նուշ, թուզ, ձիթապտուղ, ծիրան, ցիտրուսներ: Լայն տարածում ունի խաղողագործությունը: Տարածաշրջանն աշխարհում առաջինն է փյունիկյան արմավի արտադրությամբ (Իրաք, Սաուդյան Արաբիա, Իրան):

Տարածաշրջանի ապրանքային կարևոր մշակաբույս է սուրճը (Եմեն), հատկապես

նրա «մոկկո» և «արաբիկա» տեսակները: Թուրքիան հռչակված է ծխախոտի մշակությամբ: Բամբակենու մշակության գլխավոր երկրներն են Թուրքիան, Սիրիան, Իսրայելը, Իրաքը, Իրանը:

Ոչխարաբուծությունն Աֆղանստանի անասնապահության ավանդական մասնագիտացման ճյուղ է:

Անասնապահությունն իր արտադրանքի ծավալով և նշանակությամբ զգալիորեն գիջում է բուսաբուծությանը: Գերակշռում է արոտային անասնապահությունը, որի համար հիմք են հանդիսանում անապատային ու լեռնային արոտավայրերը: Առավել լայն տարածում ունի ոչխարաբուծությունը: Թուրքիան երկարամյա անգորական այծերի բուծման գլխավոր երկիրն է աշխարհում: Անապատային շրջաններում զարգացած է ուղտաբուծությունը: Ուղտը քոչվոր արաբի՝ բեդվինի կյանքում անփոխարինելի դեր է կատարում:

Տարածաշրջանի կարևոր և արագ զարգացող ճյուղը **ավտոմոբիլային** տրանսպորտն է: Ավտոմոբիլային բարձրակարգ ճանապարհները շատ են հատկապես նավթահանքային շրջաններում:

Տարածաշրջանի **երկաթուղային** կապը Եվրոպայի հետ իրականացվում է Բոսֆորի վրայով: Տարածաշրջանի մի շարք երկրներում բացակայում են երկաթուղիներ (ԱՄԷ, Եմեն, Օման, Կիպրոս, Քուվեյթ և այլն):

Կարևոր նշանակություն ունի **ծովային** տրանսպորտը: Պարսից ծոցի նավահանգիստներից են սկսվում նավթի համաշխարհային գլխավոր բեռնահոսանքները դեպի Եվրոպա, ԱՄՆ և Ճապոնիա: Կիպրոսը աշխարհի խոշորագույն նավատորմ ունեցող երկրներից մեկն է:

Շատ մեծ է Հորմուզի, Բաբելմանդեբի, Բոսֆորի նեղուցների և Սուեզի ջրանցքի տնտեսական նշանակությունը:

Հարավարևմտյան Ասիան աշխարհում առանձնանում է **խողովակաշարային** տրանսպորտի զարգացման բարձր մակարդակով: Նավթամուղների միջոցով Պարսից ծոցի հարակից նավթահանքերից արդյունահանած նավթը արտահանման նպատակով փոխադրվում է Միջերկրական ծովի նավահանգիստներ:

Տարածաշրջանով են անցնում միջազգային օդային բազմաթիվ ուղիներ:

Հարավարևմտյան Ասիայում առկա են արտաքին **տնտեսական կապերի** բոլոր ձևերը:

Տարածաշրջանի երկրները զարգացած երկրներից ներմուծում են մեքենաներ և սարքավորումներ, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաներ: Արտահանում են նավթ, բնական գազ և այլ օգտակար հանածոներ, բուսաբուծության և անասնապահական արտադրանք, գորգեր, տնայնագործական ապրանքներ:

Զբոսաշրջությունը մեծ զարգացում է ստացել Կիպրոսում, Թուրքիայում, Լիբանանում, ԱՄԷ-ում, Սաուդյան Արաբիայում: Զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ ունեն այլ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Հարավարևմտյան Ասիայի տեղը աշխատանքի միջազգային բաժանման մեջ:
2. Ցո՛ւյց տվեք Հարավարևմտյան Ասիայի արդյունաբերության բնորոշ գծերը:
3. Գնահատեք նավթի և մյուս օգտակար հանածոների նշանակությունը տարածաշրջանի տնտեսության համար:
4. Ցո՛ւյց տվեք Հարավարևմտյան Ասիայի գյուղատնտեսության յուրահատուկ գծերը:
5. Զբոսաշրջության զարգացման ի՞նչ հնարավորություններ ունեն տարածաշրջանի երկրները:
6. Պատրաստեք սլայդ-ներկայացում «Կրոնական ուխտագնացությունը Հարավարևմտյան Ասիայում» թեմայով (Մեքքա, Երուսաղեմ, Էջմիածին):

ԴԱՍ 28. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՎՐԱՍՏԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը՝ 69,7 հազ. կմ^2
Բնակչությունը՝ 4,5 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Թբիլիսի
Պետական կարգը՝ խորհրդարանական հանրապետություն

Վրաստանը մեր հյուսիսային հարևանն է: 1991թ. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Վրաստանն անկախություն ձեռք բերեց, դարձավ ՄԱԿ-ի անդամ: Գործող սահմանադրության համաձայն՝ դաշնային պետություն է: Նրա կազմում են ինքնավար մի քանի պետական տարածքային կազմավորումներ՝ Աջարիան, Աբխազիան և Հարավային Օսեթիան: Սակայն դրանց կարգավիճակը վերջնականապես կարգավորված չէ: 2008թ. Աբխազիան և Հարավային Օսեթիան իրենց անկախ հռչակեցին և դուրս եկան Վրաստանի կազմից: Նրանց անկախությունը ճանաչեց Ռուսաստանը: Վրաստանը չի հաշտվում այդ իրողության հետ և շարունակում է լարված հարաբերության մեջ գտնվել նրանց անջատման գործընթացին նպաստած Ռուսաստանի հետ:

Սաղարթախիտ անտառներ Վրաստանում

Այդ հակամարտությունը խոչընդոտում է Վրաստանի տնտեսական առաջընթացին:

Աշխարհագրական դիրքը: Վրաստանն ունի շատ հարմար աշխարհագրական դիրք Սև ծովի արևելյան ափին գտնվելու շնորհիվ: Երկրի աշխարհագրական դիրքը նպաստավոր է նաև այն պատճառով, որ ունի տարանցիկ տրանսպորտային դիրք Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի,

ինչպես նաև Կենտրոնական Ասիայի և Սև ծովի ավազանի երկրների միջև: Այդ դիրքի շնորհիվ Վրաստանը մեծ եկամուտ է ստանում: Վրաստանի սնծովյան նավահանգիստներով են հիմնականում իրականացվում Հայաստանի տնտեսական կապերը Ռուսաստանի, Ուկրաինայի և Եվրոպայի մյուս երկրների հետ:

Բնական պայմանները և ռեսուրսները: Չնայած ոչ մեծ տարածքին՝ Վրաստանի բնական պայմանները խիստ բազմազան են: Վրաստանը գերազանցապես լեռնային երկիր է, տարածքի մոտ 80%-ը զբաղեցնում են լեռնաշղթաներն ու բարձրությունները: Հյուսիսում՝ Մեծ Կովկասի, իսկ հարավում Փոքր Կովկասի լեռներն են: Դրանք միմյանց միացած են միջօրեականի ուղղությամբ ձգվող Լիխի լեռներով: Երկրի արևմուտքում Կոլխիդայի դաշտավայրն է, արևելքում՝ Ալազանի հովիտը, հարավում՝ Ջավախքի բարձրավանդակը:

Վրաստանի խոշորագույն՝ Ինգուրի ջրէկը

Վրաստանի կլիման ծովափնյա գոտում խոնավ մերձարևադարձային է, իսկ դեպի արևելք կլիման դառնում է ցամաքային: Այդ պատճառով էլ արևմուտքում տարածված են փարթամ անտառները, իսկ արևելքում՝ բերրի հողերով ծածկված տափաստանները: Արևելքում այնքան չոր է, որ առանց ոռոգման մշակաբույսեր չեն աճում: Արևմտյան և արևելյան մարզերի միջև սահմանագիծ է Լիխի լեռնաշղթան, որն արգելակում է արևմտյան խոնավ օդային զանգվածների մուտքը արևելք:

Վրաստանի խոշոր գետերն են Կուրը (Արագվի և Ալազան վտակներով) և Ռիոնը: Գետային ցանցը խիտ է հատկապես խոնավ արևմուտքում: Վրաստանի բոլոր գետերն էլ մեծ անկման ու ջրառատության շնորհիվ ունեն ջրաէներգետիկ մեծ ներուժ: Գետերի ջրերն օգտագործվում են ոչ միայն էներգետիկ, այլև ոռոգման նպատակով:

Վրաստանում լճեր շատ կան: Դրանցից ամենախոշորը և ամենանշանավորը Ռիցան է՝ իր գեղատեսիլ բնությամբ:

Հարուստ և բազմազան է Վրաստանի բուսական աշխարհը: Վրաստանի տարածքի 40%-ը ծածկված է անտառներով: Անտառներն ունեն արդյունաբերական, հողապաշտպան և ռեկրեացիոն նշանակություն:

Ճիաթուրայի մանգանի հանքաքարի մշակման արտադրամաս

Բուսական և կենդանական աշխարհի պահպանման նպատակով երկրում ստեղծվել են մի շարք արգելոցներ, օրինակ՝ Բորժոմի և Ռիցայի:

Վրաստանի օգտակար հանածոներից գլխավորներն են մանգանը (Ճիաթուրայի հանքավայր), քարածուխը (Տղիբուլի, Տղվարչելի), պղինձը (Սառնեուլի), շինանյութերը:

Վրաստանը հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով: Բնական հակադրություններով հարուստ լանդշաֆտները, մեղմ կլիման, հանքային ու տաք ջրերը, գետերը, լճերը, քարան-

ձավները, փարթամ բուսականությունը, ինչպես նաև լեռների ու տաք ծովի հարևանությունը ստեղծել են ռեկրեացիոն ռեսուրսների հազվադեպ զուգակցություն: Այդ ամենի շնորհիվ Վրաստանը դարձել է միջազգային նշանակության զբոսաշրջության և առողջարանային շրջան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Քարտեզի օգնությամբ գնահատեք Վրաստանի աշխարհագրական դիրքը: Ո՞րն է Սև ծովի նշանակությունը Վրաստանի համար:
2. Բնութագրեք Վրաստանի վարչաքաղաքական կառուցվածքը:
3. Գնահատեք Վրաստանի տնտեսական զարգացման բնական նախադրյալները:
4. Բնական ո՞ր գործոններն են առավել նպաստում և որո՞նք են խոչընդոտում Վրաստանի տնտեսության զարգացմանը:
5. Ի՞նչ գիտեք վրաց-աբխազական, վրաց-օսական և վրաց-ռուսական հակամարտությունների մասին:

ԴԱՍ 29. ՎՐԱՍՏԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Վրացիները ձևավորվել են վրացական տարբեր ցեղերի միավորման արդյունքում:

Հայկական հին ձեռագրերում Վրաստանն անվանվել է **Վիրք**: Վրացիներն իրենց անվանում են **քարթվելներ**, իսկ իրենց հայրենիքը՝ Սաքարթվելո: Վրացերենը պատկանում է կովկասյան լեզվաընտանիքի քարթվելական լեզվախմբին:

Ներկայիս Վրաստանը բազմազգ երկիր է. այստեղ ապրում են մի քանի տասնյակ ժողովուրդներ: Բնակչության 75%-ը վրացիներ են, 8%-ը՝ հայեր, 5%-ը՝ ադրբեջանցիներ: Այստեղ ապրում են նաև հույներ, քրդեր, օսեր, աբխազներ, ռուսներ և այլք:

Հավատացյալ բնակչությունը հիմնականում դավանում է քրիստոնեություն (վրացիներ, հայեր, ռուսներ, օսեր, հույներ): Քրիստոնեությունը Վրաստան մուտք է գործել IV դարից: Երկրում մահմեդականություն դավանում են աջարները (մահմեդական վրացիները) և ադրբեջանցիները:

Վրաստանի բնակչության թիվը անկախության տարիներին նվազել է: Պատճառներն են արտագաղթը և ցածր բնական աճը (ամենացածրը տարածաշրջանում): Ցածր ծնելիության պատճառով բնակչության բնական աճը բացասական է (–0,6%):

Վրաստանի բնակչության միջին խտությունը բարձր չէ՝ 62 մարդ/կմ². Առավել խտաբնակ են հարթավայրերի, նախալեռնային հողագործության զարգացած շրջաններն ու ծովափնյա նեղ շերտը: Թույլ են բնակեցված Կոլխիդայի ճահճապատ դաշտավայրը և բարձրլեռնային գոտին:

Քաղաքներում բնակվում է բնակչության 53%-ը: Առավել մեծ և հայտնի քաղաքներն են Թբիլիսին (1,2 մլն բնակիչ), Քութայիսը, Ռուսթավը, Բաթումը:

Մայրաքաղաք Թբիլիսին հնագույն քաղաքներից է. ավելի քան 1500 տարեկան է: Նրա անվանումն առաջացել է «թբիլի»՝ «տաք» բառից, որովհետև քաղաքի շրջակայքում կան տաք աղբյուրներ: Թբիլիսիում կան հինավուրց բազմաթիվ դղյակներ ու ամրոցներ:

Թբիլիսիի համայնապատկերը

Թբիլիսին երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային խոշոր կենտրոնն է:

Ռուսթավը երիտասարդ քաղաք է, մետաղաձուլության կենտրոն: Բորժոմը, Ծղալտուբոն հանրահայտ առողջարաններ են: Խոշոր նավահանգիստ ու հանրահայտ առողջարան է Բաթումը: Նրա մերձակայքում կա բուսաբանական հարուստ և մեծ այգի:

Բազմադարյան պատմություն ունի վրացական ինքնատիպ մշակույթը: Վրացական արվեստի ազգային յուրօրինակությունը հատկապես ակնհայտ է միջին դարերի հուշարձաններում (ամրոցներ, պալատներ, կամուրջներ, տաճարներ ու եկեղեցիներ):

Հայերը, դարեր շարունակ ապրելով վրացիների հարևանությամբ, նրանց հետ կառուցել ու շենացրել են Վրաստանը, ստեղծել երկու ժողովուրդների համար առանցքային նշանակության արժեքներ՝ գրչության ու գրականության, արվեստի ու ճարտարապետության, կերպարվեստի ու երաժշտության, թատրոնի ու մշակույթի և բազմաթիվ այլ ոլորտներում: Այդ ամենն իր զարգացման գագաթնակետին է հասել XIX դարում և XX դարի առաջին քառորդում, երբ Թիֆլիսը դարձել է հայ մշակույթի ամենախոշոր կենտրոնը Կովկասում: VII դարից հայերը մեծ դեր ունեն Թբիլիսիի կառուցապատման գործում:

Հայերի թիվը Վրաստանում ներկայումս մոտ 350 հազար է: Երկրում գործում են 150-ից ավելի հայկական դպրոցներ, եկեղեցիներ, գրական, մշակութային, հասարակական, քաղաքական մի շարք կազմակերպություններ:

Տնտեսությունը: Վրաստանը **բազմաճյուղ տնտեսություն** ունեցող երկիր է: Դրա զարգացման գլխավոր նախադրյալներն են նպաստավոր ՏԱԴ-ը և բնակլիմայական բարենպաստ պայմանները, բնական ռեսուրսների բազմազանությունն ու բավարար աշխատանքային ռեսուրսները:

Երկրի նյութական արտադրության առաջատար ճյուղը արդյունաբերությունն է:

Վրաստանի արդյունաբերության կարևոր ճյուղը էներգետիկան է: Արդյունահանում են քարածուխ, որը չի բավարարում երկրի վառելիքի ամբողջ պահանջարկը, ուստի ներմուծվում են նավթ, նավթամթերք, բնական գազ:

Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը մինչև վերջերս չէր բավարարում երկրի պահանջները և ներմուծվում էր: Վերջին տարիներին կառուցվել են նոր էլեկտրակայաններ, հզորացվել են հները, ինչի շնորհիվ այժմ էլեկտրաէներգիան բավարարում է երկրի պահանջարկը:

Ճիաթուրայի մանգանի հանքաքարի, ներմուծվող երկաթաքարի և սեփական քարածխի բազայի վրա Ռուսթավում կառուցված է Հարավային Կովկասի լրիվ ցիկլի մետաղաձուլական միակ կոմբինատը: Այս ձեռնարկությունում արտադրում են նաև ազոտական պարարտանյութեր: Սառնեուլում արդյունահանում և հարստացնում են պղնձի հանքաքար:

Խորհրդային տարիներին Թբիլիսիում արտադրում էին էլեկտրաքարշներ և ինքնաթիռներ, Քութայիսում՝ տրակտորներ և բեռնատար ավտոմեքենաներ, Բաթումում և Թբիլիսիում՝ գյուղատնտեսական մեքենաներ և սննդի ու թեթև արդյունաբերության համար անհրաժեշտ մեքենաներ: Ներկայումս այդ արտադրությունները գրեթե չեն գործում:

Վրաստանի քիմիական արդյունաբերությունը ներկայացված է հանքային պարարտանյութերի, արհեստական մանրաթելերի, ներկանյութերի, դեղորայքի, կենցաղային քիմիական իրերի արտադրությամբ: Դրանց ձեռնարկությունները գտնվում են Ռուսթավում և Քութայիսում:

Արդյունաբերության ճյուղերի շարքում համախառն արտադրանքի ծավալով առաջին տեղում սննդարդյունաբերությունն է, որն աշխատում է տեղական հումքով և թողարկում է բազմատեսակ արտադրանք՝ թեյ, գինիներ, զանազան պահածոներ, հանքային ջրեր («Բորժոմ»), ծխախոտ:

Վրաստանի բնակլիմայական պայմաններն ընդհանուր առմամբ նպաստավոր նախադրյալ են բազմաճյուղ **գյուղատնտեսության** զարգացման համար: Սակայն լեռնային բարդ ռելիեֆի և բարձր անտառապատվածության պատճառով գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում է տարածքի միայն 1/3-ը, իսկ որպես վարելահողեր՝ 1/6-ը:

Նկատելի է երկրի արևմուտքի և արևելքի գյուղատնտեսական մասնագիտացման տարբերությունը: Արևմուտքի խոնավ մերձարևադարձային պայմաններում աճում են եգիպտացորեն, ցիտրուսներ, թեյ, դափնի, ծխախոտ: Արևմուտքում մեծ տարածում ունի տունգի ծառը, որի պտղից ստացած յուղն օգտագործվում է լաքերի և ներկերի արտադրության մեջ:

Արևելյան չոր մերձարևադարձային շրջաններում գլխավորապես մշակում են խաղող, ցորեն, կարտոֆիլ: Վրաստանը խաղողի մշակության հնագույն շրջաններից է: Նշանավոր է Ալազանի հովտի խաղողը, որից պատրաստում են Կախեթի հռչակավոր գինիները:

Վրաստանի անասնապահությունը թույլ է զարգացած: Այն մասնագիտացման ճյուղ է միայն լեռնային որոշ շրջաններում, որտեղ շատ են ամառային արոտները և խոտհարքները: Արևելյան շրջաններում զարգացած է ոչխարաբուծությունը, իսկ արևմուտքում՝ խոզաբուծությունը, շերամապահությունը և թռչնաբուծությունը:

Վրաստանի տնտեսության մեջ շատ կարևոր տեղ է գրավում **առողջարանային տնտեսությունը**: Դրան նպաստել են բնական բարենպաստ պայմանները (հանքային ջրեր, ծով, լեռնային անտառներ): Դրանք, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության առաջընթացը, վերջին տարիներին նպաստել են **զբոսաշրջության** կտրուկ զարգացմանը: Վրաստանի ծովափնյա գոտում ամեն տարի իրենց հանգիստն են անցկացնում տասնյակհազարավոր հայաստանցիներ:

Երկաթուղային տրանսպորտը սպասարկում է ներքին շրջանների մեծ մասը և դրանք կապում է ծովային նավահանգիստներին: Դրա դերն ավելի կմեծանա Թբիլիսի–Ախալքալաք–Կարս կառուցվող երկաթուղու շահագործումով:

Ավտոմոբիլային տրանսպորտը ևս մեծ դեր ունի ներքին և արտաքին բեռնափոխադրումների համար: Վրաստանը ավտոմոբիլային կապ ունի հարևան բոլոր երկրների հետ:

Վրաստանն ունի նաև ծովային տրանսպորտ: Հիմնական նավահանգիստներն են Բաթումը և Փոթին:

Վրաստանի տարածքով է ձգվում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի մի հատվածը:

Օդային ուղիներով Վրաստանը կապված է աշխարհի շատ երկրների հետ:

Վրաստանն արտաքին աշխարհի հետ տնտեսական սերտ կապերի մեջ է: Արտահանում է հիմնականում գինիներ, պահածոներ, թեյ, ցիտրուսներ, դափնետերև, մանգանի հանքաքար, խողովակներ, քիմիական պարարտանյութեր: Ներմուծում է հացահատիկ, նավթ և բնական գազ, մեքենաներ, սարքավորումներ և այլն:

Վրաստանի առևտրական հիմնական գործընկերներն են Հայաստանը, Թուրքիան, Գերմանիան, Իտալիան, Ադրբեջանը, Ուկրաինան, Թուրքմենստանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն է Վրաստանի բնակչության ազգային և կրոնական կազմը: Ազգային ի՞նչ խնդիրներ ունի երկիրը:
2. Նշեք Վրաստանի բնակչության վերարտադրության և տեղաբաշխման առանձնահատուկ գծերը:
3. Որո՞նք են Վրաստանի տնտեսության զարգացման գլխավոր նախադրյալները:
4. Որո՞նք են Վրաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղերն ու արտադրությունները:
5. Համեմատեք Արևելյան և Արևմտյան Վրաստանի գյուղատնտեսությունը:
6. Բնութագրեք Վրաստանի ռեկրեացիոն տնտեսությունը:
7. Ինչպիսի՞ն է Վրաստանի մասնակցությունը աշխատանքի միջազգային բաժանմանը:

ԴԱՍ 30. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱԴՐԲԵՋԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը՝ 75,2 հազ. կմ²
Բնակչությունը՝ 9,3 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Բաքու
Պետական կարգը՝ նախագահական հանրապետություն

1918թ. անկախ հռչակված պետությունը վերցրեց Հյուսիսային Իրանում գտնվող Ադրբեջան (պատմական Ատրպատական) տարածաշրջանի անվանումը:

Աշխարհագրական դիրքը: Ադրբեջանը տարածքով և բնակչության թվով Հարավային Կովկասի ամենամեծ պետությունն է:

Հարևան Վրաստանի տարածքով Ադրբեջանը ելք ունի դեպի Սև ծով: Ադրբեջանի ամենաերկար սահմանը Հայաստանի հետ է, իսկ ամենակարճը՝ Նախիջևանի հատվածում, Թուրքիայի հետ (8–9 կմ):

Անարդարացիորեն Ադրբեջանի կազմի մեջ է մտցված նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը: 1921-1991թթ. Ադրբեջանի կազմում էր նաև Լեռնային Ղարաբաղը, որի բնակչությունը, ինքնորոշվելով, 1991թ. հռչակեց իր անկախ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Ադրբեջանը և աշխարհի պետությունները դեռևս չեն ճանաչում ԼՂՀ-ի ինքնիշխանությունը և Ադրբեջանի փաստացի նոր սահմանները:

Սահմանադրության համաձայն՝ Ադրբեջանը նախագահական հանրապետություն է: Նախագահն օժտված է մեծ լիազորություններով: Օրենսդիր բարձրագույն մարմինը խորհրդարանն է՝ Միլի մեջլիսը:

Բնական պայմանները և ռեսուրսները: Ադրբեջանը լեռների ու հարթավայրերի երկիր է: Նրա հյուսիսում՝ Մեծ Կովկասի, հարավում Փոքր Կովկասի լեռներն են: Ծայր հարավ-արևելքում ձգվում են Թալիշի լեռները: Լեռների միջև՝ Կուր-Արաքսյան, իսկ Կասպից ծովի ափին Լենքորանի դաշտավայրերն:

Ադրբեջանի մեծագույն բնական հարստությունը Կասպից ծովի հատակի նավթն է:

Ադրբեջանի ընդերքը հարուստ է **օգտակար հանածոներով**, հատկապես նավթով և բնական գազով: Ցամաքից բացի (Ապշերոնյան թերակղզի)՝ դրանց շատ հարուստ պաշարներ հայտնաբերված են նաև Կասպից ծովի հատակում: Զգալի են նաև երկաթի հանքաքարի (Դաշքեսան), ալյումինի հումքի՝ ալունիտի (Գյանջայի մոտ), մոլիբդենի, քարաղի (Նախիջևան) պաշարները:

Փոքր Կովկասի հյուսիսարևելյան ստորոտներում հայտնաբերվել է բուժիչ մածուցիկ նավթի հանքավայր, որը հանդիպում է միայն Ադրբեջանում, և որի հիման վրա գործում է Նավթալան առողջավայրը: Շատ են հանքային աղբյուրները: Ադրբեջանի բնական ռեկրեացիոն ռեսուրսները որոշակի հնարավորություն են ստեղծում հանգստի ու զբոսաշրջության զարգացման համար:

Ադրբեջանը, գտնվելով մերձարևադարձային գոտու հյուսիսային մասում, աչքի է ընկնում արևոտ, չոր կլիմայով: Դա բնորոշ է հատկապես Կուր-Արաքսյան դաշտավայրին: Այստեղ տիրապետում են կիսաանապատները ու անապատները, որոնք ոռոգման շնորհիվ օգտագործվում են արժեքավոր մշակաբույսերի աճեցման համար:

Լենքորանի դաշտավայրի և Թալիշի նախալեռների կլիման խոնավ մերձարևադարձային է. մթնոլորտային տեղումների տարեկան քանակն այստեղ հասնում է մինչև 1700 մմ-ի: Այդ պայմանները նպաստավոր են թեյի և ցիտրուսների մշակության համար:

Նախալեռների ու լեռների մարգագետինները ծառայում են որպես ամառային, իսկ ցածրադիր չոր տափաստաններն ու կիսաանապատները՝ որպես ձմեռային արոտավայրեր:

Ադրբեջանով անցնող խոշոր գետերն են Կուրը և Արաքսը: Նրանց ջրերն օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու համար: Կուրը Եվլախ բնակավայրից մինչև Կասպից ծով նավարկելի է փոքր տարողության նավերի համար: Գետի վրա կառուցվել են Մինգեչաուրի խոշոր ջրամբարը և ջրէկը:

Վիթխարի է Կասպից ծովի տնտեսական նշանակությունը Ադրբեջանի համար: Կասպիական ջրերը պարունակում են միլիոնավոր տոննա տարբեր աղեր, իսկ հատակում կան նավթի և բնական գազի պաշարներ: Դրանք լուրջ տարաձայնությունների պատճառ են դարձել ավազանի երկրների միջև ծովի հատակի բաժանման հարցում, քանզի, ի տարբերություն համաշխարհային օվկիանոսի, լճերի ջրային տարածքի և հատակի ընդերքի հարստությունների օգտագործումը կարգավորող միջազգայնորեն ընդունված փաստաթղթեր դեռ մշակված չեն:

Մինգեչաուրի ջրամբարի առափնյա հատված

Կասպից ծովը հարուստ է արժեքավոր ձկնատեսակներով (սաղմոն, թառափ): Այդ լճին բաժին է ընկնում թառափի համաշխարհային որսի ավելի քան 80%-ը: Նրա տաք և ավազոտ լողափերը մեծ թվով հանգստացողների են ձգում:

Կասպից ծովը նաև էժան տրանսպորտային հաղորդակցության միջավայր է ավազանի 5 պետությունների միջև:

Բազմազան է Ադրբեջանի հողաբուսական ծածկը՝ պայմանավորված գրեթե ծովի հատակից մինչև ալպյան գոտի հասնող ուղղաձիգ գոտիականությամբ:

Ադրբեջանն աղքատ է անտառներից: Անտառածածկ են միայն Մեծ Կովկասի հարավային ու Փոքր Կովկասի հյուսիսային լեռնալանջերը, ինչպես նաև Թալիշի լեռները:

Գյուղատնտեսական արժեք են ներկայացնում Մեծ և Փոքր Կովկասի լանջերին ձևավորված լեռնային սևահողերը, դարչնագույն հողերը, ինչպես նաև խոնավ մերձարևադարձներում տարածված դեղնահողերը:

Ադրբեջանում ստեղծված են մի շարք արգելոցներ, որտեղ պահպանվում են բույսերի ու կենդանիների հազվագյուտ տեսակներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նկարագրեք և գնահատեք Ադրբեջանի աշխարհագրական դիրքը:
2. Գնահատեք Կասպից ծովի նշանակությունը Ադրբեջանի համար:
3. Գնահատեք Ադրբեջանի բնական պայմանները և ռեսուրսները՝ տնտեսության տարբեր ոլորտների տեսանկյունից:

ԴԱՍ 31. ԱԴՐԲԵՋԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Ադրբեջանի տարածքում ներկայումս բնակվող ժողովրդի ձևավորումն ընթացել է տեղաբնիկ, ինչպես նաև եկվոր թյուրքալեզու և իրանալեզու տարրերի համախմբման պայմաններում, դրանց կրոնամշակութային ընդհանրությունների հիման վրա: Մինչև 1917 թվականը սրանք հայտնի էին կովկասյան թաթարներ անունով:

Այս տարածքն անկախ է հայտարարվել 1918թ.: Նորաստեղծ պետությունը վերցրեց Հյուսիսային Իրանում գտնվող Ադրբեջան (պատմական Ատրպատական) տարածա-

շրջանի անվանումը: Դրանից հետո կոչվեցին ադրբեջանական թուրքեր, իսկ պաշտոնապես ազերիներ կամ ադրբեջանցիներ անունը ստացան 1930-ական թվականներին:

Բաքվի ծովափնյա հատված

Բնակչության թվաքանակով և բնական աճի ցուցանիշով Ադրբեջանն առաջինն է Հարավային Կովկասում:

Մինչև 1990-ական թվականները Ադրբեջանի բնակչության ազգային կազմը խայտաբղետ էր: Բնակչության 80%-ը կազմում էին ադրբեջանցիները, թվաքանակով երկրորդը հայերն էին (շուրջ կես միլիոն), այնուհետև՝ ռուսները, լեզգիները, թաթերը, թալիշները, քրդերը, հրեաները, վրացիները, ուկրաինացիները: Հայերը, թալիշները, լեզգիները, քրդերը Ադրբեջանի ներկայիս տարածքի բնիկ ժողովուրդներն են, իսկ հրեաները, ռուսները, ուկրաինացիները և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ Ադրբեջան էին ներգաղթել XIX–XX դարերում, նավթարդյունաբերության և տնտեսության այլ ոլորտներում աշխատելու նպատակով, քանի որ այդ ժամանակ ադրբեջանցիների մեծամասնությունն անգրագետ էր:

1988-1990թթ. ընթացքում Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում (Գյանջա) և մյուս քաղաքներում կազմակերպված հայերի կոտորածներին հաջորդեց հայ բնակչության բռնի տեղահանումը: Այժմ Ադրբեջանում հայեր չեն ապրում: Մինչդեռ ժամանակակից Ադրբեջանի գրեթե բոլոր շրջաններում հայերն ապրել են հնագույն ժամանակներից: Հայերն իրենց ստեղծագործ աշխատանքով մեծ ավանդ են ներդրել Ադրբեջանի տնտեսության, գիտության, կրթության, արվեստի և սպորտի բնագավառներում: Հայ արդյունաբերողները մեծ դեր են խաղացել Ապշերոնյան թերակղզու նավթի արդյունահանման և վաճառքի կազմակերպման գործում: Նրանք են կառուցել Բաքու–Բաթում առաջին նավթամուղը: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարվել բաքվեցի հայ մեծահարուստների նավերով: Հայ վաճառականները նպաստել են Բաքվի առևտրի կազմակերպմանն ու միջազգային տնտեսական կապերի զարգացմանը: Հայերի շնորհիվ ծաղկում են ապրել շերամապահությունն ու մետաքսագործությունը, այգեգործությունը, խաղողագործությունը, արհեստները:

Բաքուն եղել է Հարավային Կովկասի հայերի հասարակական-քաղաքական և մշակութային կենտրոններից մեկը: Հայ ճարտարապետներն ու շինարարները գործուն մասնակցություն են ունեցել Բաքվի կառուցապատմանը: Նրանց կառուցած բնակելի տները, հասարակական ու մշակութային շինությունները կանգուն են մինչև օրս և զարդարում են Ադրբեջանի մայրաքաղաքը:

Վերջին տասնամյակներում կտրուկ նվազել է նաև ազգային մյուս փոքրամասնությունների թիվը: Այդ ամենի արդյունքում Ադրբեջանը դարձել է միատարր երկիր: Ներկայումս բնակչության 91%-ը ադրբեջանցիներ են, 2-ական տոկոս են կազմում լեզգիներն ու ռուսները:

Ադրբեջաներենը պատկանում է ալթայան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին: Բնակչության 93%-ը դավանում է մահմեդականություն:

Բնակչության բնական աճը երկրագնդի միջին ցուցանիշից մի փոքր բարձր է՝ 1,2%:

Երկրում բնակչությունը խիստ անհավասարաչափ է բաշխված: Խտաբնակ են Ապշերոնյան թերակղզին ու Լենքորանի դաշտավայրը:

Ուրբանիզացման մակարդակով (52%) Ադրբեջանը զգալիորեն զիջում է Հայաստանին: Խոշոր քաղաքներն են Բաքուն (մոտ 2 մլն բնակիչ), Գյանջան, Սումգայիթը, Մինգեչաուրը, Նախիջևանը:

Բաքուն Հարավային Կովկասի հնագույն բնակավայրերից է: XIX դարի վերջերին նավթարդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ այն դարձել է Հարավային Կովկասի արդյունաբերության ամենախոշոր կենտրոնը: Բաքուն նաև տրանսպորտային խոշոր հանգույց է:

Տնտեսությունը: Հետխորհրդային տարիներին Ադրբեջանի **տնտեսությունը** անկում ապրեց: Արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասն անգործության մատնվեց՝ զրկվելով տնտեսական ավանդական կապերից ու երաշխավորված սպառման շուկայից: Գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը նույնպես անկում ապրեց:

Նավթի հանույթը Ապշերոնի հարակից ծանծաղուտում

Արդյունաբերությունը շարունակում է մնալ Ադրբեջանի տնտեսության առաջատար ճյուղը: Արդյունաբերության առաջատար ճյուղը նավթի հանույթն ու վերամշակումն են: Ադրբեջանը նավթի ու գազի հանույթի հնագույն շրջաններից մեկն է աշխարհում: 1913թ. Բաքուն տալիս էր Ռուսաստանի արդյունահանվող նավթի 7/10-ը: Ներկայումս նավթի տարեկան հանույթը կազմում է շուրջ 30 մլն տ: Նավթի մի մասը մշակվում է Բաքվում, մյուս մասն արտահանվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով: Բնական գազի տարեկան հանույթը դեռևս մեծ չէ, բայց նոր՝ Շահդենիզ հանքավայրում հանույթ կազմակերպելու շնորհիվ գազի մի մասը կարտահանվի Եվրոպայի երկրներ:

Ադրբեջանի նավթագազաքիմիական համալիրի վրա է հենվում էներգետիկ տնտեսությունը: Էլեկտրաէներգիայի մոտ 90%-ը տալիս են ջեկերը:

Մեքենաշինության ձեռնարկությունները հիմնականում արտադրում են նավթարդյունաբերությանն անհրաժեշտ սարքավորումներ (Բաքվում, Սումգայիթում):

Ադրբեջանի քիմիական արդյունաբերությունը ներկայացնում են առաջին հերթին նավթ և գազ վերամշակող գործարանները, որոնք կենտրոնացած են Բաքվի շուրջը: Ճյուղը թողարկում է սինթետիկ կաուչուկ, ավտոդողեր, պլաստմասսա:

Մանդի արդյունաբերության ձեռնարկություններն արտադրում են մրգերի, բանջարեղենի և ձկան պահածոներ, ձկնկիթ, գինիներ, որոնց մեծ մասն արտահանվում է: Շերամապահության հիման վրա զարգանում է մետաքսագործությունը:

Վրաստանի և Հայաստանի համեմատությամբ Ադրբեջանն ունի **գյուղատնտեսության** զարգացման ավելի նպաստավոր պայմաններ. ավելի ընդարձակ են հարթավայրային տարածքները, բարենպաստ են բնակլիմայական, հատկապես ջերմային պայմանները, Կուր և Արաքս գետերի ոռոգչական զգալի հնարավորությունները: Այդ ամենը հնարավորություն է տալիս զբաղվելու մերձարևադարձային բույսերի մշակությամբ:

Ադրբեջանում ամառային և ձմեռային ընդարձակ արոտավայրերի առկայությունը հնարավորություն է տալիս՝ անասուններին էժան կերով ապահովելու ամբողջ տարին:

Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է, որտեղ առաջատար դեր ունի բամբակագործությունը: Դրանով հիմնականում զբաղվում են Կուր-Արաքսյան դաշտավայրում և Նախիջևանի դաշտում:

Թեյի թփեր Լենքորանում

Խոնավ մերձարևադարձային կլիմայի շնորհիվ Լենքորանը մասնագիտացել է թեյի, բրնձի, ձիթապտղի և ցիտրուսների մշակության մեջ: Մեծ Կովկասի նախալեռնային շրջաններում լայն տարածում ունեն խաղողագործությունը, ծխախոտագործությունը և պտղաբուծությունը (նուռ, նուշ, թուզ, սերկևիլ:

Հացահատիկային գլխավոր մշակաբույսը աշնանացան ցորենն է: Նրա ցանքատարածությունները մեծ մասամբ Կուր-Արաքսյան դաշտավայրում են:

Ադրբեջանի **անասնապահությունը** կրում է էքստենսիվ բնույթ: Անասնապահության գլխավոր ճյուղը ոչխարաբուծությունն է, որը տարածված է ամենուրեք: Խոշոր եղջերավոր անասուններ բուծում են գլխավորապես զարգացած դաշտավարության շրջաններում:

Ապշերոնյան թերակղզում կան ձկնաբուծարաններ, որտեղ գլխավորապես բուծում են թառափ՝ սև ձկնկիթ ստանալու համար:

Երկաթուղային տրանսպորտը միմյանց է կապում երկրի բոլոր տնտեսական խոշոր կենտրոնները և սպասարկում է արտաքին կապերը: Սակայն, ՀՀ-ն և ԼՂՀ-ն շրջափակելու նպատակով, ադրբեջանական երկաթուղու որոշ հատվածներ, այդ թվում նաև Նախիջևանի հետ կապող հատվածը, երկար ժամանակ չեն գործում:

Արտաքին բեռնափոխադրումների ծավալով երկրորդը Կասպից ծովի ջրային տրանսպորտն է: Բաքուն Կասպից ծովի խոշորագույն նավահանգիստն է: Բաքվի և Կասպից ծովի արևելյան ափին գտնվող թուրքմենական Թուրքմենբաշի նավահանգստի միջև գործում է նաև լաստանավային հաղորդակցություն:

Ավտոմոբիլային տրանսպորտի դերը մեծ է ներքին բեռնափոխադրումներում ու հատկապես լեռնային շրջաններով կատարվող ուղևորա- և բեռնափոխադրումներում:

Մեծ զարգացում է ստացել խողովակաշարային տրանսպորտը:

Հետխորհրդային շրջանում զգալի փոփոխություններ են կրել Ադրբեջանի **արտաքին տնտեսական կապերը**: Խիստ նվազել են կապերը նախկին խորհրդային հանրապետությունների հետ, ընդհակառակը՝ աճել են կապերը Թուրքիայի, Իրանի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Իսրայելի հետ:

Արտահանման գերակշիռ մասը (90%) բաժին է ընկնում նավթին և նավթամթերքներին: Արտահանվում են նաև բամբակի մանրաթել, պարենամթերք ու քիմիական ապրանքներ:

Ներմուծման մեջ գերակշռում են ժամանակակից սարքավորումները, մեքենաները, պարենամթերքը և հումքը:

Ադրբեջանն անդամակցում և սերտ կապեր է պահպանում միջազգային մի շարք կազմակերպությունների հետ (Սնծովյան տնտեսական համագործակցություն, Իսլամական համաժողով և այլն):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն է Ադրբեջանի բնակչության ազգային կազմը: Ի՞նչ փոփոխություններ է այն կրել վերջին տասնամյակներում:
2. Գնահատե՛ք նավթարդյունաբերության տեղն ու դերը Ադրբեջանի տնտեսության մեջ: Ինչպիսի՞ն է նավթի տնտեսական և քաղաքական նշանակությունը Ադրբեջանի համար:
3. Որո՞նք են Ադրբեջանի արդյունաբերության առաջատար ճյուղերը: Թվարկե՛ք հիմնական արտադրատեսակները:
4. Որո՞նք են Ադրբեջանի գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը: Թվարկե՛ք դրանց հիմնական արտադրատեսակները:
5. Բնութագրե՛ք Ադրբեջանի տրանսպորտի հիմնական տեսակները:
6. Բնութագրե՛ք Ադրբեջանի արտաքին տնտեսական կապերը:

ԴԱՍ 32. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԹՈՒՐՔԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը՝ 781 հազ. կմ²
Բնակչությունը՝ 75,2 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Անկարա
Պետական կարգը՝ խորհրդարանական հանրապետություն

Աշխարհագրական դիրքը: Թուրքիան աշխարհի այն փոքրաթիվ երկրներից է, որի տարածքը միաժամանակ գտնվում է երկու աշխարհամասում՝ Եվրոպայում և Ասիայում:

Նրա տարածքի մեծ մասը (97%) գտնվում է Ասիայում, այդ պատճառով էլ Թուրքիան ընդգրկվում է Հարավարևմտյան Ասիայի կազմում: Թուրքիայի եվրոպական մասը կազմում է պատմական Արևելյան Թրակիան, որը գտնվում է Բալկանյան թերակղզու հարավարևելյան մասում:

Թուրքիայի տարածքում են Սև ծովը Միջերկրականին միացնող Բոսֆորի և Դարդանելի նեղուցները: Սև ծովի ափերը թույլ են կտրտված, խոշոր ծովածոցեր չկան: Դրան հակառակ՝ Միջերկրական և Էգեյան ծովերի խիստ կտրատված ափերը հարմար են նավահանգիստների համար: Բոսֆորի ափին է հիմնվել Ստամբուլը:

Կամուրջ Բոսֆորի նեղուցի վրայով (Ստամբուլ)

Թուրքիան «կամուրջ» է Եվրոպայի և Ասիայի միջև: Հարավային Եվրոպայի, Սև ծովի ավազանի, Իրանի և արաբական պետությունների միջև ընկած կենտրոնական դիրքը Թուրքիային հաղորդում է աշխարհա-

քաղաքական հատուկ կարևորություն և նրա վրա է բևեռում գերտերությունների ուշադրությունը: Նրանք Թուրքիան դիտում են որպես Հարավարևմտյան Ասիայում իրենց ազդեցության կարևոր հենակետ:

Ժամանակակից Թուրքիայի ներկա տարածքը քաղաքակրթության հնագույն օջախներից է: Այստեղ են ձևավորվել և հետագայում տարածվել հնդեվրոպական նախալեզուն և հնդեվրոպական ժողովուրդները: Այդ տարածքը Ք. ա. II հազարամյակից մտել է աշխարհի տարբեր պետությունների կազմի մեջ (Ասորեստան, Հռոմեական կայսրություն, Արաբական խալիֆայություն, Բյուզանդիա): Այդ տարածքի արևելյան մասում է կազմավորվել հայ ազգը, ձևավորվել հայոց պետականությունը:

1923թ. Փոքրասիական և Հայկական բարձրավանդակների և դրանց հարակից որոշ հատվածներն ընդգրկող, նախկինում հույներով և հայերով բնակեցված տարածքներում Թուրքիան հռչակվեց հանրապետություն: Մահմեդական արևելքում Թուրքիան հանրապետություն հռչակված առաջին երկիրն է:

Պետական կարգով Թուրքիան խորհրդարանական հանրապետություն է:

Բնական պայմանները և ռեսուրսները: Թուրքիան առավելապես լեռների ու սարահարթերի երկիր է: Ասիական մասի արևմուտքում տարածվում է Անատոլիական սարահարթը, իսկ արևելքում՝ Հայկական լեռնաշխարհը: Թուրքիայի, Հայաստանի և Իրանի սահմանագլխին վեր է խոյանում բիբլիական Արարատը: Թուրքիայի հյուսիսում, Սև ծովի ափերով ձգվում են Պոնտական, իսկ հարավում՝ Տավրոսի լեռները: Այդ երիտասարդ լեռներում հաճախակի են լինում երկրաշարժեր և կան գործող հրաբուխներ (Նեմրութ, Թոնդրակ):

Թուրքիայի տարածքն աչքի է ընկնում մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների կարևոր հանքավայրերով: Դրանցից մի քանիսի պաշարներով Թուրքիան կարևոր տեղ է գրավում աշխարհում: Այսպես՝ նրա ընդերքում է գտնվում բորատների[1] համաշխարհային պաշարների կեսից ավելին:

Թուրքիան նաև հարուստ է սնդիկի, ծարիրի, քրոմի, վոլֆրամի, պղնձի հանքաքարի պաշարներով: Սև մետաղների շարքում կարևոր տեղ են գրավում քրոմը (համաշխարհային պաշարների 8%-ը) և մանգանը:

Զգալի են նաև ածխի, տուֆի, պեռլիտի, ծծմբի, կերակրի աղի պաշարները:

Թուրքիան թեև գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտու սահմաններում, սակայն նրա տարբեր մասերում կլիմայական պայմանները տարբեր են: Սև ծովի ափամերձ շրջանները բնորոշվում են խոնավ մերձարևադարձային կլիմայական պայմաններով՝ առատ տեղումներով, մեղմ ձմեռներով և չափավոր շոգ ամառներով: Երկրի հարավային և արևմտյան ափերի կլիման միջերկրածովյան տիպի է և նպաստավոր է տարվա մեծ մասում մերձարևադարձային մշակաբույսերի աճեցման համար:

Հայկական լեռնաշխարհի կլիման ցամաքային է, ամառային և ձմեռային ջերմաստիճանների մեծ տատանումներով: Մթնոլորտային տեղումների քանակն աճում է ըստ տեղանքի բարձրության:

Թուրքիայի գետերը լեռնային են, արագահոս և սահանքավոր: Վերին հոսանքներում գետերն օժտված են ջրաէներգետիկ մեծ ներուժով, որի օգտագործումն այստեղ սկսվել է վերջին տասնամյակներում:

1. Բորատից պատրաստում են բորաթթու՝ մանրէասպան դեղորայք, և այլ նյութեր:

Թուրքիայի տարածքից են սկիզբ առնում տարածաշրջանի չորս խոշոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Կուրը և Արաքսը, ինչպես նաև Սև ծովի ավազանին պատկանող Ճորոխը:

Մեծ է գետերի ոռոգիչ նշանակությունը: Դրանց վրա կառուցվել են ջրամբարներ և ջրաէլեկտրակայաններ:

Թուրքիայի լճերը մեծ մասամբ փոքր են, անհոսք և աղի: Ամենախոշորը Վանա լիճն է: Անատոլիական սարահարթում է գտնվում Թուզ լիճը: Որոշ լճերում աղ է արդյունահանվում:

Խարբերդի դաշտում կառուցված Քեբանի ջրամբարը (նկարը տիեզերքից)

Կլիմայական պայմանների ներքին տարբերություններն իրենց կնիքն են դրել Թուրքիայի հողաբուսական ծածկի վրա: Բերրի սևահողերով աչքի են ընկնում Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունները՝ Մուշի, Էրզրումի, Երզնկայի, Խարբերդի դաշտերը: Անտառները հիմնականում տարածված են մերձափնյա շրջաններում: Անտառապատ է Թուրքիայի տարածքի 25%-ը:

Անատոլիական սարահարթում ձևավորվել են չոր տափաստաններ ու կիսաանապատներ, որոնք օգտագործվում են որպես արոտավայրեր:

Հայկական լեռնաշխարհում, Պոնտական և Տավրոսի լեռներում տարածվում են հյութալի խոտածածկով արոտավայրերը:

Թուրքիան աչքի է ընկնում նաև հանգստի և զբոսաշրջության բազմաթիվ ռեսուրսներով: Դրանք Միջերկրական ու Սև ծովերի ավազային ու արևոտ լողափերն են, լեռնային գեղատեսիլ լանդշաֆտները, հանքային ջրերը, պատմական և ճարտարապետական հուշարձանները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Թուրքիայի աշխարհագրական դիրքը, ցույց տվեք դրա առանձնահատկությունները:
2. Բնութագրեք Թուրքիայի պետական կարգը:
3. Բնութագրեք Թուրքիայի բնական պայմանները և ռեսուրսները, դրանց նշանակությունը տնտեսության տարբեր ոլորտների համար:

ԴԱՍ 33. ԹՈՒՐՔԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Պաշտոնական տվյալներով՝ թուրքերը կազմում են երկրի բնակչության մոտ 90%-ը: Դա ճշգրիտ ցուցանիշ չէ, քանի որ Թուրքիայի պաշտոնական վիճակագրությունը բնակչության ազգային կազմի մասին հավաստի տվյալներ չի պարունակում: Մարդահամարները որպես թուրքի են գրանցում բոլոր նրանց, ովքեր թուրքերենը համարում են մայրենի լեզու:

Թուրքերի մարդաբանական առանձնահատկությունները ձևավորվել են թուրքական քոչվոր ցեղերի և Փոքր Ասիայի տեղաբնիկների բազմադարյան միախառնման գործընթացում:

Երբ 1923թ. Թուրքիան հռչակվեց հանրապետություն, արգելվեց բազմակնությունը, մտցվեց եվրոպական հագուստ, մերժվեց արաբական այբուբենը՝ փոխարինվելով լատինականով:

Թուրքիայի երկու տասնյակ ազգային փոքրամասնություններից առանձնապես սուր են քրդերի և հայերի հիմնախնդիրները:

Թուրքերից հետո թվով երկրորդը քրդերն են (ավելի քան 10 մլն): Քրդերը հավաք տարաբնակեցմամբ ապրում են երկրի հարավ-արևելքում: Նրանք երբեք պետականություն և անկախություն չեն ունեցել, բայց ներկայումս ձգտում են պետականություն ստեղծել Թուրքիայի տարածքում, որի համար տարիներ շարունակ պայքար են մղում:

Ժամանակակից Թուրքիայի արևելյան մասն Արևմտյան Հայաստանն է, որը բազում պատերազմների հետևանքով և զանազան պայմանագրերով բռնակցվել է Թուրքիային: Թուրքիայում ապրող հայերը մեծ ավանդ են ներդրել երկրի տնտեսության և մշակույթի զարգացման գործում: Ժամանակին հայ մեծատուններին էին վստահված (հաճախ՝ ժառանգաբար) թուրքական արքունիքի պետական պաշտոնները, ոսկերչությունն ու դրամահատությունը, վառոդագործությունը, ճարտարապետությունը: Հայերի խորհրդով ու գործուն մասնակցությամբ են ստեղծվել օսմանյան համալսարանն ու դրամատունը: Թուրքիայում առաջին թատրոնի, օպերայի, նվագախմբի, լուսանկարչության, գեղարվեստական վարժարանի հիմնադիրը հայերն են եղել: Թուրքիայում հայերն են առաջինը սկսել զբաղվել շերամապահությամբ: Հայերը թուրքական տպագրության համար ստեղծել են նոր տառատեսակներ, որոնք հեղաշրջում առաջացրին թուրքական տպագրական արվեստում:

Ներկայումս Թուրքիայում, հիմնականում Ստամբուլում, ապրում է շուրջ 80 հազար հայ: Գործում են համայնքային հաստատություններ, եկեղեցիներ, վարժարաններ, մշակութային ու մարզական կազմակերպություններ, որոնք հենվում են Կ. Պոլսի հայոց պատրիարքության և նրան ենթակա հիմնարկների վրա: Կարծիք կա, որ Թուրքիայում ապրում են մինչև 1 մլն էթնիկ հայեր, որոնք կամ դավանափոխ են եղել, կամ խոսում են թուրքերեն:

Թուրքիայի կառավարությունը շարունակում է ոտնահարել ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Թուրքերը դավանում են իսլամի սունիի ուղղությունը: Հանրապետական կարգեր հաստատվելուց հետո հոգևոր իշխանությունն անջատվեց պետությունից, դպրոցը՝ հոգևոր իշխանությունից: Դա բերեց պետական կյանքում իսլամի ազդեցության թուլացմանը:

Տեսարան Ադանա քաղաքից

Թուրքիայի բնակչության բնական աճը աշխարհի բնակչության աճին է հավասար՝ 1,1%: Բնակչության բնական աճը բարձր է երկրի արևելյան՝ առավել հետամնաց և գյուղաբնակ շրջաններում:

Առավել խտաբնակ են երկրի եվրոպական մասը և ծովափնյա շրջանները (180 մարդ/կմ²): Նոսր են բնակեցված Անատոլիական սարահարթի կենտրոնական և արևելյան մասերը:

Թուրքիայի ուրբանիզացման մակարդակը 70% է: Դրա մակարդակն ու տեմպերն ավելի բարձր են երկրի արևմուտքում, դեպի ուր կենտրոնական ու արևելյան շրջաններից մշտական գաղթ է կատարվում:

Իզմիրի ծովափնյա հատված

Թուրքիայի խոշորագույն քաղաքը նախկին Կոստանդնուպոլիսը՝ Ստամբուլն է (11 մլն բնակիչ): Այն երկրի հիմնական նավահանգիստն է, առևտրական, արդյունաբերական ու մշակութային գլխավոր կենտրոնը: Քաղաքը Բոսֆորի նեղուցով բաժանված է երկու մասի. մեծ մասը ընկած է եվրոպական մասում: Այդ մասերը միմյանց են միացված երկու կամրջով և նոր կառուցված ստորջրյա թունելով:

Սյուս խոշոր քաղաքներն են մայրաքաղաք Անկարան (4 մլն բնակիչ), Իզմիրը (1,2 մլն), Ադանան (1 մլն):

Թուրքիայում զգալի չափերի է հասնում արտագաղթը: Արտագաղթում են հիմնականում Գերմանիա և Եվրամիության մյուս երկրներ:

Տնտեսությունը: Ժամանակակից Թուրքիան **տնտեսության** զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներից է: Նկատելիորեն աճել է Թուրքիայի կշիռը տարածաշրջանի տնտեսությունում: Վերջին տասնամյակներում առաջանցիկ տեմպերով զարգանում է արդյունաբերությունը, որի բաժինն ազգային եկամտում զգալիորեն գերազանցում է գյուղատնտեսությանը:

Զարգացած են արդյունաբերության և՛ ավանդական ճյուղերը, և՛ ժամանակակից բարձր տեխնոլոգիաները:

Թուրքիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Թուրքիան առանձնանում է ածխի, սև և գունավոր մետաղների հանքաքարի, քիմիական հումքի հանույթով: Դրանց բազայի վրա զարգանում են էլեկտրաէներգետիկան, սև և գունավոր մետաղաձուլությունը:

Խոշոր ջեկեր գործում են Ստամբուլում և Իզմիրում: Թուրքիայում են գտնվում տարածաշրջանի խոշոր ջրաէլեկտրակայանները (օրինակ՝ Եփրատի վրա կառուցված Քեբանի ջրէկը): Դրանց կից ջրամբարների միջոցով Թուրքիայում լուծվում են նաև ոռոգման խնդիրները (օրինակ՝ Քեբանի ջրամբարը հնարավորություն է տալիս ոռոգելու 1,6 մլն հա գյուղատնտեսական հողահանդակներ): Նախատեսվում է կառուցել ատոմակայաններ:

Սև մետաղաձուլական ձեռնարկություններն աշխատում են սեփական վառելիքի և հումքի բազայի վրա: Խոշոր կենտրոնը Իսքենդերունն է:

Գունավոր մետաղաձուլության ձեռնարկություններում արտադրում են ալյումին, պղինձ, կապար, ցինկ: Խոշոր կենտրոնը Սեյդիշեհիրն է:

Մեքենաշինությունը Թուրքիայի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է: Առաջատար ենթաճյուղերն են էլեկտրատեխնիկականը և տրանսպորտայինը:

Թուրքիայի ավանդական ճյուղերից է թեթև սննդի արդյունաբերությունը, որը մասնագիտացել է բամբակյա և բրդյա գործվածքների, կաշվե հագուստի, գորգերի, պահածոների, շաքարի, ծխախոտի արտադրության մեջ:

Թուրքիայի **գյուղատնտեսությունը** բազմաճյուղ է: Գյուղատնտեսական մթերքները բավարարում են երկրի պահանջները, իսկ մասամբ՝ նույնիսկ արտահանվում:

Գյուղատնտեսության հիմքը բուսաբուծությունն է: Երկրի տարածքի 30%-ը վարելահողեր են, որոնց զգալի մասը՝ ոռոգելի:

Թուրքիայի գլխավոր մշակաբույսերն են հացահատիկը (հատկապես ցորեն, գարի, բրինձ), տեխնիկական բույսերը (բամբակենի, ծխախոտ, շաքարի ճակնդեղ): Աշխարհում մեծ համբավ են վայելում ծխախոտի «Սամսուն» և «Տրապիզոն» տեսակները:

Թուրքիայում ընդարձակ տարածություններ են գրավում խաղողի և պտղատու այգիները: Ամենատարածված պտուղներն են թուզը, ցիտրուսները, ձիթապտուղը, ընկույզը, խնձորը: Սև ծովի ափերին մշակում են նաև թեյ:

Թուրքիայի անասնապահության մթերատվությունը բարձր չէ: Այստեղ դեռևս տիրապետող է զարգացման էքստենսիվ ուղղությունը: Անասնապահությունը հիմնված է երկրի բնական արոտավայրերի բազայի վրա:

Փոքր Ասիա թերակղզում բուծում են անգորական[1] այծեր, որոնք հայտնի են նուրբ բրդով՝ մոհայրով, որի արտադրությամբ Թուրքիան առաջինն է աշխարհում: Կարևոր նշանակություն ունի ոչխարաբուծությունը, որը տարածված է ամենուրեք: Ոչխարների և այծերի գլխաքանակով Թուրքիան աշխարհի առաջատար երկրներից է:

Լեռնային շրջաններում զարգացած է մեղվաբուծությունը:

Հարավարևմտյան Ասիայի մյուս երկրների համեմատությամբ Թուրքիան ունի **հաղորդակցության ուղիների** մեծ ցանց: Երկրի համար կարևոր դեր է կատարում երկաթուղային տրանսպորտը, որով Թուրքիան կապված է եվրոպական երկրներին: Թուրքիան երկաթուղային կապ ունի նաև Հայաստանի հետ, սակայն քաղաքական պատճառներով դեռևս չի օգտագործում:

Թուրքիայի ավտոտրանսպորտը, ներքին բեռնափոխադրումներից բացի, կատարում է մեծ ծավալի միջազգային բեռնափոխադրումներ:

Թուրքիայի խողովակաշարերը Ադրբեջանի ու Ռուսաստանի նավթը և գազը հասցնում են միջերկրածովյան ափ:

Ծովային տրանսպորտի համար մեծ է Բոսֆորի նեղուցի դերը: Խոշոր նավահանգիստներն են Ստամբուլը, Իզմիրը, Սամսունը, Իսքենդերունը: Վերջինս նաև ՆԱՏՕ-ի ռազմածովային հենակետ է:

Միջազգային մակարդակի տրանսպորտային հանգույց է Ստամբուլը:

Թուրքիան ունի զբոսաշրջության զարգացման մեծ հնարավորություններ: Զբոսաշրջությունից Թուրքիան տարեկան ստանում է մոտ 20 միլիարդ դոլար եկամուտ: Տարեկան Թուրքիա է այցելում ավելի քան 17 մլն զբոսաշրջիկ: Վերջին տարիներին ավելացել է Արևմտյան Հայաստան մեկնողների թիվը: Թուրքիայի միջերկրածովյան ափերը, հատկապես Անթալիայի շրջանը, դարձել են միջազգային զբոսաշրջության խոշոր կենտրոններից:

Թուրքիան իր արտաքին տնտեսական հարաբերություններում կողմնորոշված է հատկապես դեպի Եվրամիության անդամ երկրներ և ԱՄՆ: Վերջին տարիներին

1. Անգորա – Անկարայի անվանումն է մինչև 1923թ.:

նկատվում է տնտեսական կապերի աշխուժացում Ռուսաստանի, ԱՊՀ-ի անդամ թյուրքալեզու պետությունների և Վրաստանի հետ:

Թուրքիայի արտահանման ավանդական ապրանքներն են կաշին, կաշվե իրերը, բամբակը, բուրդը, ցիտրուսները, ձիթապտուղը, չոր մրգերը և այլն: Մեծանում է պատրաստի արդյունաբերական արտադրանքի բաժինն արտահանման մեջ:

Ներկրում է վառելիք, արդյունաբերական հումք, մեքենաներ, սարքավորում, պարեն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ինչպե՞ս է ձևավորվել թուրքական ազգը:
2. Որո՞նք են Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
3. Ինչպիսի՞ն է հայերի ավանդը Թուրքիայի տնտեսական ու մշակութային կյանքում: «Հայ սփյուռք» հանրագիտարանի օգնությամբ պատրաստեք հաղորդում այս թեմայով:
4. Նշեք Թուրքիայի արդյունաբերության գլխավոր ճյուղերը և գլխավոր կենտրոնները:
5. Բնութագրեք Թուրքիայի գյուղատնտեսությունը: Նշեք գլխավոր մշակաբույսերը:
6. Բնութագրեք Թուրքիայի տրանսպորտի դերը երկրի տնտեսության կյանքում:
7. Գնահատեք Թուրքիայի զբոսաշրջային հնարավորությունները:
8. Հիշեք՝ թուրքական ինչ ապրանքներ են վաճառվում Հայաստանում:

ԴԱՍ 34. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԻՐԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը՝ 1648 հազ. կմ^2
Բնակչությունը՝ 76,7 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Թեհրան
Պետական կարգը՝ իսլամական հանրապետություն

Իրանն աշխարհի հնագույն պետություններից է: Մինչև 1935թ. անվանվել է Պարսկաստան: Տարածքով և բնակչության թվով Հարավարևմտյան Ասիայի խոշոր երկիրն է: Իրանը նաև Հայաստանի ամենամեծ հարևանն է:

Մեծ է եղել Իրանի ազդեցությունը Հնդկաստանից և Կենտրոնական Ասիայից մինչև Միջերկրական ծովի ավազանում ապրող ժողովուրդների մշակույթների վրա:

Իրանի տարածքը ձգվում է Կասպից ծովից մինչև Պարսից ու Օմանի ծոցերը և Թուրքիայի ու Իրաքի սահմաններից մինչև Աֆղանստան ու Պակիստան: Տարածքի մեծ ձգվածության պատճառով երկրի տարբեր մասերի **աշխարհագրական դիրքի** բնութագիրը տարբեր է: Երկիրը գտնվում է Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրներից դեպի Հնդկական օվկիանոս և Հարավային Ասիայից դեպի Միջին Արևելքի երկրներ ձգվող ցամաքային ու օդային ճանապարհների խաչմերուկում: Իրանի ՏԱԴ-ի դրական կողմերից է նավթով հարուստ Պարսից ծոցի և Կասպից ծովի ավազաններում գտնվելը:

Քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունը ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային սահմանակից և արաբական աշխարհին մոտ լինելն է:

Ներկայիս Իրանն ունի **պետական կառավարման** յուրահատուկ համակարգ: Պետության ղեկավարը, հոգևոր առաջնորդից՝ այաթոլլայից հետո, երկրի նախագահն է: Այաթոլլային ենթակա է նաև երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ միապալատ խորհրդարանը՝ Իսլամական խորհրդի ժողովը (Մեջլիսը): Երկրի նախագահը գործադիր իշխանության՝ կառավարության ղեկավարն է:

Իրանն ունիտար պետություն է և վարչական առումով բաժանված է 28 օսթանի (նահանգի):

Էլբուրսի լեռները

Բնական պայմանները և ռեսուրսները: Իրանի մակերևույթն առավելապես լեռնային է, զբաղեցված է հիմնականում Իրանական բարձրավանդակով: Բարձր լեռները գրավում են երկրի տարածքի 1/3-ը: Ամենաբարձր կետը երկրի հյուսիսով ձգվող Էլբուրսի լեռների Դեմավենդ լեռնագագաթն է: Երկրի տարածքը գտնվում է Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային մարզում, ինչի պատճառով էլ այստեղ հաճախակի են երկրաշարժերը:

Էլբուրսի լեռների և Կասպից ծովի հարավային ափի միջև տարածվում է ճահճապատ Հարավկասպիական դաշտավայրը, իսկ հարավում՝ Միջագետքի դաշտավայրի մի մասը: Դաշտավայրերն Իրանի խիտ բնակեցված և մերձարևադարձային մշակաբույսերի տնկատափերով ու այգիներով զբաղեցված տարածքներն են:

Իրանի ընդերքը հարուստ է **օգտակար հանածոներով**՝ նավթով, բնական գազով, մետաղային պաշարներով, շինանյութերով:

Երկրի հյուսիսում, կենտրոնական և Պարսից ծոցին հարող շրջաններում հայտնաբերվել են նավթի և բնական գազի համաշխարհային նշանակության պաշարներ: Իրանում են գտնվում **նավթի համաշխարհային պաշարների** 9%-ը և **բնական գազի** 17%-ը:

Հսկայական են հանքային աղերի պաշարները: Հայտնաբերված են քարածխի, ինչպես նաև ուրանի, սև և գունավոր մետաղների (երկաթ, պղինձ, կապար, ցինկ, քրոմ, մոլիբդեն) պաշարներ: Մեծ են նաև շինանյութերի և հատկապես մարմարի պաշարները:

Իրանի տարածքի մեծ մասը գտնվում է մերձարևադարձային, իսկ հարավային շրջանները՝ արևադարձային կլիմայական գոտում: Այդ պատճառով Իրանի տարածքն աչքի է ընկնում ջերմային վիթխարի ռեսուրսներով: Սակայն անբավարար է խոնավությունը, ինչի հետևանքով տարածքի մեծ մասում գյուղատնտեսության զարգացումն առանց արհեստական ոռոգման անհնար է:

Տեղումների քանակը մեծ է Հարավկասպիական դաշտավայրում և լեռների հողմակողմ լանջերին:

Նոսր է երկրի գետային ցանցը, իսկ անապատներում այն իսպառ բացակայում է: Շատ տեղերում նշանակալի են ստորերկրյա ջրերի պաշարները:

Իրանի ամենախոշոր և միակ նավարկելի գետը Կարունն է՝ Շատ էլ Արաբի ձախափնյա վտակը: Արաքս և Ատրեկ գետերը սահմանային են, ուստի դրանց ջուրը սահմանափակ օգտագործում ունի:

Իրանում լճեր շատ կան, սակայն դրանք մեծ մասամբ փոքր են, ծանծաղաջուր և աղի: Ամենախոշորը Ուրմիա լիճն է: Այն իսկական «մեռյալ ծով» է. բարձր աղիության պատճառով այստեղ օրգանական աշխարհը բացակայում է: Լճի հատակին կան բուժիչ ցեխերի մեծ պաշարներ:

Ջրի հիմնախնդիրն Իրանում, ինչպես ողջ տարածաշրջանում, շատ սուր է:

Իրանում գերակշռում են չոր տափաստանները, կիսաանապատային ու անապատային լանդշաֆտները: Ամենաընդարձակները Դեշտե-Քեվիր և Դեշտե-Լութ անապատներն են: Այնտեղ, ուր ստորերկրյա ջրերը մոտ են Երկրի մակերևույթին, ձևավորվում են խիտ բնակեցված կանաչ օազիսներ:

Իրանում արգավանդ հողերը քիչ են:

Անտառներով զբաղեցված է երկրի տարածքի սոսկ 11%-ը: Դրանք աճում են Էլբուրսի, Զագրոսի լեռնալանջերին, Հարավկասպիական դաշտավայրում:

Տնտեսական մեծ արժեք են ներկայացնում Կասպից ծովի թառափ ձկնատեսակը և Պարսից ծոցի կորալն ու մարգարիտը:

Իրանի համար կարևոր նշանակություն ունեն հանգստի և զբոսաշրջության ռեսուրսները, որոնցով առանձնանում են առափնյա գոտին և լեռնային շրջանները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Իրանի աշխարհագրական դիրքը: Ցո՛ւյց տվեք դրա ուժեղ և թույլ կողմերը:
2. Ներկայացրեք Իրանի պետական կարգը, ցո՛ւյց տվեք դրա առանձնահատուկ գծերը:
3. Գնահատեք Իրանի բնակլիմայական պայմանները՝ տնտեսության տարբեր ոլորտների տեսանկյունից:
4. Նշեք Իրանի՝ համաշխարհային նշանակության օգտակար հանածոները:
5. Ցո՛ւյց տվեք Իրանի կլիմայի ազդեցությունը երկրի բնական ու տնտեսական պայմանների վրա:

ԴԱՍ 35. ԻՐԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Իրանը **քաղաքակրթության** հնագույն կենտրոններից է, որտեղ մարդը բնակվել է անհիշելի ժամանակներից: Հարավարևմտյան Ասիայի ամենաբազմազգ պետությունն է: Այստեղ ապրում են ավելի քան 40 ժողովուրդներ, որոնց մեծ մասի լեզուները պատկանում են իրանական լեզվախմբին (պարսիկներ, քրդեր, բելուջներ, տաջիկներ, աֆղաններ), իսկ մնացյալը՝ թյուրքական լեզվախմբին (ադրբեջանցիներ, թուրքմեններ):

Բնակչության մեծ մասը (51%) պարսիկներ են: Մյուս խոշոր ազգություններից են ադրբեջանցիները, քրդերը, թուրքմենները, արաբները, հայերը (շուրջ 150 հազար), ասորիները, հրեաները:

Պարսկաստանում հայերի ներկայության մասին առաջին հավաստի վկայությունները վերաբերում են Ք. ա. VII–VI դարերին: Իրանահայերը հարյուրամյակներ ի վեր իրենց շո-

շափելի ավանդն են ունեցել երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման գործում: Իրանահայության շրջանում զարգացած է եղել արհեստագործությունը:

Հայ վաճառականները նշանակալի դեր են խաղացել Իրանի տարածքով իրականացվող տարանցիկ առևտրում: Նորջուղայեցի հայ վաճառականների գործունեությունն առնչվել է նաև քաղաքական-դիվանագիտական ոլորտին: Նրանցից շատերը հանդես են եկել որպես իրանական կառավարության ներկայացուցիչներ եվրոպական երկրներում: Դրա շնորհիվ նրանք ծանրակշիռ ավանդ են ներդրել հայ և պարսիկ ժողովուրդներին եվրոպական մշակույթին ծանոթացնելու գործում:

Իրանահայերը հիմնականում բնակվում են Թեհրան, Սպահան և Թավրիզ քաղաքներում:

Բնակչության ճնշող մեծամասնությունը (90%) դավանում է իսլամի շիա ուղղությունը: Մահմեդական հոգևորականության իշխանությունը խիստ ուժեղացավ 1979թ. իսլամական հեղափոխությունից հետո:

Երկրում կան նաև սուննի մահմեդականություն, քրիստոնեություն, հուդայականություն և այլ կրոն դավանող ժողովուրդներ:

Իրանի միասնական լեզուն IX դարում ձևավորված նոր պարսկերենն է՝ ֆարսին: Պարսկերենի գրությունը հիմնված է արաբական այբուբենի վրա:

Մինչև վերջին տասնամյակները Իրանը ոչ միայն տարածաշրջանի, այլև աշխարհի բնական բարձր աճ ունեցող երկրներից էր: Վերջին հիսուն տարիներին բնակչության տարեկան միջին աճը 3%-ից նվազել է և ներկայումս կազմում է մոտ 1%:

Իրանը միաժամանակ և՛ արտագաղթի, և՛ ներգաղթի երկիր է, ընդ որում՝ ներգաղթը գերակշռում է արտագաղթին: Մեծ է աշխատելու նպատակով նավթարդյունաբերության շրջաններ եկող՝ Հնդկաստանի, Բանգլադեշի, Շրի Լանկայի քաղաքացիների թիվը:

Իրանն ապահովված է աշխատանքային ռեսուրսների մեծ ներուժով: Իրանն աշխարհի այն սակավաթիվ երկրներից է, որտեղ բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ (52%): Երկրի հասարակական կյանքում աստիճանաբար աճում է կանանց մասնակցությունը, թեև մինչև հիմա նրանք ծածկոց (չադրա) են կրում:

Բնակչությունն անհավասարաչափ է տեղաբաշխված: Առավել խիտ են բնակեցված երկրի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանները՝ Կասպից ծովի ափամերձ գոտին: Հակառակ դրան՝ անապատային որոշ տեղամասեր նույնիսկ անմարդաբնակ են: Իրանում դեռևս պահպանվել է քոչվորական ապրելակերպը: Երկրում մոտ 2 միլիոն մարդ կիսաքոչվորական և քոչվորական կյանք է վարում:

Վերջին տասնամյակներում արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ էապես բարձրացել է քաղաքաբնակների բաժինը՝ 71%:

Քաղաքներին բնորոշ է հին, անկանոն, նեղ փողոցներով և նոր, ուղիղ փողոցներով, ժամանակակից տիպի շենքերով կառուցապատված թաղամասերի զուգակցումը:

Իրանի խոշոր քաղաքներն են Թեհրանը (ավելի քան 12 մլն բնակիչ), Սպահանը, Մաշհադը, Թավրիզը, Շիրազը: Խոշոր քաղաքների մեծ մասն ունի հազարամյակների պատմություն և հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով:

Իրանական ժողովուրդն իր հազարամյակների պատմության ընթացքում մեծ ավանդ է թողել համաշխարհային մշակույթի բնագավառում: Համաշխարհային պո-

գիայում իրենց խոր հետքն են թողել Նիզամու, Օմար Խայամի ստեղծագործությունները, Ֆիրդուսու հռչակավոր պոեմները:

Տնտեսությունը: Իրանը զարգացման միջին մակարդակ, բայց տնտեսական առաջընթացի բարձր տեմպեր ունեցող երկիր է: Իրանի տնտեսությանը բնորոշ է հին ու նոր ճյուղերի զուգորդումը, ընդ որում՝ ավելի մեծ է նորագույն ճյուղերի առաջընթացը:

Տնտեսության առաջատար ճյուղը **արդյունաբերությունն է**, իսկ արդյունաբերության կազմում՝ նավթի ու գազի արդյունահանումը և դրանց հետ կապված ճյուղերը: Նավթի տարեկան հանույթը հասնում է 230 մլն տ (4-րդն աշխարհում): Նավթի հանույթի ծավալը երբեմն տատանվում է՝ կախված համաշխարհային շուկայի իրավիճակից:

Բուշերի ատոմակայան

Իրանում նավթն արդյունահանվում է գլխավորապես շատրվանային եղանակով, ինչի շնորհիվ արդյունահանման ծախսերն անհամեմատ փոքր են, նավթի ինքնարժեքը՝ ցածր: Արդյունահանված նավթի մեծ մասը (60%-ից ավելին) արտահանվում է, մնացյալը վերամշակվում է երկրի ներսում՝ Աբադանում, Թեհրանում, Թավրիզում, Ահվազում: Իրանը նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՆԱԵԿ) անդամ է:

Բնական գազի հանույթի չափերով Իրանը առաջատար երկրներից մեկն է աշխարհում:

Երկրի էլեկտրաէներգիայի մեծ մասը տալիս են ջեկերը: Խոշոր ջեկերը կառուցված են խոշոր քաղաքների (Թեհրան, Սպահան և այլն) մոտ:

Իրանում մեծ աշխատանք է տարվում ատոմային էներգետիկայի զարգացման ուղղությամբ: Վերջերս սկսել է գործել Բուշերի ատոմակայանը:

Իրանի մեքենաշինությունը երիտասարդ, բայց արագ զարգացող ճյուղ է: Այն թողարկում է ավտոմեքենաներ, տրակտորներ, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային մեքենաներ: Գլխավոր կենտրոններն են Թեհրանը, Թավրիզը և Սպահանը:

Արագ զարգանում է քիմիական արդյունաբերությունը, որը հենվում է նավթի և բնական գազի վրա: Այն թողարկում է պարարտանյութեր, պլաստմասսաներ, ներկեր, լաքեր, լվացող նյութեր:

Թեթև արդյունաբերության հնագույն, ամենատարածված ու եկամտաբեր ճյուղը գորգագործությունն է: Իրանական ձեռագործ գորգերը մեծ պահանջարկ ունեն միջազգային շուկայում: Գորգագործությունը զարգացած է ամենուրեք, առավել խոշոր կենտրոններն են Թավրիզը, Սպահանը, Քերմանը: Հնագույն ժամանակներից ի վեր Իրանը հայտնի է արծաթի, փիրուզի, փայտի գեղարվեստական արտադրանքով:

Իրանում մեծ աշխատանքներ են տարվում **գյուղատնտեսության** զարգացման ուղղությամբ. ընդարձակվում է մեքենայացման ոլորտը, ավելի ու ավելի շատ պարարտանյութեր են օգտագործվում, կառուցվում են ջրամբարներ և ոռոգիչ նոր ջրանցքներ:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը **բուսաբուծությունն** է: Ցանքատարածությունների 3/4-ը բաժին է ընկնում հացահատիկներին՝ ցորենին, գարուն և բրնձին: Ցորեն և գարի մշակում են ամենուրեք, իսկ բրինձ՝ գերազանցապես Մերձկասպյան դաշտավայրում:

Տեխնիկական մշակաբույսերից մշակում են բամբակենի, շաքարի ճակնդեղ, շաքարեղեգ, թեյ, ծխախոտ:

Իրանը այգեգործության երկիր է: Մեծ չափով աճեցնում են խաղող, ծիրան, նուռ, նուշ, ցիտրուսներ: Այս մշակաբույսերի աշխարհագրությունն ընդարձակ է՝ Կասպից ծովի առափնյա շրջաններից մինչև Պարսից ծոց: Պարսից ծոցի ափերին ձգվում են փյունիկյան արմավենու տնկատափերը: Իրանը համաշխարհային շուկա փյունիկյան արմավ (խուրմա) մատակարարող խոշոր երկրներից է:

Իրանի ընդարձակ արոտավայրերի հիման վրա զարգացած են մսաբրդատու և կարակուլ ցեղերի ոչխարաբուծությունը, անգորական այծաբուծությունը: Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակով Իրանն աշխարհի չորրորդ պետությունն է: Կասպից ծովում զարգացած է ձկնորսությունը, Պարսից ծոցում՝ մարգարտաորսությունը:

Ամբողջությամբ վերցրած՝ Իրանում անասնապահությունը դեռևս շարունակում է զարգանալ էքստենսիվ ուղղությամբ, պահպանվում է քոչվորական անասնապահությունը:

Իրանի աշխարհագրական դիրքը մեծ հնարավորություն է տալիս երկաթուղային և ավտոմոբիլային կայուն կապ հաստատելու եվրոպական և ասիական երկրների հետ: Սակայն Իրաքի և Աֆղանստանի քաղաքական անկայուն վիճակը, հայ-ադրբեջանական հակամարտությունը սահմանափակում են այդ հնարավորությունները:

Իրանի ժամանակակից **տրանսպորտի** հիմնական տեսակը ավտոմոբիլայինն է:

Երկրի տրանսպորտային ամենամեծ հանգույցը Թեհրանն է, որտեղ հատվում են երկաթուղային, ավտոմոբիլային և օդային կարևոր ուղիները:

Արաքս գետի կամուրջը գործարկելուց հետո մեծացել է ավտոմոբիլային կապը Իրանի և Հայաստանի միջև:

Արագորեն զարգանում է խողովակաշարային տրանսպորտը: Իրանն ունի զարգացած խողովակաշարային տրանսպորտ՝ նավթամուղներ և գազամուղներ: Գազամուղով իրանական գազը մուտք է գործում Հայաստան:

Արտաքին բեռնափոխադրումների համար մեծ դեր ունի ծովային տրանսպորտը: Ծովային նավահանգիստներից կարևոր են Բենդեր-Աբբասը, Աբադանը Պարսից ծոցում և Էնզելին Կասպից ծովում:

Իրանի **արտահանման** հիմնական ապրանքներն են նավթը (արտահանման ծավալի մեծ մասը), բնական գազը, նավթաքիմիական արտադրանքը, գորգերը, չոր մրգերը, բամբակը, ծովամթերքը:

Ներմուծման մեջ կարևոր տեղ են գրավում մեքենաները, սարքավորումները, պարենը:

Շատ լավ նախադրյալներ կան ներկայումս աշխուժորեն զարգացող հայ-իրանական առևտրատնտեսական, մշակութային և գիտակրթական կապերի հետագա ամրապնդման և ընդլայնման համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք Իրանի ազգային և կրոնական կազմը:
2. Ցույց տվեք Իրանի բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունները: Նշեք խոշոր քաղաքները:
3. Բնակչության բնական շարժի ցուցանիշների ինչ միտումներ ունի Իրանը: Որոնք են դրանց պատճառները:
4. Գնահատեք նավթի դերը Իրանի տնտեսության մեջ:
5. Ցույց տվեք Իրանի բնական պայմանների ու գյուղատնտեսության մասնագիտացման կապը:
6. Ձեր կարծիքով՝ ինչ ուղղություններով կարող են զարգանալ հայ-իրանական հարաբերությունները:

ԴԱՍ 36. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Մի կողմից՝ Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ Հարավային, Հարավարևմտյան և Արևելյան Ասիայի տարածաշրջանների միջև ընդարձակ (4 մլն կմ²) տարածքով տարածաշրջանը մեր օրերում անվանվում է Կենտրոնական Ասիա:

Սակայն այս տարածաշրջանի առանձնացման և անվանումների հարցում կան տարակարծություններ՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով:

Կենտրոնական Ասիա անվանումը եղել է նաև նախկինում, բայց դա ոչ թե հասարակական-աշխարհագրական, այլ՝ ֆիզիկաաշխարհագրական տարածաշրջան էր, որն ընդգրկում էր բոլորովին այլ տարածք (Մոնղոլիան և Չինաստանի արևմտյան՝ լեռնային մասը):

Թյուրքական[1] ժողովուրդներով բնակեցվածությունը նկատի ունենալով՝ Կենտրոնական Ասիա տարածաշրջանը XIX դարում և XX դարի սկզբին անվանել են **Թուրքեստան**: 1924թ. օգտագործումից հանվեց «Թուրքեստան» անվանումը, փոխարենը շրջանառության մեջ դրվեց «Ղազախստան և Միջին Ասիա» անվանումը, որը ենթադրում էր ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտած Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի հանրապետությունները: Սակայն ներկայումս այդ հանրապետությունները գերադասում են իրենց տարածաշրջանն անվանել Կենտրոնական Ասիա:

Կենտրոնական Ասիան Կասպից ծովի և Չինաստանի, Ռուսաստանի և Իրանի ու Աֆղանստանի պետական սահմանների միջև ձգված տարածաշրջանն է:

Կենտրոնական Ասիայի կազմի մեջ մտնող երկրներից ամենախոշորը՝ Ղազախստանը, տարածքի մեծությամբ (2,7 մլն կմ²) նույնիսկ մտնում է աշխարհի «հսկա» երկրների տասնյակի մեջ, իսկ ամենափոքրը՝ Տաջիկստանը, տարածքով Հայաստանի Հանրապետությունից մեծ է գրեթե 5 անգամ: Տարածաշրջանի բոլոր երկրները մտնում են ԱՊՀ-ի կազմի մեջ:

Բնական պայմանները և ռեսուրսները: Կենտրոնական Ասիայի մակերևույթը բազմազան է. արևմտյան և հյուսիսային մասերում հարթավայրային է, իսկ հարա-

1. Թուրքալեզու, թուրքախոս:

վային մասում՝ լեռնային: Արևմուտքում տարածված է Թուրանի դաշտավայրը: Հյուսիսային մասում Ղազախական մանրաբլուրներն են: Կենտրոնական Ասիայի հարավում Պամիրի ու Տյանշանի բարձր լեռներն են, որտեղ երբեմն լինում են ավերիչ երկրաշարժեր (Աշխաբադի մոտ՝ 1948թ., Տաշքենդի մոտ՝ 1966թ.):

Ածխի արդյունահանումը Քարաղանդիի ավազանում

Կենտրոնական Ասիան հարուստ է բազմատեսակ **հանքային ռեսուրսներով**: Ղազախական մանրաբլուրներում առկա են **քարածխի** մեծ պաշարներ (Քարաղանդիի (նախկինում՝ Կարագանդա) ավազան): Կասպից ծովի մոտակայքում՝ Ղազախստանում ու Թուրքմենստանում, ինչպես նաև Ֆերգանայի հովտում կան **նավթի** և **բնական գազի** մեծ պաշարներ: Տարածաշրջանում կան նաև **երկաթի, մանգանի, պղնձի, ցինկի, կապարի, ոսկու** հանքաքարի մեծ պաշարներ: Մասնավորաբար՝ միայն Ուզբեկստանում գտնվում է աշխարհի ոսկու հանքաքարի պաշարների 1/10-ը: Ոսկու պաշարների մեծությամբ Ուզբեկստանն աշխարհի երկրների մեջ 4-րդն է: Պղնձի, կապարի և ցինկի պաշարներով բացառիկ հարուստ է Ղազախստանը: Զգալի են նաև քիմիական հումք ծառայող նյութերի, հատկապես Կասպից ծովի ջրում պարունակվող **գլաուբերյան աղի** (միրաբիլիտի), Թուրքմենստանի **ծծմբի** և Ղազախստանի **ֆոսֆորիտի** պաշարները:

Կենտրոնական Ասիայի **կլիման** բազմազան է: Օվկիանոսներից հեռու գտնվելու և լեռներով շրջապատված լինելու հետևանքով կլիման հարթավայրերում չորային է, ինչի պատճառով առաջացել են անապատներ և կիսաանապատներ: Տեղումների տարեկան համեմատաբար մեծ քանակություն լինում է լեռներում, որոնց բարձրադիր լեռնահովիտներում առաջացել են սառցադաշտեր: Դրանց հալոցքից սնվող Ամուդարյա և Սիրդարյա գետերի հովիտներում ձևավորվել է Կենտրոնական Ասիայի ոռոգվող հողագործության խոշորագույն շրջանը: Այդ գետերի ջրով ոռոգվում են նույնիսկ հեռավոր տարածքների հողերը: Օրինակ՝ Ամուդարյա գետից սկիզբ է առնում 1000 կմ երկարությամբ Կարակումի ջրանցքը, իսկ Իրտիշ գետից՝ Իրտիշ-Քարաղանդիի ջրանցքը: Վերին հոսանքներում (լեռներում) Ամուդարյան և Սիրդարյան օժտված են մեծ էներգառեսուրսով:

Կենտրոնական Ասիայի մի շարք լճերի ջուրն աղի է և պիտանի չէ ոռոգման համար: Դրանցից են Արալյան ծովը և Բալխաշը: Մարդու չկշռադատված տնտեսական գործունեության հետևանքով Արալյան լճում և շրջապատում ստեղծվել է աշխարհում էկոլոգիական թերևս առավել աղետալի իրավիճակը: Բամբակենու դաշտերը ոռոգելու նպատակով գետերից չափազանց մեծ քանակությամբ ջուր վերցնելու հետևանքով խիստ նվազել է Արալյան ծով լցվող ջրի բնական քանակությունը, և այդ պատճառով լճի մակերեսը նվազել է երկու անգամ: Նվազել են նաև լճի ձկնային ռեսուրսները:

Կենտրոնական Ասիայի բնական մեծ հարստությունն են **հողերը**: Տարածաշրջանի հարավում անապատային և կիսաանապատային հողերը ոռոգման պայմաններում պիտանի են հողագործության համար: Լավագույն՝ բերրի սևահողեր կան Ղա-

զախստանի հյուսիսում, որոնք մինչև 1954թ. երբևիցե չէին մշակվել, քանի որ տարածքը նոսր էր բնակեցված, իսկ բնակիչների միակ զբաղմունքը քոչվորական անասնապահությունն էր: 1954թ. հետո Ղազախստանում յուրացվեց շուրջ 25 մլն հա այսպես կոչված խամ ու խոպան հող (դա ավելի քան 8 անգամ մեծ է ՀՀ-ի ամբողջ տարածքից):

Կենտրոնական Ասիայի հարթավայրերի կիսաանապատային ու չոր տափաստանային բուսականությունը և լեռնային արոտավայրերը ոչխարաբուծության զարգացմանը նպաստող նախադրյալներ են:

Կենտրոնական Ասիայի, մասնավորապես Ղազախստանի կարևոր ռեսուրսն է տարածքը: Ղազախստանի գրեթե անմարդաբնակ տարածքները հարմար են տիեզերանավերի արձակման կայանների կառուցման համար: Այդպիսի կայան կա Բայքոնգիրում (նախկինում՝ Բայկոնուր): Այժմ այդ կայանը վարձակալվում է Ռուսաստանի կողմից: Ղազախստանի չափազանց նոսր բնակեցված Սեմեյի (նախկինում՝ Սեմիպալատինսկ) տարածաշրջանում իրականացվել են միջուկային զենքի փորձարկումներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տվեք Կենտրոնական Ասիա տարածաշրջանի սահմանումը՝ ֆիզիկաաշխարհագրական, քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական առումներով:
2. Ինչպիսի՞ն են տարածաշրջանի բնական պայմանները՝ որպես տնտեսական զարգացման նախադրյալ:
3. Որո՞նք են Կենտրոնական Ասիայի գլխավոր բնական ռեսուրսները:
4. Որո՞նք են հիմնական հանքային ռեսուրսները և դրանց տարածման շրջանները:

Կենտրոնական Ասիա

ԴԱՍ 37. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Կենտրոնական Ասիայում բնակվում է 65 մլն մարդ: Բնակչությունը բազմազգ է:

Կենտրոնական Ասիայի հյուսիսային տափաստաններում բնակվող քոչվոր ժողովուրդները, ինչպես նաև հարավի պարսկալեզու նստակյաց ժողովուրդները միջին դարերում ձուլվել են եկվոր մոնղոլների ու թուրք-սելջուկների հետ և ընդունել են իսլամ:

Կենտրոնական Ասիայի ղրղզները ձուլվել են արևելքից եկած ենիսեյան ղրղզների հետ: Ոսկե հորդայի տարածքից Սամարղանդ և Ֆերգանա ներգաղթած Ուզբեկ խանի (1312–1341թթ.) հետնորդները, պարսկալեզու ժողովուրդների հետ ձուլվելով, իրենց անվանել են «ուզբեկներ»: Տաջիկները հավատարիմ են մնացել պարսկերեն լեզվին և մշակույթին: Այսպիսով՝ տաջիկերենը պատկանում է իրանական լեզվախմբին, իսկ մյուս ժողովուրդների լեզուները՝ թյուրքական լեզվախմբին: Կենտրոնական Ասիայում բնակվում են նաև աշխատելու նպատակով եկած սլավոնական ու ԽՍՀՄ-ի այլ տարածքներից Ղազախստան աքսորված ժողովուրդների ներկայացուցիչներ՝ գերմանացիներ, Ղրիմի թաթարներ և այլք: Մեծաթիվ ժողովուրդներն են ուզբեկներն ու ղազախները:

Քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչներն առավելապես բնակվում են Ղազախստանի հյուսիսում, ինչը կապված է խոպան հողերի յուրացման հետ, ինչպես նաև՝ հանքարդյունաբերության և մետաղաձուլության շրջաններում: Բնակչության բնական աճը համեմատաբար բարձր է Տաջիկստանում, Ուզբեկստանում և Թուրքմենստանում, որտեղ գերակշռողը մահմեդական բնակչությունն է, և ցածր է կենսամակարդակը:

Ղազախստանի բնակչության ցածր բնական աճը պայմանավորված է նաև ռուսների ու ոչ մահմեդական կրոններ դավանող այլ ժողովուրդների համեմատաբար մեծ բաժնով, որոնց բնորոշ են ծնելիության ցածր ցուցանիշներ:

Անկախության տարիներին ղազախների համեմատաբար բարձր բնական աճի, ինչպես նաև ռուսների և այլ ազգերի արտագաղթի հետևանքով Ղազախստանի բնակչության մեջ ղազախների բաժինը 40%-ից հասել է 56%-ի, իսկ ռուսների բաժինը 41%-ից նվազել է 28%-ի:

Կենտրոնական Ասիայի բնակչության միջին խտությունը 16 մարդ/կմ² է, այսինքն՝ երեք անգամ ցածր, քան միջին հաշվով ամբողջ աշխարհում: Այն շատ ցածր է Ղազախստանում (6 մարդ/կմ²): Բնակչության խտությունը համեմատաբար բարձր է Ուզբեկստանում՝ 62 մարդ/կմ², և Տաջիկստանում՝ 50 մարդ/կմ²: Եվ քանի որ այդ երկրներում վարելահողերի բաժինը շատ փոքր է (5–8%), ուստի բնակչության խտությունը՝ 1 կմ² վարելահողի հաշվով, բացառիկ մեծ է հատկապես Ֆերգանայի հովտում: Հովտի մեծ մասը պատկանում է Ուզբեկստանին, իսկ մնացյալ մասը՝ Տաջիկստանին և Ղրղզստանին:

Ուրբանիզացման մակարդակը համեմատաբար բարձր է Ղազախստանում (59%) և Թուրքմենստանում (50%), իսկ ցածր է առավելապես գյուղատնտեսական զարգացում ունեցող մյուս երեք հանրապետություններում (25%–35%):

Այդուհանդերձ՝ կան միջին մեծության և նույնիսկ խոշոր քաղաքներ: Խոշորագույն քաղաքն է Տոշքենդը (Տաշքենդ)՝ Ուզբեկստանի մայրաքաղաքը, որն ունի ավելի քան 2 մլն բնակիչ: Այն Ուզբեկստանի խոշորագույն արդյունաբերական, տրանսպորտային, ֆինանսական կենտրոնն է: Երկրորդ խոշոր քաղաքը Ալմաթին է՝ 1,4 մլն բնակչությամբ: Նախկինում այս քաղաքն անվանվում էր Ալմա Աթա, որը բառացիորեն նշանակում է «խնձորի հայր»: Մինչև 1997թ. Ալմա Աթան Ղազախստանի մայրաքաղաքն էր: Երկրի հյուսիսային՝ գյուղատնտեսական շրջանների զարգացումն ակտիվացնելու նպատակով մայրաքաղաքը տեղափոխվեց Ակմոլի, որը հետագայում վերանվանվեց Աստանա (ղազախերեն նշանակում է «մայրաքաղաք»): Աստանան արագորեն կառուցապատվեց արդիական շինություններով: Այժմ ունի ավելի քան 700 հազ. բնակիչ:

Աստանան իր ճարտարապետությամբ ժամանակակից քաղաք է:

Համեմատաբար խոշոր քաղաքներ են Թուրքմենստանի մայրաքաղաք Աշգաբադը (Աշխաբադ) (990 հազ. բնակիչ), Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկը (866 հազ. բնակիչ) և Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեն (մոտ 700 հազ. բնակիչ):

Տնտեսությունը: Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսությունը ԽՍՀՄ-ի կազմում ներառված տարիներին զգալի զարգացում ունեցավ և ձեռք բերեց բազմաճյուղ բնույթ:

Անկախություն ձեռք բերելուց հետո Կենտրոնասիական տարածաշրջանի երկրների մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կտրուկ նվազեց, իսկ արդյունահանող արդյունաբերության ծավալը նույնիսկ անցավ նախկին մակարդակից: Ղազախստանում շահագործվեցին Թենգիզ ու Կաշագան նավթային և Կարաչագանակ գազային խոշոր հանքավայրերը: Կենտրոնական Ասիան ներկայումս աշխարհի նավթի և բնական գազի արդյունահանման նշանավոր շրջան է: Այժմ տարեկան արդյունահանվում է 65 մլն տ նավթ, բայց այդ ծավալը հնարավոր է ավելացնել, եթե մեծացվի փոխադրման՝ խողովակաշարի կարողությունը:



Թուրքմենստանը և Ուզբեկստանը նաև բնական գազի խոշոր արտահանողներ են: Ռուսաստանով անցնող հին գազամուղներից բացի՝ կառուցված է Թուրքմենստան–Իրան նոր գազամուղը (1997թ.): 2010թ. շահագործման հանձնվեցին նոր գազամուղներ՝ դեպի Իրան և Չինաստան:

Կենտրոնական Ասիայի վառելիքային արդյունաբերության զարգացմանը խանգարող գործոն է տարածաշրջանի մեծ հեռավորությունը վառելիքի հիմնական սպա-

ռողից՝ Եվրոպայից և ծովային նավահանգիստներից: Ղազախստանի նավթի մի մասն արտահանվում է հարևան Չինաստան, որն աշխարհի ամենաշատ նավթ ներկրող երկիրն է:

Թուջի արտադրամաս Քոսթանայի (Կուստանա) մետաղաձուլական կոմբինատում

Մյուս զարգացած ճյուղը սև և գունավոր մետաղաձուլությունն է: Ղազախստանում զարգացած է և՛ սև, և՛ գունավոր մետաղաձուլությունը, իսկ Ուզբեկստանում առավել զարգացած է գունավոր մետաղաձուլությունը, հատկապես ոսկու ձուլումը: Տարեկան ձուլվում է շուրջ 80 տ ոսկի: Ոսկու ձուլման ծավալով Ուզբեկստանն աշխարհի երկրների շարքում 7-րդն է:

Ուզբեկստանն ու Ղազախստանը ձգտում են վերականգնել իրենց երբեմնի զարգացած մեքենաշինությունը: Այդ նպատակին հասնելու համար նրանք համագործակցում են արտասահմանյան երկրների հետ: Ճապոնիան, ԱՄՆ-ը, Չինաստանը, Կորեայի Հանրապետությունը Կենտրոնական Ասիայի երկրներում կազմակերպում են ավտոմեքենաների, էլեկտրոնային սարքերի և այլ ապրանքների արտադրություններ:

Կենտրոնական Ասիայի երկրների թեթև արդյունաբերությունը զարգանում է սեփական բամբակի հումքով: Արտադրում են գորգեր (հատկապես Թուրքմենստանում), բամբակյա, մետաքսե և բրդե գործվածքներ:

Կենտրոնական Ասիայի **գյուղատնտեսության** առաջատար ճյուղը բուսաբուծությունն է: Ղազախստանի հյուսիսում՝ տափաստաններում, ինչպես նաև Ղրղզստանում, մշակում են ցորեն: Ցորենի արտահանման ծավալով Ղազախստանն աշխարհի 7-րդ երկիրն է: Շատ են մշակում բամբակենի, գլխավորապես՝ Ուզբեկստանում, Թուրքմենստանում և Տաջիկստանում: Ոռոգման գոտում մշակում են նաև բրինձ և բացառիկ համեղ բոստանային մշակաբույսեր, հատկապես սեխ: Մշակում են նաև շաքարի ճակնդեղ և խաղող, որից պատրաստում են չամիչ:

Կենտրոնական Ասիայի հյուսիսային՝ տափաստանային գոտում զբաղվում են առավելապես խոշոր եղջերավոր, իսկ հարավային՝ կիսաանապատային գոտում՝ ոչխարաբուծությամբ: Գլխավորապես պահում են կարակուլային ցեղի ոչխարներ: Զբաղվում են նաև ուղտաբուծությամբ և ձիաբուծությամբ: Բնակչությունն օգտագործում է այդ կենդանիների և՛ միսը, և՛ կաթը: Ձիու կաթից պատրաստվող կումիսը ղազախների և ղրղզների սննդի անբաժանելի և բարձր գնահատվող տեսակն է:

Տրանսպորտային ցանցը նոսր է: Արտաքին և ներքին փոխադրումներում առաջատար դեր են կատարում երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտը, իսկ նավթի և գազի փոխադրումներում՝ նաև խողովակաշարային տրանսպորտը:

Կենտրոնասիական երկրները, հատկապես Ղազախստանը, ավանդական տնտեսական, մշակութային սերտ կապեր ունեն Ռուսաստանի հետ: Վերջին երկու տասնամյակներին ակտիվանում են տնտեսական և այլ կապերը Թուրքիայի, Չինաստանի, ԱՄՆ-ի և այլ տարածաշրջանների ու երկրների հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Կենտրոնական Ասիայի բնակչության թվի աճի և ազգային կազմի առանձնահատկությունները:
2. Որո՞նք են բնակչության տեղաբաշխման և ուրբանիզացման բնորոշ գծերը:
3. Տնտեսության կառուցվածքի ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում Կենտրոնական Ասիայի երկրների անկախացման փուլում:
4. Նշե՛ք արդյունաբերության գլխավոր ճյուղերն ու զարգացման ուղղությունները:
5. Նշե՛ք գյուղատնտեսության գլխավոր ճյուղերն ու տարածման շրջանները:

ԴԱՍ 38. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԻԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հարավային Ասիան ակնառու ֆիզիկաաշխարհագրական հատկանիշներով առանձնացած է մյուս տարածաշրջաններից: Հյուսիսից այս տարածաշրջանը բարձր լեռներով սահմանազատված է Կենտրոնական և Արևելյան Ասիայից, արևելքից՝ խիտ անտառներով՝ Հարավարևելյան Ասիայից, արևմուտքից՝ բարձրավանդակներով ու անապատներով՝ Հարավարևմտյան Ասիայից:



Հարավային Ասիա տարածաշրջանի տարածքը (4,5 մլն կմ²) կազմում է աշխարհի ցամաքի 3%-ից փոքր-ինչ ավելին, մինչդեռ այդտեղ է բնակվում աշխարհի բնակչության 23%-ը, և արտադրվում է ՀՆԱ-ի 3%-ից քիչ ավելին:

Հարավային Ասիան աշխարհի հնագույն քաղաքակրթության օջախներից է: Ինդոսի հովիտը հին սանսկրիտ լեզվով անվանվել է Սինդհու, որը թեթև փոփոխությունից հետո դարձել է Հինդու, Հինդ: Մոտավորապես 3500 տարի առաջ Սինդհու ներթափանցած արիացիներից փոխառվեց և ավելի զարգացվեց նրանց հավատը, որն անվանվեց **հնդուականություն**: Փոխառվեց նաև սոցիալական շերտավորման պրակտիկան՝ կաստայական համակարգը, որի համաձայն՝ հասարակությունը բաժանվում է խավերի: Ամենաբարձր խավը՝ կաստան, կազմում էին բրահմանները:

Հարավային Ասիայի պատմական դերը կապված է նաև **բուդդայականության** ծագման հետ: Ք. ա. VI դարում Հյուսիսային Հնդկաստանի թագաժառանգ Սիդհարթհա Գաութաման, որը հայտնի դարձավ **Բուդդա** անվամբ, ստեղծեց բուդդայականությունը՝ համաշխարհային կրոններից մեկը:

Պատմական երկարատև շփումների շնորհիվ **հինդի** լեզվի ազդեցությունը տարածվել է եվրոպական ժամանակակից լեզուների վրա, որոնք բոլորը միասին կազմում են **հնդեվրոպական լեզվաընտանիքը**: Իսկ Հնդստան թերակղզու միջին և հարավային մասերի լեզուները զարգացել են հյուսիսից մեկուսացված և կազմում են **դրավիդյան լեզվաընտանիքը**:

X դարում Հարավային Ասիայում տեղի ունեցավ մեկ այլ խոշոր իրադարձություն. Պարսկաստանից և Աֆղանստանից տարածաշրջան թափանցեց **իսլամը**:

Հարավային Ասիա

Իսլամի մուտքը խախտեց տարածաշրջանի հասարակական անդորրը: Բնույթով հանդարտ հնդուականությունն ու ագրեսիվ մահմեդականությունը դժվարությամբ են գոյակցում: Համայնքներում այդ կրոնների միջև կան մրցակցություն, խանդ, թշնամանք: Հարավային Ասիայի անկախացումից հետո (1947թ.) անորոշ մնաց մահմեդական և հնդուական խառը բնակչությամբ բնակեցված հյուսիսի լեռնային տարածքների՝ Ջամուի և Քաշմիրի պետական պատկանելության հարցը: Այդ տարածաշրջանը դեռևս «կռվախնձոր» է Հնդկաստանի, Պակիստանի և Չինաստանի միջև:

Բնական պայմաններն ու ռեսուրսները: Հարավային Ասիան բնական հսկայական տարբերությունների տարածաշրջան է, որում առանձնանում է ֆիզիկաաշխարհագրական երեք գոտի. հյուսիսային՝ բարձրլեռնային, միջին՝ գետահովտային-դաշտավայրային և հարավային՝ թերակղզային-սարահարթային:

Տարածաշրջանի արևմտյան մասում՝ Թար անապատում, տեղումների տարեկան քանակը նույնիսկ բավարար չէ հողագործության համար, ուստի հողը ոռոգվում է, մինչդեռ Բենգալիայում, ընդհակառակը, տեղումների քանակն այնքան մեծ է, որ դրա հետևանքով մշտապես լինում են ջրհեղեղներ:

Հարավային Ասիայի ընդերքի հարստություններից առանձնանում են **քարածուխը, երկաթի** և **մանգանի, քրոմի, տիտանի** հանքաքարերը:

Հարավային Ասիայի մեծ մասում կլիման մերձհասարակածային մուսսոնային է՝ առատ տեղումներով:

Բնակչությունը: Բնակչության թվով (1,6 մլրդ մարդ) խոշորագույն տարածաշրջանն է աշխարհում:

Տարածաշրջանում կա երեք երկիր, որոնցից յուրաքանչյուրն ունի ավելի քան 100 մլն բնակիչ (Հնդկաստանը՝ 1 մլրդ 213 մլն, Պակիստանը՝ 177 մլն, Բանգլադեշը՝ 150 մլն):

Հարավային Ասիայի բնակչության բնութագրական մյուս գիծը ուրբանիզացման ցածր մակարդակն է: Տարածաշրջանի քաղաքներում բնակվում է ամբողջ բնակչության 36%-ը:

Թեպետ տարածաշրջանում գերակշռում է գյուղական բնակչությունը, բայց այդտեղ են աշխարհի գերխոշոր 26 ագլոմերացիաներից 5-ը. Դելին և Մումբայը (20 մլն-ից ավելի), Կարաչին և Կոլկաթան (17-ական մլն), Դաքան (14 մլն): Քաղաքների չափազանց խոշորացման գլխավոր պատճառը երկրների հողազրկված և գործազուրկ գյուղացիների մեծ հոսքն է խոշոր քաղաքներ՝ աշխատանք գտնելու հույսով:

Կոլկաթայի ծովափնյա հատված

Հարավային Ասիան նաև աղքատ բնակչության կուտակման խոշոր տարածաշրջանն է: Այստեղ բնակվում է երկրագնդի չքավոր բնակիչների 2/3-ը: Հարավային Ասիան անգրագետների և թերասնվողների բացարձակ թվաքանակով ևս առաջին տարածաշրջանն է աշխարհում: Բնակչության բարձր ծնելիության և հատկապես կանանց բարձր մահացության հետևանքով Եվրասիայի այլ տարածաշրջանների համեմատ բնակչության տարիքային կազմում բարձր է երեխաների բաժինը, իսկ սեռային կազմում՝ տղամարդկանց բաժինը:

Աշխարհի ամենախիտ բնակեցված տարածաշրջանն է (355 մարդ/կմ²): Բնակչության տեղաբաշխման գլխավոր գիծը կենտրոնացվածությունն է գետահովիտներում: Բնակչության խտությունը հատկապես բարձր է մշակվող միավոր հողատարածության հաշվով: Այս ցուցանիշով աշխարհի ամենախիտ բնակեցված՝ «ռեկորդակիր» երկրներից են Բութանը, Նեպալը և Բանգլադեշը:

Թեյի դարավանդային տնկատափ Շրի Լանկայում

Տնտեսությունը: Հարավային Ասիայի երկրների տնտեսությունը, չնայած զգալի առաջընթացին, մնում է թույլ զարգացած, ինչը պայմանավորված է դրանց գաղութային անցյալով, բնական ռեսուրսների աղքատությամբ, բնակչության կրթության ցածր մակարդակով, ֆինանսական միջոցների սղությամբ: Խոշոր արդյունաբերական ներուժ ունեն միայն Հնդկաստանն ու Պակիստանը: Մյուսները հիմնականում հետամնաց գյուղատնտեսական երկրներ են:

Գյուղատնտեսության կառուցվածքում գերակշռողը **բուսաբուծությունն է**: Հարավային Ասիան աշխարհի առաջատարն է թեյի, ռսպի, ջուտի, գետնանուշի, զարու, բրնձի, ցորենի, բամբակենու և այլ մշակաբույսերի համախառն բերքով:

Պակիստանի տնտեսական միջուկը **Փենջաբ** նահանգն է (փենջ՝ հինգ)՝ հինգ գետերի միջագետքը, որտեղ կենտրոնացված են երկրի բնակչության 60%-ը, մայրաքաղաք **Իսլամաբադը** և հնագույն քաղաք **Լահորը**: Երկրի հարավում է **Կարաչի** նավահանգստային խոշոր քաղաքը՝ երկրի նախկին մայրաքաղաքը (մինչև 1959թ.):

Բանգլադեշը գյուղատնտեսական երկիր է՝ աշխարհի ամենաաղքատ երկրներից մեկը: Քաղաքներում բնակվում է երկրի բնակչության ընդամենը 25%-ը: Խոշոր քաղաքներն են մայրաքաղաք **Դաքան** և գլխավոր նավահանգստային քաղաք **Չիտագոնգը**: Բնակչության խտությունը բացառիկ մեծ է (1045 մարդ/կմ²):

Նեպալը տնտեսական առումով աղքատ երկիր է: Տարբեր երկրներից ժամանող լեռնագնացները **Ջոմոլունգմա** գագաթ են բարձրանում հիմնականում Նեպալի տարածքից: Նրանց ուղեկցում են տեղացի շերպ բնակիչները՝ դրա համար ստանալով վարձատրություն: Դա նրանց ապրուստի հիմնական աղբյուրն է: Եվ պատահական չէ, որ առաջինը Ջոմոլունգմայի գագաթ են բարձրացել ավստրալիացի Էդմունդ Հիլարին և նրա շերպ ուղեկից Նորգեյ Տենցինգը:

Բրնձի դաշտ Պակիստանում

Շրի Լանկան բուդդայական երկիր է (բուդդայականները կազմում են բնակչության 70%-ը): Երկիրն անկախացել է Հնդկաստանից մեկ տարի հետո (1948թ.) և անվանվել է Ցեյլոն (մինչև 1972թ.):

Ի տարբերություն Հնդկաստանի և Պակիստանի՝ Շրի Լանկան տնկատափային գյուղատնտեսության երկիր է: Գլխավոր մշակաբույսերն են թեյը, շաքարեղեգը, սուրճը, բրինձը, պտուղները:

Վերջին տարիներին զարգանում է զբոսաշրջությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է Հարավային Ասիա տարածաշրջանի դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
2. Տնտեսության զարգացման ինչ բնական նախադրյալներ կան Հարավային Ասիայում:
3. Որո՞նք են Հարավային Ասիայի բնակչության աճի, կազմի և տեղաբաշխման գլխավոր առանձնահատկությունները:
4. Որո՞նք են Հարավային Ասիայի տնտեսության կառուցվածքի և տեղաբաշխման բնորոշ գծերը:
5. Տնտեսաաշխարհագրական ինչ ներքին տարբերություններ կան Հարավային Ասիայում:

ԴԱՍ 39. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀՆԴԿԱՍՏԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքը՝ 3,2 մլն կմ^2
Բնակչությունը՝ 1 մլրդ 213 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Դելի
Պետական կարգը՝ դաշնային հանրապետություն

Աշխարհագրական դիրքը: Տարածքի մեծությամբ Հնդկաստանը Հարավային Ասիայի խոշորագույն, իսկ ամբողջ աշխարհի՝ 7-րդ երկիրն է:

Հնդկաստանի տարածքային մաս են Հնդկական օվկիանոսի մի շարք կղզիներ: Դեռևս միջազգային մակարդակով հստակեցված չէ երկրի հյուսիսային տարածքի՝ Ջամու և Քաշմիր նահանգների կարգավիճակը:

Հնդկաստանը հնագույն և ինքնատիպ քաղաքակրթություն ունեցող երկիր է, որի հետ առևտրական կապ հաստատելու ձգտմամբ էլ եվրոպացիները ձեռնարկեցին ծովային ուղիների որոնումը և կատարեցին աշխարհագրական մեծ հայտնագործություններ:

Ավելի քան մեկ դար Հնդկաստանը Մեծ Բրիտանիայի խոշորագույն գաղութն էր: 1947 թվականին երկիրն անկախացավ Մեծ Բրիտանիայից, բայց կրոնական, ազգային, քաղաքական և այլ նկատառումներով բաժանվեց ժամանակակից Հնդկաստանի և Պակիստանի (վերջինս իր հերթին հետագայում բաժանվեց ժամանակակից Պակիստանի և Բանգլադեշի):

Հնդկաստանը դաշնային հանրապետություն է: Կազմված է 28 նահանգից և միութենական 7 տարածքից (այդ թվում՝ մայրաքաղաք Դելին և կղզիները):

Բնական պայմանները: Հնդկաստանը հյուսիսից սահմանափակված է Հիմալայան և Կարակորամ (Կարակորում) բարձր լեռնաշղթաներով: Հնդստան թերակղզու ներքին հատվածը զբաղեցնում է Դեկանի սարահարթը, իսկ դրանից հյուսիս՝ Ինդոս-Գանգեսյան դաշտավայրը:

Հայտնաբերված մի շարք հանքատեսակների պաշարներով Հնդկաստանն աշխարհի առաջատարներից է: Դրանցից են **քրոմիտը, տիտանը, պղինձը, երկաթի հանքաքարը, մանգանը, բոքսիտը**:

Երկրի հյուսիս-արևելքում կան **քարածխի** մեծ պաշարներ, որոնք տարածականորեն համընկնում են **երկաթի** ու **մանգանի** հանքավայրերին: Գործնականում հազվադեպ է պատահում, որ սև մետաղաձուլության նախադրյալ ծառայող այդ երեք նյութի պաշարները տարածականորեն այսքան մոտ լինեն իրար:

Կարակորամ բարձր լեռնաշղթաները

Բենգալյան ծոցի հյուսիսային մասում, Արաբական ծովի ափին և ծանծաղուտում կան **նավթի** ու **բնական գազի** զգալի պաշարներ:

Բնական մեծ հարստություն են Հնդկաստանի բազմատեսակ **հողերը**: Դրանցից առավել արժեքավոր ու բերրի են վարելահողերը, որոնք ընդարձակ տարածք են զբաղեցնում Ինդոս-Գանգեսյան դաշտավայրում և Դեկանի սարահարթում:

Կլիման: Հնդկաստանի տարածքի մեծ մասի կլիման մերձհասարակածային մուսսոնային է: Բացառություն են բարձր լեռները, որտեղ կլիման ցուրտ է այն աստիճանի, որ առաջացել են սառցադաշտեր: Դրանց ընդհանուր տարածքը մոտ 40 հազար կմ² է (ՀՀ-ի տարածքից 1,3 անգամ մեծ):

Տեղումների տարեկան քանակը շատ մեծ է ափամերձ գոտիներում, Հիմալայան լեռների հարավահայաց լանջերին: Մուսսոնների ազդեցությամբ այս տարածքներում տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 12000 մմ-ի, իսկ Շիլոնգի լեռնալանջին գտնվող Չերապունջի բնակավայրում եղել են նույնիսկ 23000 մմ տեղումներ: Սակայն Հնդկաստանում հողագործության կազմակերպման հիմնախնդիրը ոչ միայն և ոչ այնքան տեղումների քանակն է, որքան դրանց սեզոնային բաշխումը: Խնդիրն այն է, որ տարեկան տեղումների 80%-ը թափվում է ամառային խոնավ սեզոնում, ուստի հնդիկ գյուղացիները ցանքսը կատարում են այն հաշվարկով, որ բույսերի ոռոգման ժամանակը համընկնի մուսսոնային անձրևների եղանակին: Սակայն եթե վերջիններս երբեմն ուշանում են, ապա լինում է երաշտ: Երբեմն էլ տեղի է ունենում հակառակ երևույթը. մուսսոնային անձրևները լինում են սովորականից ավելի երկարատև ու առատ, ինչի հետևանքով Բենգալիայում (Հնդկաստանի արևելքում և Բանգլադեշում) առաջանում են ջրհեղեղներ: Դրանք նույնպես առաջացնում են բերքի և նույնիսկ մարդկային կորուստներ:

Գանգես գետը միջին հոսանքում

Հնդկաստանում հողերի ոռոգման համար օգտագործվում է նաև Գանգես, Բրահմապուտրա, Ինդոս և այլ գետերի ջուրը: Խոշոր գետերը հարթավայրային տարածքներում նավարկելի են, իսկ լեռնային տարածքներում օժտված են ջրաէներգետիկ մեծ պաշարներով: Այդ գետերի վրա արդեն կառուցված են մի շարք ջրային էլեկտրակայաններ: Հնդուական կրոն դավանող հնդիկների կյանքում հատկապես հոգևոր մեծ նշանակություն ունի Գանգես գետը: Յուրաքանչյուր հնդուականի երազանքն է՝ մաքրվել սուրբ Գանգեսի ջրով:

Հնդկաստանի **բուսական աշխարհը** հարուստ ու բազմազան է: Մարդու երկարատև տնտեսական գործունեության ընթացքում բնական բուսականության տարածքը խիստ կրճատվել է: Սակայն վերջին տասնամյակներում Հնդկաստանում խստացվել է բնապահպանական օրենսդրությունը, ակտիվացել է բնության վերականգնմանը նպատակաուղղված գործունեությունը: Երկրում ստեղծվել են 50 արգելոց և ազգային պարկ:

Բնակչությունը: Հնդկաստանը մարդկության հնագույն օջախներից է: Ինդոս գետի ավազանում Ք. ա. III հազարամյակի կեսերին արդեն ձևավորված էր պետություն,

ուր Ք. ա. II հազարամյակի երկրորդ կեսից թափանցեցին արիները (արիք), և ձևավորվեցին հնդարիական ժողովուրդները:

Բնակչության թվով Հնդկաստանն աշխարհի երկրորդ երկիրն է և զիջում է միայն Չինաստանին:

Բնակչության թվի տարեկան աճը (1,3%) թեպետ նախկինի համեմատությամբ նվազել է, բայց դեռևս բարձր է աշխարհի բնակչության աճի միջին ցուցանիշից: Բնակչության թվի արագ աճը պայմանավորված է Հնդկաստանի բնակչության բարեկեցության և կրթության ցածր մակարդակով, քաղաքային բնակչության փոքր բաժնով ու բազմազավակության ազգային սովորույթով:

Աղքատ գյուղերը Հնդկաստանում շատ են:

Կանխատեսվում է, որ 2050 թվականին երկրի բնակչության թիվը կհասնի 1,6 մլրդ մարդու, այսինքն՝ բնակչության թվով Հնդկաստանը կգերազանցի նույնիսկ Չինաստանին:

Հնդկաստանի բնակչությունն աշխարհում ամենաբազմազգն ու բազմալեզուն է: Մարդահամարների տվյալներով՝ երկրում պաշտոնապես գրանցված են շուրջ 300 էթնոս և 114 լեզու:

Ներկայումս երկրի բնակչության 80%-ը դավանում է հնդուականություն, 13%-ը՝ մահմեդականություն, 2%-ը՝ քրիստոնեություն, մոտ 1%-ը՝ բուդդայականություն:

Դարեր շարունակ Հնդկաստանում բնակվել են հայեր, որոնց առավելագույն թիվը հասել է 25 հազարի: Մի շարք քաղաքներում հիմնադրվել են հայկական դպրոցներ, եկեղեցիներ, միություններ: Մասնավորապես՝ համահայկական նշանակություն ունեցող իրադարձություն էր Մադրաս (այժմ՝ Չենայ) քաղաքում հայկական առաջին պարբերականի՝ «Ազդարարի» հրատարակությունը (1794թ.): Սակայն XX դարում հայերը Հնդկաստանից արտագաղթեցին, և նրանց թիվն այժմ շատ փոքր է:

Հնդկաստանը խտաբնակ երկիր է: Բնակչության միջին խտությունը 388 մարդ/կմ² է: Բնակչության խտությունը միջինից անհամեմատ բարձր է ծովափնյա հարթավայրերում, ինչպես նաև Ինդոս, Գանգես և Բրահմապուտրա գետերի հովիտներում: Այդ տարածքներում գյուղերն արտասովոր խոշոր են և երբեմն ունենում են մինչև 30 հազար բնակիչ (դրանից ավելի շատ բնակիչ ունեցող բնակավայրը Հնդկաստանում համարվում է քաղաք):

Տեսարան Դելիի համայնապատկերից

Հնդկաստանը հիմնականում գյուղաբնակ երկիր է: Ներկայումս քաղաքներում է ապրում երկրի ամբողջ բնակչության ընդամենը 30%-ը, բայց այդ բաժինն արագորեն մե-

ծանում է: Հնդկաստանում այժմ կա 100 հազարից ավելի բնակիչ ունեցող 460 և 1 միլիոնից ավելի բնակիչ ունեցող 31 քաղաք: Խոշորագույն քաղաքներն են մայրաքաղաք **Դելին**, որը բնակիչների թվով (22 մլն) աշխարհի երկրորդ խոշորագույն քաղաքն է Տոկիոյից հետո, երկրի գլխավոր նավահանգիստ **Մումբայը** (նախկինում՝ Բոմբեյ)՝ 20 մլն բնակչությամբ, **Կոլկաթան** (նախկինում՝ Կալկաթա)՝ 16 մլն բնակչությամբ, **Բանգալուրն** ու **Հայդարաբադը**՝ ավելի քան 5-ական մլն բնակչությամբ, **Ահմադաբադը**՝ մոտ 5 մլն բնակչությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հնդկաստանի աշխարհագրական դիրքի առանձնահատուկ գծերը:
2. Բնական ի՞նչ ռեսուրսներով է հարուստ Հնդկաստանը:
3. Ինչպե՞ս են ազդում կլիմայական պայմանները Հնդկաստանի գյուղատնտեսական արտադրության կազմակերպման վրա:
4. Որո՞նք են Հնդկաստանի բնակչության աճի, կազմի և տեղաբաշխման բնութագրական գծերը:

ԴԱՍ 40. ՀՆԴԿԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հնդկաստանի տնտեսության զարգացման ուղին երկար ու բարդ է: Միջնադարում երկրում արտադրված թանկարժեք քարերը, ոսկե իրերը, ոսկեթել գործվածքները, մետաղե իրերն ու այլ ապրանքներն իրենց տեսքով և որակով զարմացնում ու հրապուրում էին եվրոպացիներին: Գաղութատիրության ժամանակահատվածում Հնդկաստանից Մեծ Բրիտանիա էին արտահանում բամբակ, ջուտ (կոպիտ թել), ծխախոտ և գյուղատնտեսական այլ արտադրանքներ, ինչպես նաև բազմազան հանքանյութեր, իսկ Մեծ Բրիտանիայից ներկրում էին գործարանների սարքավորումներ, մեքենաներ, տրանսպորտային միջոցներ: Միաժամանակ՝ սկսվեց որոշ հումքատեսակների մի մասի մշակումը տեղում, ինչի շնորհիվ զարգացան թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

1970 թվականին սկսվեց երկրի արդյունաբերության զարգացման նոր փուլը, որի ընթացքում շատ արտադրատեսակների գծով երկիրը դարձավ ինքնաբավ: Հնդկաստանում 1991 թվականից հետո իրականացվում է արդյունաբերական հեղաշրջում՝ ինքնաբավ երկիրը մշակող արդյունաբերության արտադրանք արտահանող երկիր դարձնելու պետական ծրագիրը: Հնդկաստանն այսօր դարձել է աշխարհի առավել հզոր ու արագ զարգացող երկրներից մեկը: Համախառն ներքին արդյունքի բացարձակ ծավալով աշխարհի խոշորագույն երկրներից է:

Հնդկաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքը



Հնդկաստանի **հանքարդյունաբերության** տեսակարար կշիռը նվազել է, բայց երկիրն ածխի, ինչպես նաև մանգանի, երկաթի, ալյումինի, պղնձի, կապարի, ցինկի, ոսկու հանքաքարի խոշոր արդյունահանող է:

Երկրի **էներգետիկ արդյունաբերությունը** հենվում է ինչպես սեփական, այնպես էլ ներկրվող վառելիքի ու ջրաէներգետիկ ռեսուրսների վրա: Ածխի հանույթը բավարարում է երկրի ներքին պահանջարկը, և նույնիսկ փոքր քանակությամբ ածուխ արտահանվում է, իսկ նավթի հանույթը բավարարում է երկրի պահանջարկի մի մասը (1/3-ը):

Էլեկտրաէներգիայի արտադրությամբ Հնդկաստանն աշխարհի 5-րդ երկիրն է: Էլեկտրաէներգիայի մեծագույն մասն արտադրում են ջեկերը, իսկ փոքր մասը՝ ջրեկները:

Բհիլա քաղաքի մետաղաձուլական կոմբինատը

Սև մետաղաձուլությունը Հնդկաստանի հին, միաժամանակ՝ արագ աճող ճյուղերից է: Պողպատի ձուլման ծավալով Հնդկաստանն աշխարհի 4-րդ պետությունն է: Սև մետաղաձուլական գործարանները տեղաբաշխված են երկրի արևելքում՝ ածխի, երկաթի և մանգանի հանքաքարի արդյունահանման շրջանում: Սև մետաղաձուլության խոշորագույն կենտրոններն են **Բհիլա** և **Բոքարո** քաղաքները:

Հնդկաստանում զարգացած են **մեքենաշինության** զանազան ճյուղերը, ծանր՝ մետաղատար մեքենաշինությունից սկսած մինչև էլեկտրոնային սարքերի, հեռուստացույցների և ռադիոընդունիչների, համակարգիչների, նավերի և ավտոմեքենաների ու այլ արտադրություններ: Խոշորագույն կենտրոններն են **Մումբայն** ու **Կոլկաթան**:

Կոլկաթան նավաշինական կենտրոն է:

Հնդկաստանի բավական զարգացած ճյուղերից է **քիմիական արդյունաբերությունը**, որն արտադրում է նավթամթերք, պարարտանյութեր և քիմիական այլ ապրանքներ: Խոշորագույն կենտրոնն է **Բհոպալ** քաղաքը:

Զարգացած է նաև **թեթև արդյունաբերությունը**, առանձնապես՝ բամբակե գործվածքների արտադրությունը: Ջուտի գործվածքի արտադրությունն անկում է ապրում՝ արհեստական թելերից պատրաստված ավելի էժան ապրանքների մրցակցությանը չդիմանալով:

Բհոպալի քիմիական գործարանը

Հնդկաստանի **սննդի արդյունաբերության** առաջատար ճյուղերից է շաքարի արտադրությունը, որի ծավալով մինչև վերջերս Հնդկաստանն աշխարհի առաջին երկիրն էր, իսկ այժմ զիջում է միայն Բրազիլիային:

Գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ի մեջ թեպետ նվազում է, բայց դեռևս զգալի է: Այս

ճյուղում է զբաղված երկրի բոլոր աշխատավորների 2/3-ը: Գյուղատնտեսական արտադրանքի ծավալով Հնդկաստանն աշխարհում զբաղեցնում է երրորդ տեղը:

Հողագործությունը: Գյուղատնտեսական հանդակները կազմում են երկրի ամբողջ հողային ֆոնդի մոտ կեսը, իսկ ոռոգվող հողերը՝ շուրջ մեկ քառորդը: Ոռոգվող հողերի տարածքի մեծությամբ Հնդկաստանն աշխարհում առաջին երկիրն է: Գյուղատնտեսության կառուցվածքում հողագործության բաժինը գերազանցում է անասնապահությանը: Հնդկաստանի ցանքատարածությունների 85%-ը հատկացված է պարենային մշակաբույսերին: Գլխավոր հացահատիկային մշակաբույսը **բրինձն է**, որը մշակում են առավել տեղումնաշատ և ոռոգովի հողային տարածքներում՝ Գանգեսի և Բրահմապուտրայի հովիտներում ու ծովափնյա գոտում: **Ցորենը**, որպես պակաս խոնավապահանջ մշակաբույս, մշակում են չորային տարածքներում, հատկապես երկրի հյուսիսում: Այստեղ ստացվում է այնքան համախառն բերք, որքան անհրաժեշտ է Հնդկաստանի մեծաթիվ բնակչության պահանջարկը բավարարելու համար:

Թեյի բերքահավաք Հիմալայների լեռնալանջին

Երկրում մշակում են նաև **տեխնիկական** մշակաբույսեր՝ **շաքարեղեգ, բամբակենի, ջուտ, յուղատու մշակաբույսեր, կաուչուկատու հևեա, ծխախոտ**: Հնդկաստանում առավել մեծ տարածում ունի **թեյի** մշակությունը, որի բերքով այս երկիրն առաջինն է աշխարհում: Թեյի մշակության հիմնական տարածքը երկրի հյուսիս-արևելքն է (Ասսամ նահանգը և Հիմալայների՝ մինչև 2000 մ բարձրությամբ լանջերը, որտեղ աճում են թեյի լավագույն տեսակները): Զարգացած է նաև **գետնանուշի, հնդկանուշի, համեմունքների, պտուղների**, հատկապես **մանգոյի** և **աղամաթզի** մշակությունը:

Անասնապահությունը: Հնդկաստանի անասնապահության առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասունների՝ **կովերի ու գոմեշների** բուծումն է: Դրանց գլխաքանակով Հնդկաստանն աշխարհի առաջին երկիրն է: Սակայն այդ կենդանիների կաթնատվությունը մի քանի անգամ փոքր է Եվրոպայի երկրների համեմատությամբ: Պատճառն այն է, որ Հնդկաստանում կովերն օգտագործվում են հողագործության մեջ՝ որպես քարշող ուժ: Հնդուական հավատի համաձայն՝ կով չի կարելի մորթել և միսը ուտել (կով մորթողները Հնդկաստանում դասվում են ամենացածր՝ «անմաքուր» կաստային): Հնդկաստանում այժմ կա տարիքն առած մի քանի միլիոն կով, որոնք կյանքի վերջին տարիներն անցկացնում են թափառելով կամ պահվում են հատուկ արգելավայրերում:

Անասնապահության երկրորդ ճյուղն **այծերի** ու **ոչխարների** բուծումն է, որոնց գլխաքանակով Հնդկաստանն աշխարհի երրորդ երկիրն է:

Հնդկաստանում զարգացած են նաև **շերամապահությունը, ձկնորսությունը, ակվակուլտուրան** և **անտառային տնտեսությունը**:

Տրանսպորտը: Հնդկաստանը զարգացող այն երկրներից է, որտեղ համեմատաբար բարձր է տրանսպորտի զարգացման մակարդակը: **Երկաթուղային տրանսպորտը** երկրի տրանսպորտային առաջատար ճյուղն է: Երկաթուղիների երկարությամբ

(63 հազ. կմ) Հնդկաստանը ներառվում է աշխարհի առաջատար հնգյակում: Երկաթուղիներով է իրականացվում ուղևորափոխադրումների հիմնական մասը:

Հնդկաստանն ունի **ծովային** մեծ **նավատորմ**: Խոշորագույն նավահանգիստներն են **Կոլկաթան** և **Մումբայը**:

Վերջին տարիներին արագորեն զարգանում է **օդային տրանսպորտը**:

Արտաքին տնտեսական կապերը: Հնդկաստանն ակտիվ տնտեսական կապեր է հաստատել բազմազան երկրների, այդ թվում նաև Հայաստանի հետ: Արտահանում են գլխավորապես իրենց ավանդական արտադրատեսակները՝ թանկարժեք քարեր, ոսկերչական իրեր, հագուստ, գործվածք, մեքենաշինական բազմատեսակ արտադրանք, քիմիական ապրանքներ, գյուղատնտեսական մթերքներ (թեյ, համեմունքներ և այլն): Արտահանության գծով գլխավոր գործընկերներն են **ԱՄՆ-ը**, **Մեծ Բրիտանիան**, **Չինաստանը**, **Գերմանիան** և **Ճապոնիան**:

Հնդկաստանը ներկրում է հիմնականում նավթ, նավթամթերք, մեքենաներ, էլեկտրոնային սարքեր, պարարտանյութեր, թուջ և պողպատ: Ներկրման գծով գլխավոր գործընկերները գրեթե նույնն են, ինչ արտահանման գծով. **ԱՄՆ**, **Մեծ Բրիտանիա**, **Սաուդյան Արաբիա** և **Ճապոնիա**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ ուղղություններով է զարգացել Հնդկաստանի տնտեսությունը տարբեր ժամանակահատվածներում:
2. Գնահատեք Հնդկաստանի տնտեսական առաջընթացը և զարգացման մակարդակը:
3. Արդյունաբերության որ ճյուղերն են Հնդկաստանում զարգացած:
4. Որո՞նք են Հնդկաստանի գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերը և դրանց տեղաբաշխման գլխավոր շրջանները:
5. Որո՞նք են Հնդկաստանի արտահանման ու ներկրման գլխավոր ապրանքատեսակները և առևտրային գլխավոր գործընկերները:

ԴԱՍ 41. ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Աշխարհագրական դիրքը: Ասիայի արևելքում կա «դուրս ցցված» մի մաս, որը տարածված է Հարավային Ասիայից արևելք և Արևելյան Ասիայից հարավ: Աշխարհագրական այդպիսի դիրքի պատճառով էլ այդ տարածաշրջանն արժանացել է **Հարավարևելյան Ասիա** անվանմանը: Հարավարևելյան Ասիան իր տարածքի մեծությամբ (4,5 մլն կմ^2) հավասար է Հարավային Ասիային:

Իր աշխարհագրական դիրքի պատճառով Հարավարևելյան Ասիան ենթարկվում է արևմուտքից Հնդկաստանի, իսկ հյուսիսից՝ Չինաստանի ազդեցությանը: Հնդկաստանից այս տարածաշրջան են հասել առևտրական նավերը, իսկ Չինաստանից՝ մարդիկ: Բացի դրանից՝ այստեղ արաբներն զբաղվել են առևտրով, իսկ եվրոպացիները հիմնել են իրենց գաղութները: Տարածաշրջան են թափանցել նաև քրիստոնեությունն ու մահմեդականությունը: Այսպիսով՝ Հարավարևելյան Ասիան նման է մի «կաթսայի»,

որում միախառնված են աշխարհի մոտիկ և հեռավոր քաղաքակրթությունները: Դրա վառ արտահայտությունն է Սինգապուր քաղաք-պետությունը:

Հարավարևելյան Ասիայի քաղաքական քարտեզը դիտելով՝ հեշտությամբ կարելի է նկատել երկու ենթատարածաշրջան՝ մայրցամաքային և կղզային:

Մայրցամաքային ենթատարածաշրջանի արևմտյան մասում **Մյանման** է՝ Յանգոն մայրաքաղաքով (մինչև 1989թ.՝ Բիրմա՝ Ռանգուն մայրաքաղաքով): Սա Հարավարևելյան Ասիայի միակ, կարելի է ասել՝ լիարժեք հնդկաչինական երկիրն է, որը միաժամանակ սահմանակից է Հնդկաստանին և Չինաստանին: Մյանմայից արևելք տարածված երկիրը **Թաիլանդն** է (մինչև 1939թ., ինչպես նաև 1946-1948թթ. անվանվել է Սիամ), մայրցամաքային սիրտը, որին պատկանում է նաև Մալակա թերակղզու (պարանոցի) նեղ մասը: Թաիլանդին սահմանակից են հարավում **Կամբոջան**, իսկ հյուսիս-արևելքում՝ **Լաոսը**, միակ ցամաքային (ծովափից զուրկ) երկիրը: Հնդկաչին թերակղզու արևելյան ծովափնյա գոտում **Վիետնամ** պետությունն է:

Կղզային ենթատարածաշրջանի հարավում **Ինդոնեզիա** հսկա պետությունն է՝ ավելի քան 17 հազ. կղզու վրա, իսկ հյուսիսում՝ **Ֆիլիպինները**՝ 7 հազ. կղզու վրա: Այդ երկու պետությունների միջև են **Մալայզիա** պետությունը, որն զբաղեցնում է Մալակա թերակղզու մի մասը և Բոռնեո կղզու հյուսիսային մասը, **Սինգապուր** քաղաք-պետությունը և **Բրունեյ Դարուսալամ** (կամ պարզապես՝ Բրունեյ) պետությունը, **Արևելյան Թիմորը**, որը 2002թ. անկախացավ Ինդոնեզիայից և դարձավ ինքնիշխան պետություն **Թիմոր Լեշթի** անվանմամբ:

Սինգապուր քաղաք-պետությունը

Բնական պայմանները և ռեսուրսները: Այս տարածաշրջանը ոչ միայն Ասիայի ծայրամասն է, այլև, միաժամանակ, խաղաղօվկիանոսյան Հրե օղակի մի մասը: Կղզիների ողնաշարը կազմում են լեռները, որտեղ հրաբուխների ժայթքումները սովորական երևույթ են և երբեմն դրսևորվում են բացառիկ ուժգնությամբ: Դրանցից են Սումատրա կղզու Տոբե լճի տարածքի, Ֆիլիպինների Լուսոն կղզու Փինատուբո և Կրակատաու կղզու նույնանուն հրաբխի ժայթքումները: Հրաբխի ժայթքման հետևանքով մթնոլորտ են թափանցում հրաբխային մոխիր և թունավոր գազեր, որոնք շնչահեղձ են անում մարդկանց: Սակայն, ինչպես ժողովրդական ասացվածքն է հավատացնում, «չկա չարիք՝ առանց բարիքի»: Հրաբխային մոխիրը, նստելով հողի վրա ու խառնվելով դրան, բարձրացնում է հողի բերրիությունը:

Հարավարևելյան Ասիայի բնակչությանն ու տնտեսությանը չափազանց մեծ վնաս են պատճառում նաև երկրաշարժերը և հատկապես դրանց հետևանքով առաջացող ցունամիները: Մարդկության հիշողության մեջ դեռ թարմ է այդ տարածաշրջանում՝ Հնդկական օվկիանոսում 2004թ. առաջացած ցունամին, որը տարավ շուրջ 300 հազար մարդկային կյանք և առաջացրեց մեծ ավերածություններ:

Ցունամիի ավերածությունները Ինդոնեզիայում

Հարավարևելյան Ասիան ունի տնտեսության զարգացման նախադրյալ հանդիսացող բավարար բնական ռեսուրսներ:

Վառելիքային ռեսուրսներից առանձնապես շատ կան նավթ և բնական գազ: Դրանցով առավել հարուստ են Ինդոնեզիան, Մալայզիան և Բրունեյը:

Տարածաշրջանում կան մետաղային հանքային ռեսուրսների, հատկապես պղնձի, ոսկու, անագի պաշարներ: Անագի հանքանյութի առանձնապես մեծ պաշարները տարածված են Թաիլանդի տարածքում, Մալակա թերակղզում և մի շարք կղզիներում, որոնք ստացել են «անագի գոտի» անվանումը:

Անտառային լանդշաֆտ Բրունեյում

Հարավարևելյան Ասիայի կլիման բարենպաստ է հողագործության կազմակերպման համար: Ջերմաստիճանն ամենուրեք և ամբողջ տարվա ընթացքում բարձր է 20°-ից, ինչն ընձեռում է շուրջ տարին բույսեր մշակելու հնարավորություն:

Հարավարևելյան Ասիայի բնական ամենաթանկարժեք ռեսուրսը հողերն են՝ գյուղատնտեսության զարգացման հիմքը: Սակայն բնակչության մեծ թվի պատճառով Հարավարևելյան Ասիան աշխարհի ամենասակավահող տարածաշրջաններից է (Հարավային և Արևելյան Ասիայի հետ մեկտեղ): Բնակչությանը պարենով ապահովելու համար հողերը մշակում են ամբողջ տարին՝ հերթափոխելով 2–3 տարբեր մշակաբույս: Բացի դրանից՝ օգտագործում են նաև թեք լեռնալանջերի հողերը՝ դրանց վրա դարավանդներ կառուցելու շնորհիվ:

Բուսական և կենդանական աշխարհը խիստ բազմազան է ու հարուստ: Անտառներն զբաղեցնում են երկրների տարածքի տարբեր բաժիններ (ամենափոքր բաժինը Վիետնամում է՝ 30%, իսկ ամենամեծը՝ Բրունեյում՝ 84%): Անտառներում կան թանկարժեք փայտանյութ տվող ծառեր:

Վերջապես՝ Հարավարևելյան Ասիան ունի ռեկրեացիոն մեծ ռեսուրսներ, այդ թվում՝ տարաշխարհիկ լողափեր: Բնական ռեսուրսներից բացի՝ Հարավարևելյան Ասիայում կան նաև մարդածին՝ զբոսաշրջային ռեսուրսներ, ինչպես օրինակ՝ վանքեր, պալատներ: Հատկապես առանձնանում է **Անգկոր** աշխարհահռչակ համալիրը Կամբոջայում:



Հարավարևելյան Ասիա

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք Հարավարևելյան Ասիայի աշխարհագրական դիրքը:
2. Որոնք են Հարավարևելյան Ասիայի ենթատարածաշրջաններն ու խոշոր պետությունները:
3. Բնութագրեք տարածաշրջանի բնական պայմանները: Բերեք բնակչության և տնտեսության վրա բնական պայմանների ազդեցության օրինակներ:
4. Բնական ինչ ռեսուրսներով են հարուստ Հարավարևելյան Ասիայի երկրները:
5. Փորձեք համեմատել Հարավային և Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանների աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն ու բնական ռեսուրսները:

ԴԱՍ 42. ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Հարավարևելյան Ասիայում բնակվում է մոտ 617 մլն մարդ (2012թ.) կամ աշխարհի ամբողջ բնակչության մոտ 9%-ը: Դա հավասար է հսկայական Լատինական Ամերիկայի բնակչությանը, բայց միաժամանակ 2,7 անգամ զիջում է Հարավային Ասիայի բնակչությանը:

Տարածաշրջանի բնակչության ազգային կազմը խիստ խայտաբղետ է. բնակվում են **բիրմացիներ, թաիներ, մալայացիներ, վիետնամցիներ, ինդոնեզացիներ, պապուասներ**: Ամենուրեք բնակվում են ներգաղթած **չինացիներ** (շուրջ 30 մլն):

Տարածաշրջանի երկրների մեծ մասի բնակչության բնական աճն աշխարհի բնակչության աճի միջին ցուցանիշի մակարդակին է (1,0%-1,1%): Համեմատաբար բարձր է Մալայզիայի, Ֆիլիպինների, Բրունեյ Դարուսալամի ու Թիմոր Լեշթիի բնակչության բնական աճը:

Հարավարևելյան Ասիայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



Բնակչության թվով տարածաշրջանի խոշորագույն երկիրը Ինդոնեզիան է (242 մլն), որն այդ ցուցանիշով աշխարհի 4-րդ պետությունն է (Չինաստանից, Հնդկաստանից և ԱՄՆ-ից հետո): Բնակչության թվով խոշոր պետություններ են նաև Ֆիլիպինները (95 մլն), Վիետնամը (89 մլն), Թաիլանդը (70 մլն), իսկ ամենափոքր երկիրը Բրունեյն է (ընդամենը՝ 0,4 մլն):

Տարածաշրջանի երկրների բնակչության կազմում դեռևս մի փոքր գերակշռում են գյուղաբնակները: Տարածաշրջանի բացառիկ ուրբանիզացված երկիրը, կամ որ նույնն է՝ քաղաքը, Սինգապուրն է (ավելի քան 5 մլն բնակչությամբ), իսկ ամենացածր ուրբանիզացված երկիրը Կամբոջան է, որտեղ քաղաքներում է բնակվում երկրի ամբողջ բնակչության ընդամենը 20%-ը:

Ֆիլիպինյան գյուղ

Հարավարևելյան Ասիայի բնակչությունն անհավասարաչափ է տեղաբաշխված: Բնակչության խտությունը բարձր է Ֆիլիպիններում (316 մարդ/կմ²) և Վիետնամում (270 մարդ/կմ²), ցածր է Լաոսում (26,6 մարդ/կմ²) և Մյանմայում (71 մարդ/կմ²):

Բնակչությունը տարածաշրջանի երկրների ներսում ևս տեղաբաշխված է անհավասարաչափ: Օրինակ՝ Ինդոնեզիայի 17 հազար կղզիներից 6 հազարն անմարդաբնակ է: Բնակչությունը գլխավորապես կուտակված է ծովափնյա գոտում ու ցածրադիր հարթավայրերում: Կղզիներում գրանցված են գյուղական բնակչության խտության համաշխարհային «ռեկորդները»: Օրինակ՝ **Ճավա** կղզում բնակվում է երկրի բնակչության կեսից ավելին (58%-ը), մինչդեռ տարածքով 6 անգամ մեծ Կալիմանտանում[1] ընդամենը 5%-ը: Դեռ ավելին՝ Ճավա կղզու որոշ տեղամասերում բնակչության խտությունը անցնում է նույնիսկ 2000 մարդ/կմ²-ից, այսինքն՝ գերազանցվում է

Հարավարևելյան Ասիայի բաժինն աշխարհում (2012թ.)



1. Բոռնեո կղզու մեծ մասը պատկանում է Ինդոնեզիային և անվանվում է Կալիմանտան: Մյուս մասերն են՝ Բրունեյը, որի վրա է Բրունեյ Դարասալամը, ինչպես նաև Սաբահն ու Սարավակը, որոնք պատկանում են Մալայզիա պետությանը:

թույլատրելի սահմանը և վտանգվում է մարդկանց գոյատևումը, ուստի Ինդոնեզիայի կառավարությունն իրականացնում է Ճավայի բնակչության մի մասին Բոռնեո կղզու անտառներից ազատված հողերի վրա վերաբնակեցնելու ծրագիր:

Տնտեսությունը: Հարավարևելյան Ասիայի երկրների տնտեսության զարգացման ու մասնագիտացման վրա մեծ ազդեցություն են ունեցել դրանց տնտեսաաշխարհագրական դիրքը, նպաստավոր կլիմայական պայմանները, բնական հարուստ ռեսուրսները և մարդկային ռեսուրսները: Տարածաշրջանը դասվում է հարաբերականորեն թույլ զարգացածների շարքին: Աշխարհում նրա ՀՆԱ-ի բաժինը 2,6 անգամ զիջում է բնակչության բաժնին:

Հարավարևելյան Ասիայի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, գլխավորապես՝ մերձհասարակածային հողագործությունը: Հարավարևելյան Ասիան բրնձի մշակության խոշոր շրջան է: Ֆիլիպիններում մշակում են բրնձի նոր, բարձր բերքատու տեսակներ: Այստեղ բրնձի ցանքատարածությունը կազմում է երկրի ամբողջ ցանքատարածության 90%-ը: Բրնձի համախառն բերքով Ինդոնեզիան աշխարհի 3-րդ, Վիետնամը՝ 5-րդ, Թաիլանդը՝ 6-րդ երկրներն են: Մյուս կարևոր մշակաբույսը **մանիոկն**[1] է, որի բերքով առաջատար են Թաիլանդն ու Ինդոնեզիան (աշխարհում 3-րդ և 4-րդ տեղերը համապատասխանաբար):

Ջուտի նախնական վերամշակումը

Տարածաշրջանում շատ են մշակում նաև **գետնանուշ, ջուտ** և **սուրճ**: Սուրճի բերքով Վիետնամն ու Ինդոնեզիան աշխարհում զիջում են միայն Բրազիլիային: Բուսաբուծության մասնագիտացված ճյուղ է նաև բնական կաուչուկի հումքի՝ լատեքսի արտադրությունը **հևեայի** տնկատափերում: Բնական կաուչուկի արտադրության ծավալով աշխարհի առաջատար երկրներն են, համապատասխանաբար, Թաիլանդը, Ինդոնեզիան և Մալայզիան, իսկ Վիետնամը 5-րդն է: Հարավարևելյան Ասիայում է արտադրվում ամբողջ աշխարհի բնական կաուչուկի 76%-ը: Տարածաշրջանը նաև կոկոսյան արմավի յուղ, համեմունքներ (կարմիր և սև պղպեղ, մեխակ, դարչին, վանիլ) և թեյ արտադրող է: Հիմնական շրջանը Մոլուքյան կղզիներն են, որոնք հնում անվանվել են Համեմունքների կղզիներ: Այստեղից Եվրոպա հասցրած համեմունքը վաճառվել է նույնիսկ ոսկուց թանկ գնով:

Անասնապահությունն ավանդաբար թույլ զարգացած ճյուղ է: Մսի պակասը լրացնում են ձկան մեծ սպառմամբ և ծովային այլ կենդանիների մսի օգտագործմամբ: Շատ են օգտագործվում ծովից, գետերից, ոռոգման ցանցի առուներից որսած, ինչպես նաև արհեստական պայմաններում աճեցրած ձկներ:

Հարավարևելյան Ասիայի երկրների **արդյունաբերությունն** ունի զարգացող երկրներին բնորոշ գիծ՝ հանքային հումքի և վառելիքի հանույթի գերակշռություն:

Նավթի հանույթով ու արտահանությամբ առանձնանում են **Ինդոնեզիան, Մալայզիան, Վիետնամն** ու **Բրունեյը**: Անագի հանքաքարի արդյունահանման ու ձուլման ծավալով առաջատար երկրներ են **Ինդոնեզիան** ու **Մալայզիան**:

1. Մանիոկ արմատապտուղը համարվում է «աղքատների սնունդ»:

Տարածաշրջանի որոշ երկրներ իրենց տնտեսությունը վերակառուցում են ճապոնական նմանակով և հիմնականում Ճապոնիայի ֆինանսական ու տեխնիկական օգնության շնորհիվ: Առաջինն այդ ուղիով զարգացել է **Սինգապուրը**՝ «ասիական 4 վագրերից» մեկը, և դարձել է Արևմուտքի ու Արևելքի միջև տնտեսական համագործակցություն իրականացնող միջնորդ: Դրան նպաստել է նրա տնտեսաաշխարհագրական դիրքը տնտեսական այդ երկու խոշոր արեալների շփման կետում: Սինգապուրն աշխարհի խոշորագույն առևտրական, արդյունաբերական և ֆինանսական կենտրոններից է, երկրորդ խոշորագույն ծովային նավահանգիստը: Սինգապուրը մասնագիտացել է նավաշինության բնագավառում: Նրան է բաժին ընկնում ծովի հատակից նավթ արդյունահանող հարթակների համաշխարհային արտադրանքի 2/3-ը:

Վերջերս Սինգապուրի ուղիով են սկսել շարժվել Հարավարևելյան Ասիայի նաև այլ երկրներ՝ **Ինդոնեզիան, Մալայզիան** և **Թաիլանդը**: Այդ երկրներում արագորեն զարգացել են ավտոմոբիլաշինությունը (ավտոհավաքումը), նավթամշակումը, նավթաքիմիական, նավաշինական, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային արտադրությունները: Մասնավորապես՝ զարգացած է ճապոնական ֆիրմաների ռադիոսարքավորումների և հեռուստացույցների, տեսաձայնագրիչների արտադրությունը: Զգալի է նաև հագուստի, կոշկի, կաշվե ապրանքների արտադրությունը: Համեմատաբար թույլ են զարգացած նախկին սոցիալիստական երկրները՝ **Լաոսը, Կամբոջան** և **Վիետնամը**: Հարավարևելյան Ասիայի երկրների առևտրային գլխավոր գործընկեր երկրներն են **Ճապոնիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ավստրալիան**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հարավարևելյան Ասիայի բնակչության աճի, կազմի և տեղաբաշխման առանձնահատկությունները:
2. Ո՞ր գործոնների ազդեցությամբ է ձևավորվել Հարավարևելյան Ասիայի երկրների տնտեսությունը:
3. Որո՞նք են տարածաշրջանի երկրների տնտեսության ընդհանուր գծերը:
4. Ո՞ր արտադրատեսակների գծով են մասնագիտացած Հարավարևելյան Ասիայի երկրները:

ԴԱՍ 43. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Արևելյան Ասիան Ասիա աշխարհամասի ընդարձակ տարածաշրջան է, որը տարածված է Ռուսաստանի, Կենտրոնական, Հարավային և Հարավարևելյան Ասիայի միջև: Տարածքը մոտ 12 մլն կմ^2 է, որը կազմում է Ասիայի տարածքի ավելի քան 1/4-ը: Այսպիսի մեծ տարածքն առանձնանում է բնական պայմանների մեծ բազմազանությամբ:

Տարածաշրջանի արևմտյան մասում հիմնականում լեռներ ու սարահարթեր են՝ Հիմալայների արևելյան լանջերը, Կունլուն, Մոնղոլական Ալթայ և այլ լեռնաշղթաներ, ինչպես նաև Տիբեթի բարձրավանդակը, Գոբի, Տակլամական և այլ սարահարթերը: Լեռներում և սարահարթերում մարդու կյանքի համար վտանգավոր են սառցադաշտը, ցուրտը, կլիմայի չորությունը, ինչպես նաև երկրաշարժերը:

Արևելյան Ասիայում են տեղի ունեցել աշխարհի ամենակործանարար երկրաշարժերը[1]:

Տարածաշրջանի արևելյան մասում մակերևույթը գլխավորապես հարթավայրային է: Այստեղ առավել խոշորը Չինական մեծ դաշտավայրն է՝ գյուղատնտեսական մթերքի արտադրության՝ աշխարհում խոշորագույն տարածքներից մեկը: Բնական պայմաններն այստեղ բարենպաստ են տնտեսական գործունեության համար, սակայն երբեմն լինում են ջրհեղեղներ, ավերիչ թայֆուններ և ցունամիներ:

Հանքային հանածոների հետախուզված պաշարներով Արևելյան Ասիան աշխարհի առավել հարուստ տարածաշրջաններից է: Առանձնապես մեծ են **քարածխի**, **նավթի**, **երկաթի**, **մանգանի**, **անագի**, **ալյումինի**, **կապարի**, **ցինկի**, **ուրանի** պաշարները: Դրանց մեծ մասը Չինաստանում է (տես համապատասխան բաժինը):

Տարածաշրջանի արևելքում կլիման մուսսոնային է՝ ամառային առատ տեղումներով: Տեղումների տարեկան քանակը հարավ-արևելքում հասնում է 1000–2000 մմ-ի, իսկ Ճապոնական ու մյուս կղզիներում՝ 2000–3000 մմ-ի:

Գետային ցանցի խտությունն ու գետերի ջրառատությունը կախված են ինչպես կլիմայական պայմաններից, այնպես էլ մակերևույթի բնույթից: Տարածաշրջանի արևելյան մասում գետային ցանցը խիտ է, իսկ արևմտյանում՝ նոսր: Առանձին միջլեռնային ընդարձակ սարահարթերում մշտահոս գետեր չկան: Տիբեթի սառցադաշտերից սկիզբ են առնում Ասիայի խոշորագույն ու ջրառատ գետերը՝ **Յանցզին**, **Հուանհեն**, **Սիցզյանը**:

Արևելյան Ասիայի **բնակչության** ընդհանուր թիվը 1,5 միլիարդից ավելի է, որը կազմում է երկրագնդի բնակչության մոտ 22%-ը: Տարածաշրջանի բնակչությունը բազմազգ է: Միայն Չինաստանում բնակվում է ավելի քան 50 ժողովուրդ՝ **չինացիներ, ույղուրներ, մանջուրներ, մյաոներ, տիբեթցիներ**: Մեծաթիվ այլ ժողովուրդներից **ճապոնացիներն** ու **կորեացիները** հիմնականում բնակվում են իրենց հայրենիքում, որոնք միազգ պետություններ են: Բնակչության բնական աճն աշխարհի բնակչության ընդհանուր աճից ցածր է (բացառությամբ Մոնղոլիայի): Այդ ցուցանիշը հատկապես ցածր է Ճապոնիայում և Չինաստանում՝ պետությունների վարած ծնելիության նվազմանն ուղղված հետևողական ժողովրդագրական քաղաքականության հետևանքով:

Արևելյան Ասիայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



Տարածաշրջանում բնակչությունը խիստ անհամաչափ է տեղաբաշխված: Բնակչության խտությունը հատկապես մեծ է Ճապոնիայում ու Կորեայի Հանրապետությունում, միջին մակարդակի վրա է Չինաստանում և փոքր է Մոնղոլիայում:

Տարածաշրջանում քաղաքների աճի, ինչպես նաև դրանցում բնակչության և տնտեսության կենտրոնացման գործընթացը նույնպես միանշանակ չի կարելի գնահատել: Ճապոնիայում քաղաքներում բնակվում է երկրի ամբողջ բնակչության 79%-ը, իսկ Կորեայի Հանրապետությունում՝ նույնիսկ 83%-ը: Սակայն տարածաշրջանի խոշո-

1. Առավելագույն՝ 12 բալ ուժգնությամբ երկրաշարժեր եղել են Մոնղոլիայում (Բոլնայի, 1905թ., Գոբի-Ալայան, 1957թ.), իսկ զոհերի քանակի մեծությամբ ամենաուժգին երկրաշարժեր եղել են խտաբնակ Չինաստանում (Շենսիի՝ 830 հազ. զոհ, 1956թ. և Տանշանի՝ 655 հազ. զոհ, 1976թ.), ինչպես նաև ճապոնական Հոնսյու կղզում (200 հազ. զոհ, 1703թ.):

ռագույն երկրի՝ Չինաստանի քաղաքներում բնակվում է երկրի ամբողջ բնակչության կեսը: Այնուամենայնիվ, տարածաշրջանում առկա է մեկ միլիոնից ավելի բնակիչ ունեցող շուրջ 200 քաղաք:

Տնտեսությունը: Թեպետ Արևելյան Ասիայի բնական պայմաններն ու ռեսուրսները բարենպաստ նախադրյալներ են արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար, սակայն այս տարածաշրջանի երկրները երկար ժամանակ տնտեսական ու սոցիալական զարգացման գործընթացից գրեթե դուրս էին մնացել: Օտարերկրյա կապիտալի ներդրման շնորհիվ զարգացման «անշարժ կետից» առաջինը դուրս եկան **Ճապոնիան** և **Հոնկոնգը (Սյանգանը)**[1], որոնց հետևեցին **Կորեայի Հանրապետությունը**, Չինաստանից փաստորեն անջատված **Թայվան** պետությունը, իսկ վերջին տարիներին՝ նաև հզոր **Չինաստանը**: Կորեայի Հանրապետությունը, Թայվանը, մինչև Չինաստանի հետ վերամիավորվելը՝ նաև Հոնկոնգը, ինչպես նաև Հարավարևելյան Ասիայում գտնվող Սինգապուրը զարգացել են ավելի արագ, քան զարգացող այլ երկրներ:

Այս տարածաշրջանը տնտեսական զարգացման տեմպերով ամենաարագ զարգացողն է: Աշխարհում ՀՆԱ-ի ծավալով 2-րդն է՝ Հյուսիսային Ամերիկայից հետո:



Ժամանակակից երկնաքերները ստվեր են գցում արևելասասիական ավանդական տների վրա: Բազմաթիվ հսկա կառույցներ հիացնում են մարդկանց: Գրեթե ամբողջ ծովափնյա գոտին դարձել է պատմության մեջ երբևէ առավել մեծ փոփոխություններ կրած տարածաշրջանը:

Տնտեսականից բացի՝ Արևելյան Ասիայում XX դարում տեղի են ունեցել նաև քաղաքական քարտեզի փոփոխություններ: Մոնղոլիան, Չինաստանը և Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը դարձան սոցիալիստական պետություններ: Չինաստանից անջատվեց Թայվանը, միասնական Կորեան բաժանվեց 2 պետության: Այդ վիճակը պահպանվում է մինչ օրս՝ որպես չլուծված քաղաքական լուրջ խնդիր:

Արևելյան Ասիայի պետությունները միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով: Տարածքի մեծությամբ առավել խոշոր պետությունները Չինաստանն ու Մոնղոլիան են, բնակչության թվով՝ Չինաստանն ու Ճապոնիան, տնտեսական հզորությամբ՝ Չինաստանը, Ճապոնիան և Կորեայի Հանրապետությունը: Ըստ պետական կարգի՝ Ճապոնիան միապետություն է, իսկ մնացյալները՝ հանրապետություններ: Զարգացման մակարդակի տեսանկյունից՝ Ճապոնիան զարգացած երկիր է, իսկ մյուսները՝ զարգացող երկրներ[2]: Ըստ սոցիալ-տնտեսական համակարգի՝ Կորեայի

1. Սյանգանը ավելի քան 100 տարի Անգլիային պատկանելուց հետո 1997թ. կրկին վերամիավորվեց Չինաստանի հետ, իսկ Մակաոն Պորտուգալիային պատկանելուց հետո 1999թ. նույնպես վերամիավորվեց Չինաստանի հետ:

2. Կորեայի Հանրապետությունը ամենաբարձր զարգացման մակարդակ ունեցող զարգացող երկրներից է, ինչը նկատի ունենալով՝ որոշ տնտեսագետներ և աշխարհագրագետներ այդ երկիրը դասում են բարձր զարգացածների շարքը:

ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը դեռևս սոցիալիստական երկիր է, իսկ մյուսները՝ շուկայական տնտեսությամբ երկրներ[1]:

Տարածաշրջանի «տնտեսական միջուկը»՝ առավել բարձր զարգացած արեալը, ներառում է Ճապոնիան, Կորեայի Հանրապետությունը և Թայվանը: Երկրորդ արեալը Չինաստանի արևելքն է:

Տարածաշրջանին են պատկանում տասնյակ արտադրատեսակների գծով աշխարհում առաջին տեղերը: Տարածաշրջանն աշխարհի առաջատարն է **ածխի հանույթով, սև մետաղաձուլությամբ, մեքենաշինության** որոշ **արտադրատեսակների, տեքստիլ** արդյունաբերության, **հացահատիկի, ոչխարների** ու **խոզերի գլխաքանակի, ձկնորսության** և բազմաթիվ արտադրությունների գծով:

Արևելյան Ասիա

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք տարածաշրջանի բնական պայմաններն ու ռեսուրսները տնտեսության տարբեր ոլորտների զարգացման տեսանկյունից:
2. Բնութագրեք Արևելյան Ասիայի բնակչության աճը, տեղաբաշխումը և քաղաքներում բնակչության կենտրոնացման գործընթացը:
3. Ինչպիսի՞ն է տարածաշրջանի երկրների տնտեսական զարգացման պատմությունը:
4. Քաղաքական և տնտեսական ի՞նչ փոփոխություններ են ընթանում ներկայումս տարածաշրջանում: Որո՞նք են դրանց գլխավոր միտումները:

1. Չինաստանը, ըստ էության, խառը տնտեսությամբ երկիր է:

ԴԱՍ 44. ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՉԻՆԱՍՏԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքը՝ 9,6 մլն կմ²
Բնակչությունը՝ 1 մլրդ 351 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Բեյջին (Պեկին)
Պետական կարգը՝ ժողովրդական հանրապետություն

Չինաստանն աշխարհի հնագույն պետություններից է, արևելյան քաղաքակրթության օրրանը: Բացառիկ մեծ է չինացիների ներդրումը համայն մարդկության զարգացման գործում: Այսօր էլ արդարացիորեն պետք է հիշենք, որ, օրինակ, թուղթը, որի վրա գրում ենք, հախճապակե բաժակը և դրանով խմած թեյը, բնական մետաքսը, որից պատրաստված հագուստը հագնում ենք, հրավառության նյութերը և շատ այլ նյութեր ունեն չինական ծագում:

Չինաստանի **աշխարհագրական դիրքը** կարելի է գնահատել երկու տեսանկյունից:

1. Չինաստանը շատ հեռու է եվրոպական քաղաքակրթության օջախից: Չինաստանի մայրաքաղաք Բեյջինից Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվա երկաթուղային գնացքով կարելի է հասնել գրեթե մեկ շաբաթում, իսկ Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ էլ ավելի երկար ժամանակում: Ցամաքով Չինաստանը դժվարանցանելի լեռներով ու անապատներով անջատված է Հնդկաստանից և Կենտրոնական Ասիայի երկրներից:

2. Միաժամանակ պետք է նշել, որ Չինաստանի ծովային դիրքը ներկայումս շատ նպաստավոր է Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների (օրինակ՝ ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Ավստրալիայի) հետ տնտեսական համագործակցության համար:

Բնական պայմանները և ռեսուրսները խիստ բազմազան են: Արևելյան մասում **Չինական մեծ հարթավայրն է**, որը երկրի կենսական կարևորագույն նշանակություն ունեցող շրջանն է: Արևմտյան մասն առավելապես լեռնային ու սարահարթային է:

Երկիրը հարուստ է բազմատեսակ **օգտակար հանածոներով**: Ընդերքի հարստությունները սկսել են խորությամբ ուսումնասիրել և օգտագործել վերջերս, քանի որ տնտեսության բուռն զարգացման պայմաններում դրանց օգտագործման պահանջարկը կտրուկ մեծացել է: Հյուսիսային ու Հարավարևմտյան Չինաստանում հայտնաբերված են ածխի խոշոր պաշարներ: **Նավթի** զգալի պաշարներ կան երկրի հյուսիս-արևելքում ու հյուսիսում, **երկաթի** հանքաքարի՝ հյուսիս-արևելքում ու արևելքում, Յանցզի գետի հովտում՝ **Բեյջինի** մոտ, **Ներքին Մոնղոլիայում**: Երկիրն աչքի է ընկնում

Վոլֆրամի հանքավայր Չինաստանում

վոլֆրամի հսկայական պաշարներով, որոնք գտնվում են հարավ-արևելքում: Առկա են նաև **ալյումինի հումքի, մանգանի, սնդիկի, մոլիբդենի, պղնձի, ցինկի, կապարի, ուրանի** և այլ մետաղների հանքավայրեր, ինչպես նաև կերակրի աղի, ֆոսֆորիտի և ոչ մետաղային այլ հանածոների պաշարներ:

Երկրի տնտեսական զարգացման համար կարևոր նախադրյալ են գետերի ջրաէներգետիկական պաշարները: Չինաստանով հոսում են շատ գետեր, այդ թվում՝ ջրառատությամբ աշխարհի երրորդ գետը՝ **Յանցզին**, ինչպես նաև **Հուանհեն** ու **Սիցզյանը**: Երկրի տարածքում՝ **Տիբեթում** են նաև Հարավարևելյան Ասիայի խոշոր գետերից **Սալուինի** և **Մեկոնգի** վերին հոսանքները: Գետերի հսկայական ջրաէներգետիկական պաշարները դեռևս լրիվ չեն օգտագործվում: Երկրի ջրաէներգետիկական պաշարների ավելի քան 60%-ը բաժին է ընկնում Տիբեթի բարձրավանդակի գետերին:

Չինաստանում օգտագործվող ջրի ծավալի կտրուկ աճի պայմաններում բացահայտվել է, որ նույնիսկ ջրային այդքան հսկայական ռեսուրսներն անբավարար են: Մասնավորապես՝ ոռոգման, կենցաղային և արդյունաբերական նպատակներով Հուանհեից այնքան շատ ջուր է վերցվում, որ վերջին մի քանի տարում գետաբերանում գետը նույնիսկ ցամաքում է: Աղտոտվելու հետևանքով ջրի մի մասն անօգտագործելի է դառնում: Բնակչության և արդյունաբերության աճի հետևանքով երկրի խոշոր քաղաքներում զգացվում է ջրի անբավարարություն: Բեյջինի բնակչությանը որակյալ ջուր է մատակարարվում Յանցզի գետից՝ 1400 կմ երկարությամբ ջրանցքով, թունելով ու խողովակներով:

Օգտագործվում է նաև բազմաթիվ լճերի և շուրջ 2000 ջրամբարների ջուրը:

Չինաստանում ջրային ռեսուրսների հիմնախնդրի առաջացման գլխավոր պատճառը ջրային պաշարների, բնակչության և ջրի գլխավոր սպառողի՝ վարելահողերի անհամամասնական տեղաբաշխվածությունն է: Հյուսիսային Չինաստանում են երկրի ջրային պաշարների 20%-ը, բնակչության 47%-ը և վարելահողերի 65%-ը, մինչդեռ Հարավային Չինաստանում են ջրային պաշարների 80%-ը, բնակչության 53%-ը և վարելահողերի 35%-ը:

Չինաստանն աշխարհի սակավ անտառապատ երկրներից է: Անտառների հիմնական զանգվածները երկրի հյուսիս-արևելքում են: Ժամանակին կատարվել է անտառահատում, բայց այժմ իրականացվում է անտառատնկման պետական ծրագիր, որի շնորհիվ անտառածածկ տարածքն զգալիորեն ընդարձակվել է:

Չինական գյուղ

Բնակչությունը: Բնակչության թվով Չինաստանն աշխարհի ամենամեծ երկիրն է: Այս երկրում է ապրում աշխարհի բնակչության գրեթե 1/5-ը, հետևաբար՝ բնակչության թիվը և մանավանդ դրա աճի տեմպը բացառիկ մեծ և ուղղակի ազդեցություն ունեն Չինաստանի, ինչպես նաև ամբողջ աշխարհի տնտեսական ու սոցիալական զարգացման վրա:

Չինացիների սերունդների մշակույթն ու մտածողությունը դարերի ընթացքում շատ աննշան են փոփոխվել: Արևելյան բոլոր ժողովուրդների նման՝ չինացիները XX դարում

պահպանել են բազմազավակ ընտանիքի ավանդույթը: Երբ 1949թ. երկրում հաստատվեց սոցիալիստական կարգ, կառավարության մեծ ջանքերով նվազեց բնակչության մահացությունը: Բարձր ծնելիության պահպանման և մահացության նվազման շնորհիվ Չինաստանի բնակչությունն սկսեց աճել շատ բարձր տեմպերով՝ տարեկան 2,8%-ով: Երկրում տարածված սովը, գործազրկությունը և սոցիալական այլ չարիքներ հաղթահարելու նպատակով երկրի կառավարությունն իրագործեց նաև ծնելիության կրճատմանը նպատակաուղղված աննախադեպ ծավալի «կոշտ» ժողովրդագրական քաղաքականություն:

Երկրում մեծամասնություն (93%) կազմող հաներին[1] «պարտադրում» էին ընտանիքում ունենալ մեկ երեխա, իսկ այդ հորդորը խախտողներին «պատժում էին», մասնավորապես՝ 2-րդ և հաջորդ երեխաների հաշվով ընտանիքին չէին հատկացնում պարենամթերք[2]:

Ժողովրդագրական վերոնշյալ քաղաքականության հետևանքով 1970-ական թվականներից մինչև օրս բնակչության բնական աճը կրճատվել է շուրջ 7 անգամ: Ներկայումս բնական աճը կազմում է 0,4%, այսինքն՝ զգալիորեն ցածր է աշխարհի բնակչության աճի միջին ցուցանիշից (1,1%): Ուստի երկրի կառավարությունը 2012թ. որոշում կայացրեց տրամաբանորեն հակառակ ուղղությամբ փոփոխել ժողովրդագրական նախկին քաղաքականությունը՝ խրախուսել ծնելիության չափազանց ցածրացած մակարդակի բարձրացումը:

Չինաստանի բնակչությունը գլխավորապես բնակվում է գետային ավազաններում (շուրջ 1 մլրդ մարդ բնակվում է գլխավոր 4 գետերի ավազաններում): Վերջին տասնամյակներում բնակեցված ավանդական տարածաշրջաններից միլիոնավոր աշխատանքային միգրանտներ վերաբնակեցվում են նոր յուրացվող շրջաններում, հատկապես Սինցզյանի նավթարդյունաբերական, Ներքին Մոնղոլիայի ոռոգվող հողագործության և հյուսիսարևելյան արդյունաբերական շրջաններում:

Բնակչության թվի աճի հետ մեծանում է նաև բնակչության միջին խտությունը: Եթե 1949թ. վերջինս կազմում էր 56 մարդ/կմ², ապա ներկայումս՝ 140 մարդ/կմ² (ավելի մեծ, քան Հայաստանում): Սակայն քանի որ բնակչության 96%-ը բնակվում է տարածքի 40%-ը կազմող բարենպաստ շրջաններում, ուստի բնակչության խտության տարածական տարբերությունները մեծ են: Բնակչության խտությունը երկրի արևելյան դաշտավայրերում՝ աշխատատար գյուղատնտեսական արտադրության շրջաններում, տատանվում է 600–2200 մարդ/կմ² սահմաններում, իսկ Տիբեթում փոքր է (10 մարդ/կմ²):

Տեսարան մայրաքաղաք Բեյջինից

Չինաստանն ավանդաբար եղել է հիմնականում գյուղաբնակ երկիր: Մինչև վերջին տարիներս քաղաքներում էր բնակվում երկրի բնակչության ընդամենը 1/3-ը, իսկ տնտեսական վերելքի հետևանքով այսօր

1. Չինացիներն իրենց անվանում են հան:

2. Պարենամթերքը, անբավարարության պատճառով, ընտանիքներին բաժանվում էր շնչի հաշվով, ազատ վաճառք գոյություն չուներ:

քաղաքային բնակչությունը կազմում է երկրի բնակչության 52%-ը (2011թ.): Այդուհանդերձ՝ քաղաքային բնակիչների բացարձակ թվով (692 մլն մարդ) Չինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Այժմ երկրում ավելի քան 1 մլն բնակիչ ունեցող քաղաքների թիվն անցել է 160-ից: Կազմավորվել են մի քանի խոշոր քաղաքային ագլոմերացիաներ: Դրանցից առավել խոշորներն են **Շանհայը** (17 մլն մարդ), **Չունցինը** (15 մլն) և **Բեյջինը** (10,5 մլն):

Շանհայը երկրի արդյունաբերական, տրանսպորտային ու առևտրական խոշորագույն կենտրոնն է: Շանհայի շրջակա տարածքում ստեղծվել է Չինաստանի ազատ առևտրի առաջին ու խոշորագույն գոտին:

Չինաստանի տնտեսական ամենախոշոր կենտրոն Շանհայը

Չունցինը ևս հնագույն քաղաք է, բազմաճյուղ արդյունաբերության կենտրոն, գետային խոշոր նավահանգիստ (Յանցզի գետի վրա): **Բեյջինը** (1949 թվականից երկրի մայրաքաղաքը) նույնպես Չինաստանի հնագույն քաղաքներից է, երկրի արդյունաբերական, մշակութային, գիտական խոշոր կենտրոն, տրանսպորտային խոշորագույն հանգույց: Խոշորագույն քաղաքներից են **Գուանչժոուն** (8,3 մլն բնակիչ), **Տյանինը** (**Տյանցզինը**) (7,5 մլն բնակիչ) և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Չինաստանի աշխարհագրական դիրքը:
2. Ի՞նչ օգտակար հանածոներով է Չինաստանը հարուստ:
3. Ի՞նչ բարենպաստ բնական նախադրյալներ կան Չինաստանի գյուղատնտեսության զարգացման համար:
4. Ինչպիսի՞ փոփոխություն է ունեցել Չինաստանի բնակչության աճը, ի՞նչ պատճառով:
5. Բնութագրեք Չինաստանի բնակչության տեղաբաշխումը և ուրբանիզացիան:

ԴԱՍ 45. ՉԻՆԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական նոր և նորագույն ժամանակաշրջաններում Չինաստանում տիրապետող ավատատիրական հարաբերությունները, ինչպես նաև այլ պետությունների կողմից ժամանակ առ ժամանակ երկրի որոշ մասերի գավթումը խոչընդոտել են Չինաստանի տնտեսության զարգացմանը: Այդ պատճառով Չինաստանը, թեպետ ուներ տնտեսական զարգացման համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները, XX դար մտավ որպես թույլ զարգացած գյուղատնտեսական երկիր:

Չինաստանի տնտեսական զարգացման փուլն սկսվեց 1949 թվականից հետո, երբ երկրում իրականացավ սոցիալիստական հեղափոխություն: Երկրի նոր կառավարությունը ձգտում էր ապահովել տնտեսական առաջընթաց և ժողովրդի բարեկեցության բարձրացում, սակայն այդպիսի խնդրի իրականացումը Չինաստանի նման

մեծ ու արագ աճող բնակչություն ունեցող երկրում չափազանց դժվար էր: Ուստի երկրի տնտեսական աճն ապահովելու նպատակով Չինաստանի կառավարությունը 1979 թվականից հետևողականորեն իրագործում է տնտեսության արմատական բարեփոխման ծրագիր, որի շնորհիվ Չինաստանն արդեն դարձել է գերհզոր երկիր:

Երկրում ստեղծվել են 4 հատուկ տնտեսական գոտիներ, 14 բաց քաղաքներ և բաց ծովափնյա գոտիներ, որտեղ գործարարների համար ապահովվում են տնտեսական գործունեության բացառիկ նպաստավոր պայմաններ. հաստատվում են սովորականից ցածր հարկեր, հեշտացվում է արտահանման և ներկրման գործընթացը:

Էապես փոփոխվել են Արևելյան Չինաստանի տնտեսության պատկերն ու տեղաբաշխումը: Արևելյան Չինաստանն այսօր ավելի շատ հիշեցնում է մի հատված ԱՄՆ-ից կամ Արևմտյան Եվրոպայի երկրներից:

Չինաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Հատուկ տնտեսական գոտիներն աճում են չափազանց արագ:

Այսպես օրինակ՝ Հոնկոնգի մոտ, 20 հազ. բնակիչ ունեցող Շենժեն գյուղում 1970-ական թթ. վերջին հիմնադրվեց երկրի հատուկ տնտեսական գոտիներից մեկը, որի նորակառույց ձեռնարկություններում Չինաստանի տարբեր մասերից աշխատելու եկածների ու նրանց ընտանիքի անդամների թիվը 2000-ական թթ. սկզբին անցավ 4 միլիոնից: Այսպիսով՝ շուրջ 30 տարում աճեց մի նոր քաղաք, որը բնակիչների թվով գերազանցեց մոտ երեքհազարամյա Հռոմին:

ՀՆԱ-ի ծավալով Չինաստանն աշխարհի 2-րդ երկիրն է: Գիտնականները կանխատեսում են, որ մոտակա տարիներին Չինաստանն այդ ցուցանիշով կդառնա աշխարհի նույնիսկ առաջին երկիրը:

Արդյունաբերությունը բազմաճյուղ է: Արդյունաբերության հիմքը վառելիքաէներգետիկական արդյունաբերությունն է:

1980-ական թթ. կեսերից **ածխի հանույթով** Չինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Ածուխ արդյունահանվում է մեծ մասամբ երկրի հյուսիսում ու հյուսիս-արևելքում, որտեղ գտնվում են Ֆուշուն և այլ խոշոր հանքավայրեր:

Նավթի հանույթը Չինաստանում արագորեն աճում է: Այդուհանդերձ՝ սեփական արդյունահանած նավթը երկրի շատ մեծ պահանջարկը չի բավարարում, և հարկադրաբար որոշ քանակով նավթ է ներկրվում Իրանից, իսկ առաջիկայում՝ կառուցվող նավթամուղով կներկրվի հարևան Ռուսաստանից: Նավթի սպառման ծավալով Չինաստանն աշխարհում զիջում է միայն ԱՄՆ-ին:

Նավթավերամշակման գործարան Չինաստանում

Էլեկտրաէներգետիկան ևս Չինաստանի արագ զարգացող արդյունաբերական ճյուղերից է: Էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման ծավալով Չինաստանն աշխարհում զբաղեցնում է երկրորդ տեղը (ԱՄՆ-ից հետո): Գերակշռում են ածխով աշխատող ջէկերը:

«Երեք կիրճ» ջրէկի ամբարտակը

Չինաստանի ջրաէներգետիկ հսկայական ռեսուրսները դեռևս օգտագործվում են ոչ ամբողջությամբ: Խոշոր ջրէկներ են կառուցված Հուանհե գետի վրա, իսկ խոշորագույնը՝ «Երեք կիրճ» անվանումով, Յանցզի գետի վրա է:

Սև մետաղաձուլությունը երկրում զարգանում է արագ տեմպերով: **Երկաթի** հանքաքարի արդյունահանմամբ, պողպատի ու թուջի ձուլմամբ Չինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Մետաղաձուլական գործարանները տեղաբաշխված են **Հյուսիսային** և **Հյուսիսարևելյան Չինաստանում**:

Գունավոր մետաղաձուլությունն սկսել է արագ զարգանալ 1980-ական թթ. կեսերից: **Ալյումինի** ձուլման ծավալով Չինաստանն աշխարհում երրորդ պետությունն է: Ձուլում են նաև պղինձ, ցինկ, կապար, վոլֆրամ և հատկապես շատ՝ անագ (աշխարհում ձուլվող անագի ընդհանուր քանակի 1/4-ը): Խոշոր կենտրոններից են **Շենյանն** ու **Շանհայը**:

Նավաշինական գործարան Շանհայում

Մեքենաշինությունը Չինաստանում հիմնվել է 1950-ական թթ., և այդ հին ճյուղի ձեռնարկությունները ներկայումս արդիականացվում են, իսկ զուգահեռաբար նաև հիմնադրվում են նորագույն ճյուղերի ձեռնարկություններ: Երկրում այժմ արտադրվում են տիեզերական հրթիռներ, ինքնաթիռներ, էլեկտրոնային բարդ սարքեր: Չինական ավտոմեքենաներն ու ավտոբուսները երթևեկում են նաև Հայաստանի քաղաքներում, իսկ տրակտորներն ու գյուղատնտեսական մեքենաներն աշխատում են դաշտերում:

Ներկայումս **ռադիոընդունիչների** ու **գունավոր հեռուստացույցների, հեծանիվների, էլեկտրական խաղալիքների** արտադրությամբ Չինաստանն աշխարհում առաջինն է: Ճյուղի ձեռնարկությունները տեղաբաշխված են ամենուրեք:

Վերջին տասնամյակում **քիմիական** արդյունաբերությունը ևս արագ է զարգանում: Քիմիական որոշ արտադրատեսակների գծով Չինաստանն այժմ աշխարհի առաջատար երկրների շարքում է: Չինաստանն աշխարհում առաջին տեղում է նաև **ցեմենտի** արտադրության ծավալով:

Չինաստանի արդյունաբերության հին և գլխավոր ճյուղը **թեթև արդյունաբերությունն է**: **Բամբակե գործվածքների** արտադրության ծավալով երկիրն աշխարհում առաջինն է: Խոշորագույն կենտրոնը **Շանհայն** է: Վուշե գործվածքների արտադրության խոշորագույն կենտրոնը **Հարբինն է**: Մետաքսե գործվածքների արտադրությունը տեղաբաշխված է **Արևելյան** և **Հարավային Չինաստանի** նահանգներում:

Տրիկոտաժի արտադրամաս Բեյջինում

Մննդի արդյունաբերության կարևոր ճյուղերից է **շաքարի արտադրությունը**, որի արտադրանքը, թեկուզ շատ մեծ է, չի բավարարում երկրի բնակչության պահանջարկը: Մննդի արդյունաբերության առավել արագ զարգացող ճյուղը **ձկան պահածոների** արտադրությունն է, որով Չինաստանն զգալիորեն գերազանցում է ցանկացած երկրի:

Գյուղատնտեսությունը Չինաստանի տնտեսության ավանդաբար զարգացած ճյուղն է: Արտադրանքի ընդհանուր ծավալով Չինաստանի գյուղատնտեսությունն աշխարհում առաջինն է: Տնօրինելով աշխարհի հողերի 7%-ը՝ Չինաստանի գյուղատնտեսությունը ոչ միայն բավարարում է աշխարհի բնակչության մոտ 20%-ը կազմող բնակչությանը և թեթև արդյունաբերության հումքի պահանջարկի մեծ մասը, այլև գյուղատնտեսական մթերքի որոշ քանակություն նույնիսկ արտահանում է:

Սակայն Չինաստանի գյուղատնտեսական արտադրանքի այդպիսի մեծ քանակը ձեռք է բերվել «թանկ գնով», մասամբ՝ շրջակա միջավայրի էկոլոգիական իրադրության վատթարացման (հողերի էրոզիա, ոռոգման ջրերի աղտոտում, արոտավայրերի ծանրաբեռնում և այլն) հաշվին: Հետևաբար՝ **գյուղատնտեսության կայուն զարգացման ապահովման խնդիրը երկրի տնտեսական կարևորագույն հիմնախնդիրներից է**:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը **բուսաբուծությունն** է: Մշակվող հողատարածությունը կազմում է երկրի տարածքի 15%-ը, որի կեսը ոռոգվում է: Այդ հողերը գտնվում են Մեծ ջրանցքի գոտում:

Թեյի տնկատափ Չինաստանում

Բուսաբուծության առաջատար ճյուղը **հացահատիկային** տնտեսությունն է: Արտադրվող հացահատիկի կեսը բաժին է ընկնում **բրնձին**, իսկ մյուս կեսը՝ **ցորենին, եգիպտացորենին, գարուն, հնդկացորենին, գաոլյանին**[1]:

Բրնձի ցանքատարածությունները հիմնականում **Յանցզի գետի հովտում են**: Ցորեն և եգիպտացորեն մշակում են առավելապես **Չինական մեծ հարթավայրում**:

1. Հատիկային մշակաբույս, որն օգտագործվում է որպես պարեն, անասնակեր, ինչպես նաև խմիչքի և թղթի արտադրության հումք:

Տեխնիկական բույսերից աճեցվում է **բամբակենի**: Ցանքատարածությունների գերակշիռ մասը **Յանցզի** և **Հուանհե գետերի** հովիտներում է: Մշակում են նաև **թեյ**, **գետնանուշ**, **շաքարի ճակնդեղ**, **շաքարեղեգ**, **սոյա**, **ծխախոտ**: Մեծ դեր ունի և **այգեգործությունը**, հատկապես **ցիտրուսային պտուղների** մշակությունը երկրի հարավում: Հայաստանից ներկրած տնկիների հիման վրա զարգանում է նաև ծիրանի մշակությունը:

Խոզերի գլխաքանակով Չինաստանն աշխարհի առաջատարն է:

Անասնապահությունը: Երկրի արևմտյան մասում գերակշռում է **խոշոր եղջերավոր անասունների, այծերի, ոչխարների** և **ուղտերի** բուծումը: Չինաստանը շերամապահության հայրենիքն է:

Այծերի և ոչխարների գլխաքանակներով Չինաստանն աշխարհի առաջին, իսկ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով երրորդ երկիրն է:

Արևելյան՝ խիտ բնակեցված ու մեծ մասամբ հերկված հողատարածքներում անասնապահության դերը երկրորդական է: Այստեղ կարևոր ճյուղերից են **խոզաբուծությունն** ու **թռչնաբուծությունը**: **Խոզերի** գլխաքանակով Չինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Այս երկրում է աշխարհի խոզերի գլխաքանակի (մոտ 1 մլրդ գլուխ) կեսը: Չինացիները շատ են սպառում թռչունի, հատկապես սագի և բադի միս:

Վաղուց երկիրն աշխարհում առաջիններից է **ձկնորսությամբ**: Վերջին տարիներին այդ ճյուղի արտադրության ծավալը կտրուկ ավելացավ[1], և այժմ Չինաստանն առաջին տեղը գրավում է՝ մյուս երկրներից շատ առաջ անցնելով:

Տրանսպորտը: Երկրի տրանսպորտի առավել կարևոր ճյուղը **երկաթուղայինն է**: Երկաթուղիների երկարությունը 60 հազ. կմ է, բայց խտությունը փոքր է ու անհավասարաչափ, դա առավել խիտ է **Հյուսիսային** ու **Հյուսիսարևելյան Չինաստանում**: Կարևոր մայրուղիներից է **Դեղին ծովի** ափից մինչև **Ուրումչի** (երկրի հյուսիս-արևմուտքում) ձգվող երկաթուղին: Վերջերս Տիբեթում կառուցվեց աշխարհում ամենաբարձր երկաթուղին (որը տեղ-տեղ ծովի մակարդակից բարձր է 5500 մ):

Ավտոմոբիլային տրանսպորտի ցանցը նման է երկաթուղայինին: Մեծ նշանակություն ունի **ներքին ջրային** տրանսպորտը: Ջրային գլխավոր «զարկերակներն» են **Յանցզի**, **Սիցզյան** գետերն ու **Մեծ ջրանցքը**, որի երկարությունը մոտ 1900 կմ է: Վերջին ժամանակներս արագ զարգանում է նաև **ծովային** տրանսպորտը: Չինաստանի, ինչպես նաև ամբողջ աշխարհի խոշորագույն նավահանգիստներից մեկը կառուցված է Շանհայ քաղաքից 30 կմ հեռավորության վրա՝ արհեստական կղզում: Խոշոր նավահանգիստներ են նաև **Դալյանը**, **Ցինդաոն**: Առավել խոշոր օդանավակայաններ կան **Բեյջին, Շանհայ** և **Գուանչժոու** քաղաքներում: Չինաստանում ամենատարածված տրանսպորտային միջոցը **հեծանիվն է**:

Չինաստանը ներկայումս արտահանում է ինչպես ավանդական արտահանության ապրանքներ՝ հագուստ, գործվածք և կոշիկ, այնպես էլ նոր ապրանքների տե-

1. Տարեկան 24 մլն տ:

սականի՝ **նավթամթերք, ավտոմեքենաներ, հեռուստացույցներ** և **ռադիոընդունիչներ**: Չինաստանի ներկրման մեջ գերակշռում են մեքենաները, պողպատը և այլ մետաղներ, կաուչուկը, ցորենը, նավերը, անմշակ նավթը:

Առևտրական գլխավոր գործընկերներն են **ԱՄՆ-ը, Ճապոնիան, Կորեայի Հանրապետությունը, Սինգապուրը, Գերմանիան, Ռուսաստանը**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Չինաստանի տնտեսական աճի կտրուկ արագացման պատճառները:
2. Բնութագրե՛ք Չինաստանի տնտեսության կառուցվածքի փոփոխությունները:
3. Որո՞նք են Չինաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերը: Ըստ ենթաճյուղերի՝ նշե՛ք խոշոր կենտրոնները:
4. Ո՞ր արտադրատեսակների գծով է Չինաստանն աշխարհում գրավում առաջատար տեղ:
5. Նշե՛ք գյուղատնտեսության տեղն ու դերը Չինաստանի տնտեսության մեջ:
6. Որո՞նք են Չինաստանի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն ու ենթաճյուղերը:
7. Չինաստանում տրանսպորտի ո՞ր տեսակներն են առավել զարգացած:

ԴԱՍ 46. ՃԱՊՈՆԻԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքը՝ 372,5 հազ. կմ²
Բնակչությունը՝ 127,6 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Տոկիո
Պետական կարգը՝ սահմանադրական միապետություն

Ճապոնիան ժամանակակից աշխարհի հին և հզորագույն երկրներից է, մյուսներից զգալիորեն տարբերվում է իր աշխարհագրական դիրքով, պատմական անցյալով, լեզվով, տնտեսական զարգացմամբ և բնութագրական այլ գծերով: Ճապոնացիներն իրենց երկիրը դեռևս միջնադարից անվանել են **«Նիհոն»** կամ **«Նիպպոն»**[1]: Չինաստանի հյուսիսում այդ երկիրն արտահայտվել է «ճի բեն գո», իսկ հարավում՝ «յա պոն գո» հիերոգլիֆներով: Հենց այդ վերջին ձևն է, որոշ փոփոխությամբ, տարածվել աշխարհի պետություններում, այդ թվում և Հայաստանում: Այսպիսով՝ **Ճապոնիա** բառն ունի չինական

Սինթոյական աղոթատեղի Ճապոնիայում

1. Օրենսդրորեն այս երկու ձևն էլ իրավահավասար օգտագործվում են այժմ:

ծագում և նշանակում է «Ծագող արեգակի երկիր», ինչը խորհրդանշված է երկրի դրոշի վրա:

Ճապոնացիները հնագույն ժողովուրդ են: Ժամանակի ընթացքում նրանք կերտել են ինքնատիպ մշակույթ, մշակել են հասարակական կյանքի կազմակերպման սեփական սկզբունքները: Այդ սկզբունքներն են՝ պաշտամունքի հասնող խոր հարգանքը ավագների նկատմամբ, նվիրվածությունը աշխատանքին, հողին, ջրին, երկրին, կարգապահությունը, զսպվածությունը, հանրակեցության զգացումը:

Աշխարհագրական դիրքը: Ճապոնիան **ծովային պետություն է**, որի մեծ մասը գտնվում է **Հոնսյու, Հոկայդո, Կյուսյու** ու **Սիկոկու կղզիների**, իսկ մի փոքր մասն էլ՝ **Ռյուկյու, Օկինավա** և **այլ կղզեխմբերի** վրա: Ճապոնիան մինչև XIX դարի կեսերը ինքնամեկուսացած էր աշխարհից: Արգելված էին օտարերկրացիների մուտքը Ճապոնիա և ճապոնացիների ելքը արտասահման:

Ճապոնիան դեռևս տարածքային չլուծված հարցեր ունի հարևան պետությունների հետ, մասնավորապես Ռուսաստանից պահանջում է 1945թ. ԽՍՀՄ-ի կողմից գրավված Հարավկուրիլյան կղզիներից չորսը:

Տարածքի չափով Ճապոնիան գերազանցում է եվրոպական պետություններից շատերին:

Ճապոնիայի գետերը հարուստ են ջրաէներգետիկ ռեսուրսներով:

Բնական պայմանները և ռեսուրսները: Երկրի տարածքի շուրջ 3/4-ը զբաղեցնում են երիտասարդ լեռները: Ժամանակակից հզոր Ճապոնիայում՝ լեռներում կառուցված տրանսպորտային թունելների, կամուրջների և օդանավակայանների շնորհիվ հաղթահարվել են տրանսպորտային հաղորդակցության դժվարությունները: Սակայն շարունակում է անլուծելի մնալ երկրաշարժավտանգության հիմնախնդիրը: Աշխարհի երկրաշարժային ամենաակտիվ գոտում ընկած Ճապոնիայում հաճախ տեղի են ունենում ուժեղ և նույնիսկ կործանարար երկրաշարժեր: Տնտեսությանը մեծ վնաս են հասցնում նաև երկրաշարժի հետևանքով առաջացող ցունամիի ալիքները:

Ճապոնիայի ամենաբարձր կետը **Ֆուձիյամա** գործող հրաբուխն է (3776 մ), որը ճապոնացիների համար սրբազան լեռ է, ինչպես Արարատը՝ հայերի համար: Հարթավայրերը սակավաթիվ են: Համեմատաբար խոշորը **Կանտո (Տոկիոյի) հարթավայրն է**:

Ճապոնիայի տարածքում կան բազմաթիվ օգտակար հանածոներ (երկաթ, մանգան, տիտան, ուրան), սակայն դրանց պաշարները մեծ չեն:

Համեմատաբար նշանակալի են **պղնձի** և **ցինկի** պաշարները: Զգալի են **քարածխի, ծծմբի, կաոլինի** (ճենապակու հումքի) պաշարները:

Կլիման երկրի տարածքի մեծ մասում նպաստավոր է գյուղատնտեսության համար և գերազանցապես մուսսոնային է: Խոնավ կլիմայի պատճառով երկրի **ջրագրա-**

կան ցանցը խիտ է, սակայն **գետերը**, տարածքի փոքրության պատճառով, կարճ են: Գերակշռում են սահանքավոր ու ջրառատ գետերը, որոնք օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու նպատակներով: Համեմատաբար խոշոր գետերը գտնվում են Հոնսյու կղզում:

Տեղումների տարեկան բավարար քանակի շնորհիվ երկրի գերակշիռ մասում հողագործությունն անջրդի է:

Երկրի տարածքի 2/3-ն անտառածածկ է: Անտառներն առավելապես ունեն ռեկրեացիոն նշանակություն:

Բնակչությունը: Բնակչության թվով Ճապոնիան դասվում է աշխարհի խոշոր պետությունների շարքը (աշխարհում 10-րդն է):

Ճապոնիան աշխարհի ամենամիատարր բնակչություն ունեցող երկրներից է: Ճապոնացիները կազմում են երկրի բնակչության 99%-ը:

Արևելյան երկրների նման՝ Ճապոնիայի բնակչության աճն ավանդաբար շատ բարձր է եղել: Սակայն XX դարում ժողովրդագրական իրադրությունը կտրուկ փոխվեց հետևյալ պատճառներով.

ա) երկրի ամբողջ բնակչության կազմում մեծացավ քաղաքաբնակների բաժինը, ովքեր, ինչպես հայտնի է, ավելի ցածր բնական աճ ունեն,

բ) բնակչության բարեկեցության, կրթական, մշակութային մակարդակների բարձրացման պայմաններում ճապոնացիները սկսեցին քիչ զավակներ ունենալ,

գ) Ճապոնիան աշխարհում միակ զարգացած երկիրն է, որն իրականացրել է ծնելիության նվազեցմանն ուղղորդված ժողովրդագրական քաղաքականություն,

դ) XX դարի պատերազմներում զոհվել է ավելի քան 2 մլն ճապոնացի,

ե) մինչ Ճապոնիայի բնակչության կենսամակարդակի բարձրացումը տեղի է ունեցել երկրից մարդկանց մեծ արտագաղթ: Այս բոլորի հետևանքով բնակչության աճի տեմպը կրճատվել է շուրջ 3 անգամ, և այժմ արդեն Ճապոնիայի բնակչության վերարտադրությունը նույնիսկ նեղացված է: Բնակչության թիվը նվազում է տարեկան –0,1%-ով:

Տեսարան Տոկիոյից

Ճապոնիայի բնակչությունն առանձնանում է ցածր մահացությամբ և աշխարհում կյանքի ամենամեծ միջին տևողությամբ (84 տարի):

Բնակչության միջին խտությունը շատ բարձր է՝ մոտ 340 մարդ/կմ^2: Բնակչությունը գրեթե ամբողջությամբ տեղաբաշխված է ցածրադիր վայրերում՝ ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություններում: Բնակչության խտությունը հատկապես մեծ է երկրի տարածքի մոտ 3%-ը կազմող ծովափնյա գոտում (մոտ 7000 մարդ/կմ^2), որտեղ ապրում է երկրի քաղաքային բնակչության գերակշիռ մասը:

Քաղաքաբնակների բաժինը շատ բարձր է՝ 79%: Քաղաքային բնակչության բաժինն արագորեն աճել է 1960-ական թթ.՝ արդյունաբերության արագընթաց զարգաց-

ման հետևանքով: Ճապոնիայում գերակշռում են փոքր ու միջին քաղաքները, սակայն կան և մի քանի հսկա՝ բազմամիլիոնանոց քաղաքներ: Դրանք գտնվում են խաղաղօվկիանոսյան ափի հարթավայրերում և, միաձուլվելով, առաջացրել են քաղաքային խոշոր ագլոմերացիաներ: Դրանցից են **Տոկիո-Յոկոհաման, Օսակա-Կոբե-Կիոտոն**: **Տոկիո** և **Կոբե** քաղաքների միջև ընկած գոտում, Տոկայդո մեգապոլիսում, ընդհանուր հաշվով, բնակվում է ավելի քան 60 մլն մարդ:

Տոկիոն Ճապոնիայի խոշորագույն քաղաքն է, հիմնադրվել է XV դարում՝ Եդո անվանմամբ: 1869թ. դարձել է Ճապոնիայի մայրաքաղաքն ու վերանվանվել Տոկիո: Տոկիոն երկրի տնտեսական խոշորագույն կենտրոնն է, որտեղ ստեղծվում է երկրի ազգային եկամտի շուրջ 20%-ը: Այն նաև երկրի գիտական, մշակութային, ֆինանսական-առևտրական խոշորագույն կենտրոն է: Աշխատանքային օրերին առավոտյան շուրջ 2,5 մլն մարդ շրջակա բնակավայրերից ժամանում է մայրաքաղաք՝ աշխատելու կամ այլ նպատակներով, իսկ երեկոյան՝ վերադառնում:

Ճապոնիայի մայրաքաղաքում առավել սուր կերպով են դրսևորվել խոշորագույն քաղաքներին բնորոշ՝ **օդային ավազանի մաքրության պահպանման, աղմուկի, տրանսպորտային «խցանումների», կառուցապատման համար անհրաժեշտ տարածքի անբավարարության, երկրաշարժից պաշտպանվելու** խնդիրները: Կառուցապատման համար տարածքն այնքան անբավարար է, որ ստիպված լրացուցիչ տարածքներ են նվաճվում **Տոկիոյի ծոցից** (ներկայումս արդեն նվաճված է ավելի քան 1000 կմ²):

Յոկոհամայի նավահանգիստը

Ճապոնիայի երկրորդ խոշորագույն քաղաքը **Յոկոհաման է**՝ երկրի խոշորագույն նավահանգիստը, իսկ երրորդը **Օսական է**՝ առևտրական (հատկապես բրնձի առևտրի) և ֆինանսական խոշոր կենտրոնը: Խոշոր քաղաքներ են նաև **Նագոյան** և **Կոբեն**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք Ճապոնիայի բնական պայմանները՝ որպես տնտեսական զարգացման նախադրյալ:
2. Ինչպիսի՞ն է Ճապոնիայի ռեսուրսապահովվածությունը:
3. Բնութագրեք Ճապոնիայի բնակչության վերարտադրությունն ու կազմը:
4. Բնութագրեք Ճապոնիայի տարաբնակեցման գլխավոր հատկանիշները:
5. Նշեք երկրի խոշորագույն քաղաքներն ու քաղաքային ագլոմերացիաները:

ԴԱՍ 47. ՃԱՊՈՆԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ներուժով Ճապոնիան 2011 թվականից աշխարհի երրորդ երկիրն է: Համախառն ներքին արդյունքի ծավալով զիջում է միայն ԱՄՆ-ին և Չինաստանին:

Պատմական երկարատև ժամանակաշրջանում Ճապոնիան տնտեսական առումով մեկուսացված, հետևաբար նաև հետամնաց երկիր էր: Երկիրը մասնատված էր իրար դեմ պատերազմող բազմաթիվ իշխանությունների միջև: Դեռևս չէր ձևավորվել երկրի միասնական տնտեսություն:

Թեպետ XVII դարում երկիրը միավորվել էր մեկ միասնական թագավորության մեջ, բայց շարունակում էր գոյատևել իր մեկուսացված ու թույլ զարգացած տնտեսությամբ: Միայն XIX դարի երկրորդ կեսին իշխանությունը ձեռնամուխ եղավ տնտեսության զարգացման և արդիականացման ծրագրի իրականացմանը, ինչի համար բացվեցին երկրի որոշ նավահանգիստներ, որոնք մինչ այդ փակ էին արտասահմանցիների առջև, ապա բարեփոխումները ղեկավարելու համար հրավիրվեցին բրիտանացի գործարարներ ու գիտնականներ:

Ճապոնիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Ճապոնիայի տնտեսական զարգացումը կտրուկ արագացավ XX դարում, հատկապես Երկրորդ աշխարհամարտին հաջորդող ժամանակահատվածում: Տնտեսական այդ արագ և աննախադեպ մեծ աճն անվանվեց **ճապոնական հրաշք**: Ճապոնիան կարճ ժամանակահատվածում (1955–1973թթ.) տիկնիկ և վերնաշապիկ թողարկող երկրից դարձավ նավ, ավտոմեքենա, հեռուստացույց և համանման ժամանակակից այլ ապրանքներ արտադրող երկիր:

1973թ. հետո, երբ համաշխարհային շուկայում առաջին անգամ կտրուկ բարձրացավ նավթի գինը, որպես նավթ ներկրող երկիր՝ Ճապոնիան **էներգատար** ու **հումքատար** արտադրությունների փոխարեն սկսեց արագ տեմպերով զարգացնել **գիտական միտք պահանջող** ու **էկոլոգիական առումով «մաքուր»** արտադրությունները: Իսկ վերջին տասնամյակներում, երբ ամբողջ բնակչության և մասնավորապես աշխատանքային ռեսուրսների աճը գրեթե դադարեց, Ճապոնիայում նաև **աշխատատար** արտադրություններից աստիճանաբար անցան **աշխատախնայողական** (քիչ աշխատատար) արտադրությունների: Դրանցից է ավտոմեքենաների, մոտոցիկլետների, նավերի, տեսախցիկների, հեռուստացույցների, ռոբոտների, ճշգրիտ հաստոցների և այլ սարքերի արտադրությունը:

Տնտեսության կառուցվածքը վկայում է երկրի զարգացման շատ բարձր՝ **հետարդյունաբերական** փուլի մասին: **Գյուղատնտեսության** տեսակարար կշիռը շատ փոքր է: Այդ ոլորտը հովանավորվում է պետության կողմից ու աչքի է ընկնում բարձր արտադրողականությամբ:

Արդյունաբերությունը մեծ կախում ունի հումքի ու վառելիքի ներկրումից ու առանձնանում է առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ, արտադրական բարձր

մշակույթով, արտադրանքի բարձր որակով և էժանությամբ: Ճապոնական ապրանքներն այդ պատճառով աշխարհում մեծ պահանջարկ ունեն:

«Ֆուկուսիմա» ատոմակայանը

Պողպատաձուլական գործարան Կիմիցուում (Հոնսյու կղզի)

Երկրի **արդյունաբերությունը** բազմաճյուղ է: Բարձր զարգացած ճյուղ է **էներգետիկական արդյունաբերությունը**, որն օգտագործում է երկրի **ածխի** ու **գետերի** ջրաէներգետիկական պաշարները, ներկրվող **նավթը**, **հեղուկացված գազը** և **ուրանը**:

Ճապոնիայում են աշխարհի խոշորագույն ատոմակայանը՝ «**Ֆուկուսիման**», որը 2011թ. հզոր ցունամիի հետևանքով վնասվել է և այժմ չի գործում, և խոշորագույն ջրէկը՝ «**Կասիման**»:

Սև մետաղաձուլությունը հենվում է հիմնականում ներկրվող հումքի վրա: **Պողպատի** ձուլմամբ Ճապոնիան աշխարհում երկրորդն է: Ամենաառաջավոր տեխնոլոգիայով զինված ձուլարանները տեղաբաշխված են **Կյուսյու** կղզու հյուսիսում և **Հոնսյու** կղզում՝ նավահանգստային խոշոր քաղաքներում, խոշորագույն ձեռնարկությունը գտնվում է Հոկայդո կղզու **Մուրորան** քաղաքում:

Գունավոր մետաղաձուլության ճյուղերից աչքի է ընկնում **ալյումինի, պղնձի** ու **ցինկի** ձուլումը: Այդ մետաղների ձուլարանները մեծ մասամբ տեղաբաշխված են մետաղների խտանյութի ներկրման նավահանգիստներում:

Մեքենաշինությունը երկրի արդյունաբերության առաջատար ճյուղն է, որն ապահովում է ամբողջ արդյունաբերական արտադրանքի արժեքի և Ճապոնիայի արտահանության շուրջ 2/3-ը: Մեքենաշինության ճյուղային կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն **տրանսպորտային, ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական** ու **ծանր մեքենաշինությունը, հաստոցաշինությունը**:

Առանձնապես զարգացած է **նավաշինությունը**: Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ Ճապոնիան աշխարհում առաջինն է՝ նավաշինության համաշխարհային արտադրանքի շուրջ կեսը մատակարարելով: Նավաշինական **կենտրոններն** են **Տոկիոն, Յոկոհաման, Օսական, Կոբեն**:

Ավտոմոբիլաշինությունը 1970-ական թվականներից դարձել է մեքենաշինության առաջատար ճյուղ, իսկ 1980 թվականից մինչև 2012թ. երկիրն **ավտոմեքենաների** արտադրությամբ աշխարհում առաջինն էր: Աշխարհում չկա մի քաղաք, որի փողոցներում չերթևեկեն ճապոնական ավտոմեքենաներ: Ավտոմոբիլաշինության խոշոր կենտրոններն են **Տոկիո, Օսակա, Նագոյա, Տոյոտա** քաղաքները: Խոշոր ընկերություններն են «Տոյոտան», «Նիսանը», «Միցուբիշին» և «Հոնդան»

Ամենուր զարգացած է ռադիոէլեկտրոնային մեքենաշինությունը: Ճապոնիան արտադրում է **ռոբոտների**, **տեսաձայնագրիչների** ու **տեսախցիկների** համաշխարհային արտադրության մեծ մասը, իսկ **համակարգիչների**՝ ավելի քան 1/10-ը:

Քիմիական արդյունաբերությունը տեսակարար կշռով երկրորդն է՝ մեքենաշինությունից հետո: Արագ զարգանում են **պլաստմասսաների, քիմիական մանրաթելերի, սինթետիկ կաուչուկի** և այլ արտադրություններ, որոնց հիմնական հումքը ներկրվող **նավթն է**: Դա է պատճառը, որ քիմիական գործարանների մեծ մասը տեղաբաշխվում է նավթի ներկրման նավահանգստային քաղաքներում: Շրջակա միջավայրի աղտոտման պատճառով ներկայումս Ճապոնիայի քիմիական նոր գործարանները տեղաբաշխվում են նաև Հարավարևելյան Ասիայի երկրներում:

Թեթև արդյունաբերությունը երկրի արդյունաբերության հնագույն ճյուղն է: Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղը **տեքստիլն է**: Ներկայումս գերակշռում են **քիմիական մանրաթելերից** արտադրվող գործվածքները:

Սննդի արդյունաբերությունը տարածված է ամենուրեք: Կարևորագույն ենթաճյուղերն են **ձկան պահածոների, շաքարի** և **ալրաղաց** արտադրությունները:

Գյուղատնտեսությունն առանձնապես զարգացել է երկրորդ աշխարհամարտից հետո ու ներկայումս բավարարում է երկրի պարենի 2/3-ը: Ճյուղի կառուցվածքում խիստ մեծ է **բուսաբուծության** տեսակարար կշիռը: Մշակվող հողատարածությունը համեմատաբար փոքր է՝ երկրի տարածքի մոտ 13%-ը, բայց բարձր է բերքատվությունը: Բուսաբուծության գլխավոր ենթաճյուղը **բրնձի** մշակությունն է, որի համախառն բերքը բավարարում է Ճապոնիայի բնակչության պահանջարկը, իսկ երբեմն նույնիսկ ավելորդ է առաջանում: Բրնձի ցանքերն զբաղեցնում են երկրի մշակվող հողերի 40%-ը: Բրինձ գլխավորապես մշակում են ոռոգվող հողերի վրա: Համեմատաբար զարգացած է նաև **բանջարաբուծությունը**:

Տեխնիկական մշակաբույսերից տարածված են **շաքարի ճակնդեղը, ծխախոտը, սոյան**: Շատ են աճեցնում նաև **թեյ**: Զգալի են **թթենու** տնկարկները, քանի որ թթենու տերևներն օգտագործվում են **շերամապահության** նպատակով:

Անասնապահությունը երկրի ավանդաբար թույլ զարգացած ճյուղն է, սակայն վերջին ժամանակներս առաջընթաց է ապրում: Այդուհանդերձ՝ ճապոնացիների սննդաբաժնում մսի անբավարար սպառումը դեռևս փոխհատուցվում է **ձկան** ու ծովային այլ կենդանիների մսի մեծ սպառմամբ: Զուկը ճապոնացիների սննդաբաժնում երկրորդն է՝ բրնձից հետո: Ճապոնիան ներկայումս ձուկ և ձկնամթերքներ ներմուծում է:

Ձկնորսանավ Ճապոնական ծովում

Տրանսպորտը: Որպես ծովային երկիր՝ Ճապոնիան իր արտաքին փոխադրումներն իրագործում է բացառապես **ծովային առևտրական տրանսպորտով**: Կատարվում են նաև **ներքին** փոխադրումներ երկրի տարբեր մասերում գտնվող բազմաթիվ նավահանգիստների միջև:

Ճապոնիայի նավատորմում մեծաթիվ են **նավթատար գերխոշոր լցանավերը և հանքատար նավերը**: Խոշորագույն նավահանգիստներից են **Տոկիոն, Յոկոհաման, Օսական, Մուրորանը**:

Ճապոնական արտադրության գերլցանավ

Ներքին փոխադրումներում մեծ է **երկաթուղային տրանսպորտի** դերը: Երկաթուղիները բարեկարգ են, մեծ մասը՝ էլեկտրիֆիկացված, իսկ գնացքները՝ արագընթաց: **Հոնսյու** ու **Հոկայդո** կղզիների միջև երկաթուղային հաղորդակցությունն իրագործվում է Ցուգարու նեղուցի տակով կառուցված՝ աշխարհում ամենաերկար (ավելի քան 53 կմ) **«Սեյկան» թունելով**:

Ճապոնիայի **ավտոմոբիլային տրանսպորտը** զարգացած է ամենուրեք: Ավտոճանապարհային ցանցը խիտ է, ընդհանուր երկարությունը՝ 1,1 մլն **կմ**, որի 75%-ը բարեկարգ մայրուղիներ են: Կառուցված են բազմաթիվ կամուրջներ, այդ թվում՝ աշխարհի ամենաերկար (4 կմ) կախովի կամուրջը՝ **«Ակաշի Կայկյոն»**, որը Հոնսյու կղզու Ակաշի քաղաքը կապում է Ավայի կղզուն, իսկ վերջինս էլ կապված է Սիկոկու կղզուն:

Զարգացած է **օդային տրանսպորտը**: Օդային խոշոր հանգույց է **Տոկիոն**: Ցամաքային տարածքի սղության պատճառով ծովում կառուցված է արհեստական կղզի, որի վրա՝ «**Կանսայ**» միջազգային օդանավակայանը: Կառուցվում է ևս մեկը՝ ավելի երկար թռիչքուղով: Դրանք ցամաքին միացած են կամրջով և թունելով:

Արտաքին տնտեսական կապերը: Երկրի տնտեսությունը մեծապես կախված է արտաքին շուկայից՝ ինչպես հումքի ու վառելիքի ներկրման, այնպես էլ պատրաստի ապրանքի արտահանման առումներով: Արտահանության ծավալը գերազանցում է ներկրմանը: Ճապոնիան ներկրում է նավթ, երկաթի հանքաքար, բոքսիտ, բամբակ, բուրդ, շաքար: Արտահանում է հատկապես գերխոշոր նավեր, ավտոմեքենաներ, նկարահանող և ձայնագրող տեխնիկա, համակարգիչներ, մեքենաներ ու սարքավորումներ, քիմիական և տեքստիլ ապրանքներ: Խոշորագույն գործընկերներն են **Չինաստանը**, **Ռուսաստանը**, **ԱՄՆ-ը**, **Կորեայի Հանրապետությունը**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Ճապոնիայի տնտեսության արագ զարգացման պատճառները:
2. Որո՞նք են Ճապոնիայի տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխության միտումները:
3. Ճապոնիայի արդյունաբերության ո՞ր ճյուղերն են առաջատար, ինչո՞ւ:
4. Ճապոնիայի գյուղատնտեսության ո՞ր ճյուղերն են առավել զարգացած, ինչո՞ւ:
5. Բնութագրե՛ք Ճապոնիայի տրանսպորտային համակարգի զարգացման մակարդակը:
6. Բնութագրե՛ք Ճապոնիայի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՍ 48. ԱՖՐԻԿԱ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Քաղաքական քարտեզը: Աֆրիկան իր տնտեսական և սոցիալական զարգացման ցուցանիշներով զգալիորեն զիջում է մյուս տարածաշրջաններին: Դա գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ այս աշխարհամասի երկրները, բացառությամբ Եթովպիայի և Լիբերիայի, մինչև XX դարի կեսերը եվրոպական խոշոր երկրների գաղութներ էին: XX դարի 50-ական թվականներից Աֆրիկայի գաղութներն աստիճանաբար ձեռք բերեցին անկախություն[1], և այժմ աշխարհամասի տարածքում ձևավորվել է 55 պետություն: Աֆրիկայի քաղաքական քարտեզի վրա նոր պետությունների առաջացումը դեռևս շարունակվում է: 2011թ. Սուդանի հարավային մասը անկախացավ՝ սկիզբ դնելով Հարավային Սուդանի Հանրապետությանը: Աֆրիկյան երկրները հիմնականում նոր զարգացող երկրներ են:

Պետական կարգով Աֆրիկայի պետությունների մեծ մասը նախագահական հանրապետություններ են, իսկ միապետությունները երեքն են՝ Լեսոտոյի, Սվազիլենդի և Մարոկկոյի թագավորությունները:

Արաբական պետությունների լիգայի համաժողով

Աֆրիկյան երկրների միջև կան տարածքային վեճերի և միջէթնիկական ու միջկրոնական հակամարտությունների շատ օջախներ: Դրանց մեծ մասը գաղութային անցյալի հետևանք է: Սակայն աֆրիկյան երկրներն առանձնանում են նաև տնտեսական, քաղաքական, բնապահպանական և այլ ուղղություններում փոխհամագործակցությամբ: Աֆրիկայի երկրների համագործակցության մեջ կարևոր դերակատարություն ունեն **Աֆրիկյան միասնության կազմակերպությունը**, որը 2002թ. վերակազմակերպվել է **«Աֆրիկյան միություն»** կազմակերպության, և **Արաբական պետությունների լիգան**: Վերջինիս անդամակցում են Աֆրիկայի բոլոր՝ 10 արաբական երկրները:

Աշխարհագրական դիրքը: Աֆրիկայի զարգացման վրա զգալի ազդեցություն է թողնում նաև նրա **ֆիզիկաաշխարհագրական** դիրքը: Գլխավորապես տաք ջերմային գոտում գտնվելու, ինչպես նաև հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք շատ մեծ ձգվածության պատճառով զգալի տարածություններ են զբաղեցնում սավաննաների և արևադարձային անապատների ու կիսաանապատների զոնաները: Այստեղ առանց ջրի գրեթե անհնար է ոչ միայն տնտեսական գործունեությամբ զբաղվելը, այլև մարդու մշտական բնակությունը:

1. 1960թ. Աֆրիկայում անկախություն ստացավ ամենամեծ թվով՝ 17 պետություն: Այդ տարեթիվն անվանում են «Աֆրիկայի տարի»:

Աֆրիկա (քաղաքական քարտեզ)

Աֆրիկայի՝ Միջերկրական ծովին հարող շրջանները և այդտեղ բնակվող ժողովուրդները եղել են եվրոպական և առաջավորասիական քաղաքակրթությունների ազդեցության ոլորտում: Այժմ էլ դրանք սերտ կապերի մեջ են Հարավային Եվրոպայի և Հարավարևմտյան Ասիայի երկրների հետ: Դրան հակառակ՝ մայրցամաքի մեծ մասը՝ Սահարան ու նրանից հարավ ընկած երկրները, մինչև XVI դարը մեկուսացված է եղել այդ քաղաքակրթություններից, ապրել ինքնուրույն կյանքով:

Աֆրիկյան երկրների **տնտեսաաշխարհագրական** դիրքի (ՏԱԴ) գնահատման մեջ կարևորվում է համաշխարհային օվկիանոսի նկատմամբ դրանց ունեցած դիրքը: Աֆրիկյան երկրներից 16-ը ծովափ չունեն և զրկված են ծովի ռեսուրսների անմիջական

օգտագործման հնարավորությունից: Միաժամանակ, Աֆրիկայի ՏԱԻ-ի բացասական կողմերից է Եվրոպայի զարգացած երկրների հետ ցամաքային կարճ առևտրական ուղիների բացակայությունը:

Աֆրիկայի զարգացման վրա մեծ է **բնական պայմանների** և **ռեսուրսների** ազդեցությունը: Տարածքում գերիշխում են մինչև 1000 մ բարձրության սարահարթերը, իսկ դաշտավայրերը զբաղեցնում են տարածքի 10%-ը:

Աֆրիկայի մակերևույթում գերակշռող են սարահարթերը:

Աֆրիկայի ընդերքը հարուստ է բազմատեսակ օգտակար հանածոներով: Աֆրիկան աշխարհում առաջատար տեղ է գրավում **մանգանի**, **քրոմի**, **բոքսիտների**, **ոսկու**, **պլատինի**, **ալմաստի**, **ֆոսֆորիտի** պաշարներով: Միաժամանակ, մետաղային հանքաքարերն առանձնանում են մետաղների բարձր պարունակությամբ և որակով ու մեծ մասամբ արդյունահանվում են բաց՝ էժան եղանակով:

Վառելիքային ռեսուրսներից առանձնանում են նավթի և գազի պաշարները, որոնք կենտրոնացած են Սահարայի հյուսիսային (Ալժիր, Լիբիա) և Գվինեական ծոցի առափնյա շրջաններում (Նիգերիա):

Աֆրիկան հարուստ է նաև **հողային ռեսուրսներով**: Սակայն մշակելի է հողային ֆոնդի մոտ 1/5-ը: Աֆրիկայի տարածքի 40%-ը զբաղեցնում են անապատները, իսկ միլիոնավոր հեկտար հողատարածքներ ոչ խելամիտ հողօգտագործման և կլիմայի համամոլորակային տաքացման պատճառով անապատացման վտանգի տակ են:

Պղնձի հանքաքարի բաց հանույթ Զամբիայում

Ջրային ռեսուրսները Աֆրիկայում տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ, ինչը բացասաբար է ազդում գյուղատնտեսության զարգացման վրա: Աշխարհամասի չորային շրջանների հողերի 3-4%-ը ոռոգվում է, դրան հակառակ՝ հասարակածային գոտում ավելցուկային խոնավությունը խոչընդոտում է տնտեսական գործունեությանը: Աֆրիկայի ջրաէներգետիկ ռեսուրսների 1/2-ը Կոնգոյի ավազանում է:

Անապատային և կիսաանապատային գոտիներում ու երբեմն էլ սավաննաներում հողերի ոռոգման միակ աղբյուրը ստորերկրյա ջրերն են:



Աֆրիկա (օգտակար հանածոներ)

Անտառապատ տարածքի մեծությամբ Աֆրիկան զիջում է միայն Լատինական Ամերիկային և Ռուսաստանին: Անտառները զբաղեցնում են նրա տարածքի 1/4-ը: Անտառային ռեսուրսների հիմնական մասը Կոնգոյի ավազանում է: Այդտեղ անտառահատման տեմպերը մի քանի անգամ գերազանցում են փայտի բնական աճի տեմպերին, և արդեն հսկայական չափերի են հասել անտառազրկված տարածքները:

Բացառիկ մեծ են Աֆրիկայի **ռեկրեացիոն ռեսուրսները**: Պատմաճարտարապետական հուշարձաններ շատ կան Եգիպտոսում և Թունիսում (Կարթագենի տարածքում): Առավել շատ են բնածին ռեկրեացիոն ռեսուրսները. Միջերկրական և Կարմիր ծովերի լողափերը, Նգորոնգորոյի, Սերենգետիի (Տանզանիա, Քենիա) ազգային

պարկերը և բազմաթիվ արգելանոցներ շուրջ տարի դեպի իրենց են գրավում Աֆրիկայի բնապատմական վայրերը տեսնել ցանկացող միլիոնավոր զբոսաշրջիկների:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ գործոնների ազդեցության շնորհիվ է ձևավորվել Աֆրիկայի ժամանակակից քաղաքական քարտեզը:
2. Գերազանցապես ինչպիսի՞ կառավարման ձև ունեն Աֆրիկայի հանրապետությունները:
3. Բնութագրե՛ք Աֆրիկայի բնական պայմանների ու ռեսուրսների հիմնական աշխարհագրական առանձնահատկությունները:
4. Աֆրիկայում ի՞նչ հիմնախնդիրներ են առաջանում բնական պայմանների ու ռեսուրսների քանակական ու որակական փոփոխությունների պատճառներով:

ԴԱՍ 49. ԱՖՐԻԿԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Աֆրիկայում բնակչության թվաքանակն արդեն հասել է 1,1 միլիարդի, իսկ ժողովրդագիրների կանխատեսումներով՝ 2050թ. կհատի 2 միլիարդի սահմանը: Աֆրիկան աշխարհում առանձնանում է բնակչության բնական աճի ամենաբարձր ցուցանիշով: Դա բացատրվում է կանանց վաղ ամուսնությամբ, կրթական և զբաղվածության ցածր մակարդակով, բազմանդամ ընտանիք ունենալու դարավոր սովորություններով և գյուղաբնակների մեծ թվով:



XX դարի կեսերից բնակչության բժշկական սպասարկման որոշակի բարելավումը, սոցիալական ծառայությունների կազմակերպումը, աղքատության կրճատումը նպաստեցին մահացության մի փոքր նվազմանը: Ծնելիության բարձր մակարդակի պահպանման պայմաններում մայրցամաքի բնակչության թվաքանակը 50 տարում ավելացավ 3-4 անգամ՝ առաջացնելով հզոր «ժողովրդագրական պայթյունի» ալիք: Մանկական մահացության ցուցանիշն այստեղ ամենաբարձրն է աշխարհում, իսկ կյանքի միջին տևողությունը՝ ամենափոքրը (ընդամենը 52 տարի):

Բնակչության կեսից ավելին կազմում են երեխաները, ինչն ավելի է սրում բնակչության զբաղվածության, կրթության և առողջապահության առկա հիմնախնդիրները: Աֆրիկայի բնակչությունն առանձնանում է ցածր կրթական ցենզով. չնայած որոշ առաջընթացներին՝ դեռևս անգրագետ է բնակչության 1/3-ը, իսկ առանձին երկրներում՝ 4/5-ը:

Բազմազան է Աֆրիկայի բնակչության **ազգային** կազմը, հաշվվում են 500-ից ավելի ազգեր ու ազգություններ: Առավել մեծաթիվ լեզվաընտանիքներն են սեմաքամյանը և նիգերոկորդոֆանյանը: Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներով են խոսում եվրոպացի գաղութարարների սերունդները՝ Հարավային Աֆրիկան գաղութացրած հոլանդացիների, գերմանացիների ու անգլիացիների ժառանգները: Աֆրի-

կայի արևադարձային և հասարակածային շրջաններում դեռևս պահպանվել են ցեղային միությունները:

Աֆրիկյան երկրների մեծ մասում, որպես գաղութատիրության հետևանք, դեռևս պետական լեզուներ են համարվում մետրոպոլիաների[1] լեզուները՝ անգլերենը, ֆրանսերենը և պորտուգալերենը:

Աֆրիկայում շատ են **միջէթնիկական հակամարտությունները**, որոնք արյունալի հետևանքներ են ունեցել Ռուանդայում, Սուդանում, Քենիայում, Չադում և Անգոլայում: Միայն 1994թ. Ռուանդայում թութսի և խութու ցեղերի արյունալի հակամարտությանը զոհ գնաց շուրջ 1 մլն մարդ:

Աֆրիկայի բնակչության **կրոնական կազմը** նույնպես բազմազան է: Մայրցամաքի հյուսիսային շրջաններում գերակշռում է մահմեդականությունը, կենտրոնական շրջաններում՝ տեղական հավատները, իսկ մնացած մասում՝ քրիստոնեությունը:

Աֆրիկայի դեկորատիվ կիրառական արվեստի աշխատանք

Հսկայական է աֆրիկյան ժողովուրդների մշակութային ժառանգությունը (Եգիպտոսի հնագույն քաղաքակրթության մոնումենտալ ճարտարապետությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը, հնագույն ժայռային գեղանկարչությունը):

Աֆրիկայի բնակչությունը խիստ անհավասարաչափ է **տեղաբաշխված**: Բնակչության միջին խտությունը (33 մարդ/կմ²) մի քանի անգամ փոքր է Արևմտյան Եվրոպայի և Ասիայի համապատասխան ցուցանիշներից: Նեղոսի հովտում բնակչության միջին խտությունը կազմում է շուրջ 2000 մարդ/կմ², դրան հակառակ՝ հարևան անապատներում՝ մոտ 1 մարդ/կմ²:

Աֆրիկայում բնակչության փոքր մասն է ապրում **քաղաքներում**, սակայն շատ բարձր են քաղաքներում բնակչության կուտակման տեմպերը: Դրանք այնքան բարձր են, որ նույնիսկ մի շարք քաղաքների բնակչության թվաքանակը վերջին տասնամյակում կրկնապատկվել է: Արագ է ընթանում նաև միլիոնանոց քաղաքների թվաքանակի աճը: 1980թ. Աֆրիկայում կային ընդամենը 8, 1990թ.՝ 27, իսկ 2000թ.՝ 40 այդպիսի քաղաքներ, որոնց բնակչության թիվը գերազանցում էր մեկ միլիոնը: Դրանցում երբեմն կուտակվում է երկրների քաղաքային ողջ բնակչության 1/3-ը: Աֆրիկայում գերխոշոր քաղաքներ են Կահիրեն (15 մլն բնակիչ) և Լագոսը (12 մլն բնակիչ): Խոշոր քաղաքներ են նաև Ալեքսանդրիան, Յոհաննեսբուրգը և այլն:

Աֆրիկյան գյուղական բնակավայրերը հիմնականում փոքր են: Խոշոր գյուղական բնակավայրերը մեծ մասամբ տեղաբաշխված են սավաննաներում: Այստեղ խո-

1. Մետրոպոլիա (հունարեն՝ մայր երկիր) – այս դեպքում նշանակում է գաղութներ ունեցող երկիր:

նավ հասարակածային անտառների ու սավաննաների բնական զոնաների տարածքներում բնակվող որոշ ցեղեր (պիգմեյներ, բուշմեններ) մեր օրերում էլ քոչվոր են և զբաղվում են հավաքչությամբ ու որսորդությամբ:

Տնտեսությունը: Չնայած շուրջ կեսդարյա անկախությանը և ազգային տնտեսությունների ձևավորմանը՝ աֆրիկյան երկրների մեծ մասին դեռևս չի հաջողվել տնտեսական լուրջ առաջընթաց արձանագրել: Գրեթե բոլոր երկրներին **բնորոշ են զարգացած հանքագործական արդյունաբերությունը** և **մանր ապրանքային արևադարձային** ու **մերձարևադարձային բուսաբուծությունը**:



Աշխարհի ՀՆԱ-ի մեջ Աֆրիկայի բաժինը շատ փոքր է և շատ անգամ է զիջում մայրցամաքի տարածքի ու բնակչության բաժնին:

Աֆրիկայի տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի վրա մեծ է գաղութային անցյալի ազդեցության **կնիքը**: Դա պայմանավորված է նրանով, որ նախկին գաղութատեր երկրների համար Աֆրիկան հիմնականում հումքի շուկա էր:

Գյուղատնտեսության մեջ զբաղված է երկրների աշխատանքային ռեսուրսների մեծ մասը: Գյուղատնտեսությունը տեղաբաշխված է հիմնականում գետահովիտներում, օազիսներում և ծովափնյա բնակլիմայական նպաստավոր շրջաններում: Սպառողական (միայն արտադրողի պահանջարկը բավարարող) ավանդական հետամնաց տնտեսությունների կողքին զարգանում են առաջադեմ տեխնիկայով հագեցած, ապրանք արտադրող ու արտահանող **խոշոր ագրարային տնտեսություններ**:

Աֆրիկայի գյուղատնտեսության մեջ գերակշռում է ձեռքի աշխատանքը:

Աֆրիկայում ոռոգչական և էներգետիկ նպատակներով կառուցվել են հսկա ջրամբարներ: Դրանցից նշանավոր են Վոլտա գետի վրա կառուցված Ակոսոմբայի, Զամբեզիի վրա կառուցված Կարիբայի և Նեղոսի վրա կառուցված Ասուանի ջրամբարները:

Գյուղատնտեսության մեջ առաջատարը **բուսաբուծությունն** է, որի համախառն արտադրանքի ծավալը 5 անգամ գերազանցում է **անասնապահությանը**:

Անասնապահության զարգացման ցածր մակարդակը պայմանավորված է անասունների ցածր մթերատվությամբ, որը մի քանի անգամ զիջում է եվրոպական համապատասխան ցուցանիշներին: Այդ պատճառով պահում են ավելի մեծ թվով անասուններ, քան ի վիճակի է կերակրելու սավաննան՝ հիմնական անասնապահական գոտին: Անասնապահությանը մեծ վնաս են հասցնում նաև վայրի կենդանիները,

հատկապես առյուծները: Իսկ ցեցե ճանճի տարածման գոտում՝ Կենտրոնական Աֆրիկայում, խոշոր եղջերավոր անասնապահությունը գրեթե անհնարին է, քանի որ այդ ճանճի խայթոցը առաջացնում է «նագանա» կոչվող հիվանդությունը, որի հետևանքով անասունները մահանում են:

Կարիբայի ջրամբարը

Աֆրիկյան երկրները կակաոյի, մանիոկի, սիսալի[1], յուղատու արմավի, փյունիկյան արմավի խոշորագույն արտադրողներն են աշխարհում: Աշխարհում արտադրված կակաոյի 65%-ը, մանիոկի 54%-ը բաժին են ընկնում Աֆրիկային (տե՛ս աղյուսակը):

Կակաոյի խոշոր արտադրողներն են Կոտ դ'Իվուարը, Գանան, իսկ մանիոկ արմատապտղի մշակությամբ հիմնականում զբաղվում են խոնավ հասարակածային անտառների և սավաննաների գոնաներում: Մանիոկի արտադրության համաշխարհային առաջատարը Նիգերիան է:

Յուղատու արմավենի առավելապես մշակում են Արևադարձային Աֆրիկայում, փյունիկյան արմավենի՝ Եգիպտոսում, Ալժիրում, թելատու մշակաբույսեր (բամբակենի)՝ Եգիպտոսում, Սուդանում, Նիգերիայում, Ուգանդայում: Մեծ թվով աֆրիկյան երկրներ աշխատանքի միջազգային բաժանման մեջ մասնագիտացել են 1–2 մշակաբույսերի գծով:

Աֆրիկայի հանքագործական արդյունաբերության և բուսաբուծության մի շարք արտադրատեսակների բաժինն աշխարհում

Հանքագործական արդյունաբերության արտադրատեսակները	Բաժինը %	Բուսաբուծության արտադրատեսակները	Բաժինը %
ալմաստ	48	կակաո	65
ոսկի	33	մանիոկ	54
կոբալտի հանքաքար	75	սիսալ	26
քրոմիտներ	44	կոկոսյան արմավ	39
մանգանի հանքաքար	33	գետնանուշ	22
ուրան	37	սուրճ	18
ֆոսֆորիտներ	28	սորգո	15
պղնձի հանքաքար	12	ձիթապտուղ	15
բոքսիտներ	18	թեյ	15

1. Կոպիտ թելատու մշակաբույս:

Հացահատիկային գլխավոր մշակաբույսերն են եգիպտացորենը, ցորենը և բրինձը: Հացահատիկի համախառն բերքի կեսից ավելին բաժին է ընկնում ՀԱՀ-ին, Նիգերիային, Եգիպտոսին, Եթովպիային և Մարոկկոյին:

Աֆրիկայի **արդյունաբերության** մեջ արդյունահանող ճյուղերը զգալիորեն գերազանցում են մշակող ճյուղերին: Պատահական չէ, որ մի շարք օգտակար հանածոների արդյունահանման ծավալներով Աֆրիկան առաջատարն է աշխարհում (տե՛ս աղյուսակը): Նավթի և բնական գազի հանույթը կենտրոնացած է հիմնականում Նիգերիայում, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայում (Եգիպտոս, Ալժիր, Լիբիա): Հյուսիսային Աֆրիկայից Միջերկրական ծովի հատակով անցկացված խողովակաշարերով դրանք տեղափոխվում են եվրոպական երկրներ:

Հսկայական են Կենտրոնական և Հարավային Աֆրիկայի ալմաստի (ՀԱՀ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Գանա), ոսկու (ՀԱՀ, Զիմբաբվե), քրոմի (ՀԱՀ), ուրանի պաշարները և դրանց արդյունահանման ծավալները: Սև մետաղաձուլությամբ առաջատար են ՀԱՀ-ը, Ալժիրը, Նիգերիան: Սեփական հումքի և էժան էլեկտրաէներգիայի հիման վրա մի շարք երկրներում զարգացել է գունավոր մետաղաձուլությունը, որով աշխարհում աչքի են ընկնում ՀԱՀ-ը, Զամբիան և աֆրիկյան որոշ այլ երկրներ: Դրանք ձուլում են պղինձ, ալյումին, կապար, ցինկ, անագ:

Տրանսպորտային ուղիները Աֆրիկայում զարգացել են գաղութատիրության շրջանում և հիմնականում ձգվում են **հումքի արդյունահանման վայրից դեպի առաքման նավահանգիստները**: Այժմ կառուցվել են նաև Աֆրիկայի հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք ձգվող տրանսպորտային արդիական ուղիներ, որոնք տարբեր ուղղություններով ճյուղավորվելով՝ ձևավորում են բավականին խիտ ցանց: Համեմատաբար զարգացած ցամաքային տրանսպորտային համակարգեր կառուցվել են Աֆրիկայի ծայր հյուսիսում և ՀԱՀ-ում: Աֆրիկայում բեռնաշրջանառության մեծ մասը բաժին է ընկնում ծովային տրանսպորտին, որով էլ հիմնականում իրականացվում է արդյունաբերական և գյուղատնտեսական հումքի արտահանումը դեպի Եվրոպա, ԱՄՆ, Չինաստան և այլն:

Աֆրիկյան երկրների ներմուծման կառուցվածքում հիմնական բաժինը պատկանում է մեքենաներին, սարքավորումներին, սպառման ապրանքներին և տրանսպորտային միջոցներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ գործոններով են պայմանավորված Աֆրիկայի բնակչության բնական աճի բարձր ցուցանիշները:
2. Ինչպիսի՞ն է Աֆրիկայի բնակչության ազգային, կրոնական կազմը:
3. Բնութագրե՛ք բնակչության տեղաբաշխումն Աֆրիկայում: Փորձե՛ք բացատրել մեծ քաղաքներում բնակչության կուտակման բարձր տեմպերը:
4. Որո՞նք են Աֆրիկայի տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի գլխավոր առանձնահատկությունները:
5. Բնութագրե՛ք հանքագործական արդյունաբերության և բուսաբուծության առաջատար ենթաճյուղերը:
6. Վերլուծե՛ք Աֆրիկայի տրանսպորտի և արտաքին տնտեսական կապերի զարգացման միտումները:

ԴԱՍ 50. ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տարածքը՝ 1,2 մլն կմ²
Բնակչությունը՝ 50,6 մլն (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Պրետորիա
Պետական կարգը՝ նախագահական հանրապետություն

Հարավաֆրիկյան Հանրապետությունը (ՀԱՀ)[1] Աֆրիկայի տնտեսապես ամենազարգացած պետությունն է:

ՀԱՀ-ը գտնվում է Աֆրիկա աշխարհամասի ծայր հարավում: Հյուսիս-արևմուտքում սահմանակցում է Նամիբիայի, հյուսիսում՝ Բոտսվանայի և Զիմբաբվեի, հյուսիս-արևելքում՝ Մոզամբիկի ու Սվազիլենդի հետ: Երկրի արևելյան մասում է գտնվում Լեսոտոյի Թագավորությունը, որն անկլավային պետություն է (այսինքն՝ ամբողջ սահմանագծով շրջապատված է ՀԱՀ-ի տարածքով): ՀԱՀ-ի ափերը ողողում են Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների ջրերը: Երկրի **տնտեսաաշխարհագրական դիրքի** վրա դրական ազդեցություն ունեն Աֆրիկան շրջանցող ծովային ուղիները, որոնց նշանակությունը ՀԱՀ-ի յուրացման և տնտեսական զարգացման գործում մեծ է:

ՀԱՀ-ի ներկայիս տարածքը եվրոպացիներից առաջինը գաղութացրել են հոլանդացիները: Հետագայում՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին, անգլիացիները, նվաճելով այս տարածքները, 1910թ. հիմնեցին **Հարավաֆրիկյան միություն** անունով **բրիտանական կախյալ պետությունը**: 1940-ական թվականներին Հարավաֆրիկյան միության իշխող սպիտակամորթ փոքրամասնությունը տեղաբնիկների (բանտու, բուշմեն և այլ ցեղեր) նկատմամբ սկսեց իրականացնել բացահայտ ռասիստական **ապարտեիդի**[2] քաղաքականություն: Երկրի ոչ բերրի հողերի շրջաններում ստեղծվեցին սևամորթների բնակեցման համար նախատեսված տասը տարածքներ: 1961թ. ռասիստական Հարավային Աֆրիկան, դուրս գալով Բրիտանական Համագործակցությունից, իրեն հռչակեց անկախ պետություն՝ սկիզբ դնելով Հարավաֆրիկյան Հանրապետությանը:

Աֆրիկացիների երկարամյա պայքարով 1990-ական թթ. սկզբին փլուզվեց ռասիստական ռեժիմը, վերացվեց ապարտեիդի քաղաքականությունը: ՀԱՀ-ը բռնեց ժողովրդավարական զարգացման ուղին, ինչը ներկայիս տնտեսական առաջընթացի հիմնական նախապայմաններից է: ՀԱՀ-ը ունի դաշնային տարածքային կազմակերպման ձև, և պետությունը բաժանված է ինքնավարության որոշակի իրավունքներով 9 վարչատարածքային միավորների (պրովինցիաներ):

Բնական պայմանները և ռեսուրսները: ՀԱՀ-ի բնական պայմանները բազմազան են: Նրա տարածքի մեծ մասը ձգվում է արևադարձային չորային կլիմայական մարզից (Նամիբ անապատ) մինչև արևելքում՝ արևադարձային խոնավ մարզ, իսկ ծայր հարավային մասը մերձարևադարձային գոտում է: Մակերևույթում գերակշռում են սարահարթերը, որոնք արևելքում եզրավորված են Դրակոնյան, իսկ հարավում՝

1. Երկրի միջազգայնորեն ընդունված անվանումն է Հարավային Աֆրիկա:
2. **Ապարտեիդ** - խտրականության ծայրահեղ դրսևորում, որն արտահայտվում է բնակչության ինչ-որ խմբի՝ քաղաքական, տնտեսական և քաղաքացիական իրավունքների զգալի սահմանափակմամբ, ընդհուպ հատուկ առանձնացված տարածքներում նրանց մեկուսացմամբ:

Կապի լեռներով: Ամենաշատ տեղումները թափվում են այդ լեռների հողմակողմ լանջերին, իսկ երկրի կենտրոնական շրջաններում տեղումների քանակը պակասում է:

ՀԱՀ-ի տարածքի գետային ցանցը նոսր է: Նշանավոր գետերն են Լիմպոպոն և Օրանժը:

Երկրի արևելյան ծովափնյա գոտում տարածված են սավաննաները, իսկ դրանցից հարավ՝ մերձարևադարձային մուսսոնային անտառները: Կալահարիի հարթավայրերում գերիշխում են կիսաանապատները և սավաննաները:

Երկրի ծովափնյա շրջանների մեղմ կլիման, ընդարձակ լողափերը, ինչպես նաև ազգային պարկերում ու արգելոցներում պահպանվող բնական ինքնատիպ լանդշաֆտները դեպի իրենց են ձգում բազմաթիվ զբոսաշրջիկների:

ՀԱՀ-ի բացառիկ հարուստ ընդերքում գտնվում են ոսկու համաշխարհային հետախուզված պաշարների 53%-ը և ալմաստի 20%-ը: ՀԱՀ-ում է գտնվում նաև մանգանի, պլատինի, քրոմի, վանադիումի համաշխարհային արդյունաբերական պաշարների կեսից ավելին: Նրա ընդերքը շատ հարուստ է նաև երկաթաքարով, քարածխով և ուրանով:

Բնակչությունը: ՀԱՀ-ի բնակչության ռասայական և ազգային ժամանակակից կազմը ձևավորվել է եվրոպացիների կողմից մայրցամաքի բնակեցման և յուրացման պատմական գործընթացների արդյունքում: Այժմ սևամորթները կազմում են բնակչության մոտ 80%-ը, սպիտակամորթները՝ 9%-ը, մուլատները՝ 9%-ը, հնդիկները և այլ ասիացիները՝ 2%-ը:

Բնակչության կրոնական կազմը խայտաբղետ է. 3/4-ից ավելին դավանում է քրիստոնեություն: Կան նաև տեղական հավատների հետևորդներ:

Բնակչությունն անհավասարաչափ է տեղաբաշխված: Համեմատաբար խիտ են բնակեցված խոշոր նավահանգիստների և քաղաքային ագլոմերացիաների (Յոհաննեսբուրգ, Քեյփթաուն, Դուրբան) տարածքները:

Տեսարան հարթագագաթ հին և քայքայված Դրակոնյան լեռներից

Սպորտային նավարկություն Օրանժ գետով

Քեյփթաունի ծովափնյա հատվածը

Նոսր են բնակեցված երկրի ներքին կիսաանապատային շրջանները:

Տնտեսությունը: ՀԱՀ-ին բաժին են ընկնում ամբողջ մայրցամաքի տարածքի 4,2%-ը և բնակչության ընդամենը 5,5%-ը, մինչդեռ նրան բաժին են ընկնում Աֆրիկայի ամբողջ ՀՆԱ-ի 1/3-ը և մշակող արդյունաբերության համախառն արտադրանքի ու ավտոմեքենաների 2/5-ը:

ՀԱՀ-ի տնտեսության կառուցվածքը տարբերվում է աֆրիկյան մյուս երկրներից և ավելի շատ նման է Ավստրալիային ու Կանադային:

Ոսկու բաց հանույթ ՀԱՀ-ում

ՀԱՀ-ի արդյունաբերության առաջատար ճյուղը **հանքագործական արդյունաբերությունն** է: ՀԱՀ-ը ոսկու, պլատինի արդյունահանման համաշխարհային առաջատարն է: Ոսկու կորզման կենտրոնը Յոհաննեսբուրգն է, որը հաճախ «Ոսկե քաղաք» են անվանում: Ալմաստի արդյունահանումը հիմնականում իրականացնում է այս ոլորտում աշխարհի ամենախոշոր՝ «Դե Բիրս» ընկերությունը: ՀԱՀ-ին է բաժին ընկնում աշխարհում արդյունահանվող ալմաստի շուրջ 1/5-ը: Երկիրը նաև ուրանի, բրոմիտի, մանգանի, երկաթաքարի և քարածխի հանույթով աշխարհի առաջատարներից է:

Մեքենաշինության ճյուղերից ՀԱՀ-ում զարգացած են հանքագործական մեքենաների արտադրության և ավտոմեքենաշինության ենթաճյուղերը: Այստեղ հավաքում են «ԲՄՎ», «Մերսեդես», «Տոյոտա» մակնիշների ավտոմեքենաներ:

Երկրի արդյունաբերության հիմնական մասը կենտրոնացած է Պրետորիայի ու Յոհաննեսբուրգի ագլոմերացիաներում և խոշոր նավահանգիստներում (Քեյփթաուն, Դուրբան, Փորթ Էլիզաբեթ):

Կիտրոնի բերքահավաք ՀԱՀ-ում

Գյուղատնտեսությունը ՀԱՀ-ի տնտեսության զարգացած ճյուղերից է: Մշակովի հողերը կազմում են երկրի հողային ֆոնդի 12%-ը: Տարածված մշակաբույսերն են ավոկադոն, գետնանուշը, եգիպտացորենը, շաքարեղեգը, բամբակենին, ցիտրուսները: Այստեղ զարգացած են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը, թռչնաբուծությունը: ՀԱՀ-ը անգորական այծերի բրդի (մոհայրի) արտադրության համեմատաբար նոր և առաջատար շրջաններից մեկն է աշխարհում: Աշխարհում առաջատար է նաև կարակուլի մորթիների արտադրությամբ:

Տրանսպորտը: ՀԱՀ-ի տրանսպորտային ցանցն ամենախիտն է Աֆրիկայում: Ավտոմոբիլային ճանապարհների 80%-ը բաձրորակ ու պինդ ծածկույթով է: Դրանցով է

իրականացվում ներքին բեռնափոխադրումների մեծագույն բաժինը: Երկաթուղային տրանսպորտի 90%-ը էլեկտրիֆիկացված է, և հիմնականում դրա միջոցով է լեռնահանքային արտադրանքը հասցվում մշակման կենտրոններ ու նավահանգիստներ: ՀԱՀ-ի խոշոր նավահանգիստներից կատարվում են դեպի Եվրոպա, Ասիա և Ավստրալիա ծովային հեռավոր բեռնափոխադրումներ:

ՀԱՀ-ի օդային տրանսպորտի գլխավոր հանգույցներն են Պրետորիայի, Դուրբանի և Յոհաննեսբուրգի միջազգային օդանավակայանները:

Արտաքին տնտեսական կապերը: ՀԱՀ-ի տնտեսական զարգացման կարևոր գործոններից է արտաքին առևտուրը: Երկիրն առավելապես ներմուծում է նավթ, պարենային ապրանքներ, տրանսպորտային միջոցներ և քիմիական արտադրանք: ՀԱՀ-ից հիմնականում արտահանվում են տարբեր տեսակի հանքանյութեր (ալմաստ, ոսկի, պլատին, մանգան, քրոմ և այլն), հանքագործական արդյունաբերության մեջ օգտագործվող սարքեր, ավտոմեքենաներ, ցիտրուսներ և ըմպելիքներ:

Արտաքին առևտրի գլխավոր գործընկեր պետություններն են ԱՄՆ-ը, Գերմանիան, Ճապոնիան, Նիդեռլանդները և Մեծ Բրիտանիան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հարավաֆրիկյան Հանրապետության ձևավորման հիմնական առանձնահատկությունները:
2. Բնութագրե՛ք ՀԱՀ-ի բնական պայմանները և ռեսուրսները:
3. Ինչպիսի՞ն են ՀԱՀ-ի բնակչության ռասայական, ազգային ու կրոնական կազմը և տեղաբաշխման առանձնահատկությունները:
4. Որո՞նք են ՀԱՀ-ի տնտեսության ճյուղային կառուցվածքը պայմանավորող գործոնները: Բնութագրե՛ք արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը:
5. Որո՞նք են ՀԱՀ-ի տրանսպորտի և արտաքին տնտեսական կապերի զարգացման առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԴԱՍ 51. ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՕՎԿԻԱՆԻԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ավստրալիա մայրցամաքը Խաղաղ օվկիանոսի կենտրոնական ու հարավային մասում ցրված շուրջ 10 հազ. մեծ ու փոքր կղզիների հետ կազմում է **Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասը**: ՄԱԿ-ի փաստաթղթերում այն անվանվում է պարզապես **Օվկիանիա**:

Կղզիներից խոշորներն են **Նոր Գվինեան** և **Նոր Զելանդիան**, որոնց բաժին է ընկնում Օվկիանիայի կղզիների ընդհանուր տարածքի 84%-ը:

Տեսարան Սողոմոնի կղզիներից

Չափազանց խայտաբղետ է աշխարհամասի քաղաքական քարտեզը: Տարածքով ու բնակչությամբ ամենախոշոր և տնտեսությամբ ամենահզոր պետությունը **Ավստրալիան** է, որը զբաղեցնում է աշխարհամասի ցամաքային տարածքի 90%-ից ավելին: Մնացյալ մասը բաժին է ընկնում մեկ տասնյակից ավելի կղզային պետություններին:

Օվկիանիայի կղզային պետություններից են **Միկրոնեզիայի Դաշնային Նահանգները, Սողոմոնի կղզիները, Ֆիջին, Վանուատուն, Սամոան, Կիրիբատին, Տոնգան** և այլն:

Բոլոր կղզային երկրները նախկինում եղել են արևմտաեվրոպական պետությունների գաղութներ և անկախություն են ձեռք բերել ու հռչակվել որպես հանրապետություններ կամ միապետություններ[1]:

Ավստրալիա մայրցամաքի մակերևույթը հիմնականում հարթ է, իսկ լեռնակազմական գործընթացները ակտիվ չեն, մինչդեռ Օվկիանիայի կղզիներում դրանք այժմ էլ ակտիվ են: Հաճախակի են երկրաշարժերն ու հրաբուխները: Հրաբուխները շատ են հատկապես Նորզելանդական և Հավայան կղզիներում:

Խաղաղ օվկիանոսի արևադարձային շրջաններում տարածված են կորալային ծագում ունեցող կղզիները: Դրանց մեծ մասում կան ծովալճակներ (լագունաներ):

Մայրցամաքում և կղզիներում հայտնաբերվել են նիկելի, երկաթաքարի, մանգանի, պղնձի, ոսկու, ածխի, ֆոսֆորիտի հարուստ պաշարներ:

Կլիման բնութագրվում է շուրջտարյա դրական ջերմաստիճաններով: Մշտապես փչող պասսատները Օվկիանիայի արևելյան շրջաններ են բերում առատ տեղումներ: Ամռանը պասսատները փոխարինվում են մուսսոններով, որոնք ավելի խոնավաբեր են:

1. Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասի մեջ մտնող Պապուա-Նոր Գվինեա պետությունը գտնվում է Ասիա աշխարհամասին պատկանող Մալայան կղզեխմբի Նոր Գվինեա կղզու արևելյան մասում, իսկ Հավայան կղզիները պատկանում են ԱՄՆ-ին՝ հանդիսանալով նրա նահանգներից մեկը:

Թե՛ Օվկիանիայի կղզիներում և թե՛ Ավստրալիայի ափամերձ շրջաններում հաճախակի են կործանարար փոթորիկները՝ թայֆունները:

Հողաբուսական ծածկը և **կենդանական աշխարհը** յուրահատուկ են: Բույսերի և հատկապես կենդանիների մեծ մասը էնդեմիկ է:

Կղզիների մեծ մասի բնական բուսածածկը անտառներ են: Աճում են ֆիկուսներ, արմավենիներ, արևադարձային ու մերձարևադարձային այլ ծառատեսակներ: Շատ են պտղատուները՝ արմավենին, հացենին, արքայախնձորը և այլն:

Բնակչությունը: Աշխարհամասում ապրում է մոտ 37 մլն մարդ, որից 23 մլն-ը՝ Ավստրալիայում, իսկ մնացյալը՝ Օվկիանիայի կղզիներում: Կղզիների բնակչության 80%-ից ավելին ապրում է Նոր Զելանդիայում և Պապուա-Նոր Գվինեայում: Կան նաև անմարդաբնակ կղզիներ:

Օվկիանիայի կղզային պետությունների քաղաքները խոշոր չեն: Միայն Օքլենդն է միլիոնանոց քաղաք: Մյուս քաղաքներից նշանավոր են Վելինգտոնը, Քրայսթչերչը (երկուսն էլ Նոր Զելանդիայում), Պորտ Մորսբին (Պապուա-Նոր Գվինեայում):

Ավստրալիան և հատկապես **Օվկիանիան կարելի է համարել ժողովուրդների թանգարան:** Օվկիանիայի ժողովուրդները, ըստ լեզվական, մշակութային և տեղաբաշխման առանձնահատկությունների, միավորվում են հետևյալ խմբերում՝ **մելանեզացիներ, միկրոնեզացիներ** և **պոլինեզացիներ**: Միայն Պապուա-Նոր Գվինեայում ապրում են 542 պապուասական ժողովուրդներ: Ավստրալիայի բնիկները հազարամյակներ առաջ եկել են Հարավարևելյան Ասիայից և Նոր Գվինեայից: Այստեղ ավելի ուշ հայտնվել են հնդիկները, ապա՝ եվրոպացիները:

Պարող պոլինեզացիներ

Իսկ պոլինեզացիները, ըստ նորվեգացի հանրահայտ ճանապարհորդ-գիտնական Թուր Հեյերդալի, Ամերիկայից Օվկիանիա տեղափոխված հմուտ ծովագնացների սերունդներն են: Օվկիանիայի բնակչության մեջ իրենց մշակութային առանձնահատկություններով, զբաղմունքով և անգամ կենցաղով առանձնանում են բնակչության հետևյալ երեք խմբերը՝ **տեղաբնիկներ**, **եկվոր բնակչություն** և այդ երկու խմբերի **միաձուլումից առաջացած սերունդներ**: Դրա հետևանքով **ռասայական կազմը** դարձել է խայտաբղետ՝ ավստրալոիդներ, եվրոպեոիդներ, մոնղոլոիդներ, խառը և անցումային ռասաների ժողովուրդներ:

Եվրոպական ծագում ունեցողները հիմնականում քրիստոնյաներ են: Տեղաբնիկների մեջ տիրապետում է բազմաստվածությունը: Ամեն ցեղի մարդիկ ունեն իրենց աստվածը, պաշտամունքի առարկան:

Օվկիանիայի կղզիների բնակչության հիմնական մասը զբաղվում է **գյուղատնտեսությամբ, ձկնորսությամբ** և **արհեստագործությամբ**:



Ավստրալիա և Օվկիանիա (քաղաքական քարտեզ)

Օվկիանիան տնտեսապես զարգացած տարածաշրջան է (հիմնականում շնորհիվ Ավստրալիայի): Աշխարհում տարածաշրջանի ՀՆԱ-ի բաժինը շուրջ 9 անգամ գերազանցում է նրա բնակչության բաժնին:

Տնտեսության մեջ աստիճանաբար մեծանում է արդյունաբերության բաժինը:

Ընդհանուր առմամբ՝ **արդյունաբերության** զարգացմանը, բացառությամբ Նոր Զելանդիայի, խոչընդոտում են հումքի և բարձրորակ կադրերի պակասը, տրանսպորտի թույլ զարգացածությունը, բնակչության զանգվածային անգրագիտությունը:

Մի քանի **կղզային** երկրներում կատարվում է ֆոսֆորիտի ու նիկելի հանքաքարի մեծ ծավալի արդյունահանում:

Տնտեսության մեջ զգալի դեր է կատարում անտառամթերումը: Մասնավորաբար՝ մեծ քանակությամբ որակյալ անտառափայտ են արտահանում Պապուա-Նոր Գվինեան և Նոր Զելանդիան:

Ավստրալիայի և Օվկիանիայի բաժինն աշխարհում (2012թ.)



Տրանսպորտի հիմնական ճյուղը ծովայինն է: Կղզիներում երկաթուղիներ չկան: Երկրների մեծ մասը զուրկ է նաև սեփական խոշոր նավատորմիղից[1]: Միջկղզային հաղորդակցությունը կատարվում է փոքր նավերով ու մակույկներով:

Օվկիանիայի առավել զարգացած երկիրը **Նոր Զելանդիան** է: Մեկ բնակչին ընկնող ՀՆԱ-ի ծավալով մոտենում է զարգացած եվրոպական երկրների մակարդակին: Ունի զարգացած էներգետիկ տնտեսություն և ագրոարդյունաբերական համալիր: Վերջին տարիներին խրախուսվում է նաև ծանր արդյունաբերության վերամշակող ճյուղերի և գիտատար արտադրությունների զարգացումը:

Համաշխարհային շուկայում Նոր Զելանդիան հայտնի է հատկապես անասնապահական մթերքներով (կենդանական յուղ, միս, բուրդ), մրգերով, ձկնեղենով, անտառափայտով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նկարագրեք Ավստրալիայի և Օվկիանիայի սահմանները, կազմը և քաղաքական բաժանումը:
2. Առանձնացրեք և վերլուծեք աշխարհամասի տնտեսական զարգացման նպաստավոր և աննպաստ բնական պայմանները:
3. Ի՞նչ գիտեք Օվկիանիայի բնակչության ազգային և ռասայական կազմի մասին:
4. Որո՞նք են Օվկիանիայի կղզիների բնակչության հիմնական զբաղմունքի տեսակները:
5. Բնութագրեք Նոր Զելանդիայի տնտեսության գլխավոր առանձնահատկությունները:

1. Ձևականորեն Վանուատու պետության նավահանգիստներում են գրանցված օտարերկրյա նավեր:

ԴԱՍ 52. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԱՎՍՏՐԱԼԻԱ). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տարածքը՝ 7682 հազ. կմ²
Բնակչությունը՝ 22,7 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Կանբեռա
Պետական կարգը՝ սահմանադրական միապետություն (դաշնային պետություն)

Ավստրալիան միավորում է ներքին ինքնավարություն ունեցող 6 նահանգ, 2 տարածք և հատուկ վարչական միավորի կարգավիճակ ունեցող մայրաքաղաքային տարածքը: Դա է պատճառը, որ պաշտոնապես կոչվում է **Ավստրալիայի Միություն**: Երկիրը Բրիտանական Համագործակցության անդամ պետություն է: Պետության ղեկավարը Անգլիայի թագուհին է (ձևականորեն), որին ներկայացնում է գեներալ-նահանգապետը:

Ավստրալիան աշխարհի միակ երկիրն է, որ զբաղեցնում է մի ամբողջ մայրցամաք՝ շրջակա կղզիներով:

Ընդերքը հարուստ է ոսկու, երկաթի, ուրանի, անագի, պղնձի, վոլֆրամի, ալյումինի և բազմամետաղների հանքաքարի պաշարներով: Հարավարևելյան շրջաններում կան նաև քարածխի զգալի պաշարներ:

Ավստրալիայի կլիմայի չորության պատճառով տարածքի մեծ մասը ոռոգման կարիք ունի, իսկ գետային ցանցը նոսր է: Համեմատաբար ջրառատ ու տնտեսական մեծ դեր ունեցող գետը Սուրեյն է՝ Դարլինգ վտակով: Ավստրալիան ստորերկրյա ջրերի պաշարներով առավել հարուստ երկրներից է. տարածքի 1/3-ը կազմում է ստորերկրյա ջրի ամենախոշոր՝ Արտեզյան մեծ ավազանը:

Տեսարան Մեծ ջրբաժան լեռնաշղթայից

Ավստրալիայի արևելքում ձգվող Մեծ ջրբաժան լեռների անտառածածկ տարածքները շատ տեղերում հատվել են և իրենց տեղը զիջել խնամքով մշակված դաշտերին ու պտղատու այգիներին: Ավստրալիայի հյուսիսային և արևելյան շրջաններում լայն տարածում ունեն սավաննաները, որոնք հիմնականում ծառայում են որպես արոտավայրեր և մասամբ էլ որպես վարելահող:

Երկրում այժմ հանդիպող բոլոր ընտանի կենդանիները բերել են եվրոպացիները: Այդ կենդանիներից ճագարը վայրենացել է ու այնքան բազմացել, որ մեծ վնաս է հասցնում ցանքատարածություններին, այգիներին ու արոտավայրերին և այդ պատճառով էլ ոչնչացվում է:

Եվրոպացիների (անգլիացիների) կողմից Ավստրալիայի յուրացումը սկսվել է XVIII դարի վերջից: Սկզբում Ավստրալիա մայրցամաքը ծառայում էր որպես աքսորավայր: Ավստրալիայի արևելյան մասի հարուստ հանքային և հողային ռեսուրսները, մեղմ կլիման, ընդարձակ արոտավայրերը եկվորներին բարեկեցիկ կյանքով ապրելու մեծ հնարավորություն տվեցին, ուստի հետագայում սկսվեց բրիտանացիների նաև կամավոր ներգաղթը:

Ավստրալիա (օգտակար հանածոներ)

Ավստրալիացի տեղաբնիկներ

Ներգաղթողների հոսքն այժմ էլ մեծ է: Տեղաբնիկները՝ **աբորիգենները**, որոնց թիվը մեծ չէ (**շուրջ 450 հազար**), պատկանում են **ավստրալոիդ ռասային:** Նրանց նախնիներն այստեղ են եկել 30-40 հազար տարի առաջ Հարավարևելյան Ասիայից: Մինչև եվրոպացիների գալը նրանք ծանոթ չէին հողագործությանն ու անասնապահությանը:

Ներգաղթած եվրոպացիները ոչխարաբուծության համար նոր արոտավայրեր ձեռք բերելու նպատակով սկսեցին բնիկներին քշել մայրցամաքի խորքերը՝ չորային շրջաններ: Դա ուղեկցվում էր նրանց դաժան բնաջնջումով: Աբորիգենների թիվը խիստ կրճատվեց նաև եվրոպացիների բերած հիվանդությունների ու ալկոհոլի չափազանց օգտագործման հետևանքով: Բնիկ ցեղերից թասմանցիները նույնիսկ ամբողջովին ոչնչացվեցին:

Բնիկները զբաղվում են որսորդությամբ և հավաքչությամբ: Բնիկները հմուտ որսորդներ են: Նրանք են հնարել բումերանգը: Նրանց մարտական ու որսորդական այդ զենքը կեռ փայտե մահակ է, որով հարվածում են նպատակակետին: Վրիպելու դեպքում բումերանգը վերադառնում է որսորդի մոտ: Քաղաքներից դուրս տեղաբնիկների մի մասը վարձու բատրակություն է անում ֆերմաներում՝ աշխատելով որպես հովիվ կամ բանվոր, իսկ քաղաքներում նրանք հիմնականում զբաղվում են բանվորությամբ:

Այժմ պետական մակարդակով սոցիալական բազմազան ծրագրեր են իրականացվում Ավստրալիայի աբորիգենների սոցիալական վիճակը թեթևացնելու, արդի քաղաքակրթությանը նրանց հաղորդակից դարձնելու համար:

Ավստրալիայի **եկվոր** բնակչությունը հիմնականում **անգլո-ավստրալիացիներ** են, որոնք խոսում են անգլերեն:

Ավստրալիան ամենանոսր բնակեցված (3 մարդ/կմ²) երկրներից մեկն է աշխարհում:

Բնակչությունը խիստ **անհամաչափ է տեղաբաշխված**:

Ավստրալիայի բնակեցումը սկսվել է արևելյան մասից, որտեղ և՛ բնական պայմաններն էին բարենպաստ, և՛ կտրտված ափերն էին հնարավորություն տալիս կառուցելու խոշոր նավահանգիստներ: Ներկայումս բնակչության գրեթե կեսը կենտրոնացած է հարավային և արևելյան ծովափնյա գոտում: Բնակչության միայն չնչին մասն է բնակվում այլ շրջաններում, որտեղ բնակավայրերն այնքան հեռու են իրարից, որ երեխաների ուսուցումը հաճախ իրականացվում է հեռավար ձևերով՝ համացանցով, ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Սիդնեյի օպերային թատրոնի շենքը

Քաղաքներում է բնակվում բնակչության մոտ 90%-ը: Խոշորագույն քաղաքներն են Սիդնեյն ու Մելբուռնը, յուրաքանչյուրը՝ ավելի քան 3 մլն բնակչով: Երկրի մայրաքաղաք Կանբեռայի բնակչությունը չի անցնում 300 հազարից:

Հայերն Ավստրալիայում հայտնվել են XIX դարի կեսերին: Բայց նրանց զանգվածային ներգաղթը եղել է Առաջին և հատկապես Երկրորդ աշխարհամարտին հաջորդող տարիներին:

Այժմ հայերի թիվը մոտ 60 հազար է: Նրանք բնակվում են խոշոր քաղաքներում, գլխավորապես՝ Սիդնեյում և Մելբուռնում: Դրանցում գործում են հայկական եկեղեցիներ ու վարժարաններ: Ազգային կյանքը կազմակերպում են բազմաթիվ մշակութային, բարեգործական, մարզական ու երիտասարդական միություններ:

Տնտեսությունը: Զարգացած եվրոպական և ամերիկյան պետություններից մեծ հեռավորության վրա գտնվելը էապես խոչընդոտել է Ավստրալիայի զարգացմանը: Տնտեսության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և լեռնահանքային արդյունաբերությունը: Սակայն ժամանակակից հաղորդակցության միջոցները, զարգացած ծովային և հատկապես օդային տրանսպորտը նրան «մոտեցրել են» մյուս աշխարհամասերին՝ հնարավորություն տալով զարգացնելու միջազգային սերտ տնտեսական կապեր:

Ավստրալիան **զարգացած արդյունաբերական** երկիր է, բայց ունի նաև իր յուրահատկությունը: Այստեղ զուգակցվում են ինչպես բարձր զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսություններին բնորոշ գծերը (այս առումով նման է Կանադային):

Որպես բարձր զարգացած երկիր՝ Ավստրալիան հանդես է գալիս տնտեսության մեջ ծանր արդյունաբերության մեծ բաժնով, հզոր էներգետիկ բազայով, առաջադիմական տեխնիկայով ու տեխնոլոգիայով:

Ավստրալիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Զարգացող երկրին բնորոշ գլխավոր գիծը տնտեսության հանքագործության մեծ բաժինն է, որը պայմանավորվում է երկրի հանքային մեծ հարստություններով: Աշխատանքի միջազգային բաժանման մեջ Ավստրալիան հայտնի է որպես արդյունաբերական հումք և պարենամթերք մատակարարող:

Էներգետիկան առավելապես հիմնվում է տեղական ածխի, նավթի և գազի վրա: Ակտիվորեն օգտագործվում է արեգակնային էներգիան:

Ավստրալիան աշխարհի առաջատար երկրների թվում է երկաթաքարի, բոքսիտների (համաշխարհային հանույթի 40%-ը), պղնձի, ոսկու, ալմաստի, ցինկի, կապարի, ուրանի, վոլֆրամի հանույթով և դրանց խտանյութի ու համաձուլվածքների արտահանմամբ: Արդյունահանված հումքի միայն փոքր մասն է մշակվում տեղի մետալուրգիական ձեռնարկություններում: Մշակող արդյունաբերության ճյուղերից Ավստրալիայում զարգացած են մեքենաշինությունը և մետաղամշակումը, հատկապես սննդի և լեռնահանքային արդյունաբերության ճյուղերին անհրաժեշտ սարքավորումների, ինչպես նաև ավտոմեքենաների և գյուղատնտեսական տեխնիկայի արտադրությունը: Ավստրալիայում լավ զարգացած են թեթև արդյունաբերության տեքստիլ (բրդի հումքի վրա հիմնված) և կարի ճյուղերը:

Գյուղատնտեսությունը ներկայումս էլ շարունակում է մեծ դեր խաղալ երկրի տնտեսության մեջ: Տնտեսության այս ճյուղին բնորոշ են **խոշոր հողատիրությունը, բազմաճյուղ կառուցվածքը, սերտ կապը արդյունաբերության հետ**: Երկրի հողային ֆոնդի մեծ մասը գտնվում է խոշոր ֆերմերների ձեռքում, որոնք լայնորեն օգտագործում են վարձու աշխատանքը, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկան ու գյուղատնտեսական գիտության նորագույն նվաճումները:

Գյուղատնտեսական հանդակների մեծ մասը կլոր տարին օգտագործվող արոտավայրեր են: Տարածված են մերինոս ցեղի ոչխարները: Ավստրալիան աշխարհում երկրորդ տեղն է զբաղեցնում ոչխարների գլխաքանակով և առաջին տեղը՝ բրդի արտադրությամբ: Ֆերմերները սովորաբար տնտեսությունը կառավարում են առանց մշտական աշխատուժ վարձելու, շների և «էլեկտրահովիվների[1]» օգնությամբ:

1. Մետաղական լարերով ցանկապատված արոտավայր, որի լարերով բաց է թողնված անասունների համար անվնաս՝ ցածր լարման հոսանք, և անասունները, դիպչելով այդ լարերին ու էլեկտրահարվելով, չեն հաղթահարում ցանկապատը:

Վերջին տարիներին աճում է բուսաբուծության նշանակությունը:

Մշակաբույսերի շարքում առաջատարը **ցորենն է**: Ավստրալիան ցորեն արտահանող հիմնական երկրներից է: Մշակում են նաև գարի, եգիպտացորեն, բրինձ, շաքարեղեգ, բամբակենի, ծխախոտ: Ավստրալիայում բարձր զարգացման մակարդակ ունեն պտղաբուծությունը և խաղողագործությունը: Հողագործությունը զարգացած է Ավստրալիայի հարավային և հարավարևելյան շրջաններում, իսկ տարածքի մնացյալ շրջանները (բացառությամբ անապատների) հիմնականում առանձնանում են անասնապահությամբ:

Ցորենի հունձ (Ավստրալիա)

Ավստրալիայի տնտեսությունը խիստ անհավասարաչափ է տեղաբաշխված: Մշակող արդյունաբերության արտադրանքի գրեթե 80%-ը և գյուղատնտեսական արտադրանքի 60%-ը տալիս է **երկրի հարավարևելյան մասը**:

Երկաթուղիների և ավտոճանապարհների ցանցը խիտ է երկրի ափամերձ շրջաններում, մինչդեռ ներքին ընդարձակ տարածքներում խիստ նոսր է և ներկայացված է առավելապես ավտոմոբիլային ճանապարհներով:

Արտաքին բեռնափոխադրումներն իրականացվում են ծովային տրանսպորտով: Խոշոր նավահանգիստներն են Սիդնեյը, Մելբուռնը, Նյուքասլը, Պերտը, Բրիսբենը:

Հատկապես մեծ է օդային տրանսպորտի դերը: Դրա շնորհիվ է երկիրը կարողանում է հաղթահարել իր աշխարհագրական դիրքի բացասական կողմը՝ մեծ հեռավորությունը աշխարհի այլ տարածաշրջաններից:

Արտաքին տնտեսական կապերը: Արտահանության շուրջ 80%-ը կազմում են հանքային հումքը, կիսաֆաբրիկատները և պարենային ապրանքները: Ներմուծման մեջ գերակշռում է պատրաստի արդյունաբերական արտադրանքը (մեքենաներ, սարքավորումներ և այլն): Արտաքին առևտրում մինչև վերջերս առաջատար էր Մեծ Բրիտանիան, իսկ ներկայումս՝ ԱՄՆ-ը և Ճապոնիան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Ավստրալիայի աշխարհագրական դիրքի և բնական պայմանների առավել բնորոշ գծերը:
2. Ինչպե՞ս է ձևավորվել Ավստրալիայի արդի բնակչությունը: Ներկայացրե՛ք տեղաբաշխման պատկերը:
3. Ո՞րն է Ավստրալիայի՝ որպես տնտեսապես զարգացած երկրի, յուրահատկությունը: Բնութագրե՛ք տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը:
4. Բնութագրե՛ք Ավստրալիայի ներքին և արտաքին տրանսպորտային սպասարկման առաձնահատկությունները: Ինչո՞վ է բացատրվում ծովային և օդային տրանսպորտի մեծ նշանակությունը:
5. Նկարագրե՛ք Ավստրալիայի տեղը և դերը աշխատանքի միջազգային (աշխարհագրական) բաժանման համակարգում:

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ԴԱՍ 53. ԱՄԵՐԻԿԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ամերիկա աշխարհամասն ամբողջությամբ գտնվում է արևմտյան կիսագնդում, Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև: Բաղկացած է երկու մայրցամաքից՝ Հյուսիսային Ամերիկայից և Հարավային Ամերիկայից ու դրանց հարող կղզիներից: Աշխարհամասի տարածքը մոտ 40 մլն կմ² է, իսկ բնակչության թիվը՝ շուրջ 960 մլն մարդ:

Էթնիկական, լեզվական և սոցիալ-մշակութային հատկանիշների հիման վրա ընդունված է Ամերիկա աշխարհամասը բաժանել երկու տարածաշրջանի: Մեկը Հյուսիսային Ամերիկան է, որը ներառում է ԱՄՆ-ը և Կանադան, անվանում են նաև Անգլոսաքսոնական Ամերիկա, մյուսը ԱՄՆ-ից հարավ ընկած, մինչև Հոռն հրվանդան ձգվող Լատինական Ամերիկան է՝ Մեքսիկան և դրանից հարավ ընկած Կենտրոնական Ամերիկայի, Վեստ Ինդիայի, Հարավային Ամերիկայի մեծ ու փոքր պետությունները: Տարածաշրջանը Լատինական Ամերիկա է անվանվել այն պատճառով, որ այստեղ հիմնականում տիրապետում են հին լատիներենից սերված իսպաներենն ու պորտուգալերենը, իսպանական և պորտուգալական մշակույթը:

Կորդիլիերների բարձր, սրածայր գագաթներից մեկը

Ամերիկան յուրահատուկ է իր աշխարհագրական դիրքով, բնական պայմաններով ու ռեսուրսներով, բնակչության կազմով, զարգացման պատմությամբ:

Ամերիկան ունի նպաստավոր աշխարհագրական դիրք: Պետությունների ճնշող մեծամասնությունը ելք ունի դեպի համաշխարհային օվկիանոս: Ամերիկան հարմար աշխարհագրական դիրք ունի Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի նկատմամբ: Նրանց հետ կապված է ծովային բազմաթիվ ճանապարհներով, բայց միաժամանակ հեռու է աշխարհակործան պատերազմների թատերաբեմերից:

Ամերիկայի քաղաքական քարտեզի վրա կան 35 անկախ պետություններ: Կան նաև մի քանի կախյալ՝ կիսագաղութային փոքր երկրներ: Ամերիկան բնակեցված միակ աշխարհամասն է, որտեղ բոլոր ինքնիշխան պետությունները հանրապետություններ են: Պետական տարածքային կառուցվածքով դաշնություններ են միայն ԱՄՆ-ը, Կանադան, Մեքսիկան, Բրազիլիան և Արգենտինան:

Բնական պայմանները և ռեսուրսները: Ամերիկա աշխարհամասը, հյուսիսից հարավ ձգվելով ավելի քան 15 հազար կիլոմետր, աչքի է ընկնում բնության բազմազանությամբ: Այստեղ հանդիպում են երկրագնդի գրեթե բոլոր կլիմայական գոտիներն ու բնական զոնաները: Աշխարհամասի ողջ արևմտյան եզերքով ձգվում են Հյուսիսային և Հարավային Կորդիլիերները (Անդերը): Այստեղ հաճախակի են լինում կործանարար երկրաշարժեր: Շատ են գործող հրաբուխները:

Մայրցամաքների արևելյան ընդարձակ մասերը բնութագրվում են հարթավայրային ռելիեֆով, ինչը շատ հարմար է տնտեսական օգտագործման համար:

Ամերիկայի ընդերքը հարուստ է բազմազան օգտակար հանածոներով, որոնց հանքավայրերի մի մասը դասվում է աշխարհի խոշորագույնների թվին:

Աշխարհամասը հատկապես հարուստ է քարածխի, նավթի ու բնական գազի, սև և գունավոր մետաղների, քիմիական հումքի, թանկարժեք քարերի, քաղցրահամ ջրի պաշարներով, անտառներով և բերրի հողերով:

Ընդհանուր առմամբ՝ Ամերիկայի հանքային, անտառային, ջրային ու հողային հսկայական ռեսուրսները բարենպաստ նախադրյալներ են տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար:

Բնակչությունը: Ամերիկայում, որը կազմում է երկրագնդի տարածքի 28%-ը, ներկայումս ապրում է աշխարհի բնակչության ընդամենը 13%-ը:

Ամերիկայի բնակչությունը ձևավորվել է տեղաբնիկների և եկվորների միախառնման արդյունքում: Այստեղ կարելի է առանձնացնել ժողովուրդների երեք խումբ՝ բնիկներ, եկվորներ և խառնածիններ: Երկու մայրցամաքների բնիկներն էլ հնդկացիներն են, Հյուսիսային Ամերիկայում՝ նաև ինյուիտները (կամ էսկիմոսները) և ալեութները:

Ամերիկայի բնիկները պատկանում են մոնղոլոիդ ռասային: Գիտնականների կարծիքով՝ նրանք Արևելյան Ասիայից Ամերիկա են թափանցել 25-30 հազար տարի առաջ, երբ ներկայիս Բերինգի նեղուցի տեղում ցամաք է եղել:

Բազմազան է եղել հնդկացիների տնտեսական գործունեությունը: Նրանք զբաղվել են ձկնորսությամբ, որսորդությամբ, հավաքչությամբ: Հնդկացիների թիվը մեծ չափով նվազել է Հյուսիսային Ամերիկայի գաղութացման ընթացքում: Ողջ մնացած հնդկացիները հարկադրաբար բնակեցվում էին ապրելու համար հատկացված անհարմար տարածքներում՝ ռեզերվացիաներում:

Աշխարհով մեկ տարածված բազմաթիվ մշակաբույսերի համար մարդկությունը պարտական է հնդկացիներին: Նրանք են առաջինը սկսել մշակել եգիպտացորենը, լոբին, տոմատը (լոլիկը), կարտոֆիլը, կակաոն, ծխախոտը, դդումը և մի շարք այլ բույսեր:

Հետաքրքիր է նշել, որ մինչև եվրոպացիների այդտեղ գալը տեղաբնիկներին անհայտ էին ձին, ընդհանրապես՝ բանող անասունը, անիվը:

Եկվորների կազմը խայտաբղետ է: Ամերիկա են եկել եվրոպացիներ, ասիացիներ և աֆրիկացիներ: Շուրջ 500-ամյա պատմության ընթացքում եվրոպացիների, բնիկների և սևամորթների խառնամուսնությունից այստեղ առաջացել է խառնածինների՝ աշխարհում ամենամեծ խումբը՝ **մետիսներ, մուլատներ** ու **սամբոներ**, որոնք լատինամերիկյան որոշ երկրներում մեծամասնություն են կազմում:

Ամերիկայի բնակչության բնական աճը մոտ է համաշխարհային միջինին: Այն ավելի ցածր է Հյուսիսային Ամերիկայում, համեմատաբար բարձր՝ տնտեսապես թույլ զարգացած լատինամերիկյան երկրներում:

Ամերիկան այժմ էլ ունի բնակչության միգրացիայի դրական հաշվեկշիռ, սակայն ներկայումս ներգաղթողների մեջ արդեն գերակշռում են չինացիները, արաբները և ասիական այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Աշխարհամասը երկրագնդի հայաշատ վայրերից է: Հայկական համեմատաբար խոշոր գաղթօջախներ են ձևավորվել ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում:

Հյուսիսային Ամերիկա

Բնակչության տեղաբաշխման վրա մեծ է **ներգաղթի** ազդեցությունը: Քանի որ ներգաղթը սկսվել է աշխարհամասի արևելքում, այսօր էլ առավել խիտ են բնակեցված նրա արևելյան շրջանները, հատկապես Ատլանտյան օվկիանոսի համեմատաբար նպաստավոր բնական պայմաններով բնութագրվող ափամերձ գոտիները: Նոսր են բնակեցված Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային շրջանները, Ամազոնի դաշտավայրը և արևմուտքի լեռնային բարձր գոտիները:

Շատ են խոշոր քաղաքներն ու քաղաքային կուտակումները, որոնց մեծ մասը ծովափնյա շրջաններում են:



Տնտեսությունը: Ամերիկայի տնտեսության զարգացման վրա մեծ ազդեցություն են թողել

բարենպաստ աշխարհագրական դիրքը, բազմազան բնական պայմաններն ու ռեսուրսները, ներգաղթյալ աշխատանքային ռեսուրսները:



Շատ մեծ են Ամերիկայի տարածաշրջանների ու պետությունների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունները: Ամերիկայի խոշոր տարածաշրջանները միմյանցից էապես տարբերվում են իրենց մարդկային ռեսուրսներով և տնտեսական հզորությամբ, ինչը երևում է դրանց համեմատական բնութագրից (տես գծանկարները): Եթե տարածքի առումով դրանց բաժինները հավասար են միմյանց (14,8% և 15,2%), ապա բնակչության բաժնով գերակշռում է Լատինական Ամերիկան, իսկ ՀՆԱ-ի բաժնով՝ Հյուսիսային Ամերիկան: ԱՄՆ-ը և Կանադան հետինդուստրիալ երկրներ են: Զարգացման ինդուստրիալ փուլում են լատինամերիկյան խոշոր երկրներ Բրազիլիան, Արգենտինան, Մեքսիկան, Չիլին, Վենեսուելան: Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասը (Կենտրոնական Ամերիկա, Կարիբյան ծովի ավազան և այլն) տնտեսապես հետամնաց, նոր զարգացող երկրներ են և գտնվում են զարգացման մինչինդուստրիալ (ագրարային) փուլում, այսինքն՝ դրանց տնտեսության առաջատար ճյուղը շարունակում է մնալ գյուղատնտեսությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ հատկանիշներով են առանձնացվում Ամերիկա աշխարհամասի տարածաշրջանները:
2. Բնութագրե՛ք Ամերիկայի աշխարհագրական դիրքը:
3. Գնահատե՛ք Ամերիկայի բնական պայմանները և ռեսուրսները՝ տնտեսության զարգացման տեսանկյունից:
4. Բնութագրե՛ք Ամերիկայի բնակչության կազմը:
5. Բնութագրե՛ք Ամերիկայի երկրներն ըստ տնտեսական զարգացման մակարդակների (փուլերի):

ԴԱՍ 54. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ԱՄՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տարածքը՝ 9,4 մլն կմ^2
Բնակչությունը՝ 313,9 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Վաշինգտոն
Պետական կարգը՝ դաշնային հանրապետություն

Ամերիկայի Միացյալ Նահանգները (ԱՄՆ) **ժամանակակից աշխարհի հզորագույն պետությունն է:** Աշխարհի քաղաքական քարտեզի վրա ԱՄՆ-ը հայտնվել է

1776 թ., երբ անգլիական 13 գաղութները, միավորվելով Անգլիայի դեմ, զինված պայքարի միջոցով հասան անկախության[1]: Անգլիան ԱՄՆ-ի անկախությունը ճանաչեց 1783 թ.:

Հետագայում ԱՄՆ-ը Հյուսիսային Ամերիկայի իսպանական, ֆրանսիական և մեքսիկական տարածքների հաշվին ընդարձակեց իր տարածքը, իսկ 1867 թ. Ռուսաստանից գնեց և իրեն միացրեց Ալյասկա նահանգի տարածքը:

Այժմ ԱՄՆ-ը բաղկացած է **50 նահանգից** և **1 դաշնային օկրուգից**: Դա Կոլումբիա օկրուգն է, որտեղ գտնվում է պետության մայրաքաղաք **Վաշինգտոնը**:

Պետության ու կառավարության ղեկավարը և զինված ուժերի գլխավոր հրամանատարը երկրի նախագահն է:

Օրենսդրական բարձրագույն մարմինը Կոնգրեսն է: Դաշնային բոլոր պետությունների նմանությամբ, ԱՄՆ-ում ևս, խորհրդարանը՝ Կոնգրեսը, բաղկացած է երկու պալատից: ԱՄՆ-ում դրանք կոչվում են **Սենատ** և **Ներկայացուցիչների պալատ**:

ԱՄՆ-ի նահանգներն օժտված են լայն ինքնավարությամբ: Յուրաքանչյուր նահանգ ունի իր սահմանադրությունը և օրենսդիր ու գործադիր մարմինները:

Երկրի **աշխարհագրական դիրքը** շատ նպաստավոր է: Երկու օվկիանոսների միջև գտնվելով՝ ԱՄՆ-ը ծովային ուղիներով կապված է Եվրոպայի, Ասիայի և մյուս աշխարհամասերի հետ: Միաժամանակ, այդ տարածաշրջաններից հեռու գտնվելը ռազմավարական-պաշտպանական առումով ԱՄՆ-ին լրացուցիչ առավելություններ է ապահովում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

1. ԱՄՆ-ի պետական դրոշի վրա եղած 13 սպիտակ ու կարմիր շերտերը խորհրդանշում են մեկ անկախ պետության մեջ միավորված 13 նահանգները (նախկին 13 գաղութները):

ԱՄՆ-ի տարածքում հայտնաբերվել են բազմազան **օգտակար հանածոների** հարուստ պաշարներ: Քարածխի խոշոր հանքավայրեր կան Ապալաչներում, նավթի և գազի հարուստ պաշարներ՝ Մեքսիկական ծոցի ափերին, Կալիֆոռնիայում ու Ալյասկայում, երկաթի հանքաքարի հարուստ կուտակումներ՝ Վերին լճի շրջանում, պղնձի, ցինկի, կապարի, մոլիբդենի, ուրանի, ոսկու պաշարներ՝ Ժայռոտ լեռներում: Ոսկու և այլ մետաղների զգալի պաշարներ կան Ալյասկայում:

Ընդերքի հարստություններն ամբողջությամբ բավարար նախադրյալ են ԱՄՆ-ի բազմաճյուղ արդյունաբերության զարգացման համար:

ԱՄՆ-ի տարածքի մեծ մասը գտնվում է **բարեխառն** ու **մերձարևադարձային գոտիներում**, Ֆլորիդա թերակղզու հարավը՝ **արևադարձային**, իսկ Ալյասկան՝ **մերձարկտիկական** և **արկտիկական գոտիներում**:

Բացվող կամուրջ Միսիսիպի գետի վրա

ԱՄՆ-ում, հատկապես նրա արևելյան խոնավ շրջաններում, շատ են ջրառատ **գետերը** և **խոշոր լճերը**: ԱՄՆ-ի խոշորագույն գետ **Միսիսիպին** ունի մեծ տնտեսական, հատկապես տրանսպորտային նշանակություն: Նրա ավազանում է ԱՄՆ-ի տարածքի գրեթե կեսը:

Երկրի արևմտյան մասում գետեր քիչ կան. դրանցից համեմատաբար խոշորներն են *Կոլորադոն* և *Կոլումբիան*, որոնք հոսում են չորային շրջաններով և ունեն ոռոգիչ ու էներգետիկ նշանակություն: Ոռոգիչ դեր ունի նաև *Ռիո-Գրանդե* գետը:

Շատ մեծ է **Մեծ լճերի** տնտեսական, հատկապես տրանսպորտային նշանակությունը:

ԱՄՆ-ի արևելյան տարածքների անտառների զգալի մասը ժամանակի ընթացքում հատվել է և վերածվել գյուղատնտեսական հանդակների՝ վարելահողերի ու այգիների:

Կենտրոնական և Մեծ հարթավայրերում տարածված են **անտառատափաստանները** և **տափաստանները** (պրերիաները), որոնք համարյա ամբողջությամբ հերկվել են և օգտագործվում են հացահատիկ աճեցնելու համար: Տափաստաններից արևմուտք՝ Կորդիլիերների միջլեռնային սարավանդները ոռոգման շնորհիվ նույնպես յուրացվել են և օգտագործվում են գյուղատնտեսական նպատակով:

Ֆլորիդայի, Կալիֆոռնիայի և մի շարք այլ նահանգների ծովափնյա լավագույն լողափերում ստեղծվել են բազմաթիվ հանգստավայրեր և առողջարաններ: Տարեկան միլիոնավոր զբոսաշրջիկներ են այցելում բնության տեսարժան վայրեր՝ Նիագարայի ջրվեժ, Կոլորադո գետի կանյոն (Մեծ կանյոն) և այլն:

Բնակչությունը: Բնակչության թվով ԱՄՆ-ն աշխարհում **երրորդն է՝ Չինաստանից** և **Հնդկաստանից հետո:** Զարգացած այլ երկրների համեմատությամբ՝ ԱՄՆ-ի բնակչությունն արագ է աճում (տարեկան 0,9%), քանի որ ավելանում է ոչ միայն բնական վերարտադրության, այլև մեխանիկական աճի՝ **ներգաղթի** հաշվին: Ընդհուպ XIX դարի վերջերը ներգաղթողների մեջ գերակշռում էին անգլիացիները, շոտլանդացիները և իռլանդացիները: Այնուհետև զգալի թիվ կազմեցին եվրոպական այլ երկրներից, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Լատինական Ամերիկայից եկածները:

Ամերիկյան ազգի ձևավորմանը մասնակցել են նաև Աֆրիկայից բերված սևամորթները և ասիական երկրներից ներգաղթածները: Դա նշանակում է, որ **ժամանակակից ամերիկյան ազգը ձևավորվել է բազմաթիվ ժողովուրդների և ռասաների միախառնումից**:

Այժմ ներգաղթը կրճատված է, ժամանակակից բնակչության 90%-ից ավելին արդեն ԱՄՆ-ում ծնվածներն են: Բնական աճը դարձել է բնակչության թվի ավելացման հիմնական աղբյուրը:

ԱՄՆ-ում ապրում են 100-ից ավելի ժողովուրդների ներկայացուցիչներ: Էթնիկ առումով առանձնանում է երեք խումբ՝ ա) բնակչության հիմնական մասը կազմող ԱՄՆ-ի ամերիկացիներ կամ պարզապես **ամերիկացիներ**, որոնք ներգաղթածների սերունդներն են, իսկ մայրենի լեզուն անգլերենն է, բ) **անցման շրջանի ներգաղթյալներ**, որոնք համեմատաբար վերջերս են վերաբնակվել ԱՄՆ-ում և դեռևս չեն ընդունել այդ երկրի հպատակությունը, գ) **բնիկներ** (հնդկացիներ, էսկիմոսներ), որոնք կազմում են բնակչության 1%-ից պակաս մասը:

Սևամորթ ամերիկացիների (աֆրո-ամերիկացիներ) բաժինը ԱՄՆ-ի բնակչության մեջ 12% է: Նախկինում սևամորթ բնակչության հիմնական մասն ապրում էր հարավում՝ այսպես կոչված «սև գոտում»: Վերջին տասնամյակներին սևամորթների կեսն արդեն վերաբնակվել է հյուսիսի և արևմուտքի խոշոր քաղաքներում:

Սպիտակամորթները կազմում են ԱՄՆ-ի բնակչության ավելի քան 75%-ը: Վերջին տասնամյակներին բնակչության ընդհանուր թվում զգալիորեն մեծացել է Արևելյան Ասիայից և Լատինական Ամերիկայից եկած ներգաղթյալների բաժինը: Իսպանախոս բնակչությունը հատկապես արագ է աճում հարավային նահանգներում:

Հավատացյալ բնակչության հիմնական մասը կաթոլիկներ և բողոքականներ են:

Հայերն ԱՄՆ-ում: ԱՄՆ-ում է գտնվում Ռուսաստանից հետո հայկական երկրորդ խոշոր համայնքը՝ գրեթե 1,2 մլն հայ: Հայերը զանգվածաբար ԱՄՆ են գաղթել Օսմանյան Թուրքիայում 1890-ականների հայկական կոտորածներից և 1915 թ. Մեծ եղեռնից հետո: Ներգաղթի նոր ալիք է սկսվել ՀՀ-ի անկախության հռչակումից հետո և շարունակվում է առ այսօր (Հայաստանից և Մերձավոր Արևելքի երկրներից):

Հայերի ամենահոծ զանգվածը բնակվում է Կալիֆորնիա նահանգում՝ Լոս Անջելես քաղաքում և նրա մերձակայքում: Զգալի թվով հայեր են ապրում նաև **Մասաչուսետս, Միչիգան, Նյու Յորք** և այլ նահանգներում:

ԱՄՆ-ում գործում են 100-ից ավելի հայկական եկեղեցիներ, հրատարակվում են մոտ 150 անուն թերթ և պարբերական: ԱՄՆ-ի Դետրոյթ քաղաքում է գտնվում **Հայկական բարեգործական ընդհանուր միության** (ՀԲԸՄ) կենտրոնական գրասենյակը:

Հայերի միության շենքը Լոս Անջելեսում

ԱՄՆ-ում են ապրել և ստեղծագործել աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանը, հայտնի կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանը, գիտության և արվեստի այլ հայտնի հայազգի գործիչներ:

ԱՄՆ-ի բնակչության միջին խտությունը (33 մարդ/կմ²) ցածր է զարգացած շատ երկրների համեմատությամբ: Բնակչության խտությունը միջինից բարձր է երկրի արևելյան՝ ատլանտյան և մերձլճային նահանգներում, մինչդեռ լեռնային

նահանգներում նոսր է՝ ընդամենը 2-3 մարդ/կմ², իսկ Ալյասկայում՝ 1 մարդ յուրաքանչյուր 5 կմ²-ի վրա: ԱՄՆ-ին հատկանշական է ցրված գյուղական տարաբնակեցման ձևը:

Քաղաքները: Ամերիկացիների ավելի քան 4/5-ն ապրում է քաղաքներում: Շատ են **խոշոր** և **գերխոշոր քաղաքները**: Հայտնի են հատկապես **Նյու Յորքը, Չիկագոն, Լոս Անջելեսը, Ֆիլադելֆիան, Դետրոյթը, Բոստոնը**:

Երկրի քաղաքաբնակների մեծ մասը կենտրոնացած է **քաղաքային խոշոր կուտակումներում**՝ քաղաքային ագլոմերացիաներում: Ագլոմերացիաների եզրամասերում բնակչությունն ավելի արագ է աճում, քան կենտրոնական քաղաքներում:

Չիկագոյի երկնաքերներ

Դա արդյունք է այն բանի, որ կենտրոնական քաղաքից (աղմուկի, աղտոտվածության, հողի բարձր գնի և այլ պատճառներով) կատարվում է բնակչության արտահոսք դեպի արվարձաններ: Այդ երևույթը, որը հայտնի է սուբուրբանիզացում անունով, թեև տարածված է զարգացած բոլոր երկրներում, սակայն առավել մեծ չափերի է հասել ԱՄՆ-ում:

Քաղաքների արվարձաններին ու հարակից շրջաններին հատուկ է ցածրահարկ առանձնատներով կառուցապատումը: Ներկայումս այդպիսի առանձնատներում է ապրում ամերիկյան ընտանիքների ճնշող մեծամասնությունը: Նման պայմաններում մեծ չափերի են հասնում բնակչության ճոճանակային միգրացիաները, երբ արվարձանների բնակիչները, տասնյակ կիլոմետրեր կտրելով, առավոտյան աշխատանքի են մեկնում քաղաք, իսկ երեկոյան՝ վերադառնում:

ԱՄՆ-ում ձևավորվել են երեք **մեգալոպոլիսներ՝ Մերձատլանտյան** կամ **Բոսվաշ, Մերձլճային** և **Մերձխաղաղօվկիանոսյան**: Դրանցից խոշորագույնը՝ Բոսվաշը (մոտ 50 մլն մարդ), ձգվում է Ատլանտյան օվկիանոսի առափնյա հատվածով՝ Բոստոնից մինչև Վաշինգտոն:

ԱՄՆ-ի քաղաքների շարքում առանձնանում է **Վաշինգտոն** մայրաքաղաքը, որը թե՛ բնակչության թվով, թե՛ տնտեսական հզորությամբ բազմիցս զիջում է երկրի խոշորագույն քաղաքներին: Բայց, դրան հակառակ, բացառիկ է նրա՝ աշխարհի հզորագույն տերության մայրաքաղաքի քաղաքական, մշակութային ու գիտական դերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գնահատեք ԱՄՆ-ի տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքերը:
2. Գնահատեք ԱՄՆ-ի հանքառեսուրսային հնարավորությունները և քարտեզի վրա ցույց տվեք ռեսուրսների հիմնական տեսակների տարածման գլխավոր շրջանները:
3. Բնութագրեք ԱՄՆ-ի գետերի ու լճերի տնտեսական նշանակությունը:
4. Ինչպե՞ս է ձևավորվել ամերիկյան ազգը: Ինչ էթնիկ խմբերից է բաղկացած:
5. Քարտեզի վրա ցույց տվեք ԱՄՆ-ի խոշորագույն քաղաքային ագլոմերացիաները և մեգալոպոլիսները:

ԴԱՍ 55. ԱՄՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Դեռևս XIX դարի վերջերին ԱՄՆ-ը, գերազանցելով Մեծ Բրիտանիային, դարձավ աշխարհի գլխավոր կենտրոնը: Երկիրը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում: Ծառայությունների ոլորտին բաժին է ընկնում համախառն ներքին արդյունքի գրեթե 80%-ը (տես գծանկարը):

Նրա տնտեսական զարգացմանը նպաստել են հարմար աշխարհագրական դիրքը, հարուստ և բազմատեսակ բնական ռեսուրսները, աշխատունակ բնակչության զանգվածային ներգաղթը, ազատ շուկայական հարաբերությունները:

ԱՄՆ-ի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Ներկայումս թե՛ արդյունաբերության արտադրանքով ու արտահանությամբ, թե՛ գիտատեխնիկական ներուժով և սպասարկման ոլորտի զարգացման մակարդակով **ԱՄՆ-ն աշխարհում առաջինն է**: ԱՄՆ-ում է ստեղծվում համաշխարհային համախառն ներքին արդյունքի 1/5-ը: ԱՄՆ-ի ազգային դրամը՝ դոլարը, դարձել է համաշխարհային արժույթ: Աշխարհի 500 խոշոր դրամատների 25%-ը ամերիկյան է:

ԱՄՆ-ում շատ մեծ է արտադրական և ֆինանսական միավորումների դերը: Երկրի 500 խոշոր ընկերություններ տալիս են արդյունաբերական ամբողջ արտադրանքի կեսից ավելին: Արդյունաբերության առանձին ճյուղեր հաճախ պատկանում են երկու-երեք ընկերության: Այսպես՝ ավտոմոբիլային երեք խոշոր ընկերությունների՝ «Ջեներալ մոթորսի», «Ֆորդի» և «Քրայսլերի» ձեռքում է կենտրոնացած ԱՄՆ-ի ավտոմեքենաների արտադրության 95%-ը:

Արդյունաբերությունը: ԱՄՆ-ի ազգային եկամտի կառուցվածքում արդյունաբերական արտադրանքի արժեքն ավելի քան 15 անգամ գերազանցում է գյուղատնտեսական արտադրանքի արժեքին: ***Զարգացած են արդյունաբերության բոլոր ճյուղերը,*** ընդ որում՝ մշակող ճյուղերի բաժինը կազմում է մոտ 80%: Բարձր է ավտոմատացման և համակարգիչների կիրառման մակարդակը:



«Ջեներալ մոթորս» ընկերության գրասենյակները Դետրոյթ քաղաքում

Համաշխարհային տնտեսության մեջ մեծ է ԱՄՆ-ի բաժինը էլեկտրաէներգետիկայի, ավտոմոբիլաշինության, ավիահրթիռատիեզերական և էլեկտրոնային մեքենաշինության, նավթավերամշակման արդյունաբերության և այլ բնագավառներում:

ԱՄՆ-ի տնտեսության հիմքում ընկած է սեփական վառելիքաէներգետիկ հզոր բազան: Երկրի էներգետիկ հաշվեկշռում առաջատար են նավթը և բնական գազը: Դրանց մեծ մասն արդյունահանվում է հարավային նահանգներում՝ Տեխասում, Լուիզիանայում, Օկլահոմայում, ինչպես նաև Կալիֆոռնիայում և Ալյասկայում: Նավթի և գազի հանույթով ԱՄՆ-ն աշխարհի առաջատար երկրներից է: Դրա հետ մեկտեղ՝ զգալի քանակությամբ նավթ ներմուծվում է:

ԱՄՆ-ն ունի նաև հզոր ածխարդյունաբերություն: Քարածխի հանքավայրեր շահագործվում են երկրի շատ նահանգներում, բայց հանույթի մեծ մասը կատարվում է Ապալաչյան ավազանում:

ԱՄՆ-ում մեծ թափով սկսել են այրվող թերթաքարերի անսահման մեծ պաշարների օգտագործումը: Դրանից ստանում են հեղուկ գազ, որը նման է նավթի:

ԱՄՆ-ին բաժին է ընկնում աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի գրեթե 30%-ը: Դրա հիմնական մասը տալիս են ջեկերը: Խաղաղօվկիանոսյան լեռնային նահանգներում առաջատարը ջրեկներն են: Կոլումբիա գետի վրա կառուցված է ջրաէլեկտրակայանների՝ աշխարհում խոշորագույն կասկադը՝ 20 մլն կվտ ընդհանուր հզորությամբ:

«Հուվեր» ջրաէլեկտրակայանը
Կոլումբիա գետի վրա

Աճում է ատոմային էներգետիկայի նշանակությունը: Դա նկատելի է հատկապես էներգետիկ ռեսուրսներից համեմատաբար աղքատ մերձատլանտյան նահանգներում:

Մեծ ուշադրություն է դարձվում էներգիայի ոչ ավանդական աղբյուրների (երկրաջերմային, քամու, մակընթացության) յուրացմանը:

Երկաթի և կոքսացող ածխի հանքավայրերի տարածքային հարմար՝ իրար մոտ զուգորդման շնորհիվ զարգացած է սև մետաղաձուլությունը: Երկրում արդյունահանվող երկաթաքարի գրեթե 80%-ը տալիս են Վերին լճի մոտ գտնվող հանքավայրերը: Մետաղաձուլական խոշոր ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացած են հումքային և վառելիքային շրջաններում (Չիկագո, Փիթսբուրգ, Քլիվլենդ), ինչպես նաև հանքային հումք ներմուծող նավահանգստային քաղաքներում (Ֆիլադելֆիա, Հյուստոն և այլն):

Գունավոր տարբեր մետաղների՝ պղնձի, ցինկի, կապարի զգալի պաշարները արևմտյան լեռնային նահանգներում նպաստավոր նախադրյալներ են ստեղծում գունավոր մետաղաձուլության զարգացման համար: Ալյումինի ձուլումը (հումքի մեծ մասը ներմուծվում է) կողմնորոշված է դեպի էժան ջրաէներգիայի աղբյուրները, մասնավորապես՝ Թենեսի և Կոլումբիա գետերի վրա կառուցված ջրաէլեկտրակայանները:

Արդյունաբերության **գլխավոր ճյուղի՝ մեքենաշինության** տեղաբաշխումը համընկնում է երկրի խոշորագույն քաղաքների և քաղաքային ագլոմերացիաների տեղաբաշխման հետ: Առավել արագ են աճում ավիահրթիռատիեզերական արդյունաբերությունը, ռադիոէլեկտրոնիկան և համակարգիչների արտադրությունը: Այս ճյուղերի նոր կենտրոններ ստեղծվել են արևմուտքում և հարավում: Լոս Անջելեսն իրա-

վամբ համարվում է ԱՄՆ-ի «ավիահրթիռաշինության մայրաքաղաքը»: «Բոինգը» աշխարհում ինքնաթիռներ արտադրող ամենախոշոր ընկերությունն է: Գլխավոր կենտրոնը Սիեթլ քաղաքն է:

Ավտոմոբիլաշինությունն ԱՄՆ-ի արդյունաբերության բնորոշ ճյուղն է: Աշխարհում առաջին անգամ այստեղ է սկսվել ավտոմեքենաների զանգվածային թողարկումը: Ավտոմոբիլաշինական գլխավոր նահանգը **Միչիգանն** է, որտեղ և գտնվում է ԱՄՆ-ի «ավտոմոբիլաշինության մայրաքաղաքը»՝ **Դետրոյթը**: Այստեղ են կենտրոնացված երկրի ավտոմոբիլային խոշոր ընկերությունների գրասենյակները և գլխամասային ձեռնարկությունները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի արտադրությամբ աչքի են ընկնում «Այ Բի Էմ», «Էյփլ» և «Սայքրոսոֆթ» ընկերությունները: Գիտատար արտադրությունների գլխավոր կենտրոնը «Սիլիկոնյան հովիտն» է՝ Սան Ֆրանցիսկո քաղաքից արևելք: Այս բնագավառի գիտահետազոտական խոշոր կենտրոններն են համալսարանները, որոնցից մոտ երկու տասնյակը ունեն համաշխարհային համբավ (Հարվարդ, Փրինսթոն, Սթենֆորդ և այլն):

«Էյփլ» ընկերության գրասենյակը Նյու Յորքում

Արդյունաբերության առաջատար և արագ զարգացող ճյուղերից մեկն է քիմիական արդյունաբերությունը: Այն ներկայացված է բոլոր ճյուղերով ու ենթաճյուղերով և տալիս է բազմազան արտադրանք: Հատկապես զարգացած է նավթաքիմիան:

Թեթև արդյունաբերության ձեռնարկությունների մեծ մասը կենտրոնացած է հյուսիսի մերձատլանտյան նահանգներում: Բացառություն է կազմում բամբակյա թելերի ու գործվածքների արտադրությունը, որը դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին սկսեց «գաղթել» հարավի մերձատլանտյան նահանգներ՝ ավելի մոտենալով բամբակի արտադրության և ազատ աշխատուժի շրջաններին:

Երկրում ամենուր զարգացած է **սննդի արդյունաբերությունը**: Մեր օրերում ԱՄՆ-ում գյուղատնտեսական պարենամթերքի 70%-ը ենթարկվում է արդյունաբերական մշակման:

ԱՄՆ-ում ձևավորվել են արդյունաբերական ոչ միայն խոշոր կենտրոններ, այլև դրանք միավորող հզոր արդյունաբերական շրջաններ: Խոշորագույն և ամենահին շրջանը ձևավորվել է հյուսիսարևելյան մասում՝ մերձատլանտյան գոտում: Այստեղ գերակշռում են արդյունաբերության ավանդական ճյուղերը: Այս շրջանի մեջ միավորված խոշորագույն արդյունաբերական կենտրոններն են Նյու Յորքը, Ֆիլադելֆիան, Բոստոնը, Բալթիմորը:

Արդյունաբերության ավանդական ճյուղերը զարգացման բարձր մակարդակի են հասել նաև մերձլճային արդյունաբերական շրջանում, որտեղ գտնվում են այնպիսի խոշոր կենտրոններ, ինչպիսիք են Չիկագոն, Դետրոյթը, Քլիվլենդը, Փիթսբուրգը:

ԱՄՆ-ի արդյունաբերության նորագույն ճյուղերը համեմատաբար արագ տեմպերով զարգանում են երկրի արևմտյան և հարավային նահանգների արդյունաբերական շրջաններում և կենտրոններում (Լոս Անջելես, Սիեթլ, Դալլաս, Հյուստոն):

Արդյունաբերական հզոր ներուժի պատճառով ԱՄՆ-ին բաժին է ընկնում շրջակա միջավայր ներթափանցող աղտոտիչ նյութերի համաշխարհային ծավալի մոտ 30%-ը:

Բնությունն առանձնապես մեծ չափով աղտոտում են ջերմաէլեկտրաէներգետիկան, մետալուրգիան, լեռնահանքային և քիմիական արդյունաբերության ճյուղերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք ԱՄՆ-ի տեղը համաշխարհային տնտեսության մեջ:
2. Որո՞նք են ԱՄՆ-ի տնտեսության զարգացման բնորոշ գծերը:
3. Տվեք ԱՄՆ-ի վառելիքաէներգետիկ բազայի բնութագիրը:
4. Բնութագրեք ԱՄՆ-ի մեքենաշինությունը և տվեք նրա տեղաբաշխման պատկերը:
5. Թվարկեք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք ԱՄՆ-ի արդյունաբերության նոր և հին (ավանդական) ճյուղերի տեղաբաշխման գլխավոր շրջանները:

ԴԱՍ 56. ԱՄՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Գյուղատնտեսությունը: ԱՄՆ-ի ագրոկլիմայական և հողային ռեսուրսները բարենպաստ բնական նախադրյալներ են **բազմաճյուղ գյուղատնտեսության** զարգացման համար: Տիրապետող են **խոշոր ագարակները** (ֆերմաները), որոնք վարում են ինտենսիվ արտադրություն և լայնորեն կիրառում են վարձու աշխատանքը: Դրանք մասնագիտանում են գյուղատնտեսական որոշակի մթերքների արտադրությամբ:

ԱՄՆ-ի գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեծ մասը (65%) տալիս է **անասնապահությունը**: Բնական արոտների խոտից բացի՝ որպես անասնակեր օգտագործվում են նաև մշակվող կերաբույսերը (սոյա, կարտոֆիլ, եգիպտացորեն և այլն):

Ֆերմերային փոքր տնտեսություն ԱՄՆ-ում

Ցանքատարածությունների կեսից ավելին հատկացված է հացահատիկային մշակաբույսերին, որոնցից գլխավորներն են **ցորենը** և **եգիպտացորենը**: Հիմնական հացահատիկային շրջաններն են **Կենտրոնական** և **Մեծ հարթավայրերը**: Մեծ հարթավայրերում ձևավորվել է «**ցորենի գոտին**», իսկ Կենտրոնական հարթավայրերի հյուսիսում՝ «**եգիպտացորենի գոտին**»: ԱՄՆ-ը արտադրում է եգիպտացորենի համաշխարհային բերքի ավելի քան 1/3-ը:

Գլխավոր տեխնիկական մշակաբույսերից են բամբակենին և սոյան: Տարածված են նաև ծխախոտը, շաքարի ճակնդեղը, շաքարեղեգը: «***Բամբակենու գոտին***» տարածված է հարավային նահանգներում:

Գրեթե ամենուրեք, բայց գլխավորապես՝ Կալիֆոռնիայի ոռոգելի հողերում, զարգացած են խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Անասնապահության առաջատար ճյուղը տավարաբուծությունն է: Կաթնային ուղղության ֆերմաներն առավել բնորոշ են մերձլճային խիտ բնակեցված նահանգներին, իսկ մսային ֆերմաները՝ ցորենի և եգիպտացորենի գոտիներին: Եգիպտացորենի գոտուն է հարմարեցված նաև ***խոզաբուծությունը: Ոչխարաբուծությունը*** զարգացած է արևմուտքի լեռնային շրջաններում:

Ամենուրեք զարգացած է ԱՄՆ-ի անասնապահության ամենաինդուստրացված ճյուղը՝ ***թռչնաբուծությունը,*** մասնավորապես՝ հնդկահավերի բուծումը:

ԱՄՆ-ի գյուղատնտեսությունը լիովին բավարարում է բնակչության պարենի պահանջմունքները, իսկ որոշ արտադրատեսակներ՝ հացահատիկ, սոյա և այլն, նաև զգալի քանակությամբ արտահանվում են:

Տրանսպորտը: Երկիրն ունի զարգացած տրանսպորտային ցանց: Այն ավելի խիտ է հյուսիսում և արևելքում, քան հարավում և արևմուտքում:

ԱՄՆ-ի երկաթուղային տրանսպորտը առաջատար տեղ է գրավում հեռավոր բեռնափոխադրումների մեջ:

Հեռավոր բեռնափոխադրումների մեջ առաջատարը ***երկաթուղին*** է, որի երկարությամբ ԱՄՆ-ն աշխարհում առաջինն է:

Բեռների, ինչպես և ուղևորների փոխադրումները կարճ ու միջին տարածություններում գերազանցապես կատարվում են ***ավտոմոբիլային տրանսպորտով:***

Ավտոմեքենաների քանակով (270 մլն), բեռնաշրջանառությամբ և ավտոճանապարհների երկարությամբ (5,6 մլն կմ) նույնպես ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Ավտոմեքենան ամերիկացու համար և՛ տեղաշարժման միջոց է, և՛ տուն է անիվների վրա: Դուրս չգալով ավտոմեքենայից՝ կարելի է գնումներ կատարել, դիտել կինոֆիլմ, մասնակցել եկեղեցական ժամերգության:

ԱՄՆ-ի տրանսպորտային համակարգում կարևոր դեր ունի ***ներքին ջրային տրանսպորտը:*** Ջրային տրանսպորտի հզոր հանգույց են Մեծ լճերը, որոնք ջրանցքներով կապված են Միսիսիպի գետին և Ատլանտյան օվկիանոսի ափին գտնվող ***Նյու Յորք-ի նավահանգստին*** (Հուդզոն գետով): Գլխավոր գետային ուղին Միսիսիպին է՝ Օհայո վտակով:

Արտաքին տրանսպորտային բեռնափոխադրումները գլխավորապես իրականացվում են ***ծովային տրանսպորտի*** միջոցով: ԱՄՆ ժամանող և ԱՄՆ-ից մեկնող ուղևորների ավելի քան 2/3-ն օգտվում է ինքնաթիռներից:

Նավահանգիստ Խաղաղ օվկիանոսի ափին

Համաշխարհային մասշտաբով խոշոր տրանսպորտային հանգույցներ են Նյու Յորքը, Չիկագոն, Լոս Անջելեսը, Ֆիլադելֆիան:

ԱՄՆ-ի տնտեսության եկամտաբեր ճյուղ է դարձել բնակչության հանգստի և զբոսաշրջության կազմակերպումը, այսպես կոչված «**հյուրընկալության ինդուստրիան**»: Ամեն տարի այս երկիր են ժամանում 40 մլն-ից ավելի զբոսաշրջիկներ: Միջազգային զբոսաշրջության գծով ԱՄՆ-ը գիջում է Եվրոպային, բայց բարձր զարգացման է հասել ներքին զբոսաշրջությունը:

Ներքին տարածքային տարբերությունները: ԱՄՆ-ի բնության, բնակչության և տնտեսության ներքին զգալի տարածքային տարբերությունները հաշվի առնելով՝ ներկայումս ամերիկյան վիճակագրությունն առանձնացնում է **տնտեսաաշխարհագրական չորս մակրոշրջաններ**: Դրանք են ԱՄՆ-ի հյուսիս-արևելքը, միջին արևմուտքը, հարավը և արևմուտքը:

Հյուսիս-արևելքը (11 նահանգ և Կոլումբիայի դաշնային օկրուգը՝ Վաշինգտոն մայրաքաղաքով) թեև տարածքով ամենափոքրն է, բայց բացառիկ մեծ դեր է կատարում երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Այս շրջանի ծովափից են սկսվել երկրի բնակեցումը եվրոպացիներով, յուրացումը և տնտեսական զարգացումը: Այն ԱՄՆ-ի առավել յուրացված և ամենախիտ բնակեցված շրջանն է: Շատ բարձր է **քաղաքային բնակչության բաժինը** (95%): Այս շրջանում են գտնվում ամբողջ Մերձատլանտյան (Բոսվաշ) մեգալոպոլիսը և Մերձլճային մեգալոպոլիսի արևելյան հատվածը:

Ազատության արձանը Նյու Յորքում

Այստեղ է գտնվում **Նյու Յորքը** (8 մլն բնակչությամբ, արվարձաններով՝ 18 մլն), որը ոչ միայն ԱՄՆ-ի, այլև աշխարհի խոշորագույն քաղաքներից է, **ԱՄՆ-ի տնտեսական մայրաքաղաքը,** գլխավոր արդյունաբերական, մշակութային, առևտրական և ֆինանսական կենտրոնը, խոշորագույն նավահանգիստը:

Քաղաքի խորհրդանիշը 92 մ բարձրությամբ Ազատության արձանն է՝ ջահ բռնած կինը, որը Ֆրանսիայի նվերն է ԱՄՆ-ին նրա անկախության տարեդարձի առթիվ:

Նյու Յորքի արդյունաբերության որոշ ճյուղեր՝ մեքենաշինությունը, նավթաքիմիան, կարի և հրատարակչական (պոլիգրաֆիական) արդյունաբերությունը, ունեն համազգային նշանակություն: Քաղաքը հայտնի է գիտամշակութային բազմաթիվ հաստատություններով, համալսարաններով, թանգարաններով, կինոթատրոններով: Այն կարելի է անվանել նաև լրատվական «նորությունների մայրաքաղաք», քանի որ այստեղ են գտնվում ԱՄՆ-ի ամենախոշոր հեռուստատեսային ընկերությունները, խոշոր թերթերի խմբագրությունները:

Քաղաքը տարածված է Ատլանտյան օվկիանոսի մերձափնյա շերտում և կղզիների վրա: Դրանցից մեկի՝ Մանհեթենի գործարար թաղամասերը կառուցապատված են 80-100 հարկանի երկնաքերներով: Այստեղ է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) 39-հարկանի շենքը: Այստեղ էին գտնվում նաև Առևտրի համաշխարհային կենտրոնի 110-հարկանի երկու շենքերը, որոնք 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունից հիմնովին կործանվեցին: Զոհվեց շուրջ 4,5 հազ. մարդ:

Միջին արևմուտքի մասնագիտացման ճյուղերն են հատկապես սև մետաղաձուլությունը և մեքենաշինությունը, որոնք կենտրոնացած են Մերձլճային մեգալոպոլիսի տարածքում, Չիկագոյի և Դետրոյթի շրջակայքում:

Չիկագոն (մոտ 8 մլն բնակիչ՝ արվարձաններով) միաժամանակ ԱՄՆ-ի խոշորագույն տրանսպորտային հանգույցն է:

Միջին արևմուտքի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են **կաթնային** անասնապահությունը և հացահատիկի (ցորեն, եգիպտացորեն) մշակությունը:

Հարավը երկար ժամանակ եղել է հյուսիս-արևելքի և միջին արևմուտքի հումքային կցորդը: Շրջանի ինդուստրիալ զարգացման հիմքը լեռնահանքային արդյունաբերությունն է՝ նավթի, բնական գազի, քարածխի, ֆոսֆորիտի, ծծմբի հանույթը:

Հետպատերազմյան տարիներին Դալլաս, Հյուստոն, Ատլանտա և այլ քաղաքներում զարգացան ժամանակակից ճյուղեր (ավիահրթիռատիեզերական, էլեկտրոնային, ալյումինի, նավթաքիմիական):

Տիեզերական թռիչքների «Քենեդիի» կենտրոնը Ֆլորիդայում

Ֆլորիդայում է գտնվում տիեզերական թռիչքների **«Քենեդի» կենտրոնը**: «Արևային նահանգ» Ֆլորիդային հռչակ է բերում աշխարհի խոշորագույն առողջավայրը՝ **Մայամին**:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է, որը մասնագիտացել է բամբակի, ծխախոտի, բրնձի, շաքարեղեգի, ցիտրուսների արտադրության գծով:

Արևմուտքն ընդգրկում է ԱՄՆ-ի լեռնային և խաղաղօվկիանոսյան նահանգները՝ Ալյասկայի և Հավայան կղզիների հետ: Սա ԱՄՆ-ի ամենից ուշ զաղութացված շրջանն է, որտեղ երկար ժամանակ մասնագիտացման ճյուղեր են եղել լեռնահանքային արդյունաբերությունը և արոտային անասնապահությունը, իսկ ներկայումս շրջանի դեմքը առաջին հերթին որոշում են **արդյունաբերության նորագույն գիտատար ճյուղերը**:

Այստեղ են գտնվում ԱՄՆ-ի խոշորագույն նահանգը՝ Կալիֆոռնիան, և Լոս Անջելես քաղաքը: Լոս Անջելեսի մասն են կազմում Հոլիվուդը՝ կինոարտադրության աշխարհի խոշորագույն կենտրոնը, ԱՄՆ-ի **«հայկական» քաղաքները՝** Գլենդելը և Փասադենան: **Լոս Անջելեսը** հայաշատ երրորդ խոշոր քաղաքն է աշխարհում:

Ալյասկան ԱՄՆ-ի ամենանոսր բնակեցված նահանգն է: Զարգացած են ձկնորսությունը, անտառային տնտեսությունը, գազանաբուծությունը: Ալյասկայում արդյունահանում են զգալի քանակությամբ նավթ և բնական գազ:

Հավայան կղզիներն առանձնանում են որպես միջազգային նշանակության հանգստյան շրջան:

Արտաքին տնտեսական կապերը: ԱՄՆ-ն ավելի քիչ է կախված արտաքին առևտրից, քան Արևմտյան Եվրոպան կամ Ճապոնիան: *(Բացատրեք՝ ինչով է դա պայմանավորված:)*

Արտաքին առևտրի 2/3-ը բաժին է ընկնում զարգացած երկրներին: Արտաքին առևտրի գլխավոր գործընկեր երկրներն են Կանադան, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Չինաստանը և լատինամերիկյան որոշ երկրներ: **Արտահանման** շուրջ կեսը կազմում են մեքենաներն ու սարքավորումները, իսկ **ներմուծման** 2/3-ը՝ հումքը, վառելիքը, կիսապատրաստուկները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն է ԱՄՆ-ի բնական պայմանների և գյուղատնտեսության մասնագիտացման միջև եղած կապը:
2. Թվարկեք ԱՄՆ-ի բուսաբուծության գլխավոր ճյուղերը և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք դրանց տեղաբաշխման գլխավոր շրջանները:
3. Տվե՛ք ԱՄՆ-ի տրանսպորտի տարբեր ճյուղերի համեմատական բնութագիրը:
4. Ի՞նչ գործոնների ազդեցության տակ են ձևավորվել ԱՄՆ-ի տնտեսական զարգացման ներքին տարբերությունները: Թվարկե՛ք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք ԱՄՆ-ի շրջանները:

ԴԱՍ 57. ԿԱՆԱԴԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տարածքը՝ մոտ 10 մլն կմ²
Բնակչությունը՝ 34,9 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Օտտավա
Պետական կարգը՝ սահմանադրական միապետություն (դաշնային պետություն)

Ընդունված է ասել, որ «չափից ավելի է Կանադայի աշխարհագրությունը և չափից պակաս՝ պատմությունը»: Պատմության «պակասի» մասին թերևս կարելի է վիճել, բայց որ աշխարհագրությունը շատ է հարուստ և բազմազան՝ անվիճելի է:

Տարածքի մեծությամբ (9970 հազ. կմ²) Կանադան աշխարհի երկրորդ պետությունն է: Նրա ծայր հյուսիսային կետը Հյուսիսային բևեռից հեռու է ընդամենը 1000 կմ, իսկ ծայր հարավային կետը գտնվում է մոտավորապես Հռոմի և Երևանի աշխարհագրական լայնությունների վրա:

Կանադայի ափագծերի երկարությունն ամենամեծն է աշխարհում և 2,5 անգամ գերազանցում է հասարակածի երկարությանը:

Պետության ղեկավարը ձևականորեն Անգլիայի թագավորն է (թագուհին), ով նշանակում է Կանադայի գեներալ-նահանգապետին:

Ըստ պետական-տարածքային կառուցվածքի՝ Կանադան դաշնություն է՝ բաղկացած 10 նահանգից և 3 դաշնային տարածքից:

Կանադայի տարածքի մեծ մասը հարթավայրային է, բայց կլիմայի ցրտության, հողերի քարքարոտության և ավելուրդային խոնավության՝ ճահճապատության պատճառով **քիչ նպաստավոր է հողագործության համար:** Օգտակար հանածոներից

առանձնանում են երկաթի, պղնձի, ցինկի, կապարի, նիկելի, ուրանի, ոսկու, արծաթի պաշարները: Կան նաև ածխի, նավթի և գազի ոչ խոշոր պաշարներ:

Երկիրն ունի **ջրագրական խիտ ցանց**: Շատ են ձկնառատ գետերն ու լճերը: Գետերն ունեն նաև ջրաէներգետիկ մեծ նշանակություն:

Կանադան **անտառներով ամենահարուստ** երկրներից է, տարածքի 1/3-ից ավելին անտառապատ է: Գերակշռում են փշատերև անտառները:

Մեծ լճերից արևմուտք տարածված անտառատափաստաններն ու տափաստանները վերածվել են եգիպտացորենի ու ցորենի դաշտերի:

Կանադան բնական տարբեր ռեսուրսների (հանքային, անտառային, ջրային, հողային) ապահովվածության բարձր մակարդակով աշխարհում գրավում է առաջնակարգ տեղ: Դրանով են պայմանավորված տնտեսության մասնագիտացման ուղղությունները:

Բնակչությունը: Կանադայի բնիկները ինյուիտները (էսկիմոսները) և հնդկացիներն են, ովքեր, սակայն, ներկայումս բնակչության չնչին փոքրամասնությունն են կազմում: Ներկայիս բնակչության 40%-ը **Բրիտանական կղզիներից ներգաղթածների** սերունդներն են (անգլո-կանադացիներ), 28%-ը՝ **Ֆրանսիայից ներգաղթածների** սերունդները (ֆրանկո-կանադացիներ): Ապրում են նաև գերմանացիներ, լեհեր, հրեաներ, ռուսներ, հայեր և այլք: Ներգաղթը այժմ էլ մեծ դեր է խաղում բնակչության թվի ավելացման գործում:

Կանադայում ընդունված են երկու պետական լեզուներ՝ անգլերենը և ֆրանսերենը:

Ֆրանկո-կանադացիները մեծամասնություն են կազմում Քվեբեկ նահանգում, ուստի պայքարում են նահանգի պետական անկախության համար:

Այլ զարգացած երկրների համեմատությամբ բնակչության բնական աճը բարձր է (0,9%), բայց աշխարհի միջին ցուցանիշից՝ ցածր: Բնակչության միջին խտությունը դեռևս շատ ցածր է՝ 3 մարդ/կմ^2: Բնակչության շուրջ 90%-ն ապրում է ծայր հարավում, ԱՄՆ-ի սահմանի երկարությամբ ձգվող 300-400 կմ լայնության գոտում: Երկրի մեծ մասը կազմող հյուսիսային տարածքներում յուրաքանչյուր 20–25 կմ^2-ին ընկնում է մեկ մարդ: Սա աշխարհի ամենանոսրաբնակ և թույլ յուրացված շրջաններից է:

Տորոնտոյի կենտրոնական շրջանը

Կանադայի քաղաքային բնակչության բաժինը բարձր է՝ գրեթե 80%: Գյուղերը մանր են, տիրապետող է ցրված գյուղական տարաբնակեցումը:

Հայերը Կանադայում բնակվում են XIX դարից, սակայն նրանց թիվն ավելացել է հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից ներգաղթեցին հազարավոր հայեր: Ներկայումս հայերի թիվն անցնում է 70 հազարից: Հայերի մեծ մասն ապրում է Մոնրեալում և Տորոնտոյում:

Կանադայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Կանադան բարձր զարգացած երկիր է, «Մեծ յոթնյակի» անդամ, սակայն տնտեսությանը բնորոշ է **երկակիությունը. բարձր զարգացած երկրներին հատուկ գծերը զուգորդվում են թույլ զարգացած երկրներին հատուկ գծերին**: Մի կողմից՝ հարուստ ռեսուրսների լայնորեն շահագործման շնորհիվ արդյունաբերության կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի՝ լեռնահանքային արդյունաբերության, փայտամթերման, ջրաէներգետիկայի բաժինը, մյուս կողմից՝ տնտեսության գլխավոր ճյուղի բազմաճյուղ արդյունաբերության կառուցվածքում գերակշռում են նորագույն ճյուղերը (մեքենաշինություն և քիմիական արդյունաբերություն): Առաջավոր տեխնիկայի և տեխնոլոգիայի կիրառման աստիճանով Կանադան տիպիկ զարգացած երկիր է: *(Հիշեք՝ ուրիշ որ զարգացած երկրի տնտեսությունը երկակի բնույթ ունի:)*

Մետաղաձուլական գործարան Կանադայում

Արդյունաբերությանը բաժին է ընկնում Կանադայի արտահանության ընդհանուր ծավալի ավելի քան 75%-ը:

Մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Կանադան աշխարհի առաջին երկրներից է: Էլեկտրակայանների մեջ գերակշռում են ջրէկները: Ներկայումս երկրի վառելիքաէներգետիկ համալիրում մեծանում է նավթի և գազի բաժինը: Նավթ և բնական գազ արդյունահանվում է երկրի արևմուտքում, իսկ վերջերս՝ նաև հյուսիսում:

Զարգացած է գունավոր մետալուրգիան: Կանադան ցինկի, նիկելի, ոսկու, ուրանի, կապարի, պղնձի, երկաթի հանքաքարի արդյունահանմամբ աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը: Դրանց մի մասը վերամշակվում է տեղում, մյուս մասն արտահանվում է այլ երկրներ, հատկապես՝ ԱՄՆ: Կանադան ալյումինի խոշորագույն արտահանողն է աշխարհում, թեև ամբողջ արտադրությունը հիմնված է ներմուծվող հումքի վրա: *(Մտածեք, թե որն է դրա պատճառը:)*

Անտառային արդյունաբերությունը Կանադայի տնտեսության հնագույն ճյուղերից է: Հումքային հարուստ բազայից բացի՝ նրա զարգացմանը նպաստում է նաև էժան ջրային ուղիների և էլեկտրաէներգիայի առկայությունը:

Կանադայի **գյուղատնտեսությունն** աչքի է ընկնում բարձր ապրանքայնությամբ, մասնագիտացման և մեքենայացման բարձր մակարդակով: Բնորոշ է խոշոր հողա-

տիրությունը: Գյուղատնտեսական հողահանդակների մոտ 3/4-ը կենտրոնացած է ապրանքային խոշոր ագարակներում:

Առաջատարը անասնապահությունն է, մասնավորապես՝ տավարաբուծությունը:

Վարելահողերն առավելապես երկրի հարավային գոտում են, որտեղ գերակշռում են հացահատիկային մշակաբույսերը, հատկապես ցորենը: Կանադան ցորենի երկրորդ արտահանողն է աշխարհում (ԱՄՆ-ից հետո):

Տրանսպորտն առանձնահատուկ նշանակություն ունի Կանադայի տնտեսության համար: Դա գլխավորապես բացատրվում է տարածքի ընդարձակությամբ:

Երկաթգծերի, ավտոխճուղիների, խողովակաշարերի երկարությամբ Կանադան աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը: Սակայն տրանսպորտային ցանցը ծայրաստիճան անհավասարաչափ է տեղաբաշխված: Բնականաբար, այն համապատասխանում է տարաբնակեցմանը և արտադրության անհավասարաչափ տեղաբաշխմանը. հարավային մասում խիտ է, իսկ հյուսիսում՝ շատ նոսր:

Բացառիկ մեծ է Սուրբ Լավրենտիոս գետի ջրային համակարգի տրանսպորտային նշանակությունը: Աճում է ծովային տրանսպորտի դերը, որով կատարվում է արտաքին փոխադրումների մեծ մասը:

Կանադայի մայրաքաղաք Օտտավայի պատմական կենտրոնը

Կանադայի գրեթե ամբողջ ***մշակող արդյունաբերությունը*** և ***գյուղատնտեսությունը*** տեղաբաշխված են երկրի հարավի նեղ շերտում, որը ձգվում է Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև: Այստեղ են գտնվում երկրի խոշորագույն քաղաքները՝ Տորոնտոն, Մոնրեալը, Քվեբեկը, ինչպես նաև մայրաքաղաք Օտտավան:

Կանադայի հյուսիսը շատ թույլ է յուրացված, ուստի դրան ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում:

Կանադան, պատրաստի արդյունաբերական ապրանքներից բացի, արտահանում է մեծ քանակությամբ հումք (մետաղներ, փայտ և այլն) և պարենամթերք (հացահատիկ, միս և այլն), ներմուծում է մեքենաներ, սարքավորումներ, սպառման առարկաներ, գյուղատնտեսական մթերքներ և այլն: Հիմնական առևտրական գործընկերը ԱՄՆ-ն է: Կանադան ձգտում է տնտեսական կապերը զարգացնել աշխարհի այլ տարածաշրջանների երկրների հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք Կանադայի բնակչության ազգային կազմը: Ինչպես է այն ձևավորվել: Տվեք բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը:
2. Ինչո՞ւմ է արտահայտվում Կանադայի տնտեսության երկակի բնույթը:
3. Ինչո՞ւ Կանադայի համար տրանսպորտի դերը համարվում է բացառիկ կարևոր:
4. Բնութագրեք և բացատրեք Կանադայի տնտեսության ներքին տարբերությունները:

ԴԱՍ 58. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ. ԿԱՋՄԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Լատինական Ամերիկա տարածաշրջանը զբաղեցնում է Արևմտյան կիսագնդի, կամ, ինչպես այլ կերպ անվանում են, Նոր աշխարհի ցամաքային տարածքի մոտ կեսը: Տարածաշրջանը ներառում է ԱՄՆ-ի և Անտարկտիդայի միջև 13 հազար կմ ձգվածությամբ և 20,5 մլն կմ² ընդհանուր մակերեսով ընդարձակ տարածքը: Տարածաշրջանի մեջ են մտնում Հյուսիսային Ամերիկա մայրցամաքի հարավային, համեմատաբար նեղ մասը և ամբողջությամբ Հարավային Ամերիկա մայրցամաքը՝ հարակից կղզիներով:

Լատինական Ամերիկա

Լատինական Ամերիկա տարածաշրջանի սահմաններում ՄԱԿ-ը առանձնացնում է **Կարիբյան ավազան**, **Կենտրոնական Ամերիկա** և **Հարավային Ամերիկա** ենթատարածաշրջանները, որոնցից առաջին երկուսը նաև դիտարկվում են միասին՝ որպես մեկ միասնական ենթատարածաշրջան՝ **Միջին Ամերիկա**:

Բնական պայմանները և ռեսուրսները: Վեցերորդ դասարանի աշխարհագրության դասընթացից հայտնի է, որ Լատինական Ամերիկայի տարածքի արևմտյան մասով ձգվում են Հյուսիսային Կորդիլիերների հարավային հատվածը և Հարավային Կորդիլիերները կամ Անդերը, որոնք մեծ ազդեցություն ունեն Լատինական Ամերիկայի բնական պայմանների, իսկ դրանով պայմանավորված՝ նաև մարդու կյանքի և տնտեսական գործունեության պայմանների վրա: Այդ առումով համեմատաբար նպաստավոր են Կորդիլիերներից դեպի արևելք տարածվող հարթ տարածքները:

Լատինական Ամերիկայի տնտեսական զարգացման կարևոր նախադրյալ են բավականին հարուստ և բազմազան բնական ռեսուրսները:

Հետախուզված վառելիքային ռեսուրսներից նշանակալի են նավթի ու բնական գազի պաշարները: Առավել խոշոր պաշարները կենտրոնացած են **Մեքսիկական** և **Մարակաիբո**[1] ծոցերի շրջաններում:

Կարաժասի երկաթաքարի բաց հանքը

Քարածխի պաշարները տարածված են համեմատաբար հավասարաչափ, իսկ երկաթաքարի կարևորագույն պաշարները՝ գլխավորապես Բրազիլական, Գվիանական և Մեքսիկական սարահարթերում:

Լատինական Ամերիկայի ընդերքը բացառիկ հարուստ է նաև **գունավոր մետաղների** հանքաքարի պաշարներով, ինչն արտահայտված է տարածաշրջանի մի շարք աշխարհագրական անուններում: Մասնավորապես՝ Արգենտինա և Լա Պլատա անվանումները կապված են լատիներեն argentum և plata՝ արծաթ բառի հետ, Անդերը՝ ինկերի լեզվով anti՝ պղինձ բառի, իսկ Բրազիլիայի Մինաս Ժերաիս նահանգի անունը՝ պորտուգալերեն «խոշոր հանքեր» բառերի հետ: Ոսկու (լատիներեն՝ oro) հետ է կապված առասպելական Էլդորադո անունը:

Ամազոն գետը միջին հոսանքում

Լատինական Ամերիկայի տնտեսական զարգացման կարևորագույն նախադրյալ են տարածաշրջանի **ջրային** բացառիկ խոշոր պաշարները: Լատինական Ամերիկայի տարածքը կազմում է երկրագնդի ամբողջ ցամաքի մոտ 14%-ը, մինչդեռ այդ տարածաշրջանում է ձևավորվում աշխարհի բոլոր գետերի ջրի հոսքի շուրջ 25%-ը:

1. Մարակաիբո ծոցը և համանուն լիճը Վենեսուելա պետության տարածքում են:

Լատինական Ամերիկայի տարածքի մոտ 70%-ը Ամազոն, Պարանա և Օրինոկո գետերի ավազաններում է: Տարածաշրջանն աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում նաև մեկ մարդու հաշվով տարեկան ձևավորվող մաքուր ջրի քանակով:

Բացառիկ մեծ է նաև գետերի ջրաէներգետիկ, այսինքն՝ էլեկտրաէներգիա արտադրելու ներուժը, որը դեռևս օգտագործվում է փոքր չափերով:

Լատինական Ամերիկայի տնտեսական զարգացման կարևորագույն նախադրյալ են նրա հարուստ **հողային** ռեսուրսները:

Անտառների տարածքը զգալիորեն կրճատվել է դրանց հատման և հրդեհման հետևանքով: Անտառներից ազատված տարածքներն օգտագործվում են ճանապարհների կառուցման և գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակներով: Այդուհանդերձ՝ Լատինական Ամերիկայի **անտառները դեռևս ապահովում են երկրագնդի մթնոլորտ մտնող թթվածնի 40%-ը**:

Շատ հարուստ, բազմազան և միաժամանակ էնդեմիկ են Լատինական Ամերիկայի կենդանական ռեսուրսները: Շատ կենդանիների միսը բնակչության կողմից օգտագործվում է որպես սննդամթերք:

Կազմը: Պատմական խոշոր իրադարձությունների հետևանքով Լատինական Ամերիկայի քաղաքական քարտեզը ենթարկվել է էական փոփոխությունների:

Այս տարածաշրջանի քաղաքական քարտեզի ընդհանրական բնութագրական գիծը դրա երկրների պատմական ճակատագրի միանմանությունն է:

Մինչև եվրոպական պետությունների կողմից նվաճվելը Լատինական Ամերիկայի ներկա տարածքում գոյություն ունեին ացտեկների, մայաների ու ինկերի հնդկացիական կայսրությունները՝ իրենց ծաղկուն մայրաքաղաքներով: Ամերիկայի հայտնագործումից հետո վերոնշյալ կայսրությունները նվաճվեցին և դարձան Իսպանիայի գաղութներ, իսկ այդ ժամանակ պետականորեն դեռևս չկազմակերպված ամենամեծ տարածքը նվաճվեց Պորտուգալիայի կողմից՝ դառնալով նրա գաղութը՝ Բրազիլիան:

Ճակատագրերի նույնպիսի ընդհանրությամբ էլ Լատինական Ամերիկայի համեմատաբար խոշոր երկրները XIX դարի սկզբին կարճ ժամանակահատվածում անկախացան և դարձան ինքնիշխան պետություններ: Սակայն այլ ուղիով ընթացավ լատինամերիկյան համեմատաբար փոքր ու կղզային երկրների քաղաքական ճակատագիրը. դրանց մի մասը մինչև XX դարի կեսերը մնաց, իսկ մյուս մասն էլ նույնիսկ մեր օրերում շարունակում է մնալ որպես ոչ ինքնակառավարվող (ոչ ինքնիշխան) տարածքներ:

Դրանց մեծ մասը գտնվում է Կարիբյան ավազանում և պատկանում է Մեծ Բրիտանիային: Կարիբյան ավազանի ոչ ինքնակառավարվող միավորներից տարածքով և բնակչության թվով խոշորագույնը Պուերտո Ռիկոն է, որը գտնվում է ԱՄՆ-ի ենթակայության տակ:

Հարավային Ամերիկայի ցամաքային հատվածում միակ ոչ ինքնակառավարվող տարածքը Ֆրանսիական Գվիանան է:

Տարածաշրջանի երկրները, բացառությամբ դեռևս սոցիալիստական զարգացման ուղիով ընթացող Կուբայի, ազատ շուկայական տնտեսությամբ զարգացող երկրներ են:

Լատինամերիկյան երկրները, ըստ կառավարման ձևի, հանրապետություններ են (հիմնականում՝ նախագահական): Տարածաշրջանի խոշոր երկրները (Բրազիլիա, Արգենտինա, Մեքսիկա, Վենեսուելա) ունեն դաշնային պետական տարածքային կա-

ռուցվածք: Եվ, վերջապես, Լատինական Ամերիկայի երկրները միմյանցից տարբերվում են նաև քանակական հատկանիշներով՝ տարածքի մեծությամբ և բնակչության թվով: Տարածքի մեծությամբ առանձնանում են ավելի քան 1 մլն կմ² մակերեսով երկրները՝ Բրազիլիան, Արգենտինան, Մեքսիկան, Պերուն, Կոլումբիան և Բոլիվիան, իսկ դրանցից խոշորագույնը՝ Բրազիլիան (8,5 մլն կմ²), նույնիսկ եզրափակում է տարածքի մեծությամբ աշխարհի խոշորագույն երկրների հնգյակը (Ռուսաստանից, Կանադայից, Չինաստանից և ԱՄՆ-ից հետո): Լատինական Ամերիկայի պետությունների բնութագրական մյուս գիծն էլ դրանց գերազանցապես ծովափնյա աշխարհագրական դիրքն է (բացառությամբ Բոլիվիայի և Պարագվայի): Երկրների մի մասը Ատլանտյան օվկիանոսի ափին է, մյուս մասը՝ Խաղաղ: Կենտրոնական Ամերիկայում կան նաև մի շարք երկրներ, որոնք միաժամանակ վերոնշյալ երկու օվկիանոսների ափին են (տե՛ս 202 էջի քարտեզը):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նկարագրեք Լատինական Ամերիկայի տարածաշրջանի աշխարհագրական դիրքը, տարածքը և ենթատարածաշրջանները:
2. Ինչո՞վ է Լատինական Ամերիկա տարածաշրջանը ինքնատիպ: Բացատրեք տարածաշրջանի անվան ծագման պատճառը:
3. Բնութագրեք Լատինական Ամերիկայի բնական պայմանները՝ տնտեսության զարգացման համար նպաստավորության տեսանկյունից:
4. Որո՞նք են Լատինական Ամերիկայի գլխավոր բնական ռեսուրսները: Որտե՞ղ են դրանք տեղաբաշխված, և դրանց օգտագործման ինչպիսի՞ հիմնախնդիրներ կան:
5. Լատինական Ամերիկայի երկրները խմբավորե՛ք՝ ա) ըստ սոցիալ-տնտեսական զարգացման ուղու, բ) ըստ տարածքի մեծության, գ) ըստ աշխարհագրական դիրքի, դ) ըստ բնակչության թվի:

ԴԱՍ 59. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը: Լատինական Ամերիկայի բնակչության ձևավորման ու աճի գործընթացները բնութագրվում են իրենց ինքնատիպությամբ:

Խայտաբղետ է ռասայական կազմը: Լատինական Ամերիկայում միախառնված են դեղնամորթ ռասայի ներկայացուցիչների՝ հնդկացիների, սպիտակամորթ ռասայի ներկայացուցիչների՝ եվրոպացիների և Աֆրիկայից բերված սևամորթների սերունդները:

Պերուի տեղաբնիկ ժողովրդի՝ ինկերի ներկայացուցիչներ արքայական տարազով

Ի տարբերություն Հյուսիսային Ամերիկայի՝ Լատինական Ամերիկայում գրեթե չեն եղել միջռասայական լարում ու ռասայական խտրականություն, տիրապետել է ռասայական հանդուրժողականության մթնոլորտը,

որի պայմաններում էլ առաջացել են բնակչության խառը՝ միջռասայական խմբերը (մուլատները, մետիսները և սամբոները):

Ներկայումս մարդկանց ռասայական միաձուլման գործընթացն ավելի է խորացել: Այժմ արդեն միմյանց են ձուլվում ոչ միայն տարբեր ռասաներին պատկանող մարդիկ, այլև դրանց խառնածին սերունդների ներկայացուցիչները, ինչի հետևանքով հետզհետե ավելի աննկատելի են դառնում մարդկանց ռասայական պատկանելության հատկանիշները (դիմագծերը, մաշկի գույնը, մազերի տեսքը և այլն): Որոշ տարածաշրջաններում, հատկապես Պերուի և Բոլիվիայի անտառային ու բարձրլեռնային մասերում, մեծամասնություն են կազմում **հնդկացիները**: Մետիսները կազմում են մայրցամաքի լեռնային երկրների բնակչության հիմնական զանգվածը: Սևամորթներն ու մուլատները ապրում են գլխավորապես արևելքում և Կարիբյան ծովի ավազանի երկրներում: Արգենտինայի և Ուրուգվայի հիմնական բնակիչները եվրոպացիների սերունդներն են: Լատինական Ամերիկայի երկրներ են գաղթել նաև **հայեր**: Հայկական համեմատաբար խոշոր գաղթօջախներ են ձևավորվել Արգենտինայում, Ուրուգվայում և Բրազիլիայում:

Լատինական Ամերիկայի և աշխարհի բնակչության աճը 2000-2012թթ.



Տարածաշրջանի բնակչության աճը մոտ 1,1% է, այսինքն՝ գրեթե հավասար է աշխարհի ամբողջ բնակչության աճի միջին ցուցանիշին:

Բնակչության թվի առումով ևս Լատինական Ամերիկայի երկրները խիստ տարբերվում են: Բնակչության թվով առաջին հերթին առանձնանում են Բրազիլիան (194 մլն), Մեքսիկան (115 մլն), որոնց հետևում է 30-ից մինչև 50 մլն բնակիչ ունեցող երկրների խումբը (Արգենտինա, Կոլումբիա, Պերու, Վենեսուելա):

Հաջորդ խմբի մեջ մտնում են մի քանի միլիոն բնակիչ ունեցող երկրները (օրինակ՝ Կոստա Ռիկա, Հայիթի, Նիկարագուա), իսկ վերջին՝ եզրափակող խմբի մեջ են մտնում շատ փոքրաթիվ բնակչություն ունեցող երկրները:

Ընդհանուր առմամբ՝ Լատինական Ամերիկան աշխարհի համեմատաբար նոսր և անհամաչափ բնակեցված տարածաշրջաններից է: Բնակչության խտությունը մոտ 30 մարդ/կմ² է:

Առավել խիտ են բնակեցված արևելյան՝ մերձատլանտյան առափնյա գոտին և Կարիբյան ավազանը, իսկ նոսր են բնակեցված Ամազոնի դաշտավայրը և մայրցամաքի հարավը:

Լատինական Ամերիկայի բնակչության տեղաբաշխման մյուս կարևոր առանձնահատկությունը բնակեցման գոտու ուղղաձիգ մեծ ձգվածությունն է: Բնակեցման գոտին տարածվում է ծովի մակարդակից մինչև 3000–4000 մ բարձրությունները: Լատինական Ամերիկայում, Անդյան լեռների բարձրադիր գոտում է բնակվում աշխարհի բարձրլեռնային շրջանների բոլոր բնակիչների գերակշիռ մասը: Անդյան բարձրլեռնային գոտում մարդկանց բնակեցումն ու կենսագործունեությունը հնարավոր են տեղական յուրահատուկ մեղմ կլիմայական պայմանների շնորհիվ: Բարձրադիր են ոչ միայն գյուղերն ու փոքր քաղաքները, այլև նույնիսկ խոշոր քաղաքները: Աշխարհի խոշոր քաղաքներից բարձրադիրը՝ Բոլիվիայի մայրաքաղաք Լա Պասը, գտնվում է հիմնականում 3700 մ, իսկ նրա առանձին արվարձաններ՝ 4100 մ բարձրության վրա:

Կան նաև այլ քաղաքներ, որոնք բարձրությամբ գերազանցում են նույնիսկ Լա Պասին: Օրինակ՝ Պերուական Անդերում Սերրո դե Պասկո քաղաքի բարձրությունը 4400 մ է, իսկ առանձին լեռնահանքային ավաններինը՝ նույնիսկ 5334 մ (Ակոնկուչա):

Լատինական Ամերիկայի քաղաքների աճի տեմպերն ու քաղաքաբնակների բաժինը բարձր են: Քաղաքային բնակչության բաժինը մոտեցել է զարգացած տարածաշրջանների մակարդակին, իսկ որոշ երկրներում, օրինակ՝ Արգենտինայում և Ուրուգվայում, քաղաքային բնակչության բաժինը (92%) նույնիսկ գերազանցում է արևմտաեվրոպական շատ երկրների համապատասխան ցուցանիշին:

Տարածաշրջանում կա 1 մլն-ից ավելի բնակիչ ունեցող մոտ 50 քաղաք, որոնց մի մասը մտնում է աշխարհի խոշորագույն քաղաքների շարքը (Մեխիկո, Սան Պաուլու, Բուենոս Այրես):

Քաղաքների բնակչության բաժնի աճը պայմանավորված է հողազուրկ և գործազուրկ գյուղական բնակիչների մեծ հոսքով դեպի խոշորագույն քաղաքներ՝ աշխատանք ձեռք բերելու նպատակով: Նրանք սկզբնապես կենտրոնանում են քաղաքների արվարձաններում՝ ձևավորելով ձեռքի տակ եղած շինանյութերից հապշտապ կառուցված, հարմարություններից զուրկ կացարանների թաղամասեր (ֆավելաներ):

Սովորական պատկեր է լատինամերիկյան քաղաքների երկվությունը. կողք կողքի առկա են ժամանակակից, բարեկարգ ու բազմահարկ քաղաքային կենտրոնը և անբարեկարգ փողոցներով ու միհարկանի տներով կառուցապատված ծայրամասերը:

Տնտեսությունը: Լատինական Ամերիկայի **տնտեսությունը** ենթարկվել է մեծ փոփոխությունների: Հազարամյակներ շարունակ Լատինական Ամերիկայի տարածքի բնակիչների հիմնական զբաղմունքը եղել է գյուղատնտեսությունը:

Քաղաքական անկախության տարիներին տարածաշրջանի երկրներում ձևավորվել է միակողմանի ուղղվածության՝ արտաքին շուկայից կախված տնտեսություն:

Մեղյան երկրները դարձել են հանքարդյունաբերության, Կարիբյան ավազանի երկրները՝ շաքարի, Բրազիլիան և Կոլումբիան՝ սուրճի, Կենտրոնական Ամերիկայի երկրները՝ ադամաթզի (բանանի), Արգենտինայի, Ուրուգվայի և Բրազիլիայի պամպասները՝ մսի և բրդի խոշոր մատակարարներ:

Լատինամերիկյան երկրների մեծ մասը տնտեսական զարգացման նոր, ավելի բարձր մակարդակի հասավ Երկրորդ աշխարհամարտից հետո: Մի շարք երկրներում ստեղծվեցին նավթային, մետաղաձուլական, էներգետիկական պետական ձեռնարկություններ: Արտահանության կառուցվածքում աճեց պատրաստի ապրանքների բաժինը, և նվազեց հումքի ու վառելիքի բաժինը:

Լատինամերիկյան երկրների շարքում տնտեսության ծավալներով ու զարգացման մակարդակով առանձնանում են Բրազիլիան, Մեքսիկան և Արգենտինան, որոնք անվանվում են «Մեծ եռյակի երկրներ»: Զարգացման համեմատաբար բարձր մակարդակի են հասել նաև Ուրուգվայը, Վենեսուելան, Չիլին: Կենտրոնական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրները դեռևս շարունակում են մնալ որպես գյուղատնտեսական մթերք և հանքային հումք արտադրող ու արտահանող երկրներ:

Տարածաշրջանի **արդյունաբերության** առաջատար ճյուղը նավթի և բնական գազի արդյունահանումն է: Նավթի արդյունահանման ծավալով տարածաշրջանի առաջատարներն են Մեքսիկան և Վենեսուելան, իսկ ածխի արդյունահանմամբ՝ Կոլումբիան:

Էլեկտրաէներգետիկական արդյունաբերության մեջ օգտագործվում են նավթի և գազի, ինչպես նաև գետերի հսկայական ջրաէներգետիկ պաշարները: Կառուցված են մի շարք խոշոր ջրաէլեկտրակայաններ, այդ թվում՝ Պարանա գետի Իգուասու վտակի Իտայպու խոշորագույն ջրէկը:

Իտայպու ջրէկի ամբարտակը Իգուասու գետի վրա

Երկաթաքարի արդյունահանման ծավալով Բրազիլիան աշխարհում գրավում է 3-րդ տեղը (Չինաստանից և Ավստրալիայից հետո):

Լատինական Ամերիկան աշխարհում աչքի է ընկնում նաև որպես գունավոր մետաղների հանքաքարի խոշոր արդյունահանող, ձուլող և արտահանող: Առանձնապես մեծ է պղնձի, ալյումինի հումքի, ցինկի, անագի, սնդիկի հանքանյութի արդյունահանման ծավալը: Պղնձի ձուլման ծավալով առաջատարներ են Չիլին, Պերուն և Մեքսիկան, իսկ ալյումինի գծով՝ Բրազիլիան, Արգենտինան և Վենեսուելան:

Մեծ է նաև Լատինական Ամերիկայի երկրների բաժինը սննդի և թեթև արդյունաբերության համաշխարհային արտադրանքի մեջ: Շաքարի արտադրության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է՝ իրենից զգալիորեն հետ թողնելով մյուս երկրներին: Աչքի են ընկնում նաև Մեքսիկան, Կոլումբիան և Կուբան: Լատինական Ամերիկայում է արտադրվում շաքարի համաշխարհային արտադրանքի շուրջ 1/3-ը:

Լատինական Ամերիկայի երկրների տնտեսության և արտահանության կարևոր բնագավառը **գյուղատնտեսությունն** է:

Գյուղատնտեսական հողահանդակները կազմում են Լատինական Ամերիկայի տարածքի շուրջ 25%-ը, որից մշակվող հողերը՝ ընդամենը 5%-ը: Բայց քանի որ բնակլիմայական պայմանները հնարավորություն են ընձեռում միևնույն հողատարածությունից տարեկան ստանալու 2 կամ նույնիսկ 3 բերք, ապա գյուղատնտեսական մթերքի արտադրությունը հիմնականում բավարարում է բնակչության պահանջարկը, և նույնիսկ մասամբ մթերք է արտահանվում: Գյուղատնտեսական արտադրությանը բնորոշ է բազմակացութաձևությունը (Աֆրիկայի նման): Խոշոր գյուղական տնտեսությունների (լատիֆունդիաներ) կողքին կան մեծ թվով մանր տնտեսություններ, որոնք տնօրինում են միջին հաշվով մոտ 5 հեկտար հողատարածք:

Գերազանցապես հնդկացիներով բնակեցված տարածքներում դեռևս պահպանվում է ավանդական համայնական հողատիրությունը: Ամբողջ համայնքին պատկանող հողը մշակում են համայնքի բոլոր անդամները և հողից ստացած բերքը բաշխում են համայնքի բոլոր անդամների միջև:

Բուսաբուծությունը տարածաշրջանի գրեթե բոլոր երկրների գյուղատնտեսության առաջատար ճյուղն է: Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում մշակում են **շաքարեղեգ**, իսկ Չիլիում և Ուրուգվայում՝ **շաքարի ճակնդեղ**:

Սուրճ մշակում են Լատինական Ամերիկայի արևադարձային գոտու երկրներում, առավելապես Բրազիլիայում և Կոլումբիայում:

Կակաո մշակում են տարածաշրջանի 16 երկրում, հատկապես Բրազիլիայում:

Լատինական Ամերիկայում **աղամաթուզ** մշակում են շատ երկրներում, բայց արտահանությամբ առանձնանում են Կոլումբիան և Կենտրոնական Ամերիկայի երկրները՝ այսպես կոչված «բանանային պետությունները»:

Լատինական Ամերիկայի երկրներում մշակում են նաև **ցորեն**, **եգիպտացորեն**, **բրինձ**, **սոյա**, **բամբակենի**, **խաղող** և այլն:

Անասնապահությունը գյուղատնտեսության առաջատար ճյուղ է Արգենտինայում, Պարագվայում և Ուրուգվայում, որտեղ դրա զարգացման համար կան առավել նպաստավոր նախադրյալներ: Խոշոր եղջերավոր անասնապահությամբ առաջատար երկրներ են Բրազիլիան և Արգենտինան:

Խոզաբուծությունը գլխավորապես զարգացած է Բրազիլիայում, իսկ մանր եղջերավոր անասնապահությունը՝ Արգենտինայում և անդյան երկրներում:

Ձկան որսի ծավալով Չիլին աշխարհի առաջատար երկրներից է:

Լատինական Ամերիկայի **ցամաքային տրանսպորտային ցանցի** ուրվագիծը ցույց է տալիս տարածաշրջանի բնակչության և տնտեսության տեղաբաշխումը: Տրանսպորտային ցանցը համեմատաբար խիտ է Հարավային Ամերիկայի ծովափնյա շրջաններում և, ընդհակառակը, նոսր է ցամաքի ներքին շրջաններում:

Երկաթուղային գծերը կառուցվել են գլխավորապես հանքային հումքն ու գյուղատնտեսական մթերքները ներքին շրջաններից մինչև նավահանգիստներ փոխադրելու նպատակով: Տրանսպորտային ցանցի վերոնշյալ ուրվագիծն անվանվում է «գաղութային», քանի որ բնորոշ է աշխարհի գաղութային բոլոր երկրներին:

Ցամաքի խորքային, ինչպես նաև բարձրլեռնային և նավարկելի գետերից հեռու տարածքների տրանսպորտային գլխավոր տեսակը **ավտոմոբիլայինն** է: Տարածաշրջանի արևմտյան ծովափով ձգվում է Պանամերիկյան ավտոմայրուղին, իսկ Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև՝ Ամազոնյան մայրուղին:

Թեպետ Լատինական Ամերիկայի գետային ցանցը բավականին խիտ է, բայց **ներքին ջրային տրանսպորտը** համեմատաբար թույլ է զարգացած: Ամազոնով ծովային հսկա նավերը հասնում են մինչև Մանաուս քաղաք:

Համաշխարհային կարևորագույն ջրային ուղիներից մեկը՝ Պանամայի ջրանցքը

Լատինական Ամերիկայի **ծովային տրանսպորտով** են իրականացվում տարածաշրջանի պետությունների (բացառությամբ Մեքսիկայի) գրեթե ողջ արտաքին առևտրային փոխադրումները: Խոշորագույն նավահանգիստներ են Բուենոս Այրեսը, Ռիո դե Ժանեյրոն, Սանթուսը (Սան Պաուլու քաղաքի մոտ), Տուբարանը:

Ջրատարողության ծավալով աշխարհի ամենամեծ նավատորմիղը գրանցված է Պանամայում, թեպետ դրա նավերն իրականում պատկանում են այլ երկրների:

Լատինական Ամերիկայի և, ընդհանուր առմամբ, համաշխարհային ծովային փոխադ-

ռումների մեջ մեծ նշանակություն ունի Պանամայի ջրանցքը, որն իր երկարությամբ և թողունակությամբ երկրորդն է աշխարհում (Սուեզի ջրանցքին զիջելով):

Կարիբյան ավազանի երկրները միջազգային զբոսաշրջության կարևոր շրջաններից են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ռասայական ի՞նչ առանձնահատկությամբ է բնորոշվում Լատինական Ամերիկայի բնակչությունը:
2. Որո՞նք են Լատինական Ամերիկայի բնակչության բնական աճի և տեղաբաշխման առանձնահատկությունները:
3. Որո՞նք են Լատինական Ամերիկայի ուրբանիզացման բնորոշ գծերը և առանձնահատկությունները:
4. Որո՞նք են Լատինական Ամերիկայի ժամանակակից տնտեսության գլխավոր ճյուղերը: Լատինական Ամերիկան աշխարհի տարածաշրջանների շարքում ո՞ր ճյուղերի գծով է առաջատարների դիրքերում:
5. Որո՞նք են Լատինական Ամերիկայի արդյունաբերության գլխավոր ճյուղերը և դրանց տեղաբաշխման գլխավոր շրջանները:
6. Նշե՛ք Լատինական Ամերիկայի գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղերն ու դրանց տեղաբաշխման գլխավոր շրջանները:
7. Բնութագրե՛ք Լատինական Ամերիկայի տրանսպորտի զարգացման ընդհանուր պատկերը:

ԴԱՍ 60. ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԲՐԱԶԻԼԻԱ). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Տարածքը՝ 8,5 մլն կմ²
Բնակչությունը՝ 193,9 մլն մարդ (2012թ.)
Մայրաքաղաքը՝ Բրազիլիա
Պետական կարգը՝ նախագահական կառավարմամբ դաշնային հանրապետություն

Բրազիլիան Լատինական Ամերիկայի խոշորագույն երկիրն է և՛ տարածքի մեծությամբ, և՛ բնակչության թվով, և՛ տնտեսական հզորությամբ:

Բրազիլիան զբաղեցնում է Հարավային Ամերիկա մայրցամաքի մոտ կեսը՝ արևելյան և կենտրոնական մասերը:

Բրազիլիայի ամբողջ սահմանագծի (16 հազ. կմ) ավելի քան կեսը (7,4 հազ. կմ) Ատլանտյան օվկիանոսի ափն է: Բրազիլիայի աշխարհագրական այդպիսի դիրքը երկրի տնտեսական զարգացման կարևորագույն և նպաստավոր նախադրյալներից է:

Բրազիլիան 1822 թվականից անկախ պետություն է, իսկ 1889 թվականից՝ դաշնային հանրապետություն՝ կազմված 22 նահանգից, 4 տարածքից և 1 դաշնային օկրուգից:

Բնական պայմաններն ու ռեսուրսները: Տարածքի հսկայական չափերի պատճառով Բրազիլիայի բնակլիմայական պայմանները բազմազան են: Երկրի բնական

պայմանները մարդու կյանքի և տնտեսական գործունեության կազմակերպման համար ընդհանուր առմամբ նպաստավոր են:

Բրազիլիայի տնտեսական զարգացման կարևոր ու նպաստավոր նախադրյալ են նաև բացառիկ հարուստ և բազմազան **բնական ռեսուրսները**: **Օգտակար հանածոների** պաշարների մեծությամբ Բրազիլիան աշխարհի ամենահարուստ երկրներից է: Երկրի ընդերքն առանձնապես հարուստ է **երկաթի**, **մանգանի** և **քրոմի** հանքաքարի պաշարներով: Սասնավորապես երկաթի հանքաքարի ապահովվածության առումով՝ Բրազիլիան աշխարհի առաջատար երկրներից է: Երկաթի հանքաքարի խոշորագույն հանքավայրը **Կարաժասն** է: Մեծ են նաև գունավոր մետաղների՝ **տիտանի**, **վոլֆրամի**, **անագի հանքանյութերի**, ինչպես նաև բնական շինանյութերի պաշարները: Հանքային հարստությունները մեծ մասամբ Մինաս Ժերայիս նահանգում են:

Բրազիլիայի **բնակչության** բնութագրական գիծը ռասայական-ազգային բազմազանությունն է: Բրազիլական ազգի ձևավորման գործընթացի մասնակիցներն են բնիկ հնդկացիները, եկվոր պորտուգալացի գաղութարարներն ու նրանց սերունդները, ինչպես նաև, սկսած XVI դարի կեսից, Աֆրիկայից բռնությամբ բերված սևամորթները: Մարդկային այդ խմբերի միախառնումից բրազիլական ազգում զգալի թիվ են կազմում խառնածինները՝ **մուլատները**, **մետիսները** և **պարդոները**[1] (հնդկացիների և աֆրիկացիների սերունդները):

Աշխարհահռչակ «Մարականա» մարզադաշտը (Ռիո դե Ժանեյրո)

Կենսաբանական («արյան») միախառնմանը զուգընթաց տեղի են ունեցել նաև ռասայական տարբեր խմբերի մարդկանց ազգային ավանդույթների միախառնում և փոխներթափանցում: Այսպես օրինակ՝ Բրազիլիայի պաշտոնական լեզու պորտուգալերենում օգտագործվում է հնդկացիական ծագման շուրջ 20 հազար բառ: Բրազիլացիները շատ կենսախինդ են: Նրանց կյանքում մեծ տեղ է հատկացվում երաժշտությանը, պարերին, սպորտին և առանձնապես ֆուտբոլին: Բրազիլացիները շատ մեծ ոգևորությամբ են նախապատրաստվում ու մասնակցում 5-օրյա դիմակահանդեսներին, ֆուտբոլային հանդիպումներին: Եվ պատահական չէ, որ Ռիո դե Ժանեյրո քաղաքում դեռևս տասնամյակներ առաջ կառուցվել է աշխարհի ամենախոշոր ֆուտբոլային «Մարականա» մարզադաշտը:

Բրազիլիայում բնակվում են շուրջ 40 հազար հայեր, ովքեր կենտրոնացած են հիմնականում երկրի խոշորագույն քաղաքներում՝ Սան Պաուլուում և Ռիո դե Ժանեյրոյում:

Բրազիլիայի բնակչության թիվը XX դարում մեծ չափով ավելացավ (1900թ. երկրում ապրում էր 17 մլն, իսկ ներկայումս ապրում է մոտ 195 մլն մարդ): Վերջին 40 տարվա ընթացքում բնակչության բնական աճի ցուցանիշը նվազել է 3 անգամ:

Վերջին տասնամյակներում շատ արագ աճել է քաղաքային բնակչության բաժինը՝ հասնելով 87%-ի: Դրա պատճառներից մեկը հողագործ գյուղացիների զանգվա-

1. Իսպանախոս լատինամերիկյան երկրներում հնդկացիների և աֆրիկացիների խառնածին սերունդը, ինչպես արդեն գիտեք, անվանվում է սամբո, իսկ պորտուգալախոս Բրազիլիայում՝ պարդո:

ծային միգրացիան է խոշոր քաղաքներ: Դրա հետևանքով քաղաքների արվարձաններում ձևավորվում են անհրապույր և անբարեկարգ թաղամասեր՝ ֆավելաներ, որտեղ շատ բարձր է գործազրկության և հանցավորության մակարդակը: Բրազիլիայի կառավարությունը ֆավելաների բնակչությանն առաջարկում է վերաբնակվել Ամազոնիայի անտառներից ազատված հողատարածքներում և զբաղվել գյուղատնտեսությամբ: Ամազոնյան մայրուղու գոտում արդեն ձևավորվել են բազմաթիվ նոր բնակավայրեր և գյուղատնտեսական խոշոր ձեռնարկություններ:

Բրազիլիայի խոշորագույն քաղաքը **Սան Պաուլուն** է, որը հարակից մի շարք քաղաքների հետ ձևավորել է խոշոր քաղաքային ագլոմերացիա (11 մլն մարդ):

Բրազիլիայի ամենամեծ՝ Սան Պաուլու քաղաքը

Եթե Սան Պաուլուն Բրազիլիայի խոշորագույն արդյունաբերական, բանկային, տրանսպորտային և գիտական կենտրոնն է, ապա **Ռիո դե Ժանեյրոն** (6,2 մլն մարդ)՝ երկրի հոգևոր, մշակութային գլխավոր կենտրոնն է, իսկ մինչև 1960 թվականը եղել է երկրի մայրաքաղաքը: Ռիո դե Ժանեյրոյի չափազանց խոշորացումը կանխելու, ինչպես նաև երկրի դեռևս տնտեսապես չյուրացված տարածքները զարգացնելու նպատակով երկրի մայրաքաղաք դարձավ **Բրազիլիա** քաղաքը, որը հիմնադրվեց Բրազիլական սարահարթի անմարդաբնակ վայրում: **Բրազիլիա մայրաքաղաքը** ժամանակակից քաղաքաշինության լավագույն օրինակներից է: Քաղաքը կառուցապատվել է ժամանակակից շինություններով և ըստ մի հատակագծի, որն ունի ինքնաթիռի տեսք: Երկրի խոշորագույն քաղաքներից են նաև **Բելու Հորիզոնտին**, **Պորտու Ալեգրին**, **Ռեսիֆին**, **Սալվադորը**, **Ֆորտալեզան**:

Տնտեսությունը: Գաղութացումից հետո Բրազիլիայի տնտեսության հիմնական ճյուղը շաքարեղեգի մշակությունն էր, որին ավելի ուշ ավելացավ նաև ոսկու արդյունահանումը Մինաս Ժերայիս նահանգում: Ոսկու պաշարների սպառման հետևանքով XIX դ. վերջերին դրանում զբաղված բնակչությունը դարձավ գործազուրկ և սկսեց զբաղվել նոր ներմուծված մշակաբույսի՝ սուրճի մշակությամբ, որը մինչև 1930թ. Բրազիլիայի տնտեսության հիմնական ճյուղն էր:

Բրազիլիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը (2012թ.)



Բրազիլիայում աճել է և շարունակում է արագորեն աճել մշակող արդյունաբերության բաժինը: Երկրի համախառն ներքին արդյունքի ծավալով Բրազիլիան արդեն աշխարհի 8-րդ պետությունն է և մտնում է ամենաարագ զարգացող երկրների քառյակի մեջ (Բրազիլիա, Չինաստան, Ռուսաստան և Հնդկաստան):

Բրազիլիան նոր **արդյունաբերական երկիր** է և բնութագրվում է բազմաճյուղ արդյունաբերության համեմատաբար բարձր բաժնով: Համեմատաբար բարձր է նաև գյուղատնտեսության բաժինը (տես գծանկարը):

Արդյունաբերության տեղաբաշխումը խիստ անհամաչափ է: Արդյունաբերության տեղաբաշխման բնորոշ գիծը դրա տարածքային համակենտրոնացումն է որոշակի շրջաններում: Օրինակ՝ Սան Պաուլու նահանգը, որը զբաղեցնում է երկրի ամբողջ տարածքի 2%-ը, և որում բնակվում է երկրի ամբողջ բնակչության 19%-ը, ապահովում է երկրի արդյունաբերության ամբողջ արտադրանքի կեսից ավելին, իսկ Ռիո դե Ժանեյրո և Մինաս Ժերայիս նահանգների հետ՝ շուրջ 80%-ը:

Բրազիլիայի էներգետիկական հաշվեկշռում մեծ է նավթի և բնական գազի բաժինը, որին հետևում է ջրաէներգետիկան: Թեպետ Բրազիլիայի նավթի հանույթի ծավալը մեծ է (ավելի քան 100 մլն տ), բայց սեփական մեծ պահանջարկը բավարարվում է՝ նաև որոշ քանակությամբ նավթ ներկրելով:

Էլեկտրաէներգիայի արտադրանքի ծավալով ևս Բրազիլիան աշխարհի առաջատար երկրներից է, սակայն մեկ շնչի հաշվով արտադրվող էլեկտրաէներգիայի քանակով զիջում է շատ երկրների: Երկրի էլեկտրաէներգիայի ամբողջ արտադրանքի 83%-ը բաժին է ընկնում ջրէկներին: Դրանց շարքում խոշորագույնը **Իտայպուն** է (12,6 մլն կվտ հզորությամբ), որին հետևում է Տոկանտինս գետի վրա կառուցված **Տուկուրույ** ջրէկը:

Սև մետաղաձուլությունը ևս զարգացած է Բրազիլիայում, քանի որ առկա են հումքի՝ երկաթաքարի և մանգանի, ինչպես նաև վառելիքի՝ քարածխի պաշարներ:

Գունավոր մետաղաձուլության ճյուղերից առավել զարգացածը **ալյումինաձուլությունն** է:

Մեքենաշինությունը Բրազիլիայի արդյունաբերության առաջատար ճյուղն է: Արտադրվում են ավտոմեքենաներ, տրակտորներ, հաստոցներ, ինքնաթիռներ, նավեր: Մեքենաշինության խոշորագույն կենտրոններն են **Սան Պաուլուն** և **Ռիո դե Ժանեյրոն**:

Թեթև և **սննդի արդյունաբերության** արտադրանքի ծավալն այնքան մեծ է, որ որոշ արտադրատեսակներ նույնիսկ արտահանվում են: Շաքարի արտադրությամբ Բրազիլիան աշխարհում առաջին երկիրն է, իսկ կոշկի արտադրությամբ՝ երրորդը:

Գյուղատնտեսությունը Բրազիլիայում պահպանում է իր կարևոր դերը: Թեև տնտեսության կառուցվածքում գյուղատնտեսության բաժինը նվազել է մինչև 5%-ի, բայց դեռևս այդ ոլորտում է ընդգրկված երկրի բոլոր զբաղվածների 1/3-ը:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղը **բուսաբուծությունն** է, որին բաժին է ընկնում գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի 3/5-ը:

Սուրճի տնկատափ Բրազիլիայում

Սշակաբույսերի շարքում կարևոր են արտահանման նպատակով մշակվող **սուրճը**, **կակաոն**, **բամբակենին**, **նարինջը**: Թեպետ սուրճի համաշխարհային համախառն արտադրանքի մեջ Բրազիլիայի մասնաբաժինը կրճատվել է, բայց դեռևս այդ երկիրը շարունակում է պահպանել առաջին տեղն աշխարհում: Բրազիլիան աշխարհում երկրորդ տեղն է զբաղեցնում **կակաոյի**, **սոյայի**

և այլ մշակաբույսերի բերքի ծավալով: Երկիրն աշխարհի առաջատար երկրներից է նաև շաքարեղեգի, աղամաթզի (բանանի), նարնջի և բամբակի բերքի ծավալով: Հացահատիկային մշակաբույսերից Բրազիլիայում շատ են մշակում եգիպտացորեն, գարի և վարսակ, իսկ ցորենի համախառն բերքը չի բավարարում երկրի բնակչության պահանջարկի անգամ կեսը:

Ամբողջ գյուղատնտեսության արտադրանքի մեջ **անասնապահության** բաժինը դեռևս զգալիորեն զիջում է բուսաբուծությանը, թեև վերջին տարիներին սկսել է արագորեն զարգանալ:

Տավարի և խոզի գլխաքանակով Բրազիլիան աշխարհում առաջիններից մեկն է: Միջազգային շուկա է արտահանում միս, բուրդ, մորթի:

Անտառային տնտեսությունը երկրի կյանքում ունի էական դերակատարում: Բրազիլիան աշխարհում առաջինն է թանկարժեք փայտանյութի պաշարներով: Փայտանյութից բացի՝ անտառներից մթերվում են նաև արմավենու պտուղ, բրազիլական ընկույզ, հևեա ծառի կաթնահեղուկ և այլ մթերքներ:

Բրազիլիան, որպես խոշոր երկիր, ունի զարգացած և հզոր **տրանսպորտ**: Առավել զարգացած ճյուղը **ծովային տրանսպորտն** է: (*Թվարկեք խոշոր նավահանգիստները:*) Համեմատաբար թույլ է զարգացած ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտը, որը հիմնականում սպասարկում է երկրի Ատլանտյան օվկիանոսի առափնյա գոտու տնտեսությանն ու բնակավայրերին: Երկրի ներքին շրջանների տրանսպորտային ցանցը թույլ է զարգացած և շատ նոսր է:

Ամազոնիայում միայն վերջերս է կառուցվել մայրուղի, որը կարճ և ուղիղ կապ է հաստատում Բրազիլիայի արևելյան ափի և Հարավային Ամերիկայի արևմտյան՝ խաղաղօվկիանոսյան ափի միջև:

Վերջին տասնամյակներում մշակող արդյունաբերության զարգացման շնորհիվ արտահանման կառուցվածքում մեծանում է պատրաստի ապրանքների բաժինը և, ընդհակառակը, նվազում է հումքի և գյուղատնտեսական մթերքների բաժինը:

Բրազիլական որոշ ապրանքներ հասնում են նաև մեր հանրապետություն: Դրանցից են հատկապես սուրճը, շաքարը, խոզի ու հավի միսը և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք Բրազիլիայի աշխարհագրական դիրքը և գնահատեք դրա նպաստավորությունը երկրի տնտեսական զարգացման համար:
2. Ինչպե՞ս են ազդել Բրազիլիայի բնական պայմաններն ու բնական ռեսուրսների տեղաբաշխումը երկրի տնտեսության զարգացման ու տեղաբաշխման վրա:
3. Բնութագրեք բրազիլական ազգի ձևավորման գործընթացը և բնակչության թվի աճի փոփոխության միտումները:
4. Ինչո՞վ է պայմանավորված Բրազիլիայի քաղաքային բնակչության արագ աճը:
5. Բնութագրեք Բրազիլիայի տնտեսության զարգացման ու ճյուղային կառուցվածքի փոփոխության գործընթացը: Նշեք դրա գլխավոր պատճառները:
6. Որո՞նք են Բրազիլիայի արդյունաբերության առաջատար ճյուղերը: Նշեք դրանց տեղաբաշխման շրջաններն ու խոշոր կենտրոնները:
7. Բնութագրեք Բրազիլիայի գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը:
8. Որո՞նք են Բրազիլիայի տրանսպորտի և արտաքին տնտեսական կապերի բնորոշ գծերը:

ԱՂՅՈՒՍԱԿ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ (2012Թ.)

Արևելյան Եվրոպայի երկրներ

Տարածքը՝ 5986,5 հազ. կմ², բնակչությունը՝ 267,2 մլն մարդ (2012թ.)

Պետությունը	Տարածքը (հազ. կմ²)	Բնակչության թիվը (մլն մարդ)	Բնակչության խտությունը (մարդ/կմ²)	Բնակչության աճի տեմպը (%)	Քաղաքային բնակչության բաժինը (%)	ՀՆԱ[1] (մլրդ դոլ.)	ՀՆԱ-ն 1 բնակչի հաշվով (դոլար)	Արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում (%)	Գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ում (%)	Ծառայությունների բաժինը ՀՆԱ-ում (%)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Բելառուս	207,6	9,5	46,2	–0,3	75	55,4	5770	46,2	9,2	44,6
2. Բուլղարիա	110,9	7,3	66,7	–0,7	71	53,2	7190	31,2	5,6	63,2
3. Լեհաստան	312,7	38,5	122,5	–0,0	61	514,0	13420	34,2	3,5	62,3
4. Հունգարիա	93,0	9,9	107,5	–0,2	68	139,2	13920	27,2	4,5	66,3
5. Մոլդովա	33,7	3,5	103,9	–0,7	47	6,9	1980	20,0	16,2	63,8
6. Չեխիա	78,9	10,5	133,1	–0,3	74	216,4	20610	39,6	1,8	58,6
7. Ռումինիա	237,5	21,4	90,1	–0,2	57	189,4	8850	33,0	7,5	59,5
8. Սլովակիա	49,0	5,4	112,2	–0,2	55	96,5	17550	36,4	3,8	59,8
9. Ուկրաինա	603,2	45,6	74,9	–0,5	69	165,4	3660	32,8	10,4	56,8
10. Ռուսաստան[2]	4250,0	115,6	8,4	–0,1	73	1393,3	13010	36,0	3,9	60,1

Հարավային Եվրոպայի երկրներ

Տարածքը՝ 1264,7 հազ. կմ², բնակչությունը՝ 151,8 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Ալբանիա	28,7	2,8	111,5	0,3	52	12,9	4040	19,1	20,4	60,5
2. Բոսնիա և Հերցեգովինա	51,1	3,8	74,4	–0,2	49	18,3	4810	26,2	8,2	65,6
3. Խորվաթիա	56,6	4,3	77,7	–0,2	58	62,6	14220	33,1	4,7	62,2
4. Հունաստան	131,9	11,5	86,4	0,2	61	299,3	26250	16,0	3,9	80,1
5. Մակեդոնիա	25,7	2,1	81,7	0,1	59	10,4	4930	27,3	9,6	63,1
6. Չեռնոգորիա (Մոնտենեգրո)	13,8	0,6	43,5	0,1	61	4,3	7200	11,3	0,8	87,9
7. Իսպանիա	504,8	46,2	92,1	0,6	77	1479,6	31820	24,2	3,3	72,5
8. Իտալիա	301,2	60,9	201,9	0,2	68	2196,7	36130	23,9	2,0	74,1
9. Պորտուգալիա	42,3	10,5	253,0	0,0	61	237,9	22230	22,6	2,6	74,8
10. Սերբիա	88,4	7,2	112,0	0,1	56	55,2	5580	18,6	10,6	70,8
11. Սլովենիա	20,2	2,1	90,9	0,2	50	49,4	24710	27,6	2,7	69,7

1. ՀՆԱ – համախառն ներքին արդյունք
2. Ռուսաստանի եվրոպական մաս

Արևմտյան Եվրոպայի երկրներ

Տարածքը՝ 1100,7 հազ. կմ², բնակչությունը՝ 190,3 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Ավստրիա	83,8	8,5	100,2	0,2	68	417,4	49690	29,4	1,5	69,1
2. Բելգիա	30,5	11,1	354,1	0,3	97	516,3	47810	22,3	0,7	77,0
3. Գերմանիա	357,0	81,9	230,3	–0,2	74	3500,0	42580	28,1	0,8	71,1
4. Լյուքսեմբուրգ	2,6	0,5	192,3	1,4	85	57,7	115380	13,6	0,4	86,0
5. Նիդեռլանդներ	41,5	16,7	402,4	0,3	83	838,7	50220	24,1	2,8	73,1
6. Շվեյցարիա	41,3	8,0	186,4	0,4	74	660,7	85800	27,7	1,3	71,0
7. Ֆրանսիա	552,0	63,6	116,0	0,5	85	2690,1	42640	18,3	1,9	79,8

Հյուսիսային Եվրոպայի երկրներ

Տարածքը՝ 1747,8 հազ. կմ², բնակչությունը՝ 100,3 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Դանիա	43,1	5,6	129,9	0,3	87	333,6	59580	22,1	1,3	76,6
2. Էստոնիա	45,2	1,3	28,8	-0,1	69	21,5	16540	30,2	3,7	66,1
3. Իսլանդիա	103,0	0,3	2,9	1,2	93	13,0	43240	24,4	5,3	70,3
4. Իռլանդիա	70,3	4,5	64,0	1,1	62	219,8	48840	29,0	2,0	69,0
5. Լատվիա	64,6	2,2	34,1	–0,4	68	27,9	12700	26,3	4,4	69,3
6. Լիտվա	65,2	3,3	50,6	–0,4	67	42,8	12970	28,4	3,3	68,3
7. Մեծ Բրիտանիա	244,1	63,2	255,6	0,6	80	2428,6	38920	21,1	0,7	78,2
8. Նորվեգիա	324,2	5,0	15,1	0,7	79	286,9	58560	41,5	2,7	55,8
9. Շվեդիա	450,0	9,5	20,9	0,6	85	537,0	57130	27,3	1,8	70,9
10. Ֆինլանդիա	338,1	5,4	16,0	0,3	85	264,0	48890	27,1	3,3	69,6

Հարավարևմտյան Ասիայի երկրներ

Տարածքը՝ 7091,6 հազ. կմ², բնակչությունը՝ 339,6 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Ադրբեջան	75,2	9,3	123,7	1,2	52	63,3	6810	59,5	5,7	34,7
2. ԱՄԷ	83,7	7,9	94,4	2,2	84	339,1	42920	56,1	0,8	43,1
3. Աֆղանստան	645,8	32,5	50,2	3,1	23	19,1	590	25,6	20,0	54,4
4. Բահրեյն	0,7	1,2	1857,1	2,1	89	25,4	19510	50,7	0,4	48,9
5. Եմեն	527,0	24,5	47,1	3,0	32	31,5	1270	40,6	7,9	51,5
6. Թուրքիա	781,0	75,2	97,4	1,1	70	774,3	10520	28,1	8,9	63,0
7. Իսրայել	20,8	7,6	365,4	1,7	92	244,1	32120	31,4	2,5	66,1
8. Իրան	1648,0	76,7	45,4	1,0	71	522,1	6980	38,4	11,0	50,6
9. Իրաք	434,9	33,9	75,2	3,1	66	123,0	3760	63,8	8,7	27,5
10. Լիբանան	10,4	4,3	413,5	0,7	87	39,4	9170	19,7	4,6	75,7
11. Կիպրոս	9,2	0,9	119,6	1,1	70	33,6	30520	16,7	2,4	80,9
12. Հայաստան	29,8	3,1	104,0	0,3	64	10,1	3270	40,8	19,2	40,0
13. Հորդանան	89,2	6,4	70,6	1,9	79	28,7	4560	30,9	4,5	64,6
14. Սաուդյան Արաբիա	2240,0	29,2	12,5	2,1	82	597,4	21260	66,9	2,0	31,1
15. Սիրիա	185,2	21,1	112,3	1,7	56	64,5	3100	25,3	18,1	56,6
16. Վրաստան	69,7	4,5	61,7	–0,6	53	14,3	3320	23,7	8,3	68,0
17. Քաթար	11,4	1,7	166,7	2,9	96	176,1	92680	77,8	0,1	22,1
18. Քուվեյթ	17,8	3,3	157,3	2,4	98	159,9	57100	42,3	0,2	57,5
19. Օման	212,9	3,3	13,2	1,9	73	71,5	25540	50,4	1,5	48,1

Հարավային Ասիայի երկրներ

Տարածքը՝ 4490 հազ. կմ², բնակչությունը՝ 1591,5 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Բանգլադեշ	143,9	150,6	1045,9	1,3	28	106,8	710	28,6	17,3	54,1
2. Բութան	47,0	0,7	14,9	1,5	35	1,6	2340	34,2	15,1	37,6
3. Հնդկաստան	3287,6	1213,4	377,6	1,3	30	1899,5	1530	18,0	17,0	65,0
4. Մալդիվյան կղզիներ	0,3	0,3	1006,7	1,3	40	1,9	6400	17,0	3	80
5. Նեպալ	147,2	29,2	207,2	1,7	19	18,6	610	15,3	38,1	46,6
6. Շրի Լանկա	65,6	20,3	320,1	0,8	14	59,0	2810	30,1	12	57,9
7. Պակիստան	796,1	177,0	222,0	1,8	36	208,5	1180	25,5	20,1	54,4

Կենտրոնական Ասիայի երկրներ

Տարածքը՝ 3994 հազ. կմ², բնակչությունը՝ 64,5 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Թուրքմենստան	488,1	5,1	10,4	1,2	50	25,7	5040	24,4	7,6	68
2. Ղազախստան	2717,3	16,7	6,0	1,0	59	186,3	11500	37,9	5,2	56,9
3. Ղրղզստան	198,5	5,4	27,2	1,1	35	5,9	1100	27,3	20,2	52,5
4. Տաջիկստան	143,1	7,7	48,9	1,5	26	6,6	940	22,8	23,3	53,9
5. Ուզբեկստան	447,4	29,6	62,1	1,1	36	45,6	1640	36,4	18,5	45,1

Հարավարևելյան Ասիայի երկրներ

Տարածքը՝ 4510 հազ. կմ², բնակչությունը՝ 617,4 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Բրունեյ Դարուսալամ	5.8	0.4	69,0	1,7	76	16,1	40300	71,7	0.6	27,7
2. Թաիլանդ	514,0	67,9	135,2	0,5	34	369,7	5320	39	8,6	52,4
3. Ինդոնեզիա	1919,4	247,2	126,2	1,0	44	848,1	3500	46,5	15,4	38,1
4. Լաոս	236,8	6,6	26,6	1,3	33	8,2	1300	34	26	40
5. Կամբոջա	181,0	14,7	79,0	1,2	20	12,9	900	24,3	34,7	41,0
6. Մալայզիա	329,7	29,4	87,7	1,6	72	288,4	9980	41,2	11,9	46,9
7. Մյանմա	678,5	61,0	71,2	0,8	34	55,1	1140	19,3	38,8	41,8
8. Սինգապուր	0,7	5,3	7624,6	1,1	100	260,5	50090	28,8	0,0	71,2
9. Վիետնամ	329,5	88,8	269,5	1,0	30	123,4	1390	40,7	21,5	37,8
10. Ֆիլիպիններ	300,0	94,9	316,3	1,7	49	224,9	2370	31,1	11,9	57,0
11. Արևելյան Թիմոր (Թիմոր Լեշթի)	14,9	1,2	805	2,9	28	5,8	4830	18,1	25,6	56,3

Արևելյան Ասիայի երկրներ

Տարածքը՝ 11753 հազ. կմ², բնակչությունը՝ 1555,9 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. ԿԺԴՀ	120,5	24,5	203,3	0,4	60	12,5	510	47,5	23,1	29,4
2. Կորեայի Հանրապետություն	98,5	50,3	491,4	0,4	83	1116,6	23070	39,8	2,7	57,5
3. Ճապոնիա	372,5	127,6	339,6	–0,1	67	5870,9	46410	27,5	1,2	71,3
4. Մոնղոլիա	1565,5	2,8	1,8	1,5	62	8,6	3060	42,7	14,8	42,5
5. Չինաստան	9596,0	1350,7	140,4	0,4	47	7330,9	5440	45,3	10,1	44,6

Աֆրիկայի երկրներ

Տարածքը՝ 30,3 մլն կմ², բնակչությունը՝ 1083,0 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Ալժիր	2382,0	37,5	15,1	1,4	66	198,7	5520	60,9	8,9	30,2
2. Անգոլա	1247,0	19,6	15,7	2,7	59	104,3	5320	61,4	10,2	28,4
3. Բենին	112,6	9,1	80,8	2,7	42	7,3	–800	6,4	35,9	57,7
4. Բոտսվանա	600,4	2,0	3,3	1,1	61	77,6	8530	43,7	2,1	50,2
5. Բուրկինա Ֆասո	274,4	17,0	62,0	3,0	26	10,2	600	23,4	34,4	42,2
6. Բուրունդի	27,8	8,6	309,4	1,9	11	2,3	270	21,3	31,1	47,6
7. Գաբոն	267,7	1,5	5,6	1,9	86	23,6	15740	53,7	4,2	42,1
8. Գամբիա	11,3	1,8	159,3	2,7	58	1,2	690	18,3	22,3	59,5
9. Գանա	238,5	25,0	104,8	2,3	51	39,3	1570	27,4	24,6	48,0
10. Գվինեա	246,0	10,2	41,5	2,5	35	5,5	540	48,5	12,8	38,7
11. Գվինեա Բիսաու	36,1	1,5	41,6	2,1	30	0,9	590	13,1	56,3	30,6
12. Եգիպտոս	1001,5	82,5	82,4	1,7	43	231,0	2800	37,4	14,7	47,9
13. Եթովպիա	1200,0	84,7	70,6	2,1	17	27,1	320	14,8	46,6	38,6
14. Զամբիա	752,6	13,5	17,9	3,0	36	19,3	1430	33,5	20,2	46,3
15. Զիմբաբվե	390,8	12,8	32,8	2,2	38	9,0	700	25,1	20,3	54,6
16. Էրիթրեա	12,5	5,4	432,0	2,9	22	2,6	480	30,6	11,6	57,8
17. Թունիս	163,6	10,8	64,8	1,0	1,9	46,3	4370	29,6	8,9	61,5
18. Լեսոտո	30,3	2,2	72,6	1,0	27	2,4	1110	34,6	6,7	58,7
19. Լիբերիա	111,9	4,1	36,6	2,6	48	1,1	–280	–5,4	78,9	17,7
20. Լիբիա	1759,5	6,4	3,6	0,8	78	31,3	4890	40,1	2	57,9
21. Կաբո Վերդե	4,0	0,5	125,0	0,9	61	1,9	3770	15,8	8,1	76,1
22. Կամերուն	475,4	20,4	42,1	2,1	58	26,4	1320	30,9	19,8	49,3
23. Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն	623,0	4,5	7,2	2,0	39	2,2	490	14,9	56,4	28,7
24. Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետութ.	2345,0	67,8	28,9	2,6	35	16,3	240	25,9	38,4	35,7
25. Կոնգոյի Հանրապետություն	342,0	4,1	12,0	2,2	62	13,1	3200	71,3	4,2	24,5
26. Կոտ դ'Իվուար	372,5	20,2	54,2	2,2	51	24,2	1200	21,8	28,8	49,4
27. Հարավային Սուդան	619,7	10,3	13,3	–	–	15,7	22410	90,5	3,5	6,0
28. Հասարակածային Գվինեա	28,0	0,7	25,0	2,7	40	12,2	1174	–	–	–
29. Հարավաֆրիկյան Հանրապետություն	1223,0	50,6	41,3	0,5	62	408,5	8090	32,1	2,4	65,5
30. Մադագասկար	595,8	21,3	35,8	2,8	30	9,8	460	16,5	28,3	55,2
31. Մալավի	118,5	15,4	130,0	3,2	20	6,0	390	16,9	29,6	53,5
32. Մալի	1740,0	15,8	9,1	3,0	36	10,6	670	23,4	36,9	39,7
33. Մավրիկիոս	2,0	1,3	650,0	0,5	42	11,3	8660	23,5	4,5	72,0
34. Մավրիտանիա	1030,7	3,5	3,4	2,2	41	4,4	1250	39,1	16,1	44,8
35. Մարոկկո	446,6	32,6	72,3	1,0	58	100,5	3110	32,8	14,7	52,5
36. Մոզամբիկ	802,0	23,9	29,8	2,2	38	12,9	540	24,6	31,8	42,6
37. Նամիբիա	824,3	2,3	2,8	1,7	38	12,5	5440	34,3	7,3	58,4
38. Նիգեր	1300,0	16,3	12,4	3,5	17	6,4	400	39,6	17,1	43,2
39. Նիգերիա	924,0	162,5	175,9	2,5	50	145,4	1510	43,0	30,9	26,1
40. Չադ	1284,0	11,5	9,0	2,6	28	10,5	910	–7,0	51,0	42,0

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
41. Ջիբութի	23,4	0,9	38,5	1,9	76	1,3	1420	16,9	3,1	80,0
42. Ռուանդա	26,4	11,0	412,9	2,9	19	6,3	580	13,9	33,3	52,8
43. Սենեգալ	196,7	13,2	65,1	2,6	42	14,5	1130	22,7	15,3	62,0
44. Սիեռա Լեոնե	77,2	6,0	77,7	2,1	38	2,9	480	37,4	43,2	19,4
45. Սոմալի	638,0	9,6	15,0	2,6	37	1,0	110	7,2	59,3	33,5
46. Սվազիլենդ	17,4	1,2	69,0	1,4	21	4,1	3400	47	8,2	44,8
47. Սուդան	1885	34,8	18,4	2,4	40	55,0	1580	25	32	43
48. Տանզանիա	945,1	45,8	48,9	3,1	26	24,5	530	24,1	27,1	48,8
49. Տոգո	56,8	6,2	109,2	2,0	43	3,7	600	21,4	45,7	32,9
50. Ուգանդա	236,0	34,1	146,2	3,1	13	19,3	560	26,1	23,9	50
51. Քենիա	582,6	42,4	71,4	2,7	22	34,1	820	14,8	24,2	61

Ավստրալիայի և Օվկիանիայի երկրներ

Տարածքը՝ 8480,0 հազ. կմ², բնակչությունը՝ 36,8 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Ավստրալիա	7682,0	22,7	2,9	1,3	89	1123,0	49690	26,6	4,0	69,4
2. Կիրիբատի	0,81	0,1	123,5	1,5	44	0,2	1800	7,9	24,3	67,8
3. Միկրոնեզիա	0,70	0,1	142,9	1,1	67	0,3	2860	12	14	74
4. Նոր Զելանդիա	270,5	4,4	16,3	1,0	86	206,2	46870	24,6	4,8	70,6
5. Պապուա-Նոր Գվինեա	462,8	7,0	15,1	2,2	13	12,5	1790	38,5	27,9	33,6
6. Սամոա	2,8	0,2	71,4	0,5	20	0,7	3630	28,6	9,2	62,2
7. Սողոմոնի կղզիներ	28,4	0,6	21,1	2,5	19	0,9	1520	9,3	33,4	57,4
8. Վանուատու	12,2	0,2	16,4	2,4	26	0,6	3170	11,7	20,6	67,6
9. Տոնգա	0,75	0,1	133,3	1,6	37	0,4	4340	16,6	20,9	62,5
10. Ֆիջի	18,3	0,9	49,2	0,8	52	4,0	4390	19,7	11,0	69,3

Հյուսիսային Ամերիկայի երկրներ

Տարածքը՝ 19333,2 հազ. կմ², բնակչությունը՝ 348,8 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. ԱՄՆ	9363,2	313,9	33,4	0,9	82	14991,2	47880	19,1	1,2	79,7
2. Կանադա	9970,0	34,9	3,4	0,9	81	1734,2	50560	28,6	1,8	69,6

Լատինական Ամերիկայի երկրներ

Տարածքը՝ 20456 հազ. կմ², բնակչությունը՝ 609,8 մլն մարդ (2012թ.)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Արգենտինա	2800,0	41,3	14,6	0,9	92	448,1	10990	30,6	103	59,1
2. Բահամյան կղզիներ	13,9	0,3	21,6	1,1	84	6,7	22430	7,1	2,1	90,8
3. Բելիզ	23,0	0,3	13,0	2,0	52	1,4	4640	19,4	9,7	59
4. Բոլիվիա	1098,6	10,1	9,2	1,6	67	23,9	2370	38,3	9,6	52,1
5. Բրազիլիա	8500,0	193,9	23,1	0,8	87	2476,5	12590	27,4	5,4	67,2
6. Գայանա	215,0	0,8	3,7	0,2	29	2,7	3410	34,8	20,3	44,9
7. Գվատեմալա	109,0	14,8	135,8	2,5	49	47,1	3180	23,8	13	63,2
8. Դոմինիկյան Հանրապետություն	48,7	10,1	207,4	1,2	69	55,7	5510	31,9	6,2	61,9
9. Էկվադոր	283,6	15,5	51,8	1,3	67	66,6	4530	38,1	6,4	57,5
10. Կոլումբիա	1141,8	46,6	41,1	1,3	75	333,0	7100	38,1	6,8	55,1
11. Կոստա Ռիկա	51,1	4,7	92,0	1,4	64	40,8	8680	21,1	6,2	72,7
12. Կուբա	111,0	11,3	101,8	0,1	75	69,0	6110	22,3	3,8	73,9
13. Հայիթի	27,8	10,4	363,3	1,3	52	6,8	670	9	25	66
14. Հոնդուրաս	112,1	8,2	69,6	2,0	52	17,6	2250	28,7	12,8	60,5
15. Ճամայկա	11,5	2,7	243,5	0,4	52	15,0	5360	29,9	6,5	63,5
16. Մեքսիկա	1958,2	114,8	58,6	1,1	48	1154,9	10060	34,2	3,7	62,1
17. Նիկարագուա	131,8	6,1	44,8	1,4	57	7,3	1240	25,8	17,5	56,7
18. Չիլի	756,9	17,4	23,5	0,9	89	256,3	14400	37,0	3,5	59,5
19. Պանամա	77,1	3,8	46,7	1,5	75	30,9	8590	16,8	3,8	79,4
20. Պարագվայ	406,8	6,7	16,2	1,7	61	23,0	3480	19,4	19,8	60,8
21. Պերու	1285,6	30,1	22,9	1,1	77	180,5	6140	33,9	7,8	58,3
22. Սալվադոր	21,4	6,3	289,7	0,6	64	22,9	3700	30,1	10,5	59,4
23. Սուրինամ	163,3	0,6	3,1	0,9	69	4,4	8710	36,6	10,5	52,9
24. Վենեսուելա	916,5	29,7	32,1	1,5	93	315,5	10730	36,3	3,7	61
25. Տրինիդադ և Տոբագո	5,1	1,3	253,4	0,3	14	21,2	16270	58,8	0,3	40,9
26. Ուրուգվայ	186,9	3,8	18,2	0,3	92	47,0	13820	21,5	9,1	69,4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԴԱՍ 1. ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԸ 3

ԴԱՍ 2. ԵՎՐԱՍԻԱ 5

ԵՎՐՈՊԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 6

ԴԱՍ 3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ԿԱՋՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 11

ԴԱՍ 4. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԸ 14

ԴԱՍ 5. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 17

ԴԱՍ 6. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՌՈՒՍԱՍՏԱՆ). ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ 21

ԴԱՍ 7. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 24

ԴԱՍ 8. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 27

ԴԱՍ 9. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 32

ԴԱՍ 10. ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ) 35

ԴԱՍ 11. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 38

ԴԱՍ 12. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 42

ԴԱՍ 13. ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԻՏԱԼԻԱ). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 45

ԴԱՍ 14. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ԿԱՋՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 50

ԴԱՍ 15. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 54

ԴԱՍ 16. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԳԵՐՄԱՆԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 57

ԴԱՍ 17. ԳԵՐՄԱՆԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 60

ԴԱՍ 18. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՖՐԱՆՍԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 63

ԴԱՍ 19. ՖՐԱՆՍԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 67

ԴԱՍ 20. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 70

ԴԱՍ 21. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 74

ԴԱՍ 22. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 78

ԴԱՍ 23. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 82
ԴԱՍ 24. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 85
ԴԱՍ 25. ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ. ԿԱՋՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 86
ԴԱՍ 26. ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 89
ԴԱՍ 27. ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 93
ԴԱՍ 28. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՎՐԱՍՏԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 96
ԴԱՍ 29. ՎՐԱՍՏԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 98
ԴԱՍ 30. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱԴՐԲԵՋԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 101
ԴԱՍ 31. ԱԴՐԲԵՋԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 103
ԴԱՍ 32. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԹՈՒՐՔԻԱ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 107
ԴԱՍ 33. ԹՈՒՐՔԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 109
ԴԱՍ 34. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԻՐԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 113
ԴԱՍ 35. ԻՐԱՆ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 115
ԴԱՍ 36. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 119
ԴԱՍ 37. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 122
ԴԱՍ 38. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԻԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 125
ԴԱՍ 39. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀՆԴԿԱՍՏԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 129
ԴԱՍ 40. ՀՆԴԿԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 132
ԴԱՍ 41. ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 135
ԴԱՍ 42. ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 138
ԴԱՍ 43. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 141
ԴԱՍ 44. ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՉԻՆԱՍՏԱՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 145
ԴԱՍ 45. ՉԻՆԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 148
ԴԱՍ 46. ՃԱՊՈՆԻԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 153
ԴԱՍ 47. ՃԱՊՈՆԻԱ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 157

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՍ 48. ԱՖՐԻԿԱ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 161
ԴԱՍ 49. ԱՖՐԻԿԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 165
ԴԱՍ 50. ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 170

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԴԱՍ 51. ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՕՎԿԻԱՆԻԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 174
ԴԱՍ 52. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԱՎՍՏՐԱԼԻԱ). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 178

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ԴԱՍ 53. ԱՄԵՐԻԿԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 183
ԴԱՍ 54. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ԱՄՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 186
ԴԱՍ 55. ԱՄՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 191
ԴԱՍ 56. ԱՄՆ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ) 194
ԴԱՍ 57. ԿԱՆԱԴԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 198
ԴԱՍ 58. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ. ԿԱՋՄԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 202
ԴԱՍ 59. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 205
ԴԱՍ 60. ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԲՐԱԶԻԼԻԱ). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 210
ԱՂՅՈՒՍԱԿ. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ (2012Թ.) 215

Սանասյան Մաքսիմ Գառնիկի
Մարգարյան Ռուդիկ Գրիգորի
Հովսեփյան Արմեն Աշոտի
Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակական աշխարհագրություն

Տարածաշրջաններ և պետություններ

8-րդ դասարանի դասագիրք

Քարտեզագիր՝ Վ. Մխիթարյան

Շապիկի ձևավորումը՝ Մ. Աբրահամյանի

Համակարգչային էջկազմը՝ Միքայել Աբրահամյանի
Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Ղ. Փարպեցի 9, բն. 7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@arminco.com
www.manmar.am